Հուսկ, կը վերահաստատենք, թէ ապագան մի՛տ կը պատկանի այն ժողովուրդներուն, որոնք կը տենչան ու կառչած կը մնան իրենց ճակատագրին տնօրինման արդար իրաւունքին: Արդեօ՞ք հայկական Հարցը իր արդար եւ մնայուն լուծումը կը գտնէ եթէ աշխարհը յաջողի պահպանել՝ այսօրուան նուազած ժողովրդավարութիւնը ու աւելի մարդկայնական համաշխարհայնացում գործադրէ:

THE ARMENIAN QUESTION IN THE AGE OF GLOBALIZATION: THE CURRENT SITUATION AND ITS PROSPECTS (SUMMARY)

MASOOD DAHER

In the past one hundred years the Armenian Cause maintained vigilance due to various cultural, social and artistic endeavors organized by diverse Armenian groups. Several international conferences and symposiums were convened dedicated to the preservation of Armenian identity, consolidation and reassurance of the legal rights of the Armenian nation.

A part of the Armenian nation lives in the independent Republic of Armenia, which is a tiny piece of historic Armenia. The majority of the Armenians, however, is spread in the Arab World, the Americas, Russia and Europe, alongside an important Armenian community in Turkey.

After the disintegration of the Soviet Union, in 1991 Soviet Armenia proclaimed its independence. Though, there are parts of Armenian territories in the Republic of Georgia, while the military conflict with Azerbaijan on Mountainous Karabagh is still raging. On the other hand all Western Armenia, which includes the symbols of Armenian heritage and civilsation, particularly Mount Ararat, are under Turkish rule.

The proclamation of Armenian independence ushered in a new stage for the peaceful campaign of the Armenian nation towards the reclamation of its just demands of land and rights. Armenia joined the Black Sea Economic Cooperation Project, initiated by Turkey. In Septembe 2008 Turkish President Abdullah Gul visited Armenia to check for prospects of improving the relations between the two neighboring countries. In an unprecedented step, in 2014 Turkish President Recep Tayip Erdogan expressed his condolences concerning the Armenian massacres. And in January 20, 2015 Turkish PM Ahmet Dautoglu called on a "new beginning" in Turkish-Armenian relations and called upon the Armenians and all those who believe in Turkish-Armenian friendship to support the new beginning concerning "addressing the petrified pains of 1915".

After a century of campaign which included both the independent state of Armenia and the Armenian Diaspora, the Armenians and their political, economic and cultural elite have been convinced that the current world system does not give chances for the full restoration of Armenian historic lands. Nonetheless, the strategy of the Armenian institutions in resolving the Armenian Question by peaceful means is correct and has a promising prospective future. Indeed, the recognition of the Armenian Genocide by several big powers and international organizations is an implicit recognition that a rightful and permanent solution of the Armenian Question is the responsibility of Turkey.

After a century of the Genocide, the Armenians continue to struggle for the recognition of the Armenian Genocide in an increasing rhythm, nevermind the ineffective attitude of the great powers and the կրաւորական performance of the international community concerning the condemnation of the Armenian Genocide.

Nevertheless, the Armenian Genocide continues to be a bleeding wound for the Armenians and on the conscience of the interantional community.

Nonetheless, there are promising prospects for the peaceful resolution of the Armenian Question. The Armenian nation is seeking a peaceful solution to its just cause. It looks for a normal relations with Turkey. The stance of the latter, however, is intended to enforce the *de facto* provisions on the Armenians.

The normalisation of realtions with Turkey presumes its recognition of the Armenian Genocide, retribution and the return of Armenian geographic, historico-cultural and religious symbols. This constitutes the pivotal act whereby the civilised undertakings outbalance current international practice.

Indeed, the Armenians demand their rights within the scope of Human Rights Principles. It is up to Turkey, if it really wants to open up a new page in the Armenian Question to recognise the Armenian Genocide and compensate for the Genocide victims. This step starts with the endorsement of Turkey to the UN Human Rights Declaration and the Genocide Convention.

The Armenians campaign for the world to recognise once and for all the rightness of their cause, which can be a start for international justice for the punishment of all those who committed genocide to nations and people in different corners of the world. Armenians have learned that relying on great powers has no results as these states seek for their interests.

To conclude, we reassure that the future always belongs to those nations who strive for and stick to their right of self-determination. One may wonder whether the Armenian Question will have its just and permanent solution if the world succeeds in maintaining the current depleted democracy and implementing a more humane globalisation.

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՄԿՐՏԻՉ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ ՓԱԿՄԱՆ ԽՕՍՔԸ

Խօսքս կ'ուզեմ սկսիլ շնորհակալութիւնով եւ յարգանքով, բոլոր այն երկիրներուն, եկեղեցիներուն եւ կազմակերպութիւններուն, բոլոր այն բարեկամներուն, մարդասէր եւ հայասէր անձերուն, որոնք մեր ազգին զօրավիգ եղան եւ այսօր ալ են՝ Ցեղասպանութենէն վերապրելու մեր ջանքին մէջ:

Մեր գիտաժողովները նպատակ չունին փաստելու՝ թէ Ցեղասպանութիւնը իրական է պատմականօրէն: Օտարներուն համար, որոնք կրնան չգիտնալ այդ՝ պէտք ունինք փաստելու, ճիշդ է: Սակայն, մենք մեզի համար փաստելու կարիք չունինք, քանի որ մենք վերապրած ականատեսներու զաւակներն ու թոռներն ենք: Մենք, մեզի համար պէտք ունինք փաստելու՝ թէ այդ Ցեղասպանութեան տարողութիւն-ազդեցութիւնը որքան ծա՛նր եղած է, որովհետեւ մեր պահանջը ըստ այնմ պէտք է ներկայացնենք: Յանցանքին ծանրութենէն կախեալ պիտի ըլլայ թէ այդ յանցանքին դիմաց՝ հատուցումը որքա՛ն ծանրօրէն եւ ի՛նչ տարողութեամբ պիտի պահանջենք: Մեր գիտական աշխատանքը ատոր մէջ եւ ատոր վրայ պէտք է կեդրոնանայ, եւ ատիկա ընելը շատ ալ դժուար չէ, քանի որ պատմական տուեալներ՝ թիւերով ու քանակով, արդէն շատ կան: Մեզի համար իրական պարտականութիւն պէտք է սեպենք որ այս բոլորը քով քովի բերենք, որպէսզի Ցեղասպանութեան հասկացութիւնը մեզի համար, մեր զաւակներուն համար, մարդկութեան ապագային համար եւս վերածուի իրական դաստիարակութեան: Որպէսզի ատով մենք մեզ կարենանք դաստիարակել այնպէս՝ որ չոգնի՛նք, չձանձրանա՛նք Արդարութիւնը պահանջելէ:

Քաղաքականութիւնները մինչեւ այսօր, մեզ ետ կը պահեն արդար, ճշմարիտ պահանջատիրութեան արդիւնաւորուելէն: Ճիշդ է ատիկա. սակայն տարիները, դարերը կրնան անցնիլ, ճշմարտութիւնները կը մնան ճշմարտութիւն: Եւ եթէ կ'ուզենք ճշմարտութիւնը տեսնել, ապա՝ հետեւեալ ձեւով պէտք է նայիլ հարցերուն.- ի՞նչ կարելիութիւն կայ որ Ցեղասպանութիւններ պատահին մարդկային գալիք պատմութեան մէջ, շարունակուին

Ցեղասպանութիւններ տեղի ունենալ, այսինքն՝ ծրագրուին եւ գործադրուին: Կարելիութիւնները շատ իրական են եւ շատ մեծ:

Օրինակ, արդի Թուրքիան՝ դաստիարակելու համար թուրք նոր սերունդները, այսօր եւս կ'որդեգրէ լոզունգներ, որոնք կը հիմնուին նո՛յն այն տրամաբանութեան, ա՛յն սկզբունքներուն, ա՛յն փիլիսոփայութեան վրայ, որոնց որպէս հետեւանք եղաւ Հայոց Ցեղասպանութիւնը: «Թուրքիան միա՛յն թուրքերուն», «երանի՛ անոր որ կրնայ ըսել ես թուրք եմ»... Այս լոզունգները պաստառներով ամէն տեղ տեսանելի են Թուրքիոյ մէջ, ամէն տեսակ տօնական առիթներու: Այս կը նշանակէ որ Թուրքիա ոչ միայն պատմականօրէն ժառանգորդն է Օսմանեան Կայսրութեան եւ Ցեղասպանութիւնը գործադրող սերունդին, այլեւ այսօր ալ կրնայ պատրաստ ըլլալ ցեղասպանութիւն գործելու: Ասիկա տեսանելի է նաեւ աշխարհի տարբեր կողմերը՝ այլ ժողովուրդներու մէջ, քանի որ անպատիժ կրնա՛ն մնալ Ցեղասպանութիւնները: Իսկ մենք կը պահանջենք ճշմարիտ արդարութիւն, հասնելու համար ճշմարիտ խաղաղութեան, որովհետեւ առանց արդարութեան խաղաղութիւն կարելի չէ:

Պատերազմի բացակայութիւնը խաղաղութիւն չէ՛:

Մաղթանքս է որ այս գիտաժողովը, որ այս դասախօսութիւնով կը բացուի, նաեւ առաջնորդ ըլլայ շատ գիտաժողովներու եւ յաջող ըլլայ իր նպատակներու իրագործումին մէջ, որպէսզի հասնինք այն ճշմարտութեան որ արդարութիւն պիտի հաստատէ, եւ այդ արդարութեան հաստատուելովը՝ նաեւ հասնինք ա՛յն խաղաղութեան, որուն կը ցանկայ ամբողջ աշխարհը:

Ժամանակները կ'անցնին, քաղաքականութիւնները կրնան այսպէս կամ այնպէս ըլլալ, բայց ժամանակներու թաւալքին մէջ պատմութիւնը մեզի կը սորվեցնէ թէ քաղաքականութիւն խաղացող գերպետութիւններն անգամ կրնան անցնիլ-երթալ:

Քաղաքականութիւնները կը փոխուին, կը փոխուի նաեւ աշխարհի քարտէսը: Այդ աշխարհի փոխուող քարտէսներուն մէջ, մենք որպէս Հայ Աւետարանական Եկեղեցի կը հաւատանք, եւ յուսամ որ ամբողջ հայութիւնը այսպէս կը հաւատայ, որ Հայաստանը՝ Աստուծոյ կողմէ շնորհուած է հայուն եւ ազատ անկախ Հայաստանը, այսօր եւ վաղը հայ ժողովուրդի լինելութեան Աստուածային խոստումն է:

Ամէն:

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՍՈՒՐԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
manukyan.suren@gmail.com

Ցեղասպանութիւնը մարդկութեան պատմութեան ամէնածանր յանցագործութիւններից է: Այն իրաւամբ անուանւում է «յանցագործութիւնների յանցագործութիւն»[1]:

1948ի Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին խորհրդաժողովը ցեղասպանութիւն է համարում այն գործողութիւնները, որոնք կատարւում են մի որեւէ ազգային, ցեղային կամ կրօնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրութեամբ: Ցեղասպանութեան արարք է համարւում՝

ա) խմբի անդամների սպանութիւնը,

բ) նրանց մարմնական լուրջ վնասուածք կամ մտաւոր խանգարում պատճառելը,

գ) խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց նպատակն է այդ խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը,

դ) խմբի ներսում ծննդաբերութեան կանխման միջոցառումները,

ե) երեխաների յանձնումը մարդկային մի խմբից միւսին[2]:

Հայոց Ցեղասպանութեան դէպքում մտադրութիւնը բնաւ էլ միայն մեծ թուով հայերի սպանութիւնը, նրանց մասնակի ոչնչացում կամ հայերի թիւը վտանգալից աստիճանի նուազեցնելը չէր: Նպատակը աւելի զարհուրելի եւ աւելի լայնածաւալ էր.- վերացնել հայ ժողովուրդը, հասնել նրա չգոյութեանը, որը եւ լինելու էր թուրքական ազգի եւ Թուրքական Պետութեան գոյութեան պայմանը[3]: Ցեղասպանութեան ճարտարապետերի կարծիքով հայերը վտանգ էին արդէն իրե՛նց իսկ գոյութեամբ: Երիտթուրք պարագլուխները տարուած էին ընկերային

դարուինիստական տեսութիւնով, որի դրոյթները կիրառում էին Օսմանեան Կայսրութեան օրինակի վրայ եւ համարում, որ Թուրքական Պետութեան եւ ազգի գոյատեւումը պահանջում է Անատոլիայի աւելի մեծ միատարրացում[4]: Սակայն, խնդիրը դուրս էր նոյնիսկ «թուրքական հայրենիք» ստեղծելու մտայնութիւնից: Հայերին ոչնչացնում էին ոչ միայն Արեւմտեան Հայաստանում, այլեւ բոլոր այն վայրերում, որտեղ հասաւ թուրք զինուորը՝ նաեւ Իրանում եւ Արեւելեան Հայաստանում, Հայաստանի Հանրապետութիւնում, Ջաւախքում[5]: Այս ամէնը ուղեկցւում էր նաեւ մշակութային ժառանգութեան լիակատար ոչնչացման փորձերով:

Վերեւ ասուածը թոյլ է տալիս Հայոց Ցեղասպանութիւնը դասել ամբողջական, համապարփակ ցեղասպանութիւնների շարքին (total genocide)[6]: Ցանկացած ցեղասպանութիւն արտառոց պատմական իրադարձութիւն է եւ հսկայական հետեւանքներ է յառաջ բերում: Համապարփակ ցեղասպանութիւններն առաւել սարսափելի բացասական հետեւանքներ են ունենում զոհ դարձած ազգի համար:

Հետեւանքները կարելի է բաժանել ժողովրդագրական, մշակութային, աշխարհագրական, տնտեսական, քաղաքական եւ հոգեբանական բաղադրիչների: Բաժանումը սակայն պայմանական է, քանի որ այս հետեւանքները շատ դէպքերում համընկնում են եւ հատւում:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ[7]

1948ի Խորհրդաժողովը հիմնական շեշտը դնում է հենց մարդկային կորուստների վրայ («խմբի ոչնչացում»). այդ առումով տրամաբանական է հետեւանքների գնահատումը սկսել հենց Հայոց Ցեղասպանութեան ժողովրդագրական հետեւանքների քննարկումից:

Հայոց Ցեղասպանութեան մարդկային կորուստները հսկայական են: Բնաջնջուեց գրեթէ ամբողջ արեւմտահայութիւնը: Ըստ Թէոդիկի *Ամէնուն Տարեցոյցի*ն Առաջին Համաշխարհային Պատերազմից յետոյ վերապրող արեւմտահայերի թիւն ընդամէնը 592,000 էր[8]: Զարդերին, սովին եւ համաճարակներին 1918-1920ին զոհ գնացին նաեւ հարիւր-հազարաւոր արեւելահայեր: Քեմալականների յարձակումը աղէտալի եղաւ այն

արեւմտահայերի համար, ովքեր Առաջին Աշխարհամարտից յետոյ վերադարձել էին իրենց թողած բնակավայրերը: Նրանց մեծ մասը դաժանօրէն կոտորուեց, իսկ մնացեալը երկրորդ անգամ թողեցին հայրենիքը[9]:

Զոհերի հսկայական չափը նշում էին նաեւ թուրքերը: Այսպէս՝ Իթթիհադ Վէ Թերաքքը Կուսակցութեան իշխանազրկումից յետոյ, նոր կառավարութիւնը առաջնային խնդիր համարեց այս հարցի ուսումնասիրութիւնը: 1918ին Ներքին Գործերի նախարար Մուստաֆա Արիֆի (Դէմիր) նախաձեռնութեամբ ձեւաւորուեց յանձնաժողով, որը աշխատեց երեք ամիս եւ հրապարակեց արդիւնքները նոր Ներքին Գործոց նախարար՝ Զեմալ Բէյի պաշտօնավարման ժամանակ՝ 1919 Մարտի 14ին: Ըստ այդ աղբիւրի 1914-18ին հայկական զոհերի թիւը կազմում էր 800,000[10]: Այս թիւը բաւականին տարածուած էր այդ ժամանակ: Օրինակ, այն է նշում Մուստաֆա Քեմալը (Աթաթուրք) ամերիկեան զօրավար Հարբորդի հետ հանդիպման ժամանակ[11]:

Հայոց Ցեղասպանութեան զոհերի տարբեր թուեր են շրջանառւում: Նշւում են 800 հազարից 1.5 միլիոնի հասնող թուեր: Թեման ուսումնասիրող առաջատար գիտնականների մեծ մասը համաձայն է 1,5 միլիոն թուի հետ (Ռուբէն Ադալեան, Ս. Տոթթէն, Դէյւիդ Լենգ, Ռոբըրտ Մելսըն, Տիգրան Պոյաճեան, Վահագն Տատրեան)[12]:

Մեծ Եղեռնի մէկ միլիոնի հասնող զոհերի թուի մասին առաջին անգամ յիշատակւում է 1919 Մարտին Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովին հայկական պատուիրակութեան ներկայացուած յուշագրում՝ "Tableau approximatif des réparations et indemnités pour les dommages subis par la nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase"[13]: Յետագայում այդ թիւը դառնում է բոլորի կողմից ընդունելի: Այսպէս, 1921ին Սեպուհ Ակունին նոյնիսկ գիրք է լոյս ընծայում *Միլիոն Մը Հայերու Զարդի Պատմութիւնը* վերնագրով[14]:

Արդէն 1960ականների կէսերից սկսում են հանդիպել 1,5 միլիոն զոհերի մասին յիշատակումներ: Մեծ Եղեռնի 50րդ տարելիցը մեծացրեց հետաքրքրութիւնը թեմայի հանդէպ եւ ասպարէզ եկան Երուանդ Խաթանասեանի *Հայոց Թիւը* գրքոյկը[15] եւ Ազատ Համբարեանի յօդուածը «Արեւմտահայերի Թուաքանակի

Հարցի Շուրջ»[16], որը եւ յետագայ տարիների ընթացքում դարձաւ ամենաընդունուած թիւը:

Սակայն բացի մէկուկէս միլիոն զոհերի, ժողովրդագրական կորուստների մէջ անհրաժեշտ է ներառել բռնի կրօնափոխուած կանանց եւ որբերին: Հայոց Ցեղասպանութեան տարիներին, շատ կանայք ու աղջիկներ դառնում էին մուսուլմանական ընտանիքների անդամ, որպէս ամուսիններ, աղախիններ, սպասաւորներ: Նրանք նաեւ սեռական ստրկութեան զոհ էին դառնում: Փրկութեան միակ միջոցը իսլամ ընդունելն էր[17]: Նոյնը կատարւում էր հայ մանուկների եւ որբերի հետ: Թուրքական պետական որբանոցները յստակ մշակուած կրօնափոխութեան եւ թուրքացման քաղաքականութիւն էին իրականացնում: Երեխաներին արգելում էին հայերէն խօսել, նրանք ստանում էին թուրքական անուններ եւ իսլամացւում[18]: Թէեւ Առաջին Աշխարհամարտից յետոյ հայկական եւ միջազգային մարդասիրական կազմակերպութիւնները լայնածիր որբահաւաք աշխատանք նախաձեռնեցին, սակայն տասնեակ հազարաւոր կանայք եւ երեխաներ այդպէս էլ չվերադարձան հայկական ինքնութեանը[19]:

Ռաֆայէլ Լեմկինը ընդգծում է, որ ցեղասպանութիւնը թիրախաւորում է խումբը իբրեւ խումբ եւ հետեւաբար նաեւ ներխմբային կապերը, կառուցուածքը եւ յարաբերութիւնները[20]: Հայոց Ցեղասպանութեան արդիւնքում վերացան ամբողջ գերդաստաններ, բաժանուեցին ընտանիքներ: Սա իր հետ բերեց ազգի ժողովրդագրական զարգացման գործընթացի դանդաղեցում: Մինչեւ ցեղասպանութիւնը որոշ օտարերկրացիների զեկոյցներում նշւում է, որ հայերի ժողովրդագրական աճը գերազանցում էր մուսուլմանների աճին: Վանի Ռուսաստանի հիւպատոս Մաեւսկին որպէս պատճառ նշում է հենց մեծ գերդաստաններով ապրելու հանգամանքը, որը խթանում էր մեծ ընտանիքներ կազմելու ձգտումը: Այլ աղբիւրներ նշում են, որ պատճառը այն էր, որ հայերը չէին զօրակոչւում բանակ եւ վերարտադրողական տարիքի տղամարդկանց մէջ կորուստների թիւը փոքր էր: Այս առումով, մէկուկէս միլիոն բնակչութիւնը գոյատեւման ու բնականոն զարգացման պայմաններում կարող էր յետագայ հարիւր տարուայ մէջ աճել միքանի անգամ, եթէ նրանց կեանքը չընդհատուէր: Այսպիսով կարող ենք խօսել նաեւ

բնակչութեան ապագայի հաշուին հնարաւոր կորուստի մասին: Ակնկալուող, սակայն չծնուած կեանքերի թիւը սովորաբար հաշուարկում են 20 միլիոնի չափ[21]:

Որոշ ժամանակ պահանջուեց որ ազգը կարողանար վերականգնել իր սովորական բնականոն ընկերային, սեռատարիքային համամասնութիւնը: Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ հայկական բնակչութիւնը մեծամասամբ կանանցից եւ որբ երեխաներից բաղկացած համայնք էր:

Հայոց Ցեղասպանութեան հետեւանքներից էր նաեւ հայկական սփիւռքի առաջացումը: Իհարկէ, Հայաստանից դուրս հայկական համայնքներ գոյութիւն ունէին նաեւ Ի. դարասկզբից առաջ էլ, բայց միայն Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ ստեղծուեց մի իրավիճակ, երբ հայ ժողովրդի մեծ մասը բնակւում էր հայրենիքից դուրս: Առաջացաւ հայկական սփիւռքի ժողովրդագրական գերակայութեամբ մի ազգ: Սա մի նոր, աննախընթաց իրողութիւն էր հայ ժողովրդի համար: Այն հիմնովին փոխեց պատկերը եւ զարգացման հեռանկարները: Աւելին, այդ զարգացումը մի ուղղութիւն չէր, կախուած՝ ընդունող երկրներից եւ մշակոյթներից. այն կարող է լինել նշանակալիօրէն տարբեր[22]:

Սփիւռքի գերակշռութիւնը իր հետ նոյնպէս բերեց տեսանելի բարդութիւններ: Դժուարանում էր հայկական ինքնութեան պահպանումը: Սփիւռքում հայ մնալը պահանջում էր լրացուցիչ ջանքերի գործադրում: Ջանքերի, որոնք կարող էին ուղղուել այլ, ստեղծարար աշխատանքի: Աւելանում էին խառն ամուսնութիւնները եւ արագանում ձուլման գործընթացները:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

Հայոց Ցեղասպանութեան հետեւանքներից է նաեւ մշակութային ժառանգութեան ոչնչացումը: Զոհ ազգի պատմամշակութային ժառանգութեան ոչնչացումը ուղեկցում է ցանկացած ցեղասպանութեան: Ինչպէս նշում է հետազօտող Պամելա Դէ Կոնդապան, նիւթական մշակոյթի համակարգուած եւ դիտաւորեալ ոչնչացումը գալիս է վկայելու, որ տուեալ էթնիկ խումբը նման մշակութային զտման մաս է կազմում[23]:

Յատկանշական է, որ Լեմկինը մինչ "genocide" եզրի ներմուծումը իրաւական եւ գիտական դաշտ, հանդէս եկաւ նաեւ միջազգային օրէնսդրական միքանի նախագծերով "barbarism" եւ

"vandalism" երեւոյթների դատապարտման համար: Բարբարոսութիւնը նա սահմանում էր հետեւեալ կերպ. «*ազգային, կրօնական, ցեղային եւ ընկերային ընդհանրութեան կանխամտածուած ոչնչացում*», իսկ վանդալիզմը՝ «*...ընդհանրութիւնների ուրոյն հանճարի դրսեւորում հանդիսացող մշակոյթի եւ արուեստի աշխատանքների ոչնչացում*»: Ընդ որում Լեմկինը պնդում էր, որ թէ՛ վանդալիզմը եւ թէ՛ բարբարոսութիւնը դիտարկուեն որպէս միջազգային յանցագործութիւններ[24]: Այսինքն մշակութային ժառանգութեան ոչնչացումը նոյնիսկ երբեմն հաւասարեցւում էր մարդկային խմբի ոչնչացմանը:

Մշակութային եղեռնը մշտապէս ուղեկցել է հայկական կոտորածներին: Ընդ որում, խօսքը ինչպէս մշակութային արժէքների ծրագրուած պետական ոչնչացման քաղաքականութեան, նոյնպէս էլ ուղղակի համատարած կենցաղային, ամէնօրեայ մշակութային ոչնչացմանը զանգուածային մասնակցութեան մասին է:

Այսպէս, հայկական կոտորածների արաբ ականատեսներից մէկը՝ փաստաբան Ֆայէզ Էլ Ղոսէյնը, իր յուշերում գրում է. «*...Հայերի կոտորածներից յետոյ կառավարութիւնը յանձնաժողովներ է ստեղծել, որոնք զբաղւում են լքեալ գոյքի վաճառքով: Հայկական մշակութային արժէքներն ամէնաէժան գնով են վաճառւում... Ես մի անգամ գնացի եկեղեցի՝ տեսնելու, թէ ինչպէս է կազմակերպւում այդ իրերի վաճառքը: Հայկական դպրոցների դռները փակ են: Գիտութեան գրքերը թուրքերն օգտագործում են շուկայում պանիր, խուրմա, արեւածաղիկ փաթեթաւորելու համար*»[25]:

1894-1896ի համիդեան կոտորածների տարիներին հայկական պատմաճարտարապետական յուշարձաններից կողոպտուել են 795 եկեղեցի, 85 վանք, քանդուել են 170 եկեղեցի, 26 վանք, հրկիզուել են 69 եկեղեցի, 9 վանք, մզկիթի են վերածուել 50 եկեղեցի, 10 վանք[26]: Հայկական մշակութային ժառանգութեան կորուստը զգալի է եղել նաեւ 1909ի կիլիկիահայութեան կոտորածների ընթացքում: Միայն Ադանայի Նահանգի 37 գիւղերում ու քաղաքներում ջարդերի հետեւանքով հրկիզուել կամ աւերուել են 50ից աւելի հայկական եկեղեցիներ ու դպրոցներ, այդ թւում՝ Ադանա քաղաքում՝ 6 եկեղեցի եւ 5 դպրոց[27]:

1913-1914ի Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի տուեալներով՝ Օսմանեան Կայսրութիւնում գործել են հայկական 2538 եկեղեցի, 451 վանք, 1996 դպրոց, այդ թւում՝ Արեւմտեան Հայաստանի տարածքում՝ 1961 եկեղեցի, 413 վանք, 1251 դպրոց[28]:

1915-1923ին ոչնչացուեցին հազարաւոր պատմաճարտարապետական յուշարձաններ, դպրոցներ, դպրեվանքեր: 1919ի Փարիզի Վեհաժողովում հայկական պատուիրակութեան ներկայացրած պաշտօնական տեղեկագրի համաձայն՝ Հայոց Ցեղասպանութեան տարիներին Օսմանեան Կայսրութիւնում ամբողջութեամբ կամ մասամբ աւերուել են հայկական 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի ու մատուռ, 229 վանք, 26 բարձրագոյն վարժարան, 1439 դպրոց, 42 որբանոց[29]: Ուշագրաւ է, որ ազգային-մշակութային արժէքների ոչնչացումը թէեւ շատ դէպքերում ունէր տարերային բնոյթ, սակայն նրանում նկատւում էին ծիսական, կրօնական արարողակարգային տարրեր՝ հանւում էր խաչը, եկեղեցին վերածւում էր մզկիթի, եկեղեցին՝ պղծւում[30]:

Ուշագրաւ է Առողջապահութեան, ապա եւ Արտգործնախարար, Միութիւն Եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան անդամ, յետագայում Մուստաֆա Քեմալի խորհրդական Ռիզա Նուրի բէյի 1921 Մայիսի 25ի նամակն՝ ուղղուած Արեւելեան Ճակատի հրամանատար Քեազիմ Կարաբեքիրին, ուր մասնաւորապէս ասւում է. «*Անի Քաղաքի յուշարձանների մնացորդներն ու հետքերը պէտք է ջնջուեն երկրագնդի երեսից: Դուք մեծ ծառայութիւն կը մատուցէք Թուրքիային՝ այդ նպատակն իրագործելով*»[31]:

Այս գործընթացը շարունակուեց Թուրքիայի Հանրապետութեան տարիներին: Հայկական բազմաթիւ յուշարձաններ պայթեցուեցին կամ որպէս թիրախ օգտագործուեցին թուրքական բանակի զինավարժութիւնների ժամանակ: Այսպէս, Թուրքիայի Մշակոյթի Նախարարութիւնը նախաձեռնեց Անի Քաղաքի վերանորոգման գործընթացը, սակայն միաժամանակ իրականացնելով հայկական ինքնութեան ցանկացած վկայութիւն ջնջելով[32]:

Վերացան մատենադարան-թանգարաններ, գրադարաններ, որտեղ պահուել են տասնեակ-հազարաւոր հնագոյն ձեռագրեր[33], եկեղեցական սպասք, մասունքներ եւն.: Եզակի մագաղաթների մեծ մասը հրկիզուեց, իսկ կողոպտուած մասը թուրքերի ու քրդերի

կողմից օգտագործուեց գերազանցապէս բաղնիքներ տաքացնելու կամ շուկաներում մթերք փաթեթաւորելու համար: Սա բերեց դարերով կուտակուած գիտելիքի անվերադարձ կորստի:

Հայոց Ցեղասպանութեան տարիներին երիտթուրքական վարչակարգի կողմից իրագործուեց ոչ միայն նիւթական եւ հոգեւոր-մշակութային բացառիկ արժէքների ոչնչացում, այլեւ, առաջին հերթին, այդ արժէքները կրողների եւ ստեղծողների՝ հայ մտաւորականութեան զանգուածային բնաջնջման ծրագիրը[34]: Այսինքն, ոչնչացուեց այն ազգային սերուցքը, որ պէտք է դեռ շարունակէր իր ստեղծարար աշխատանքը:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Հայոց Ցեղասպանութեան ամէնամեծ հետեւանքներից էր **Հայրենազրկումը**: Հսկայական տարածք՝ հայկական հայրենիքը, հայազրկուեց: Կորցուեցին ոչ միայն հայկաբնակ շրջանները Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի եւ Սեբաստիայի վիլայէթներում եւ Կիլիկիան, այլ նաեւ՝ Արեւելեան Հայաստանի մաս կազմող Կարսի Մարզը:

Հայկական բնօրրանը Մեծ Հայքի 350,000 քառ. կլմ. տարածքից նեղացաւ վերածուելով այսօրուայ 44,000 քառ. կլմ.ի: Այս փոքր երկիրը բնականաբար աւելի քիչ ռազմավարական հնարաւորութիւններ է տալիս պաշտպանութիւն կազմակերպելու համար: Կորցուեց միջնաբերդի նմանուող Առաջաւոր Ասիայի եւ Մերձաւոր Արեւելքի նկատմամբ ռազմավարական դիրք զբաղեցնող մի տարածք: Նախկինում տարածքի մի մասի կորստի դէպքում, հնարաւոր էր կազմակերպել դիմադրութիւնը Հայկական Լեռնաշխարհի մէկ այլ մասում, եւ յարմար պայմանների դէպքում, ետ բերել կորցրածը: Հիմա Հայաստանը վերածուել է միայնակ մի ամրոցի[35]:

Բացի այդ կորցուեց կապը մի երկրի հետ, որտեղ հազարամեակներով հայ ժողովուրդը արարել էր եւ ապահովել իր զարգացումը:

Ցեղասպանութեան հետեւանքներից է նաեւ հայկական հայրենիքից հայկական հետքի եւ ինքնութեան վերացումը: Թուրքիայում վաղուց էր սկսուել եւ 1920ականներից աւելի սաստկացաւ Արեւմտեան Հայաստանի տեղանունները փոխելու գործընթաց: Ներկայումս Արեւմտեան Հայաստանի

տեղանունների աւելի քան 90%ը թրքացուել է[36]: Հայկական աշխարհագրական տեղանունները փոխարինուել են թուրքականով: Արգելւում է օգտագործել նոյնիսկ կենդանիների կամ բոյսերի անուանումները, որոնց լատինական անուանման մէջ կայ *Armenikya* հատուածը, դրանք փոխարինւում են աւելի չէզոք անուանումներով[37]:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Վիթխարի էր հայ ժողովրդի նիւթական կորուստը: Իհարկէ մէկուկէս միլիոն զոհերի եւ հայրենիքի կորուստը հնարաւոր չէ թուերով ներկայացնել, սակայն նիւթական արժէքների, կորուստի որոշակի թիւ հնարաւոր է հաշուարկել[38]: Այսպիսի մի թիւ հրապարակուեց 1919-20ի Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովում՝ շուրջ 20 միլիարդ ֆրանկ ոսկով, որից 14,598,510,000 ֆրանկ՝ արեւմտահայութեան կորուստն էր, իսկ 4,532,472,000 ֆրանկ՝ արեւելահայութեանը[39]: Պէտք է, սակայն նշել, որ թուերը վերաբերւում են, մինչեւ 1919ի հաշուարկը, չներառելով 1920-1923ի կորուստները, որոնք նոյնպէս շատ մեծ էին, յատկապես Հայաստանի Հանրապետութեան դէմ Թուրքիայի յարձակման ընթացքում գործած յանցագործութիւնների պարագայում:

Որոշ հաշուարկներով, որոնց յղում է անում 2014ի Հայոց Ցեղասպանութեան Փոխհատուցումների Ուսումնասիրման Խմբի (Armenian Genocide Reparations Study Group) իրականացրած մի հետազօտութեան "Resolution with Justice" զեկոյցը, 1919-20ի Փարիզի Վեհաժողովին հռչակուած 19-20 միլիարդ ֆրանկը կազմում է US$ 87,120,217,000: Եթէ այս թուին աւելացնենք լրացուցիչ 20 տոկոս՝ ցեղասպանութեան 1919-1923ի փուլի համար, ընդհանուր տնտեսական կորուստների գումարը համապատասխանելու է US $104,544,260,400ի: Այս հետազօտութեան հեղինակները հիմնւում են ԱՄՆ դոլարի սղաճի հաշուարկման U.S. Bureau of Labor Statistics Dollar Inflation մեթոդաբանութեան վրայ[40]:

Հայկական հարստութիւնն Օսմանեան Կայսրութիւնում վիթխարի էր: Դրանց թուին էին պատկանում դրամատնային աւանդները, արժէթղթերը, ապահովագրական գումարները, տները, հողերը, գործարանները, ձեռնարկութիւնները,

խանութները, եկեղեցիները եւ վանքերը, ինչպէս նաեւ այլ անշարժ եւ շարժական գոյք[41]:

Բաւական է նշել, որ դեռեւս ԺԹ. դարի երկրորդ կէսին հայերն էին տնօրինում Արեւմտեան Հայաստանի գրեթէ ողջ առեւտուրը, վերահսկում ներքին շուկան, գաւառի հումքի արտահանումն ու ներմուծումը: Հայ առեւտրականները ամուր կապեր էին հաստատել եւրոպական, ռուսական եւ ամերիկեան առեւտրական կազմակերպութիւնների հետ: Ի. դարի սկզբին կայսրութեան արհեստների ու արդիւնաբերութեան ոլորտներում հայերի տեսակարար կշիռը շուրջ 30% էր, առեւտրի բնագաւառում՝ 22%[42]: Հայ մեծահարուստները լուրջ ներդրում են ունեցել նաեւ կայսրութեան դրամատնային գործի կազմակերպման ոլորտում: 1856ին Կ. Պոլսում հիմնուած Օտտման Բանկի բաժնետէրերից էին Մագսուտ Սարիմեանը, Աբրահամ Ալահվերդեանը եւ Յովհաննէս Թնկրեանը[43]:

Այս հարստութիւնը նախանձ եւ ատելութիւն էր յառաջացնում թուրք մուսուլման բնակչութեան շրջանում, որը սկսում էր հայերին ընկալել իբրեւ հարստահարողներ եւ թուրք բնակչութեան հաշուին բարիքներ ստեղծող եւ հարստացող ժողովուրդ[44]: Օրինակ, Ահմէդ բէյը, Ադանայի մութասերիֆը, թւում է, թէ արտայայտում է թուրքական վերնախաւի ընդհանուր կարծիքը, շեշտելով յայտնի հողատէրեր Կենտերէջեան եղբայրներ Միհասին եւ Յովսէփին «*երկու հարիւր մուսուլմաններ պէտք է աշխատեն, այն ժամանակ երբ քրիստոնեաները վայելում են նրանց աշխատանքի պտուղները*»[45]:

Այս պայմաններում հայերի հարստութեան դրոյթն օգտագործուեց ցեղասպանութեան կազմակերպիչների կողմից որպէս միջոց զանգուածներին ներգրաւելու համար հայերին ոչնչացնելու գործընթացի մեջ, ինչպէս նաեւ սպանութիւնները արդարացնելու եւ բանականացնելու համար: Թալանը եւ կողոպուտը, հայերի ունեցուածքի իւրացումը դարձան Հայոց Ցեղասպանութեան կարեւոր տարրերը[46]:

1915 Յունիսի 10ին հրապարակուած «Այլ Վայրեր Տեղափոխուած Հայերին Պատկանող Անշարժ Գոյքերի Եւ Հողատարածքների Կառավարման Ձեւի Մասին» կանոնադրութիւնը եւ 1915 Սեպտեմբերի 26ին՝ «Լքեալ Գոյքերի Մասին» օրէնքը փորձում էին իրաւական հիմք ստեղծել մի մեծ

թալանի, որին ենթարկուեց տեղահանուած հայ ժողովուրդը[47]: Յետագայում Սեւրի Պայմանագրի 144րդ յօդուածով, հենց Օսմանեան Կայսրութիւնը կը ճանաչի այս օրէնքների անօրինական լինելը[48]:

Տիգրան Գույումճեանը նշում է մի դրուագ հայկական դրամական միջոցների առնչութեամբ: Երբ պատերազմից յետոյ քննարկւում էր թէ ինչում պէտք է հայ փախստականներին օգնութիւն ցուցաբերել, բրիտանական վարչապետ Ռեմզի Մըքդոնըլդին ներկայացուած յուշագրում, Ջէյմս Բոլդուինը եւ Հըրբըրթ Էսքուիթը նշում էին. «*Թուրքական 5 մլն. ոսկէ ֆունտ գումարը (որ կազմում էր մօտ 30 հազար կիլոգրամ ոսկի) եւ տեղադրուած էր թուրքական կառավարութեան կողմից Բեռլինի Reichsbankում 1916ին եւ զինադադարից յետոյ Դաշնակիցների կողմից առգրաւուած մեծամասամբ (հնարաւոր է նոյնիսկ ամբողջութեամբ) հայկական փողեր էր: Հայերի 1915ի բռնի տեղահանութիւնից յետոյ, նրանց ընթացիկ ու կուտակային հաշիւները կառավարութեան հրամանով փոխանցուել են Կ.Պոլիս, Պետական Գանձապետարան*»[49]: Ըստ Գույումճեանի այդ գումարն այսօր կազմում է $320,000,000 չհաշուած տոկոսները[50]:

Կորուստները միայն ուղղակի թալանի եւ ունեզրկման տեսքով չէին արտայայտւում: Ետ ընկաւ իր բոլոր ճիւղերով ազգային զարգացումը: Տնտեսութեան եւ արհեստների ամբողջ ճիւղեր ուղղակի անհետացան: Տասնամեակներ պահանջուեցին, որ ազգը գոյատեւման խնդրից անցում կատարի զարգացմանը: Այլ երկրներում ապաստան գտած հայութիւնը զրկուած էր ամէն ինչից: Չունէր ոչ միայն զարգացման համար նախնական դրամագլուխ, այլ նաեւ տարրական ապրուստի միջոցներ: Առաջիկայ տարիները դարձան նոր հայրենիքներում նիւթա-տնտեսական կուտակման տարիներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արեւմտեան Հայաստանի հայազրկումը դարձաւ Թուրքական Հանրապետութեան ստեղծման հիմք: Հայկական Պետականութիւնը տեղափոխուեց Արեւելեան Հայաստան, հայութեան զարգացումը կենտրոնացուեց միայն այս հատուածում, ինչը աներեւակայելի էր նախկինում:

Հայոց Ցեղասպանութեան տարիներին Արեւելեան Հայաստանում ստեղծուած Հայաստանի Հանրապետութիւնը երկար չգոյատեւեց. դրա պատճառներից մէկը հենց նոյն ցեղասպանական գործողութիւններն էին:

Նախ հանրապետութիւնն իր գոյութեան առաջին իսկ օրուանից օրհասական վիճակում էր: Արեւմտեան Հայաստանից մազապուրծ հարիւր հազարաւոր փախստականները, սովը, համաճարակները մի իրավիճակ էին ստեղծել, երբ շատ քիչ հնարաւորութիւն կար հանրապետութեան գոյատեւման համար[51]:

1920ի աշնանը քեմալականները Սեւրի Պայմանագիրը կասեցնելու նպատակով պատերազմ են սանձազերծում Հայաստանի Հանրապետութեան դէմ: Ունենալով թուային եւ սպառազինութեան գերազանցութիւն, թուրքերը գործակցում էին նաեւ Խորհրդային Ռուսաստանի հետ, որը դիտարկում էր Հայաստանը որպէս «իմպերիալիստական» Անտանտի դաշնակից: Հոկտեմբերի 30ին թշնամին կարողանում է գրաւել Կարսը եւ շարունակել գրոհը դէպի Ալեքսանդրապոլ[52]:

1920 Նոյեմբերի 8ին Թուրքիայի Արտաքին Գործերի նախարարի պաշտօնատար Ահմէդ Մուհթար բէյը հեռագրում է Արեւելեան Ռազմաճակատի հրամանատար Քեազըմ Քարաբեքիր փաշային «*...բացարձակ անհրաժեշտութիւն է, որ Հայաստանը քաղաքականապէս եւ նիւթապէս/ֆիզիկապէս մէջտեղից վերացուի*»[53]: Այս հեռագիրը բացայայտում է, որ վերջնական խնդիրը եղել է հանրապետութեան ոչնչացումը, եւ ի նկատի ունենալով Թուրքական Պետութեան քաղաքականութեան շարունակականութիւնը՝ կարելի է խօսել նաեւ ցեղասպանական բնոյթի դիտաւորութեան մասին, երբ ոչնչացնելով արեւմտահայութեանն՝ Օսմանեան Կայսրութիւնը ձգտում է աւարտին հասցնել հայ ժողովրդի ոչնչացումը: Այս նամակի գոյութիւնը, ինչպէս նաեւ 1920ի հայ-թուրքական պատերազմը լրիւ այլ հողի վրայ են դնում Հայաստանի պետականութեան կորստի հարցը:

Պատմաբան Ռիչըրդ Յովհաննիսեանն ընդգծում է, որ եթէ նոյնիսկ ցեղասպանութիւնը տեղի ունենար, բայց դրա երկրորդ փուլով չկործանուէր Հայկական առաջին Հանրապետութիւնը, այսօր նրա բնակչութիւնը կը հասնէր մօտ քսան միլիոնի, ինչը թոյլ կը տար Հայաստանին լինել տարածաշրջանային ուժ,

համապատասխան աշխարհաքաղաքական առաւելութիւններով եւ քաղաքական, ռազմական եւ ինքնութեան անվտանգութեամբ[54]:

Հայոց Ցեղասպանութիւնն ունեցաւ մէկ այլ, միջազգային քաղաքական հետեւանք: Յանցագործութիւնը չդատապարտելը եւ մեղաւորներին արժանի պատժի չենթարկելը հիմք ստեղծեց նոր ցեղասպանութիւնների համար: Յայտնի են Ադոլֆ Հիտլէրի խօսքերը, որ ասուել են 1939 Օգոստոսին Գերմանական Բանակի հրամկազմի հետ հանդիպման ժամանակ, այն մասին, որ յաղթողներին ոչ ոք չի դատապարտում, իսկ դաժանութիւնները ոչ ոք չի յիշում. «Ո՞վ է այսօր խօսում հայերի մասին»[55]:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

Ցեղասպանութիւնները ծանրագոյն, երկարաժամկէտ եւ անդառնալի հետեւանքներ են թողնում եղեռնի ենթարկուած ժողովրդի հոգեբանութեան վրայ[56]:

Ցեղասպանութիւնից փրկուածների եւ նրանց ժառանգների վրայ ցեղասպանութեան ազդեցութեան վերաբերեալ հետազօտութիւնները հիմնուում են վերապրածների հարցազրոյցների, նրանց բանաւոր վկայութիւնների ու պատմութիւնների վրայ:

Ըստ հոգեբանների՝ հայոց կոտորածները երեք հիմնական հետեւանքների են յանգեցրել՝ մեղքի զգացում, տագնապ եւ ընկճախտ[57]:

Ցեղասպանութիւնից վերապրածները, երբեմն նաեւ նրանց անմիջական ժառանգները յաճախ մեղքի զգացում են ունենում: Յովհաննիսեանը մի օրինակ է բերում՝ ցեղասպանութիւն վերապրած Պետրոսն ասում է հետեւեալը. «*Ես կանգնած եմ ձեր առաջ եւ ուզում եմ ներողութիւն խնդրել: Ես ողջ եմ, քանի որ բախտ եմ ունեցել սովորելու ամերիկեան դպրոցում: Ես ներողութիւն եմ խնդրում ողջ մնալու համար*»[58]: Կար նաեւ այն մտայնութիւնը, թէ ցեղասպանութեանը զոհ են գնացել լաւագոյն հայերը, իսկ վերապրել են ոչ-արժէքաւորները, թէեւ արժանի չեն դրան[59]:

Ցեղասպանութեան անմիջական հետեւանք է նաեւ ֆիզիկապէս բնաջնջուելու հաւաքական վախը, որը յաճախ վերածուել է ախտաբանական վախի, խելացնոր զգայախաբութիւնների, մղձաւանջների, մօտալուտ ջարդի

սպասումի կամ խուճապահար փախուստի: Սա շատ բնորոշ է ցեղասպանութիւն եւ տեղահանութիւն ապրած սերնդին[60]: Հետազօտող Անի Գալայճեանը նաեւ հայերի ներազգային յարաբերութիւններում առկայ լարուածութիւնը բացատրում է արտաքին աշխարհի նկատմամբ կուտակուած զայրոյթով, որը չպարպելով բերում է իրենց հայրենակցի նկատմամբ զայրոյթի[61]:

Երկրորդ սերունդը, թէեւ ցեղասպանութեան ողջ սարսափը այդքան էլ չի գիտակցում, նոյնպէս ունի հոգեբանական խնդիրներ (ընկճախտ, անհայրենիք լինելու բարդոյթ, կեանքը եւ նրա տուած բարիքները վայելելու անկարողութիւն)[62]: Հետեւանքներից է նաեւ անվիարժէքութեան բարդոյթը, սեփական ազգի եւ նրա ապագայի մասին հաւատի բացակայութիւնը:

Ցեղասպանութեան հոգեբանական թրոման աւելանում է ցեղասպանութիւնը գործադրողների յետնորդների ժխտողականութեամբ: Այն վիրաւորում է զոհի յիշողութիւնը եւ աւելացնում վերապրածների ընկճուածութիւնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եթէ փորձենք կատարել Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների գնահատում, ապա կը գանք միքանի եզրայանգման.

ա) Հայ ժողովրդի կորուստները սարսափելի էին եւ շատ այլ ազգերի եւ էթնոսների համար կարող էին մահացու լինել:

բ) Հայոց Ցեղասպանութեան բացասական հետեւանքների գնահատումն ընդամէնը մարդկային եւ նիւթական կորուստների պարզ հանրահաշիւային գումար չի կարող լինել: Այն կորուստների եւ բացասական հետեւանքների մի համալիր է, որն ինքնին գերազանցում է կուրուստների պարզ հաշուարկը: Հայոց Ցեղասպանութեանը զոհ գնաց ոչ միայն 1,5 միլիոնից աւել մարդ, այլ նաեւ հայ ազգի ժողովրդագրական կառուցուածքի մէջ որակական փոփոխութիւններ տեղի ունենցան: Զեւաւորուեց մի ազգ, որի մեծամասնութիւնը ապրում է իր հայրենիքից դուրս, դրանից բխող բոլոր հետեւանքներով:

գ) Հայոց Ցեղասպանութեան հետեւանքները շատ դէպքերում անհնար է չափելի միաւորներով բնութագրել: Դրանք երկարաժամկէտ կորուստներն են, որոնց բացասական ազդեցութիւնը շատ ժամանակ զգացնել է տալիս միայն այն

դէպքում, երբ սկսում ենք առնչուել ի յայտ եկած խնդիրների հետ: (Օրինակ՝ հոգեբանական խնդիրները. շատ դէպքերում թրոմաթիք յիշողութիւնը դառնում է հիւանդութիւնների եւ բարդոյթների պատճառ):

դ) Հայոց Ցեղասպանութեան որոշ բացասական հետեւանքները ունեն ժամանակի ընթացքում իրենց որակը ու չափը փոխելու յատկանիշ: Այսինքն, ժամանակի ընթացքում նոյնիսկ փոքր, աննշան խնդիրը կարող է տասնամեակներ յետոյ մի հսկայական որակական շեղման բերել:

ե) Հայոց Ցեղասպանութեան բոլոր՝ ժողովրդագրական, մշակութային, աշխարհագրական, տնտեսական, քաղաքական եւ հոգեբանական հետեւանքները պէտք է դիտարկել իբրեւ մէկ ընդհանրութիւն, մէկ համալիր: (Այսպէս, ազգային վերնախաւի ոչնչացումը բերում է ոչ միայն ժողովրդագրական կորուստի, այլ նաեւ յետագայում քաղաքական շարունակական աւագանիի ձեւաւորման համար լուրջ խոչընդոտ է դառնում, աշխարհագրական կորուստները՝ Արեւմտեան Հայաստանի հայազրկումը իր հետ բերում են մշակութային կորուստներ: Եւ խօսքը ոչ միայն հազարաւոր եկեղեցիների, ամրոցների, եւ բնակավայրերի վերացման մասին է, այլ նաեւ ժողովրդին իր միջավայրից կտրելու պատճառով առաջացած ստեղծագործական ընթացքի ընդհատման մասին):

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] William A. Schabas, *Genocide in International Law: The Crime of Crimes*, Camridge University Press, 2000:

[2] «Ցեղասպանութիւն Յանցագործութեան Կանխման Եւ Պատժման Կոնվենցիա» (http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf):

[3] Taner Akcam, "Turkey and the Armenian Ghost," *Armenian Review*, December 15, 2012 (http://armenianweekly.com/2012/12/15/akcam-turkey-and-the-armenian-ghost/ (last access 27.04.2015):

[4] Ronald Grigor Suny, "Writing Genocide: The Fate of the Ottoman Armenians", *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, Ronald Grigor Suny, Fatma Mu-ge Gocek, Norman M. Naimark (eds.), USA, Oxford University Press, 2011, էջ 34-35:

[5] Մանրամասն տե՛ս՝ Ա. Ամուրեան, *Ստրպատականի Հայութեան Վիճակը Թրքական Բանակների Ներխուժման Օրերին: Կանխամտածուած Եւ Նախօրօք Ծրագրուած Ցեղասպանութիւն*, Թեհրան, Տպ. Ալիք, 1979. նաեւ՝ Սեդրակ Աւագեանց, *Կոտորածը Սալմաստում (Ականատեսի Պատմուածք)*, կազմ.՝ Ս.

Աւագեանց, Թիֆլիս, Տպ. Հերմէս, 1915. նաեւ՝ *Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում*, խմբ.՝ Մ. Ներսիսեան, Երեւան, Հայաստան Հրատ., 1991:

[6] Եզրի մասին մանրամասն տե՛ս՝ Robert Melson, *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago, University of Chicago Press, 1996. նաեւ՝ Christian P. Scherrer, "Towards a Theory of Modern Genocide. Comparative Genocide Research: Definitions, Criteria, Typologies, Cases, Key Elements, Patterns and Voids," *Journal of Genocide Research*, 1:1, 1999, էջ 13-23:

[7] Յօդուածի հեղինակը շնորհակալութիւն է յայտնում պատմ. գիտ. թեկնածու Ռ. Թաթոյեանին այս բաժինը գրելու ընթացքում օգտակար խորհուրդների համար:

[8] *Ամէնուն Տարեցոյցը*, Կ. Պոլիս, 1916-20, (Ժ.-ԻԹ. տարի), Հրատ. Հրաչեայ Տէր Ներսէսեան, Կ. Պոլիս, Տպ. Կ. Քէշիշեան եւ որդի:

[9] Տե՛ս օրինակ՝ Ռուբէն Հ. Գասպարեան, *Հայկական Կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2005:

[10] Ալեմդար Իքդամ Վաքիթ, 1919 թ, Մարտի 15 ըստ՝ Танер Акчам, "1915: Легенды И Реальность" (Թանէր Աքչամ, 1915. առասպելներ եւ իրականութիւն), *Ռադիկալ*, 23 Մայիս 2003, (http://genocide.ru/lib/akcam/1915.htm):

[11] Акчам, "1915":

[12] Մանրամասն տե՛ս՝ R. Rummel, *Statistics of Democide, Genocide and Mass Murder Since 1900*, LIT Verlag Müster, 1998, էջ 78-101:

[13] *Հայկական Հարցը Հաշտութեան Կոնֆերանսի Առաջ*, Թիֆլիս, Տպ. «Աշխատաւոր», 1919:

[14] Սեպուհ Ակունի, *Միլիոն Մը Հայերու Ջարդի Պատմութիւնը*, Կ. Պոլիս, Հայաստան Գրատուն, 1921:

[15] Երուանդ Խաթանասեան, *Հայոց Թիւը*, Հրատ. Եղեռնի 50-ամեակի Կեդր. Յանձնախումբի, Բոստոն, 1965:

[16] Ազատ Համբարեան, «Արեւմտահայերի Թուաքանակի Հարցի Շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1969, № 2, էջ 98-114:

[17] Ռուբէն Մելքոնեան, *Հայերի Բռնի Իսլամացումը Ցեղասպանութեան Տարիներին. Ընթացքը Եւ Հետեւանքները*, Հեղինակային Հրատ., Երեւան, 2010:

[18] Յարութիւն Ալպոյաճեան, *Խաչելութեան Համփոներով*, Երեւան, 2005, նաեւ՝ Գառնիկ Բանեան, *Յուշեր Մանկութեան Եւ Որբութեան (Անթուրայի Որբանոցը)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1992:

[19] Vahe Tashjian, "Gender, Nationalism, Exclusion: the Reintegration Process of Female Survivors of the Armenian Genocide," *Nations and Nationalism* 15 (1), 2009:

[20] *Resolution with Justice. Reparations for the Armenian Genocide*, The Report Of The Armenian Genocide Reparations Study Group, March 2015, էջ 67:

[21] armeniangenocidelosses.am: Այս կայքը պատրաստուել է հայաստանեան հետազօտական խմբի կողմից՝ հիմնախնդրի հասարակական քննարկմանը նպաստելու համար: Խմբի կազմում են Թովմաս Սամուէլեանը, Դաւիթ Դաւիթեանը, Յովհաննէս Ասրեանը, Տիգրան Սահակեանը:

[22] Matthew J. Gibney, Randall Hansen, *Immigration and Asylum: from 1900 to the Present*, Santa Barbara, California: ABC-CLIO, 2005, էջ 13:

[23] Pamela de Condappa, "Cultural Cenocide in Bosnia-Herzegovina: Destroying Heritage, Destroying Identity", www.metamedia.stanford.edu/projects/CulturesofContact/admin/download.html?attachid=14883- ըստ՝ Ս. Պարսամեան, «Մշակութային Ժառանգութեան Ոչնչացումը Որպէս Ցեղասպանութեան Բաղկացուցիչ Մաս», *Մերձաւոր Արեւելք, 6 (ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտում Կազմակերպուած Երիտասարդ Արեւելագէտների Միջազգային 30-րդ Գիտաժողովի Նիւթեր)*, Երեւան, ԳԱԱ, Հրատ., 2009:

[24] Martin Shaw, *What is Genocide?* Polity, London, 2007, էջ 18, ըստ՝ Պարսամեան, «Մշակութային Ժառանգութեան Ոչնչացումը»:

[25] Fa'iz El-Ghusein, *Martyred Armenia*, 1917, London, էջ 33:

[26] Մ. Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ-Մատենադարան, Մ. Իզմիրլեանի անձնական դիւան, ցուցակ 34, թղթ. 14, վաւ. 615 ըստ Սեդա Պարսամեան, «Հայկական Մշակութային Արժէքների Ոչնչացումն Ու Դրա Հետեւանքները 1894-96 թթ. Համիդեան Կոտորածների Տարիներին», *Ցեղասպանագիտական Հանդէս*, 2,1, 2014, էջ 27:

[27] Մաղաքիա Օրմանեան, *Ազգապատում, Հտր.* Գ, Էջմիածին, 2001, էջ 5869-5870. նաեւ՝ A. Adossides, *Armeniens et Jeunes Turcs, Les Massacres de Cilicie*, Paris, էջ 104-105 ըստ Պարսամեան, «Մշակութային Ցեղասպանութեան Իրագործման Մեխանիզմները 1909 թ. Ադանայի Եւ Յարակից Շրջանների Կոտորածների Ընթացքում Եւ Դրանց Հետեւանքները», *Ցեղասպանագիտական Հանդէս*, 1, 2013, էջ 102:

[28] *Հայկական Հարցը Հաշտութեան Կոնֆերանսի*. նաեւ՝ Raymond H. Kévorkian and Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la Veille du Génocide*, Paris, Arhis, 1992, էջ 601:

[29] *Հայկական Հարցը Հաշտութեան Կոնֆերանսի*:

[30] Գ. Սիւրմէնեան, *Երգնկա*, Գահիրէ, Տպ. Սահակ-Մեսրոպ, 1947, էջ 348:

[31] K. Baghdjian, *The Confiscation of Armenian Properties by the Turkish Government Said to be Abandoned*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 2010, էջ 71:

[32] Թրքական Ապատեղեկատուութիւն՝ Անիի Եկեղեցիների Շուրջ, http://www.aztagdaily.com/archives/82832, http://news.am/arm/news/118576.html, «Թէ Ինչպէս Անին Կարող է Դառնալ «Յուշ» Կամ «Յիշողութիւն», http://hetq.am/arm/print/1553/ :

[33] Գէորգ Տէր-Վարդանեան, «Ցեղասպանութեան Պատճառով Կորստեան Մատնուած Ձեռագիր Մատեանների Թիւը Կարող է Գերազանցել 30 Հազարը», http://armenpress.am/arm/news/796472/ :

[34] ՄԱԿի 1948ի «Ցեղասպանութեան Յանցագործութեան Կանխման Եւ Դրա Համար Պատժի Մասին» Ուխտի նախնական տարբերակում ընդգրկուած մշակութային ցեղասպանութիւնը բնորոշող սահմանումներից երկրորդը վերաբերում է մտաւորականութեանը՝ որպէս մշակոյթի կրողի եւ արտադրողի, ըստ որի մշակութային ցեղասպանութիւն է համարւում նաեւ «այն մարդկանց բռնի եւ համակարգուած արտաքսումը, ովքեր ներկայացնում են տուեալ մշակութային խումբը» (Lyndel V. Prott, "Ethnocide," *Encyclopedia of*

Genocide and Crimes Against Humanity, Vol. 1, A-H, edited by Israel W. Charny, ABC-Clio, 2000, էջ 310):

[35] А. Айвазян, "Стратегические Последствия Геноцида Армян," *Византийское Наследство (Информационно-Аналитический Журнал)* (Հայերի Ցեղասպանութեան ռազմավարական հետեւանքները, Բիւզանդական ժառանգութիւն, տեղեկատուական-վերլուծական ամսագիր), No. 3, 2002, էջ 15:

[36] Լուսինէ Սահակեան, *Տեղանունների Թուրքացումն Օսմանեան Կայսրութիւնում Եւ Հանրապետական Թուրքիայում*, Մոնրէալ, 2011:

[37] Ռուբէն Մելքոնեան, «Տեղանունների Փոփոխութիւնը՝ Որպէս Թուրքացման Քաղաքականութիւն», *21-րդ Դար*, 6 (28), 2009, էջ 136:

[38] Երբ իսրայէլական հասարակութիւնում բուռն քննարկում էր Հոլոքոստի դիմաց գերմանական նիւթական փոխհատուցման հարցը, վարչապետ Դաւիդ Բէն-Գուրիոնը նշում էր, որ խօսքը բացառապէս թալանուած իրէական գոյքի արժէքի փոխհատուցման, այլ ոչ թէ «արեան դիմաց փողերի» մասին է, եւ որ նիւթական պահանջները չեն վերաբերում պատմա-բարոյական խնդիրներին, որոնք յաւերժ կը մնան չվճարուած (Յարութիւն Մարութեան, «Գերմանիայի Ֆինանսական Փոխհատուցումները Հրէութեանը. Ձեւաւորումը, Գործընթացը, Ներկայ Վիճակը», *21-րդ Դար*, թիւ 4 (22), 2008, էջ 137-138):

[39] *Հայկական Հարցը Հաշտութեան Կոնֆերանսի*:

[40] Resolution with Justice – Reparations for the Armenian Genocide, http://www.armeniangenocidereparations.info/?p=245#more-245 p. XII :

[41] Մանրամասն տե՛ս՝ Kevork K. Baghdjian, *The Confiscation of Armenian Properties by the Turkish Government Said to be Abandoned*, Antelias, Lebanon, Printing House of the Catholicosate of Cilicia, 2010. նաեւ՝ Kévorkian/Paboudjian, էջ 57-60:

[42] Մանրամասն տե՛ս՝ О. Инджикян, *Буржуазия Османской Империи* (Յովհաննէս Ինճիկեան, Օսմանեան Կայսրութեան բուրժուազիան), Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1977:

[43] Elke Hartmann, "The 'Loyal Nation' and Its Deputies. The Armenians in the First Ottoman Parliament" in Christoph Herzog & Malek Sharif (eds.), *The First Ottoman Experiment in Democracy*, Würzburg, Ergon, 2010, էջ 99:

[44] Erik J. Zürcher, *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*, London, I.B. Tauris, 2010, էջ 68:

[45] BNu/Fonds A. Andonian, P.J.1/3, file 4, Ayntab, f° 5v° cited in Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History*, London, I.B. Tauris, 2011, էջ 608:

[46] Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London, UK, Continuum International Publishing Group, 2011:

[47] Լեւոն Վարդան, *Հայկական Տասնհինգը Եւ Հայերու Լքեալ Գոյքերը*, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1970:

[48] Susan Karamanian, "Economic-Legal Perspectives on the Armenian Genocide," *International Criminal Law Review* 14:2 (2014) էջ 242-260:

[49] Shavarsh Toriguian, *The Armenian Question and International Law*, Beirut, Hamaskaïne, 1973, էջ 107-8, quoting André Mandelstam, *La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien*, reprint, Beirut, Hamaskaine, 1970, էջ 489-493 ըստ՝ Dickran Kouymjian, "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process" (http://armenianstudies.csufresno.edu/faculty/kouymjian/articles/confiscation.htm#foot_out_01):

[50] Kouymjian:

[51] Սիմոն Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, Երեւան, 1993. նաեւ՝ Richard Hovhannisian, *The Republic of Armenia*, LA, University of California Press, 1971-1996:

[52] Գ. Եազըճեան, *Կարսի 1920 թ. Անկման Խորքային Պատճառները*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2007. նաեւ՝ Էդիկ Զօհրաբեան, *1920թ. Հայ-Թուրքական Պատերազմը Եւ Տէրութիւնները*, Երեւան, Ոսկան Երեւանցի Հրատ., 1997:

[53] Ռուբէն Սաֆրաստեան, *Օսմանեան Կայսրութիւն. Ցեղասպանութեան Օրագրի Օագումնաբանութիւնը (1876-1920 թթ.)*, Երեւան, Լուսակն, 2009, էջ 191:

[54] Resolution with Justice, էջ 87:

[55] Kevork Bardakjian, *Hitler and the Armenian Genocide*, Cambridge, Zoryan Institute, 1985:

[56] Տե՛ս, օրինակ՝ Մ. Գարագաշեան, *Ցեղասպանութեան Հոգեցնցումն Ու Ազգային Ինքնութիւնը*, Երեւան, ԴԱԼԼ Հրատ., 2006:

[57] Տիգրան Սալումեան, «Հայոց ցեղասպանութեան սոցիալ-հոգեբանական հետեւանքները», https://krishayas.wordpress.com/2012/11/15/հայոց-ցեղասպանութեան-սոցիալ-հոգեբան/

[58] R. Hovhannisian, *The Armenian Genocide in Perspective*, New Brunswick, Transaction Press, 1987, էջ 178:

[59] Hovhannisian, *The Armenian Genocide in Perspective*, էջ 178:

[60] Հ. Թութունջեան, «Ցեղասպանութեան Հոգեբանական Հետեւանքները», *Հայկական Հարց Հանրագիտարան*, Երեւան, 1996, էջ 447-48:

[61] Anie Kalayjian and Marian Weisberg, *Generational Impact of Mass Trauma: The Post-Ottoman Turkish Genocide of the Armenians in Jihad and Sacred Vengeance*, J. S. Piven, C. Boyd, and H.W. Lawton (eds.), New York, Writers Club Press, 2002, էջ 270:

[62] Սալումեան:

THE DEMOGRAPHIC, CULTURAL, PSYCHOLOGICAL, GEOGRAPHIC, ECONOMIC, AND POLITICAL CONSEQUENCES OF THE GENOCIDE ON THE ARMENIANS (SUMMARY)

SUREN MANUKYAN

Genocide is a crime committed against humanity. Nonetheless, the target is a single, specific ethnic, racial, or religious group.

The objective of the Armenian Genocide was not to annihilate huge masses of humankind. The intention was more horrible and comprehensive: to annihilate the Armenian nation and achieve the non-existence of the Armenians. This is why the Armenian nation bears the negative consequences of this genocide in terms of demography, culture, geography, economy, politics and psychology.

If we try to gauge the consequences of the Armenian Genocide we may conclude that:

a) The losses of the Armenian nation were huge and would have eradicated the whole nation in the case of some other nations and ethnicities.

b) One cannot encompass the consequences of the Armenian Genocide by looking only at human and financial losses. It is a conglomerate of negative consequences which goes far beyond mere numbers. In fact, the Armenian Genocide not only took the lives of one and a half million Armenians but also reshaped the demographic structure of the nation, with all its diverse consequences.

c) Indeed, in several instances it is impossible to define the consequences of the Armenian Genocide in numbers. These consequences are long-term losses, which have an ongoing negative impact as seen when we start to analyze the outcomes. One of these outcomes has to do with psychological problems which cause traumatic sicknesses and complex behavior.

d) Some of the negative consequences of the Armenian Genocide have extensive ramifications. In certain cases seemingly tiny issues may, in a few decades, be transformed into huge problems.

e) The demographic, cultural, psychological, geographic, economic, and political consequences of the Genocide on the Armenians should be evaluated using a holistic approach. In fact, the loss of the elite was not only a demographic loss, but led to a break in the continuity and formation of the political elite and became a serious impediment to its further development and growth. Likewise, the geographic losses of Western Armenian land and the ethnic Armenian cleansing led to cultural losses. We do not refer to the loss of thousands of Armenian churches and monasteries, fortresses and castles, but of the disappearance of residential areas and the break in cultural creation due to the detachment of the nation from its natural milieu.

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ
vladimirvardanyan@gmail.com

Սոյն զեկոյցում փորձ է կատարւում վերլուծել Հայոց Ցեղասպանութեանը առնչուող Օսմանեան Կայսրութեան հիմնական միջազգային իրաւական պարտաւորութիւնները եւ ցոյց տալ թէ այս հարցում ի՛նչ հեռանկարներ կարող է ունենալ հայութիւնը՝ ապագայում: Միաժամանակ, փորձ է կատարւում պատասխան տալ թուրքական քարոզչամեքենայի կողմից շատ յաճախ յառաջ քաշուող այն մօտեցումներին թէ Հայոց Ցեղասպանութիւնը պատժելի չի եղել, քանզի գոյութիւն չի ունեցել հռչակագիր-ուխտ որ կը պատժէր 1915 թուականի իրադարձութիւնները: Ինչպէս յայտնի է, թուրքական պաշտօնական մօտեցման համաձայն այս հարցն ընդհանրապէս պէտք է իրաւական ոլորտից տեղափոխուի պատմական հետազօտութիւնների ոլորտ[1]:

Որպէս մի փոքր նախաբան, ներկայացնենք Տողու Փերինչէքի գործով վերջերս տեղի ունեցած դատավարութեան ժամանակ Եւրոպական Դատարանում նրա իսկ կողմից հնչեցուած միտքը: Նա պարզ ասում է, որ չի հերքում հայերի զանգուածային ոչնչացումը, բայց չի կարող որակել այն որպէս ցեղասպանութիւն[2]:

Տուեալ հարցում կողմնորոշուելու համար անհրաժեշտ է յստակեցնել հետեւեալ հարցադրումները. ի՛նչ է Ցեղասպանութիւնը, ի՛նչ պարտաւորութիւններ ունէր Օսմանեան Կայսրութիւնը հայերի հանդէպ 1800ականների վերջից մինչեւ Օսմանեան Կայսրութեան փլուզումը, եւ ինչքանո՛վ այսօր թուրքական պետութիւնը այս պարտաւորութիւնների կրող է հանդիսանում: Անշուշտ, պէտք է նշել, որ Հայոց Ցեղասպանութեանն առնչուող իրաւական հետազօտութիւններն առաւել գործնական եւ արհեստագիտական բնոյթ ունեն եւ մեծամասամբ ուղղուած են ոչ թէ անցեալին այլ ապագային:

Սոյն զեկոյցի շրջանակներում կ'առանձնացնենք երեք հիմնական թիրախային հարցադրում.-

Ա) Որո՛նք են այն իրաւական հիմքերը, որոնք այսօր թոյլ են տալիս խօսելու Հայոց Ցեղասպանութեան պատժելիութեան մասին.

Բ) Որո՛նք են Օսմանեան Կայսրութեան պարտաւորութիւնները որոնք առնչուել են հայկական ազգաբնակչութեան պաշտպանութեանը եւ կայուն ու մշտական մարդկային խմբերի ոչնչացման արգիլմանը.

Գ) Ո՞րն է այսօրուայ կապը ժամանակակից Թուրքիայի Հանրապետութեան եւ դրա պայմանականօրէն իրաւանախորդ Օսմանեան Կայսրութեան միջեւ:

Ցաւո՞ք, թէ՞ բարեբախտաբար՝ իրաւական ոլորտում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ իրականացուող հետազօտութիւնների մեծ մասը որպէս կանոն կենտրոնանում է Ցեղասպանութեան Հոչակագրի վրայ որպէս միակ հիմքի, որի ուժով Հայոց Ցեղասպանութիւնը պէտք է պատժելի լինի:

Իհարկէ, չենք թերագնահատում Ցեղասպանութեան մասին Հոչակագրի դերակատարութիւնը այս հարցում: Այդուհանդերձ, փորձենք հասկանալ նախ՝ արդեո՞ք այս փաստաթղթից զատ առկայ են այլ իրաւական փաստաթղթեր՝ հայկական պահանջները ներկայացնելու համար, թէ՞ ոչ:

Ցեղասպանութեան Հոչակագիրը գրեթէ ամբողջութեամբ նուիրուած է քրէական պատասխանատուութեան հիմնահարցին. այն կոչուած է պատասխանատուութեան կանչել ֆիզիքական անձին՝ մարդու՛ն, այլ ո՛չ թէ՝ պետութեանը: Թէեւ ընդհուպ մինչեւ 2007 թուականը նոյնիսկ որոշ հայ հետազօտողներ ասում էին որ Ցեղասպանութեան Հոչակագիրը հիմք չի տալիս պետութեանը պատասխանատուութեան կանչելու համար: Բարեբախտաբար, 2007ին, ՄԱԿի Արդարադատութեան Միջազգային Դատարանը (ԱՄԴ) քննելով «Բոսնիա-Հերցեգովինան Ընդդէմ Սերբիայի» գործը՝ Ցեղասպանութեան մասին հոչակագրով ստանձնուած պարտաւորութիւնների խախտման վերաբերեալ, յստակ առանձնացրեց հետեւեալը, թէ՝ Հոչակագրի առաջին եւ իններորդ յօդուածները այդուհանդերձ վերաբերում են ո՛չ թէ պետութեանը պարտաւորութեանը՝ պատժել ֆիզիկական անձանց արարքները, կամ՝ նրանց պատասխանատուութեան ենթարկել, այլ նաեւ՝ յստակ պարտաւորութիւններ են դնում պետութեան վրայ:

Մասնաւորապէս Հոչակագրի առաջին յօդուածը սահմանում է հետեւեալը. «*Պայմանաւորուող կողմերը հաստատում են, որ ցեղասպանութիւնը, անկախ նրանից՝ կատարւում է խաղաղ, թէ պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրաւունքի՝ յանցագործութիւն է, որը նրանք պարտաւորւում են կանխարգելել եւ պատժել այն կատարելու համար*»[3]: Միաժամանակ 9րդ յօդուածը խօսում է որ պայմանաւորուող կողմերի միջեւ վէճերը՝ սոյն հոչակագրի մեկնաբանման, կիրառման եւ կատարման առնչութեամբ, ներառեալ նաեւ ցեղասպանութիւն կամ 3րդ յօդուածում թուարկուած որեւէ արարք կատարելու համար այս կամ այն պետութեան պատասխանատուութեան վերաբերեալ վէճերը, յանձնւում են ԱՄԴի քննարկմանը՝ վէճի կողմերից իւրաքանչիւրի պահանջով[4]:

Այս երկու յօդուածի վերլուծութիւնից ԱՄԴն եկաւ այն եզրայանգմանը, որ չի կարող պետութիւնը ունենայ պարտաւորութիւն՝ կանխարգելելու ցեղասպանութիւնը եւ՝ պատժե՛լ դրա կատարման համար, իսկ ի՛նքը չկատարի Ցեղասպանութիւնը[5]: Այսինքն, Ցեղասպանութեան Հոչակագրի ուժով՝ պետութիւնը ունի առնուազն հետեւեալ երեք պարտաւորութիւնները.- ա) Կանխարգելել այլոց կողմից ցեղասպանութեան իրականացումը, պ) Պատժել դրա իրագործման համար եւ գ) Թոյլ չտալ, որպէսզի իր սեփական մարմինները, կամ այն անձինք, որոնց վարքագիծը ըստ միջազգային իրաւունքի վերագրելի է իրեն, կատարեն ցեղասպանութիւն:

Այսինքն, ըստ ԱՄԴի դիրքորոշման, պետութիւնը Հոչակագրի հիման վրայ կարող է պատասխանատուութեան կանչուել:

Ո՞րն է այդուհանդերձ Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ Հոչակագրի կիրառման կամ չկիրառման հիմնախնդիրը:

Միակ խնդրայարոյց հարցը այստեղ - միջազգային իրաւական տեսանկիւնից՝ որից շատ դէպքերում օգտւում է թուրքական քարոզչութիւնը - Հոչակագրի յետադարձ կիրառելիութեան հիմնահարցն է:

Հոչակագիրն ընդունուել է 1948ին եւ ուժի մէջ է մտել 1951 Յունուար 12ին: Ահա՛, սա՛ է այն փաստը, որի վրայ փորձում է կառուցել իր դիրքորոշումը Տողու Փերինչէքը, թէ՝ 1951ից առաջ արարքը պատժելի չէր:

Փորձենք հասկանալ՝ իրօք դա այդպէ՞ս է, թէ՞ սա ըստ էութեան իրաւական *աքոլասթիքայի* լաւագոյն դրսեւորումներից մէկն է:

Իրականում, Ցեղասպանութեան մասին Հոչակագրի յետադարձ կիրառելիութեան հարցում մենք չունենք յստակ պատասխան: Մենք ունենք երեք հիմնական հնարաւոր լուծում.-

1) Ամէնէն պարզունակը եւ ոչ-ընդունելին՝ Հոչակագիրը յետադարձ կիրառելիութիւն չունի եւ մինչեւ նրա ընդունումը կատարուած արարքները ցեղասպանութիւն համարուել չեն կարող:

2) Հոչակագրի յետադարձութիւն՝ առնուազն 1951 Յունուար 12ը: «Բոսնիա-Հերցեգովինան Ընդէմ Սերբիայի» գործում, դատարանը դեռեւս նախնական առարկութիւնների քննութեան փուլում կայացրած իր որոշմամբ արտայայտեց այն դիրքորոշումը որ թէեւ Բոսնիան եւ Հերցեգովինան Հոչակագրի մասնակից են դարձել աւելի ուշ, քան տեղի են ունեցել գործում վկայակոչուած իրադարձութիւնները, այդուհանդերձ վերջինս կիրառելի է նրանց նկատմամբ՝ Բոսնիայում եւ Հերցեգովինայում ծաւալուած զինուած հակամարտութեան սկզբից իվեր[6]: Այսինքն, մենք գործ ունենք անուղղակիօրէն որոշակի յետադարձութեան հետ. դատարանը առնուազն ընդունում է այն հանգամանքը որ Հոչակագիրը կարող է նաեւ կիրառուել ընդհուպ մինչեւ 1951 Յունուար 12ը տեղի ունեցած դէպքերի վրայ:

3) Կարո՞ղ է արդեօք Համաձայնագիրն ընդհանրապէս յետադարձ լինել բոլոր արարքների նկատմամբ, որոնք կատարուել են նախկինում: Այս հարցի վերաբերեալ վերջնական պատասխան գոյութիւն ունենալ չի կարող. միակ յստակ պատասխանը, որ կարող է տալ այս ամէնին՝ հետեւեալն է.- Ցեղասպանութեան Հոչակագրի յետադարձ կիրառելիութեան խնդիրը Հոչակագրի մեկնաբանման տիրոյթում է գտնւում: Հոչակագրի մեկնաբանումը ԱՄՆի իրաւազօրութեան ներքոյ գտնուող հարց է՝ Հոչակագրի 9րդ յօդուածի հիման վրայ: Քանի դեռ ԱՄՆն յստակ դիրքորոշում՝ այս հարցի վերաբերեալ չի արտայայտել, մնացած բոլոր դատողութիւնները՝ թէ՛ յետադարձութեան, թէ՛ ո՛չ-յետադարձութեան մասին, ոչ աւել են քան պարզապէս տեսաբանական գիտական մօտեցումներ:

Տեղեկատուութեան կարգով ասենք, որ ընդամէնը երկու օր յետոյ ԱՄՆն կայացնելու է մի նոր որոշում, որը կրկին առնչուելու

է Ցեղասպանութեան Հոչակագրին. Փետրուար 3ին Հաագայում, ԱՄՆն պէտք է հրապարակի «Խրուաթիան Ընդդէմ Սերբիայի» գործով որոշումը որում եւս կայ որոշակի անդրադարձ Հոչակագրի յետադարձութեանը: Տեսնենք թէ այս անգամ ԱՄՆն արդեօք հայանպաստ դիրքորոշում կը բռնի՞, թէ՞ այդուհանդերձ կը սահմանափակուի այն դիրքորոշմամբ որ արդէն իսկ արտայայտուել էր նախորդ որոշումներում[7]:

Ռաֆայէլ Լեմկինը «ցեղասպանութիւն» եզրի հետ զուգահեռ նաեւ այլ անուանումներ էր առաջարկում՝ "barbarism", "ethnocide", "denationalization", յուշելով տուեալ յանցագործութիւնը բնորոշող հասկացութեան պայմանական բնոյթը:

Փորձենք հասկանանք իվերջոյ թէ ի՛նչ է ցեղասպանութիւնը:

Պատկերացնենք մի պահ, որ Լեմկինը այդուհանդերձ չկարողացաւ տեղափոխուել Լեհաստանից ԱՄՆ, այլ դարձաւ ողջակիզման զոհ ու չստեղծեց 'ցեղասպանութիւն' եզրոյթը:

Ի՞նչ կը ստացուի:

Ցեղասպանութիւնը որպէս երեւոյթ շարունակուելո՞ էր դիտուել որպէս օրինական երեւոյթ, իրաւական երեւոյթ, թէ՞ ոչ:

Խնդիրը հետեւեալի մէջ է. նոյնիսկ Լեմկինը ընդունում էր որ Ցեղասպանութիւն եզրոյթը սոսկ նոր պիտակ է որով փորձում է սահմանել մի յանցագործութիւն, որի յանցակազմը բաւականին երկար գոյութիւն էր ունեցել: Եթէ մոռանանք Ցեղասպանութեան եզրոյթը, ապա այդ յանցագործութիւնը իրենից ներկայացնում է հետեւեալը.-

> Դա որոշակի կայուն եւ մշտական մարդկային խմբերին որպէս այդպիսին ոչնչացնելու մտադրութեամբ կատարուած տարաբնոյթ, նոյնիսկ իրարամերժ[8] արարքների ամբողջութիւնն է:

Այսինքն, Ցեղասպանութիւնը՝ մշտական եւ կայուն մարդկային խումբ ոչնչացնելու մտադրութեամբ կատարուած արարքների ամբողջութիւնն է, որը իդէպ պատժելի է եղել շա՛տ աւելի վաղ, քան իայտ է եկել Լեմկինի մօտեցումը: Իդէպ, եթէ ուսումնասիրենք Լեմկինի մօտեցումը՝ Ցեղասպանութեան վերաբերեալ, ապա կը տեսնենք որ այն շատ աւելի լայն է քան այն հայեցակարգը որ ամրագրուել է Ցեղասպանութեան մասին հոչակագրում[9]:

Բայց եթէ ըստ թուրքական քարոզչամեքենայի՝ Ցեղասպանութեան Հոչակագիրը Ցեղասպանութեան

պատժելիութեան միա՛կ աղբիւրն է, ապա մենք այսօր՝ 21րդ դարում, բախտում ենք հետեւեալ անհեթեթ իրավիճակին: Պարզւում է, որ այսօր կայ ՄԱԿի անդամ առնուազն 50 պետութիւն, որտեղ Ցեղասպանութիւնը «թոյլատրելի է», որովհետեւ վերջիններս չեն մասնակցում Ցեղասպանութեան Հոչակագրին: Այդ պետութիւնների ցանկում այնպիսի պետութիւններ են, ինչպիսիք են Ճապոնիան, մահմետական ամենամեծ բնակչութիւն ունեցող պետութիւնը՝ Ինդոնեզիան, Թայլանդը[10]: Եթէ մենք առաջնորդւում ենք նրանով, որ այս Հոչակագիրը պայման է առանց որի Ցեղասպանութիւն գոյութիւն չունի՝ *conditio sine qua non*, ապա այսօր այս երկրներում կարելի է ցեղասպանութիւն իրականացնել եւ չենթարկուել որեւիցէ պատասխանատուութեան:

Բոլորիս համար ակնյայտ է որ վերը նշուածը առնուազն անհեթեթութիւն է: Բայց ո՞րն է այդուհանդերձ՝ ցեղասպանութեան պատժելիութեան յենքը միջազգային իրաւունքում:

Մեր հետազօտութիւնների մէջ մենք պէտք է կենտրոնանանք հետեւեալ հարցի վրայ. վեր հանենք եւ ցոյց տանք որ Օսմանեան Կայսրութիւնը որպէս պետութիւն ունէր իրաւական պարտաւորութիւն միջազգային հանրութեան հանդէպ՝ թոյլ չտալու մարդկային խմբերի ոչնչացում, այն՝ ինչը այսօր անուանում ենք Ցեղասպանութիւն: Նաեւ պէտք է վեր հանենք այն աղբիւրները, որոնցում ամրագրուած էին նշուած պարտաւորութիւնները:

Հայոց Ցեղասպանութեան տարիներին գոյութիւն ունեցած այսպէս կոչուած դասական միջազգային իրաւունքի առանձնայատկութիւնը այն է որ կանոնակարգերի մեծամասնութիւնը փաստաթղթային չե՛ն, ամրագրուած չե՛ն հռչակագրերում, այլ գոյութիւն ունեն որպէս սովորոյթներ (International Customary Law): Միջազգային սովորութային իրաւունքի կանոնակարգը ներկայացնում է երկու տարրերի ամբողջականութիւն.- 1) պետութեան միատեսակ վարքագիծ, որը կրկնւում է միեւնոյն իրավիճակը յառաջանալու պարագայում, եւ 2) կանխավարկած առ այն որ այդ վարքագիծը պարտադիր է (*opinio juris*):

Այս տեսանկիւնից, Օսմանեան Կայսրութեան կողմից պարտաւորութիւնները՝ Ցեղասպանութեան արգելման

ուղղութեամբ, առաջացել են ո՛չ այսօր, ո՛չ երէկ, ո՛չ 1948ին, այլ՝ ԺԸ. դարի վերջին, երբ մարդու անօտարելի իրաւունքների հայեցակարգի ձեւաւորման ներքոյ Օսմանեան Կայսրութիւնը Ռուսական Կայսրութեան հետ 1774ին կնքում է Քիւչիւկ Քայնարճայի Պայմանագիրը, որում առաջին անգամ միջազգային պատմութեան մէջ պետութիւնը՝ Օսմանեան Կայսրութիւնը, ո՛չ թէ պարտաւորութիւն է ստանձնում vis-à-vis, այսինքն Օսմանեան Կայսրութիւնը ո՛չ թէ Ռուսաստանի հանդէպ է պարտաւորութիւն ստանձնում, այլ պարտաւորութիւն է ստանձնում ի՛ր իսկ հպատակների առջեւ: Մասնաւորապէս պայմանագրի 7րդ յօդուածում նշւում է հետեւեալը.- «*Օսմանեան Կայսրութիւնը պարտաւորւում է ապահովել քրիստոնէութեան եւ եկեղեցիների անվտանգութիւնը*», այսինքն՝ անուղղակիօրէն պարտաւորւում է ապահովել իր քրիստոնեայ հպատակներին իրաւունքները: Դրանից յետոյ ընդունւում է 1856ի Փարիզի Խաղաղութեան Պայմանագիրը, որում կրկին, այս անգամ ո՛չ թէ Ռուսաստանն է պնդում, այլ բոլո՛ր եւրոպական տէրութիւններն են պնդում, որ օսմանահպատակ քրիստոնեաների իրաւունքները պաշտպանւում են ո՛չ միայն Օսմանեան Կայսրութեան կողմից, այլ նաեւ վերահսկւում են եւրոպական տէրութիւնների կողմից: Այդ գործընթացը ներկայացւում է - այսպէս կոչուած - մարդասիրական միջամտութիւնների ենթախորքում. միջամտութիւններ, որոնք իրականացւում են մեծ տէրութիւնների կողմից ամբողջ ԺԹ. դարի ընթացքում եւ Ի. դարասկզբին: Փաստօրէն, գործ ունենք մարդասիրական միջամտութիւնների հետ, այդ թւում՝ այստեղ՝ Լիբանանում, 1860ին, երբ Օսմանեան Կայսրութեան թողտուութեան ներքոյ սկսուել էին քրիստոնեայ մարոնիների զանգուածային հետապնդումները: Այսինքն, մարդկային խմբի ոչնչացումը թոյլ չտալու պարտաւորութիւնները՝ ըստ սովորոյթի միջազգային իրաւունքի, արդէ՛ն իսկ առկայ էին Հայոց Ցեղասպանութեան նախաշէմին:

Եւս մէկ կարեւոր իրադարձութիւն տեղի ունեցաւ 1800ականների երկրորդ կէսին. միջազգային իրաւունք ներմուծուեց մի նոր հայեցակարգ՝ «մարդկայնութեան օրէնքներ» հայեցակարգը, որը առաջին անգամ գործածուեց 1868 Դեկտեմբերի 11ի Սանկտ Պետերբուրգի Հոչակագրում[11]: Մարդկայնութիւնը՝ որպէս այդպիսին, իրաւական հասկացութիւն

չէ, բայց այդ փաստաթղթի շնորհիւ այն մտաւ իրաւունքի բնագաւառ՝ ստանալով իրաւաբանական բովանդակութիւն:

Թուրքիայի պարտաւորութիւնների մէջ, մենք մի կարեւոր հանգամանք ցաւօք շատ դէպքերում անտեսում ենք: Դեռ աւելին, այն քարկոծւում է մեր պատմութեան մէջ: Խօսքը Պերլինի 1878ի Պայմանագրի 61րդ յօդուածի մասին է, որը հայ պատմագիտութեան մէջ յաճախ նահանջ է որակւում[12]: Բայց 61րդ յօդուածի այս պարտաւորութիւնը չափազանց մեծ նշանակութիւն ունի նոյնիսկ այսօր՝ ցոյց տալու համար որ Օսմանեան Կայսրութիւնը իրաւունք չունէր կատարելու Հայոց Ցեղասպանութիւնը:

Ի՞նչ էր նշուած քննարկուող յօդուածում. «*Բարձր Դուռը պարտաւորւում է առանց յետագայ յապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից յարուցուած բարելաւումներն ու բարենորոգումները եւ ապահովել հայերի անվտանգութիւնը չերքէզներից ու քրդերից: Բարձր Դուռը տէրութիւններին պարբերաբար կը հաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տէրութիւնները կը հսկեն դրանց կիրառմանը*»:

Փորձենք վերլուծել այս պարտաւորութիւնները: Օսմանեան Կայսրութիւնը բազմակողմ միջազգային պայմանագրով ստանձնել է դրական պարտաւորութիւններ ի՛ր իսկ հպատակների մի առանձին կայուն եւ մշտական խմբի իրաւունքները պաշտպանելու ուղղութեամբ: Այլ կերպ ասած, պետութիւնը պարտաւորուել է ապահովել առնուազն հայերի ֆիզիկական գոյութիւնը: Հետեւաբար, առնուազն այս պարտաւորութեան խախտման համար Թուրքական Պետութիւնը կարող է ենթարկուել պատասխանատուութեան՝ անկախ նրանից թէ կ'անուանէք այդ արարքը Ցեղասպանութի՞ւն, մարդկայնութեան դէմ ուղղուած յանցագործութի՞ւն, կամ որեւիցէ այլ բան: Պետութիւնը խախտել է ի՛ր իսկ քաղաքացիների հանդէպ միջազգային իրաւունքի կանոնակարգերի հիման վրայ ստանձնած պարտաւորութիւնը, ինչը հիմք է՝ վերջինիս միջազգային պատասխանատուութեան կանչելու համար:

Անդրադառնանք նաեւ վերը յիշատակուած «մարդկայնութեան օրէնքներ» հայեցակարգի զարգացմանը: Հենց այս հայեցակարգին է խարսխուած Թուրքիայի Հանրապետութեան

պատասխանատուութեան յաջորդ՝ միջազգային իրաւական հիմքը: 1899ին, Հաագայում հրաւիրւում է Խաղաղութեան Առաջին Վեհաժողովը, որին մասնակցում է նաեւ Օսմանեան Կայսրութիւնը: Վեհաժողովում ընդունւում է մի փաստաթուղթ, որը վերաբերում է ցամաքային պատերազմի օրէնքներին եւ սովորոյթներին[13]: Այդ փաստաթղթի մէջ եւս վերարտադրւում է «մարդկայնութեան օրէնքներ» հայեցակարգը: Այնտեղ մասնաւորապէս նշւում է որ քանի դեռ մենք չենք կարողացել կանոնակարգել բոլոր հարցերը, ապա՝ պատերազմի ընթացքում պատերազմողները պարտաւորուած են առաջնորդուել միջազգային իրաւունքի սկզբունքներով այնքանով որքանով դրանք բխում են քաղաքակիրթ ժողովուրդների միջեւ ընդունուած սովորոյթներից, ***մարդկայնութեան օրէնքներից*** եւ հասարակական գիտակցութեան պահանջներից:

Մարդկայնութեան օրէնքը՝ որպէս իրաւական հասկացութիւն, կրկին մատնանշւում է միջազգային իրաւունքում: Պէտք է յատուկ շեշտադրել այս փաստաթուղթը, որովհետեւ այն չէ՛ր կարելի չեղարկել պատերազմի ժամանակ: Այն ընդունուել էր ***յատուկ պատերազմի ժամանակ կիրառելու համար***, եւ Օսմանեան Կայսրութիւնը մասնակցում էր այդ հռչակագրին[14]: Զարգացնելով հենց այս հայեցակարգը՝ 1915 Մայիսի 24ին Անտանտի Պետութիւնները ընդունում են հանրայայտ համատեղ հռչակագիրը, որում առաջին անգամ միջազգային իրաւունքի պատմութեան մէջ գործածուեց «յանցագործութիւն մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ» հասկացութիւնը:

Այս փաստաթուղթը երբեք չէր ծնուի եթէ չլինէր մարդկայնութեան օրէնքների հայեցակարգը: Չունենալով այլ իրաւական համարժէք եզրոյթ՝ որը յետագայում ստացաւ «Ցեղասպանութիւն» անուանումը, մեծ տէրութիւնները անուանում են այս արարքը նոր եզրոյթով՝ «յանցագործութիւն մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ», այսինքն մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան օրէնքների դէմ:

Հենց այս հայեցակարգը հի՛մք է տալիս տուեալ պետութիւններին՝ մեղադրելու Թուրքիային իր միջազգային իրաւական պարտաւորութիւնների խախտման մէջ:

Այս փաստաթուղթը կարեւոր նշանակութիւն ունի մի շարք առումներով.-

Ա) Ինչպէս արդէն նշուեց՝ սա առաջին միջազգային իրաւական փաստաթուղթն է որտեղ օգտագործւում է «մարդկայնութեան դէմ ուղղուած յանցագործութիւն» եզրոյթը:

Բ) Այս փաստաթղթում յստակօրէն նշւում է եւ՛ Օսմանեան Կայսրութեան պատասխանատուութեան եւ՛ նրա պաշտօնատարների պատասխանատուութեան մասին:

Մասնաւորապէս փաստաթղթում նշւում է որ այս յանցագործների լոյսի ներքոյ Անտանտի Պետութիւնները՝ Ֆրանսան, Մեծն Բրիտանիան եւ Ռուսաստանը գտնում են որ պետութեան համապատասխան գործակալներն են պատասխանատուութիւն կրում դրա համար իսկ «պետութեան գործակալ» հասկացութիւնը միջազգային իրաւունքում համազօր է «պետութեան մարմին» հասկացութեանը: Սա էլ յաջորդ հիմքը, որը կարելի է վկայակոչել Օսմանեան Կայսրութեան իրաւայաջորդ պետութեան պատասխանատուութեան կանչելու ենթախորքում:

Վերլուծելով Օսմանեան Կայսրութեան՝ հայ ազգաբնակչութեան պաշտպանութեանն առնչուող հիմնական միջազգային իրաւական պարտաւորութիւնների եւ Թուրքիայի Հանրապետութեան միջազգային իրաւական պատասխանատուութեան հիմնական միջազգային իրաւական յենքերը՝ կարելի է կատարել առնուազն հետեւեալ իրաւական եզրայանգումը.-

Առնուազն ԺԹ. դարի երկրորդ կէսին միջազգային իրաւունքում առկայ էին համապատասխան կանոնակարգեր, որոնք արգելում էին մնայուն եւ մշտական մարդկային խմբերի ոչնչացումը: Օսմանեան Կայսրութիւնը, իր միջազգային պայմանագրերով, մասնաւորապէս՝ Պերլինի Պայմանագրի 61րդ յօդուածով, 1899 թուականի Հաագայի Հռչակագրով եւն., ինչպէս նաեւ սովորութային միջազգային իրաւունքի կանոնակարգերով ստանձնել էր որոշակի պարտաւորութիւններ, որոնց խախտումները հիմք են Թուրքիայի Հանրապետութեան միջազգային իրաւական պատասխանատուութեան ենթարկելու համար:

Փորձենք անդրադառնալ նաեւ Հայոց Ցեղասպանութեան համար Թուրքիայի Հանրապետութեան պատասխանատուութեան հիմնահարցին: Արդեօք ժամանակակից Թուրքիայի

Հանրապետութիւնը պէ՞տք է պատասխանատուութիւնը կրի Օսմանեան Կայսրութեան կողմից կատարուած արարքների համար, թէ՞ ոչ:

Օսմանեան Կայսրութեան ոչնչացումից յետոյ վերջինիս միջազգային իրաւական ինքնութիւնը չդադարեց: Օսմանեան Կայսրութիւնից առանձնացուեցին տարածքներ, որոնցում ձեւաւորուեցին նոր պետութիւններ, բայց Օսմանեան Կայսրութիւնը որպէս այդպիսին շարունակեց իր գոյութիւնը: Պատահական չէ որ 1920ականներին այսպէս կոչուած Օսմանեան Պարտքի Դատավարութեան ընթացքում յստակօրէն նշուեց հետեւեալը, թէ՝ միջազգային իրաւունքում Թուրքիայի Հանրապետութիւնը դիտարկւում է որպէս Օսմանեան Կայսրութեան միջազգային իրաւական ինքնութեան շարունակող[15]: Սա եւս կարեւոր է, որովհետեւ իրաւայաջորդութեան հարցով կարելի է վիճել թէ արդեօք իրաւայաջորդը պէ՞տք է պատասխանատուութիւն կրի իրաւանախորդի գործողութիւնների համար, թէ՞ ոչ:

Եթէ կայ պետութիւն որը շարունակում է մէկ այլ պետութեան միջազգային իրաւական ինքնութիւնը, ապա չկայ ուրեմն իրաւայաջորդութեան խնդիր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ի մի բերելով ամբողջ վերը նշուածը կարելի է ներկայացնել որոշ եզրայանգումներ.-

1) Միջազգային իրաւունքում պատասխանատուութեան միակ հիմքը միջազգային իրաւախախտումն է:
2) Կայուն եւ մշտական մարդկային խմբերի ոչնչացումը դիտուել է որպէս միջազգային հակահիրաւական արարք՝ առնուազն ԺԹ. դարի երկրորդ կէսից:
3) Օսմանեան Կայսրութիւնը պարտաւորուած էր միջազգային իրաւունքով առնուազն՝ ա) չիրականացնել հայերի ոչնչացումը եւ բ) կանխարգելել նրանց ոչնչացումը այլոց կողմից:
4) Հայոց Ցեղասպանութեան իրագործումը միջազգային իրաւունքի տեսանկիւնից Օսմանեան Կայսրութեան ստանձնած միջազգային իրաւական պարտաւորութիւնների

խախտում էր, որը յանգեցնում է տուեալ պետութեան միջազգային իրաւական պատասխանատուութեան:

5) Օսմանեան Կայսրութեան փլուզումից յետոյ Թուրքիայի Հանրապետութիւնը շարունակեց վերջինիս միջազգային իրաւական ինքնութիւնը:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Թուրքիայի Հանրապետութեան նախագահ Ռեջէփ Թայիփ Էրդողանը Թուրքիայի Պետական Հեռուստառադիօընկերութեանը (TRT) տուած հարցազրոյցում մասնաւորապէս նշել է. «*Մենք պարտաւոր չենք ճանաչելու, այսպէս կոչուած Հայոց Ցեղասպանութիւնը այլոց հրամաններով: Այն ինչ մենք ասում ենք, սա է. եթէ դուք անկեղծ էք այս քննարկման շուրջ, թողէք այս հարցը պատմաբաններին եւ թոյլ տուէք նրանց աշխատել դրա շուրջ*» (Erdoğan accuses Armenian Diaspora of Exploiting 1915 Events, http://www.todayszaman.com/diplomacy_erdogan-accuses-armenian-diaspora-of-exploiting-1915-events_371286.html):

[2] Verdict on "Perincek vs. Switzerland" Case will be Announced Within 6-8 Months http://www.arminfo.info/index.cfm?objectid=CD0F62D0-A799-11E4-89000EB7C0D21663 :

[3] Ցեղասպանութեան կանխարգելման եւ դրա համար պատժելու մասին ՄԱԿի 1948 Դեկտեմբերի 9ի հռչակագիր (http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf):

[4] Նոյն:

[5] Տուեալ որոշմամբ դատարանը մասնաւորապէս արձանագրել է. «յարակարծութիւն (պարադոքսալ) կը լիներ, եթէ պետութիւններն ունենային պարտաւորութիւն՝ կանխարգելել ցեղասպանութեան կատարումը, ա՛յն անձանց կողմից, որոնց նկատմամբ նրանք ունեն որոշակի ազդեցութիւն, այնքանով՝ որքանով դա իրենց իշխանութեան ներքոյ է, բայց նրանց չարգելուէր կատարել նման արարքներ իրե՛նց սեփական մարմինների կամ ա՛յն անձանց կողմից, որոնց նկատմամբ նրանք ունեն այնպիսի հաստատուն վերահսկողութիւն, որ վերջիններիս արարքը վերագրելի է համապատասխան պետութեանը՝ ըստ միջազգային իրաւունքի: Հակիրճ՝ ցեղասպանութիւնը կանխարգելելու պարտաւորութիւնն անպայմանօրէն ենթադրում է ցեղասպանութեան կատարման արգելքը» (տե՛ս՝ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J. Reports 2007, պարբ. 166):

[6] ԱՄՆ տուեալ գործով մասնաւորապէս նշել է. «*Այս կապակցութեամբ դատարանը սահմանափակւում է այն դիտարկմամբ, որ Ցեղասպանութեան Հոչակագիրն եւ մասնաւորապէս 9րդ յօդուածը չի պարունակում որեւէ դրոյթ, որի նպատակը կամ գործողութիւնը դրա ratione temporis իրաւազօրութեան նմանօրինակ սահմանափակումն է եւ ոչ էլ կողմերն են կատարել որեւէ այնպիսի վերապահում այս առումով, ո՛չ Հոչակագրի վերաբերեալ, ո՛չ էլ Դէյթն-Փարիզեան Համաձայնագրի ստորագրման կապակցութեամբ: Դատարանը, ուստի, գտնում է, որ այն ունի իրաւազօրութիւն այս գործով*

կիրառելու Ցեղասպանութեան Հոչակագիրը համապատասխան փաստերի նկատմամբ, որոնք տեղի են ունեցել Բոսնիայում եւ Հերցեգովինայում ընթացած հակամարտութեան սկզբից: Այս դիրքորոշումը համահունչ է Հոչակագրի օբյեկտին եւ նպատակին, ինչպէս դրանք սահմանուել են Դատարանի կողմից 1951ին» (Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Preliminary Objections, Judgment,I.C.J. Reports 1996, պարբ. 34):

[7] Սոյն զեկոյցը ներկայացուել է 2015 Յունուարի 31ին, երբ ԱՄՆն դեռ չէր կայացրել «Խրուաթիան Ընդդէմ Սերբիայի» գործով վճիռը եւ Հոչակագրի յետադարձ կիրառելիութեան հարցին չէր անդրադարձել: Դատարանի նշուած որոշումը հրապարակուեց միայն 2015 Մարտի 3ին (Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Serbia), 3 February 2015, Judgment http://www.icj-cij.org/docket/files/118/18422.pdf):

[8] Օրինակ ցեղասպանական մտադրութեան ներքոյ (*dolus specialis*) հետապնդուող խմբի անդամի յղիութեան ընդհատումը եւ բոնի յղիացումը հաւասարապէս դիտարկուում են իբրեւ ցեղասպանութեան դրսեւորումներ:

[9] Տե՛ս, մասնաւորապէս՝ Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress*, Washington, Carnegie Endowment for World Peace, 1944:

[10] Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ դրա համար պատժելու մասին հոչակագրի մասնակիցների թիւը 2015 Մարտի 3ի դրութեամբ կազմում է 146 պետութիւն (https://treaties.un.org/pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-1&chapter=4&lang=en):

[11] Տե՛ս՝ Պատերազմի ժամանակ 400 գրամից նուազ քաշ ունեցող պայթող եւ բոնկուող փամփուշտների օգտագործման արգելման մասին Սանկտ-Պետերբուրգի 1868 Դեկտեմբերի 11ի Հոչակագիրը (https://www.icrc.org/ihl/INTRO/130?OpenDocument):

[12] Տե՛ս, մասնաւորապէս՝ Գ. Հ. Յարութիւնեան, «Բեռլինի Վեհաժողովի Հանրագումարները», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2006 № 3, էջ 72-73. նաեւ՝ Ա.Ջ. Կիրակոսեան, «Հայկական Հարցը Եւ Հայերի Ցեղասպանութիւնը», *Պատմահրաւական Եռալեզու Տեղեկանք*, Երեւան, «Նորավանք» Գիտակրթական Հիմնադրամ, 2006, էջ 7-8:

[13] Տե՛ս՝ Ցամաքային պատերազմի օրէնքների եւ սովորոյթների մասին Հաագայի II հոչակագիրը (29 Յուլիսի 1899):

[14] Օսմանեան Կայսրութիւնը ստորագրել է այն 1899 Յուլիսի 29ին եւ վաւերացրել 1907 Յունիսի 12ին (https://www.icrc.org/applic/ihl/ihl.nsf/States.xsp?xp_viewStates=XPages_NORMStatesParties&xp_treatySelected=150):

[15] K. Marek, *Identity and Continuity of States in Public International Law*, 1968, էջ 40:

RESPONSIBILITY FOR THE ARMENIAN GENOCIDE: INTERNATIONAL LEGAL OBLIGATIONS OF THE OTTOMAN EMPIRE CONCERNING ITS ARMENIAN POPULATION (SUMMARY)

VLADIMIR VARDANYAN

The issue of the international legal obligations of the Ottoman Empire concerning the Armenians is one of the crucial factors in the context of responsibility for the Armenian Genocide. Making it even more important is the fact that currently state responsibility is the only valid option for establishing responsibility for the Armenian Genocide.

The paper is focused on analysis of the nature and validity of the obligations of the Ottoman Empire towards Armenians, including the statutory obligations such as provisions of the 1878 Treaty of Berlin and the 1899 Hague Convention, as well as relevant provisions of customary international law in the context of responsibility for genocide.

As the 1948 UN Genocide Convention was adopted after the Armenian Genocide, it is necessary to show that the very notion of "genocide" is of a conditional nature and the Convention per se is not the only basis for establishing responsibility for genocide.

The paper discusses the relationship of the Ottoman Empire and the Turkish Republic as the state continuing the legal international identity of the Ottoman Empire. Accordingly, the paper argues that the state responsibility of the Ottoman Empire falls upon its successor state, namely Turkey, as both are interconnected.

THE REACTION OF THE INTERNATIONAL COMMUNITY DURING AND AFTER THE ARMENIAN GENOCIDE

ZAVEN MESSERLIAN

This paper highlights the political stands of members of the international community when the genocide was being carried out, as well as their attitude in the aftermath, i.e. the immediate post-war period.

The genocidal intent in ruling Turkish circles of the Ottoman Empire was present after the treaty of San Stefano (1878) and the Congress of Berlin (1878). Far from satisfying Armenian demands, the regions of Kars and Ardahan were added to Tsarist Russia by the Congress of Berlin decision. This was a blow to the Ottoman Empire which also saw its land mass reduced in the Balkans.

The "sick man of Europe", in view of the partial dismemberment of the Ottoman Empire, which occurred after the independence of Greece and which saw in 1878 the loss of further territories in her Eastern provinces and the Balkans, reacted.

The Grand Vizier of Abdul Hamid II, later on dubbed the Red Sultan, was Kâmil Pasha. He is reported to have said:

> In Europe we let snakes grow up amongst us, but we must not do the same in Asia. They can cause us harm and become tools of foreign intervention. We must destroy these elements. The *raison d'être* of the Ottoman Empire demands that we secure our future by annihilating the Armenian people. To do this we have governors, judges, tax collectors, policemen and soldiers. It will be an easy victory, we will declare a *jihad* against a people that have no army and no important office.[1]

The 1894-1896 massacres cost the lives of 300,000 people according to Armenian estimates. In its issue of 10 September 1895 *The New York Times* headlined "Another Armenian Holocaust" referring to one of the bloody episodes of the two years of massacres.

As a high school history teacher, I have seen numerous British and American history textbooks.[2] The massacres of 1894-96 are given a more prominent place than those of the 1915-1923 genocide, if they are mentioned at all.

The 1909 Adana massacres were a hint of what was to come, this time under the Young Turkish leadership. This was the premeditated genocide

of the Armenian subjects of the Ottoman Empire, particularly those living in Western Armenia, at the opportune moment.

The final instigation for the genocide was the agreement signed on February 8, 1914 between the Ottoman Turkish Grand Vizier, Said Pasha, and Gulkevich of the Imperial Russian Embassy. This agreement of reforms in the Armenian Vilayets was a bitter pill for the Young Turk nationalists to swallow. The reforms gave the Armenians living in the Eastern Vilayets of the Ottman Empire (i.e. Western Armenia) some sort of autonomy under European Christian governors. Consequently soon after the First World War broke out, on December 16, 1914, the government denounced and abrogated the scheme of Reforms.

As of October 1914 arrests, persecution and murder began, all these culminating in the execution of the planned genocide. Deportation of the Armenians of Zeitun was carried out on April 8, 1915, followed by massacres in the province of Van, which led to the Armenian self-defense of Van on April 20, 1915 and on the eve of the Gallipoli attack on April 24, 1915, the arrest of Armenian intellectuals.

The deportation decree itself, published on May 24, 1915 was *post facto*. Indeed, the deportations had already begun as well as the massacres en route to the desert destinations and at home.

Despite Turkish attempts to cover up the massacres, the Catholicos and Supreme Patriarch of All Armenians, Kevork V, was aware of the genocide as early as May 1915. He sent cables to the Russian foreign minister Sergey Sazonov, King George V of Great Britain, and the French President Poincarré. His cable to King George V requesting him to use his influence through neutral states to put an end to the massacres was received on May 4, 1915.[3]

After intensive consultations, on May 22, 1915, while the massacres were proceeding at full speed, the Allied powers Russia, UK and France, came up with a declaration, which was delivered to the Sublime Porte on May 24, 1915 by the American Ambassador Henry Morgenthau.[4]

The joint declaration denounced the Ottoman Government's massacre of the Armenians as constituting "crimes against humanity and civilization for which all the members of Turkish government would be held responsible together with its agents implicated in the massacres.[5]"

This document is very important.

With it as a basis the British High Commissioner in Constantinople in the post-war period, Admiral Arthur Calthorpe, informed the Turkish Minister of Foreign Affairs that "His Majesty's Government are resolved to have proper punishment inflicted on those responsible for the Armenian massacres."[6]

The allies and the associated powers also formally stated that the war which began on August 1, 1914 "was the greatest crime against humanity."

In article 230 of the Treaty of Sevres, signed by Ottoman Turkey on August 10, 1920, the Turkish government undertook to hand over to the Allied powers those who were responsible for the massacres committed during the war on Turkish territory. The article said:

> The Turkish Government undertakes to hand over to the Allied Powers the persons whose surrender may be required by the latter as being responsible for the massacres committed during the continuance of the state of war on territory which formed part of the Turkish Empire on the 1st August, 1914.
>
> The Allied Powers reserve to themselves the right to designate the Tribunal which shall try the persons so accused, and the Turkish Government undertakes to recognize such Tribunal.
>
> In the event of the League of Nations having created in sufficient time a Tribunal competent to deal with the said massacres, the Allied Powers reserve to themselves the right to bring the accused persons mentioned above before such Tribunal, and the Turkish Government undertakes equally to recognize such Tribunal".[7]

A United Nations Commission on Human Rights report prepared by the United Nations War Crimes Commission in accordance with the request received from the United Nations issued on May 15, 1948 stated:

> The provisions of article 230 of the peace Treaty of Sevres were obviously intended to cover, in conformity with the allied note of 1915 referred to in the preceding section, offences which had been committed on Turkish territory against persons of Turkish citizenship, though of Armenian or Greek race. This article constitutes therefore a precedent for articles 6 (c) and 5 (c) of the Nurnberg and Tokyo charters, and offers an example of one of the categories of "crimes against humanity" as understood by these enactments.

The Treaty of Sevres was, however, not ratified and did not come into force. It was replaced by the Treaty of Lausanne, signed on 24 July 1923. The latter did not contain provisions respecting the punishment of war crimes, but was accompanied by a "declaration of amnesty" for all offences committed between 1 August 1914 and 20 November 1922.[8]

Notwithstanding the fact that the Treaty of Sevres was not ratified and the peace treaty with Turkey was largely modified in Lausanne, the fact that article 230 of the Treaty of Sevres constituted a precedent for articles 6 (c) and 5 (c) of the Nurnberg and Tokyo charters is very important for the recognition of the Armenian genocide.

The word genocide appeared in the Nurnberg indictment of October 18, 1945, which stated that the Nazi defendants had committed murder and ill treatment of civilian populations and in particular "conducted deliberate and systematic genocide, viz., the extermination of racial and national groups, against the civilian population of certain occupied territories in order to destroy particular races and classes of people and national, racial or religious groups...".[9]

Let us return to the period of the genocide itself, and briefly state the following facts.

The Germans understood what the Ottomans were carrying out was the mass annihilation of the Armenians and, to distance themselves from it, officially delivered a memorandum to the Turkish government on July 4, 1915.[10]

The Austria-Hungarian government was aware of the extermination policy as their ambassador Pallavicini had informed Vienna on 27 June 1915: "the Armenian population which is being expelled from its homeland is not only being subjected to the greatest misery but also to a total extermination".[11]

World spiritual and political leaders made declarations to stop the ongoing genocide.

Pope Benedict XV wrote a letter to sultan Mohamet V on September 15, 1915 on the "indescribable suffering" of the Armenians,[12] and in the consistory of the Vatican, on December 6, 1915 the pope declared that almost all the Armenian people are being exterminated ("dummiserima Armeniorium gens prope ad intertum adducitur.")[13]

The British government had ulterior motives in 1916 when it published the *Blue Book* compiled by Arnold Toynbee and presented by Lord Bryce on July 1, 1916 to the minister of foreign affairs.

At the time Toynbee and Lord Bryce did not know that the british government's main purpose in publishing the book was to cover up the pogroms in Russia, her ally in the east. These pogroms were being proclaimed by the Jewish communities all over the world. Toynbee's main purpose was to proclaim the harrowing news of the Armenian massacres.[14]

On September 27, 1916 the British questioned two Arab officers of the Ottoman army whom they had taken as prisoners. One of them stated that as a member of the Military Court he knew "deportation" meant massacre. Sir Mark Sykes of the British foreign office said he was, "little predisposed to sympathize with Armenians" but he suggested that "some means should be taken to give due publicity to those state of affairs, in view of the appeals to 'God and humanity' which the enemy is now making."[15]

Sherrif Hussain of Mecca issued an order addressed to Emir Faisal and Emir Abdul Aziz Jarba in 1917 for the protection of Armenians as protégés of the Moslems.

The international press in neutral countries, like Switzerland and the United States, was full of reports on the massacres of Armenians.

Let us mention a few headlines.

Journal de Geneve:

July 10, 1915, "Pauvres Armeniens"

September 8, 1915, "L'extermination d'un Peuple."

The New York Times:

March 20, 1915, "Whole Plains Strewn by Armenian Bodies. Turks and Kurds Reported to have Massacred Men, Women and Children."

April 26, 1915, "Great Exodus of Christians."

July 12, 1915, "Turks are Evicting Christians. Greeks and Armenians Driven from Homes and Converted by the Sword, Asserts American."

July 29, 1915, "Wholesale Massacre of Armenians."

August 18, 1915, "Armenians Are Sent to Perish in Desert."

August 27, 1915, "Turks Depopulate Towns of Armenia."

September 28, 1915, "Extinction Menaces Armenia."

December 15, 1915, "Million Armenians Killed or in Exile, Policy of Extermination."

The press of the allied countries and the press of their enemies had plenty of information. The German government was eager to maintain its alliance with Turkey at all cost and suppressed information as much as it could. However, this did not prevent Johaness Lepsius from publishing his report on the Armenian massacres during the course of World War 1.

Declarations of sympathy of support and promises were plentiful.

Paul Deschannel on December 19,1917.

Lloyd George on December 21, 1917.

Clemeanceau on July 14, 1918.

Lord Robert Cecil, Poincarre, Balfour, President Millerand, president Wilson and many others in positions of authority.

Many are worthwhile declarations; however, some are worth only the paper they were written on.

Let us site a few:

French Prime Minister Aristide Briand on January 10, 1917

"When the time comes for justice the French republic will not let the suffering undergone by the Armenians go unpunished. She and her allies will see to it that steps are taken to supply the Armenians with peace and prosperity. "[16]

Balfour's declaration:

"His Majesty's Government is following with earnest sympathy and admiration the gallant resistance of Armenians in defense of their liberties and honor. I would refer the honorable member to the public statements made by leading statesmen among the allied powers in favor of a settlement upon the principle of self determination."[17]

Lloyd George:

"The question of Mesopotamia must be resolved by the peace conference, with the clear understanding, however, neither that region nor Armenia can ever be put back under the blighting dominion of the Turks."[18]

All these were public declarations to satisfy public opinion, not reflections of real policies.

The Sykes-Picot agreement was secretly drawn up. The Russians, who were to have Western Armenia, wanted the region emptied of Armenians for the settlement of Cossacks there. Later, when the Bolsheviks took over, Lenin recognized the right of Armenians to have independence in Western Armenia, but withdrew all the Russian troops from the region, which was reoccupied by the Turks within 6 months.

Even the agreement reached on the formation of the Armenian Legion was not respected, as far as Cilicia was concerned. The agreement was drawn between the French and the National Union of Armenians of Egypt.[19] Cilicia was abandoned to the Turks. The French evacuated French forces from some cities without informing the Armenians, who were subjected to new massacres in which Mustafa Kemal, later known as Ataturk, and his *milli* troops were involved.[20]

US President Woodrow Wilson, in his 14 points declared on January 8, 1918, devoted point 12 to some sort of self rule or autonomy within the Ottoman Empire.

Later at the San Remo conference Wilson was given the task of drawing the boundaries of Armenia, which were soon after mentioned in the Treaty of Sevres. He completed his arbitration on the boundaries, which was published on November 22, 1920 some ten days before the collapse of the first Independent Republic of Armenia.

The cynicism of the so-called allies towards what they termed their little ally Armenia shall be shown by the following document.-

The Republic of Armenia was invaded by Kemalist Turkey in September 1920. In grave peril, the Armenians appealed to Great Britain for help against the Turks. After occupying Kars, the Turks marched on Gumri and the Soviets, who were Sovietizing Armenia. The following document shows how the British looked after their self-interest.

No. 171

Colonel Stokes (Tiflis) to Earl Curzon (Received November 15)
No. 480 Telegraphic [Confidential /General / 363/19]
Personal TIFLIS, *November 6, 1920*

Successful invasion of Armenia by Turks has modified situation in Middle East. Turks are bent on getting control of Azerbaijan, Bolsheviks are determined to retain Azerbaijan in Russia. Discord between Turks and Bolsheviks is thus inevitable. [We are] hostile to both but will not fight either.

Moment is opportune to secure friendship of one of the two against the other. Friendship with Bolsheviks may stop their actual advance eastward and southward but their propaganda will continue. It may also give us raw materials badly needed for our industries and markets for our manufactures. On the other hand it is difficult to believe in permanent Bolshevik Regime. Friendship with Turkey will cost us abandonment of our policy of supporting Greek expansion in Turkey. It will bring to our side whole of Islam and it is vital to continuance of our Eastern Empire that Islam should be on our side. There...any fear of Islam unit[ing] against us. Gulf between Sunni and Shiah is wide and can be widened if necessary. There is no Mohemmetan [sic] nation with which our prestige does not even now stand higher than that of any other foreign country and there is none which does not desire our friendship. From Bokhara and Kabul ...we can have Islam on our side.

I venture to submit above for Your Lordship's consideration. If desired contact could be established from Tiflis with Mustafa Kemal Pasha.[21]

As to the Turks, they set up the Inquiry Commission and secured coded and decoded telegraphic orders from 28 localities where the deportations and massacres had taken place. 130 dossiers were completed.[22] The Military Tribunal was set up. The chief culprits, Talat, Enver, and Jemal, were condemned to death in absentia; only three underlings were hanged. As the nationalists strengthened, the judges were arrested, the hanged were sanctified as martyrs, although they had been tried for premeditated mass murder and were legally convicted.

Let us refer to one important finding of the court based on cables. During the Ottoman Military Tribunal's proceedings for the massacres of the Armenians of Yozgat, it was revealed in the 12th sitting that in cables the phrase "deported" meant "annihilated" and in the 9th sitting the term "sent off to their destination" was revealed it meant "murdered".

The Armenians presented territorial demands. Sevres satisfied them on paper only, and the Allies forgot them.

Boghos Noubar Pasha's Armenian Delegation presented reparation demands for financial losses.

But nothing came of it.

Not only that but of the 142 arrested Turkish leaders implicated in the genocide, 130 who were sent by the British to Malta for trial. These were released due to successful Turkish blackmail. They were set free for the release eight British prisoners of war in 1921-1922.

The Armenians must find a legal basis to ground their territorial and financial demands. Two books that suggest how to do that are Alfred de Zayas, *The Genocide Against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, published by the Haigazian University Press in 2010 and the recently published book in Yerevan entitled *The Basis and Possibilities of Applying to the International Court in the Case of the Armenian Genocide*, by Armen Maroukian.[23] The Armenian Genocide Reparations Study Group has published its final report "*Resolution With Justice – Reparations for the Armenian Genocide*"[24] (available in PDF format online). Also the Pan-Armenian Lawyers conference has completed the legal file for the case of the Armenian Genocide.[25] All indicate ways to pursue the matter according to international law. Catholicos Aram I has called on international experts to file a case for the demand of restitution of the Catholicosate of Sis.[26]

I shall conclude with a quotation from a British confidential report prepared in 1946 when the Armenian and Georgian claims were being studied by the Big Four for the British government.

"It would also be unwise to overlook the strength of the claim of territorial indemnification which might be based on the massacres perpetrated by the Turks on Armenians.

These massacres were so atrocious and have left such a lasting mark on the memory of the world, that if the Soviet Government chose to launch a propaganda campaign recalling all this, it would be likely to arouse a lot of sympathy in humanitarian circles all over the world and it might put Turkey in a very awkward position, as Black Sheep Number 1."[27]

This was in 1946. In 2014 the Foreign Office in its report "Armenia's Diaspora – Its Role and Influence" has reduced the above to the following espousal of the Turkish negationist point of view.

The Diasporan Armenians are "largely comprised of descendants of the Ottoman Empire who fled the territory of modern day Turkey during and after the intercommunal violemce of 1915."

What a distortion of facts!

"Black Sheep Number 1" was in 1946. The Soviets did not do the necessary. What the Armenians did was not enough. At the time of the 1946 report 31 years had passed since 1915 and 23 years since 1923, the

[٣] صالح زهر الدين, *مخاطر الدور التركي في المنطقة العربية*، بيروت ١٩٩٣، ص ١٢. وأيضاً: جرجيس حسن, *تركيا في الإستراتيجية الأميركية بعد سقوط الشاه*, دمشق, مطبعة الجاحظ، ١٩٩٠، ص ٣٣.

[٤] جهاد صالح, *الطورانية التركية بين الأصولية والفاشية*، بيروت, ١٩٨٧، ص ١٧٧.

[٥] زهر الدين, *مخاطر الدور التركي*، ص ١٣-١٥, ٧٥.

[٦] *ملحق زارتونك*، العدد ١٨، ايلول ٢٠٠٥، ص١٢.

[٧] مجلة *الشراع* (اللبنانية)، العدد ١٦٧٨، الإثنين ٢٠١٥/١/٥، ص ٥.

[٨] محمد نور الدين، *حجاب وحراب.. الكمالية وأزمات الهوية في تركيا*, بيروت, دار رياض الريس للكتب والنشر، ٢٠٠١، ص ٣٦١.

[9] وصال نجيب العزاوي في دراسة لها حول "تركيا والإتحاد الأوروبي بين جدلية الرفض ورهانات القبول"، نشرت في كتاب *العرب وتركيا*، المركز العربي للأبحاث ودراسة السياسات، بيروت، ٢٠١٢، ص ٧٧٣.

[10] محمد نور الدين، "تركيا والاتحاد الأوروبي: مسألة الهوية والرهانات والشرق الأوسط"، *شؤون الأوسط*، العدد ١١٦ (٢٠٠٤)، ص ٦٦. وأحمد داود أوغلو, *العمق الإستراتيجي*، ص ٥٤٢.

[11] إبراهيم البيومي غانم، "جدلية الإستيعاب والاستبعاد في العلاقات التركية الأوروبية"، في: علي حسين باكير [وآخرون]، *تركيا... بين تحديات الداخل ورهانات الخارج*، إشراف مركز الجزيرة للدراسات؛ تحرير محمد عبد العاطي, بيروت, الدار العربية للعلوم - ناشرون؛ الدوحة, مركز الجزيرة للدراسات، ٢٠١٠، ص ١٧٦.

[12] غانم، ص ١٨٢.

[13] داود أوغلو, *العمق الإستراتيجي*, ص ٥٤٧.

[14] جاء ذلك في المقابلة التي أجرتها معه مجلة *البحوث والأنباء الإقتصادية*، العدد ٥٤، نيسان ٢٠٠٠. ص ٢٤-٢٥.

[15] داود أوغلو, *العمق الاستراتيجي*، ص ٥٤٧.

[16] جاء ذلك في ملحق الدراسة التي أعدّتها وصال نجيب العزّاوي حول "تركيا والإتحاد الأوروبي", ص ٨٠٠، نقلاً عن دراسة الكاتبين Jonathan Paris و Zia Meral المنشورة في مجلة *Washington Quarterly*، العدد ٤, ٢٠١٠ vol. 33, ص ٥٧-٨٦.

[17] المرجع السابق نفسه والصفحة نفسها.

[18] داود أوغلو, *العمق الإستراتيجي*، ص ٥٧٢-٥٧٣.

[19] العزاوي، ص ٧٨٨.

[20] عمر كوش، "هل ستنضم تركيا إلى الإتحاد الأوروبي"، *المستقبل* (بيروت)، ٢٠٠٥/١٠/١٩.

[21] *المستقبل* في ٢٠١٤/١٢/٢٥، ص ١٥، وهذا ما يخالف تصريحات كثيرين من زعماء أتراك.

[22] العزاوي، ص ٨٠٠.

[23] صالح زهر الدين, *كارا باغ بين تقرير المصير والمشروع الطوراني الصهيوني*، منشورات الحلقة الأدبية الأرمنية اللبنانية، بيروت ١٩٩٢، ص ١٣. وكذلك دعد أبو ملهب عطاالله في دراستها عن "المسألة الأرمنية في النظام الدولي المعاصر..."، قدّمت في "وقائع المؤتمر الثاني" للجنة الدفاع عن القضية الأرمنية في حزب الطاشناق، بيروت ١٩٩٦، ص ٨٧-٩١.

[24] مجلة *شؤون تركية*، العدد ٩، خريف ١٩٩٣، ص ٤٨.

[25] مجلة *شؤون تركية*, العدد١٠. شتاء ١٩٩٤. ص ١٧-١٩.

[26] *ملحق زارتونك*، العدد ٢١، آذار- نيسان ٢٠٠٦، ص٣١.

[27] راجع في ذلك: صالح زهر الدين, *موقع كارا باغ في الصراع الأرمني- الأذربيجاني*, بيروت, ١٩٩٤, ص ٥-٦, ٢٣.

[28] نهاد حشيشو في مقالة له بعنوان "تركيا تهدّد بقبرص جديدة في القوقاز" نشرت في مجلة *الحسام*, العدد ٩٢, من ٢٧ أيلول- ٣ تشرين الأول ١٩٩٠. ص٢١.

[29] زهر الدين, *موقع كارا باغ*... ، ص ٨.

[30] *ملحق زارتونك*, العدد ٢. نيسان ٢٠٠٤. ص١١.

[31] جاء ذلك في جريدة *السفير*, ٢٠١٤/١٢/٢٠. ص٩.

[32] راجع تفصيلياً مجلة *شؤون تركية*، العدد ١٣، خريف ١٩٩٤، ١٢-١٤.

[33] *ملحق زارتونك*، العدد ٢١، آذار- نيسان ٢٠٠٦، ص ٢٣.

[34] جريدة *أزتاك*، الإثنين ٢٠١٥/١/١٢.

[35] *مجلة البحوث والأنباء الإقتصادية*، بيروت، العدد ٥١، نيسان ١٩٩٩، ص ٦٣.

[36] *ملحق زارتونك*، العدد ٩، ت٢ ٢٠٠٤، ص ١٥.

[37] *ملحق زارتونك*، العدد ١٣، آذار- نيسان ٢٠٠٥، ص ٢٦.

[38] *ملحق زارتونك*، العدد ٢٢، أيار- حزيران ٢٠٠٦، ص ٢٦..

[39] *ملحق زارتونك*، العدد ١٣، آذار- نيسان ٢٠٠٥، ص ٢٦.

[40] أنظر كتاب بارور يرتسيان, *مجازر الأرمن*، بيروت، دار الفارابي، ١٩٨٦، ص ١٦.

[41] *ملحق زارتونك*، العدد ٢٢، أيار- حزيران ٢٠٠٦، ص ٢٦.

[42] *ملحق زارتونك*، العدد ٢٠، كانون أول- كانون الثاني ٢٠٠٦، ص ٢٦.

[43] *ملحق زارتونك*، العدد ١٥، أيار ٢٠٠٥، ص ١١.

[44] داود أوغلو, *العمق الإستراتيجي* ، ص ٥٦٩.

[45] *شؤون تركية*، العدد ٧، آذار ١٩٩٣، ص ٢١.

[46] كان هذا الكلام يردّده الرئيس سليمان ديميريل كثيراً، حيث أن د. محمد نور الدين المؤرّخ اللبناني المتخصص بالتاريخ والأدب التركي، كان يذكره أيضاً، لا سيّما في مجلّة *شؤون تركية* التي كان يصدرها عن «مركز الدراسات الاستراتيجية والبحوث والتوثيق» في بيروت.

[47] الصحف والمجلات اللبنانية والعربية والتركية، ومنها: *النهار* و*المستقبل* و*السفير* (اللبنانية)، الجمعة ٢٠١٥/١/١٦، ص ١١ و١٦.

[48] داود أوغلو, *العمق الإستراتيجي*، ص ٦٣٢.

[49] *شؤون تركية*، العدد ٩، خريف ١٩٩٣، ص ٣٨.

[50] *شؤون تركية*، العدد ١٥، ربيع ١٩٩٥، ص ٣٤-٣٥.

[51] *ملحق زارتونك*، العدد ٢٢، أيار-حزيران ٢٠٠٦، ص ٢٥.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ՝ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՄ (ԱՄՓՈՓՈՒՄ)

ՍԱԼԻԷՀ ԶԱՀՐԷՏՏԻՆ

Արեւելեան Հարցը իր աւարտը չունեցաւ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումով: Ընդհակառակը, անիկա մասնատուեցաւ ենթահարցերու, որոնք նոր ձեւ եւ տարողութիւն առին ու գոյատեւեցին տարբեր ազդուութեամբ:

Ջեկոյցը լուսարձակի տակ կ'առնէ Հայոց Ցեղասպանութեան չարաշահումը շրջանային թէ մեծ պետութիւններու կողմէ, որոնք զայն օգտագործած են եւ կ'օգտագործեն իբրեւ ճնշամիջոց՝ Թուրքիոյ դէմ: Ճնշամիջոցի այս քաղաքականութիւնը կը տարբերի ըստ երկրի, ժամանակի եւ շահերու բախման չափի:

Ջեկոյցը կը վերլուծէ ճնշամիջոցի այս քաղաքականութեան վերաձեւաւորումը՝ Պաղ Պատերազմի աւարտէն, Ծոցի Երկրորդ Պատերազմէն, Պերլինի պատի փլուզումէն եւ Գերմանիոյ միացումէն ետք, ծանրանալով անոր քաղաքական, տնտեսական, զինուորական եւ դիւանագիտական դրսեւորումներուն վրայ:

Դոկտ. Զահրէտտին կը թուարկէ Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Յունաստանի չարաշահումի այս քաղաքականութիւնը ներկայացնելով իւրաքանչիւր երկրի առանձին դրսեւորումներու օրինակներ՝ թէ՛ ներթրքական եւ թէ՛ միջպետական

յարաբերութիւններու եւ շփումներու ծիրին մէջ: Ան կ'անդրադառնայ նաեւ Թուրքիոյ Եւրոպական Միութեան միանալու խնդրով վերջինիս վարած երկակի քաղաքականութեան, ինչպէս նաեւ քիւրտերու Հայոց Ցեղասպանութեան ճանաչման քաղաքականութեան:

Դոկտ. Զահիրէտտին կ'եզրակացնէ որ վերոյիշեալ քաղաքական միաւորներուն կողմէ որդեգրուած բռնաճնշումի այս քաղաքականութիւնը հիմնուած է անոնց շահերուն վրայ:

THE BLACKMAILING OF TURKEY BY THE GREAT POWERS REGARDING THE ARMENIAN GENOCIDE (SUMMARY)

SALEH ZAHREDDIN

The Eastern Question did not come to an end with the proclamation of the Republic of Turkey. It was divided into various 'sub-Questions' which took new shapes and maintained their active existence in diverse forms.

The paper highlights the manipulation of the issue of the Armenian Genocide by various regional powers since the proclamation of modern Turkey in 1923.

The paper notes that this "blackmail policy" differs from one Western country to another, depending on the timing, place and the clash of interests between them. In fact the end of the Cold War, the Second Gulf War, the fall of the Berlin wall and the unity of Germany have reshaped this policy of manipulation and given rise to its political, economic, diplomatic and military dimensions.

Dr. Zahreddin identifies a number of state actors in the region, like the USA, Russia and the European Union countries of Germany, France and Greece, which make ample use of this policy to maintain pressure on Turkey.

The paper enumerates some specific cases of US actions concerning the manipulation policy, like the statements and announcements of US state officials regarding the Armenian Genocide, the free hand given to the Armenian lobby, the harsh criticism and reports of the US State Department concerning human rights violations in Turkey, statements about the Turkish Alevis and the minority rights of the Kurds in Turkey, Turkish support to ISIS, the Genocide Resolution of the Congress (1984) and the various bills brought forth, redrawing the map of the Middle East including the map of Turkey, diverse preconditions of NATO and USA regarding military and financial aids.

The paper discusses in detail the intricacies of Turkey's accession to the EU and its relations with Germany, France and Greece as well as the sinuous track of its relations with Russia concerning the Armenian Genocide, particularly after the recognition by the Russian parliament, the Duma, of the Armenian Genocide.

The paper concludes that the approach and policies of these states and the EU are based on promoting their interests by manipulating the Armenian Genocide recognition issue and many other issues too.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ-ԹՈՒՐՔԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1991-2014

ԱՐՍԷՆ ԱՒԱԳԵԱՆ
a.avagyan@mfa.am

Հաշուի առնելով պատմական անցեալը՝ Հայոց Ցեղասպանութեան ու հայերի հայրենազրկման փաստը, ինչպէս նաեւ այն որ Հայաստանի Հանրապետութիւնը շրջապատուած է երկու թուրքական հանրապետութիւններով, որոնք համակարգուած համագործակցում են հակահայկական քաղաքականութիւն վարելու մէջ, Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան յարաբերութիւնները սովորական երկու հարեւան պետութիւնների յարաբերութիւններից շատ աւելի բարդ են:

Նախ անդրադառնանք այն գործօններին որոնք պայմանաւորում են այդ յարաբերութիւնների բնոյթը: 1991ից՝ անկախանալուց յետոյ Հայաստանի Հանրապետութիւնը յստակ յայտարարել էր որ իր արտաքին քաղաքականութեան հիմքում ընկած է բոլոր պետութիւնների հետ բարիդրացիական յարաբերութիւններ ունենալու ցանկութիւնը, ինչը նաեւ արձանագրուել էր սահմանադրութեան մէջ[1]: Ինչ վերաբերում է Թուրքիայի Հանրապետութեան հետ յարաբերութիւնների քաղաքական գծին, ապա 1991ից իվեր նա անփոփոխ է: Հայաստանի Հանրապետութիւնը միշտ յայտարարել է որ ինք պատրաստ է առանց որեւէ նախապայմանների յարաբերութիւններ հաստատել Թուրքիայի հետ[2]: Միաժամանակ, մշտապէս, Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների կողմից նշուել է որ կան խնդիրներ որոնք ունեն ոչ թէ պետական այլ համազգային բնոյթ[3]: Այդ խնդիրները պատկանում են ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան, այլ նաեւ ամբողջ հայ ժողովրդին: Այդ խնդիրներից են Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, հատուցման խնդիրը եւն.:

Սակայն Թուրքիան, միշտ խօսում է նախապայմանների մասին:

Բայց մինչեւ այդ մասին անդրադառնալը, հարկ է նշել, որ Թուրքիայի քաղաքական մտածելակերպում եւ գործելաոճում չկայ

տարբերակում Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման, հատուցման, Լեռնային Ղարաբաղի եւ այլ խնդիրների միջեւ: Այս բոլորը հիմնականում դիտւում են որպէս մէկ խնդրի տարբեր բաղկացուցիչ մասեր. որպէս՝ հայոց խնդրի՝ Հայկական Հարցի (որը Թուրքիայում շատ յստակ ձեւակերպուած է որպէս *Էրմենի Մէսէլէսի*) բաղկացուցիչ մասերը եւ մշտապէս Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքին վերագրւում է **«Չորս Թ'ի** Քաղաքականութիւն», որին կ'անդրադառնանք շուտով[4]:

Պէտք է ասել, որ Թուրքիան ռազմավարական տեսակէտից Հայաստանի Հանրապետութիւնը եւ Սփիւռքը դիտում է որպէս միասնական քաղաքականութիւն վարող մի մարմին: Մարտավարական տեսակէտից, մշտապէս, թուրքական գործիչները առաջ են քաշում մտքեր, ինչպիսին է Դաւութօղլուի խորհրդական Էթիէն Մահճուպեանի վերջերս կատարած յայտարարութիւնը, թէ իբր Հայաստանի Հանրապետութիւնը աւելի պատրաստ է Թուրքիայի հետ յարաբերութիւնների, քան՝ Սփիւռքը[5]: Սա պարզապէս մարտավարական նկատառումներից ելնելով կատարուած յայտարարութիւն է, որի նպատակն է պառակտում յառաջացնել Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի միջեւ:

Թուրքիայի տեսակէտից Հայաստանի Հանրապետութիւնը կամ հայ ժողովուրդը մշտապէս վարում է **«Չորս Թ'ի** Քաղաքականութիւն», որն հետեւեալ բովանդակութիւնն ունի.-

Սկսած 1972ից՝ Գուրգէն Եանիկեանի Սանթա Պարպարայում կրակոցից, հայերը վարել են ազգայնականութեան վերակենդանացման քաղաքականութիւն, որը աւարտուել է 1991ին՝ պետականութեան վերականգնմամբ (թուրքերէն՝ *tekrar canlandırmak*): Հիմա տանում են Հայոց Ցեղասպանութեան ճանաչման քաղաքականութիւն (*tanıtmak*), որին հետեւելու է հատուցման պահանջների քաղաքականութիւնը (*tazminat*), եւ դրան կը հետեւի տարածքային պահանջների քաղաքականութիւնը (*toprak talebe*): Դրանից ելնելով եւ նաեւ հաշուի առնելով այն Սեւրի բարդոյթը որ կայ մշտապէս Թուրքիայում՝ Հայաստանի Հանրապետութեան հետ յարաբերութիւնների համար յառաջ են քաշուել նախապայմաններ:

Եթէ ընդհանուր ծիրով վերցնենք՝ Թուրքիան յառաջ է քաշել երեք նախապայման: Տարբեր ժամանակներում այդ նախապայմանների տեղերը փոխուել են՝ պարագաների բերմամբ նրանց առաջնային կամ երկրորդական կշիռ ստանալուն:

Այդ երեք նախապայմաններն են.-

Ա) Հրաժարուել Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումից:

Բ) Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը լուծել Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան շրջանակներում:

Գ) Ժամանակ առ ժամանակ բարձրացուել է Հայաստանի Հանրապետութեան կողմից Կարսի Պայմանագրի հաստատման խնդիրը: Այս առումով, յատկապէս 1991ի Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Հռչակագիրը նիւթ է դարձել, քանի որ այնտեղ նշուած է որ Հայաստանի Հանրապետութիւնը հետամուտ է Օսմանեան Թուրքիայում հայերի ցեղասպանութեան ճանաչման խնդրին: Հռչակագրի այս հատուածը Թուրքիայի կողմից մեկնաբանուել է ի շահ Թուրքիային: Վերջինս փորձում է օգտագործել այս հատուածը որպէս ապացոյց թէ Հայաստանի Հանրապետութիւնը տարածքային պահանջքներ ունի Թուրքիայի նկատմամբ:

Թուրքիան Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը ճանաչած առաջին պետութիւններից մէկն է: Նա Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչել է 1991 Դեկտեմբեր 24ին: Այս ճանաչման հետեւել է այն ժամանակաշրջանը երբ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի միջեւ եղել են շփումներ, պատուիրակութիւններ են եկել ու գնացել, որի ընթացքում քննարկուել է դիւանագիտական յարաբերութիւններ, այնուհետեւ՝ հիւպատոսական յարաբերութիւններ հաստատելու խնդիրը: Այս շրջանում Թուրքիայի հիմնական պահանջը եղել է որ այդ յարաբերութիւնների հաստատման հիմքում նշուած լինի՝ այդ յարաբերութիւնների Կարսի Պայմանագրի վրայ հիմնուած լինելու փաստը: Այլ խօսքով, յստակ նշուի որ այդ յարաբերութիւնները վերականգնւում են 1921ի Կարսի Պայմանագրի հիման վրայ:

Առաջին հայեացքից սա կարող է արտառոց թուալ: Սակայն, Թուրքիայի՝ Վրաստանի եւ Ադրբեջանի հետ յարաբերութիւնների հաստատման պայմանագրերում նշուած է որ դրանք հաստատւում են Կարսի Պայմանագրի հիման վրայ, քանի որ

Թուրքիան իր հարաւ-կովկասեան քաղաքականութեան որպէս իրաւապայմանագրային դաշտ, միշտ դիտել է Կարսի Պայմանագիրը:

1991-1992ի ընթացքում եղել են նաեւ այլ տեսակի որոշ շփումներ: Օրինակ, Թուրքիայի տարածքով Հայաստանի Հանրապետութիւն է բերուել Եւրոպական Համայնքի կողմից դրամական օգնութիւնը:

Սակայն, յարաբերութիւնների նման բնոյթը տեւեց մինչեւ 1993, մինչեւ Քելպաճարի դէպքերը, երբ հայկական ուժերը ազատագրեցին Քելպաճարը:

Քելպաճարի ազատագրման հանգրուանը Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի փոխյարաբերութիւնների ամենաթէժ կէտն է: Այն ատեն էր որ Թուրքիայի նախագահ Թուրկութ Օզալը նոյնիսկ յայտարարեց թէ ի՛նչ կը լինի որ թուրքական զօրքերը զօրավարժութիւններ կատարեն եւ մէկ-երկու ռումբ ընկնի Հայաստանի Հանրապետութեան տարածքի վրայ:

Եւ իրօք 1993 Մայիս ամսին նման զօրավարժութիւններ տեղի ունեցան Կարսում[6]:

Այս տեսակէտից, կարելի է ասել որ մինչեւ Քելպաճարի դէպքերը, Թուրքիայի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների խնդրում, Թուրքիան պարտուող քան թէ յաղթող հայ էր ընկալում հայութիւնը: Թուրքիան փորձեց օգտագործել Քելպաճարի դէպքերը հնարաւորութիւն յառաջացնելով միջամտելու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին: Նա բարձրացնելով Նախիջեւանի խնդիրը, առարկեց որ Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերով Թուրքիան հանդիսանում է երաշխաւոր, եւ նա իրաւունքը ունի միջամտելու՝ եթէ խօսքը վերաբերւում է Նախիջեւանի կարգավիճակի փոփոխմանը: Դրան հետեւեց Ռուսաստանի յայտարարութիւնը, թէ՝ Կարսի եւ Մոսկուայի պայմանագրերում չկայ ընդհանրապէս երաշխաւորի *ինստիտուտը*, եւ որ դա վերաբերւում է պարզապէս այն ժամանակուայ իրավիճակին [7] : Բացի ռուսական յայտարարութիւնից, եղաւ ԱՄՆի այն յայտարարութիւնը որ եթէ Թուրքիան ուզում է գնալ պատերազմի, նա միայնակ կարող է պատերազմել, բայց այդ դէպքում ՆԱՏՕի Պայմանագրի հինգերորդ կէտը չի գործելու[8]:

Դրանից յետոյ Թուրքիան փակեց Հայաստանի Հանրապետութեան հետ օդային եւ ցամաքային սահմանը: Օդային սահմանը վերաբացուեց 1995ին, իսկ ցամաքայինը մինչեւ հիմա փակ է: Այդ շրջանից իվեր, Թուրքիան վարում է ակնյայտ հակահայ քաղաքականութիւն:

Թուրքիային՝ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ այդ ընթացքում վարած նման քաղաքականութեան ամենալաւ բացատրութիւնը տուել է Թուրքիայի նախկին վարչապետ՝ Պիւլենթ Էջեւիդը, որ ազգային մեծ ժողովում յստակ ասեց. «*Հա՛ւ իմացէք, հայերի համար Ղարաբաղը առաջին շրջանն է, Ղարաբաղի հարցը եթէ լուծեն կը բարձրացնեն Նախիջեւանի խնդիրը յետոյ կը գան Կարսի եւ Արտահանի հարցերը: Եթէ չէք ուզում որ բարձրանայ Կարսի ու Արտահանի հարցը՝ հայերին պէտք է կանգնեցնել առաջին շրջանում*»[9], այսինքն՝ Ղարաբաղի հարցում: Այլ խօսքով, այս տեսակէտից Ղարաբաղի հարցում Թուրքիայի պահանջները կարելի է դիտել իբրեւ ոչ միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան խնդիր, այլ նաեւ մտավախութիւն՝ իր սեփական տարածքային ամբողջականութեան մասին:

1994-1997 ժամանակահատուածում կարելի է ասել որ Հայաստանի Հանրապետութիւն-Թուրքիա յարաբերութիւններում որոշ նշմարումներ եղան, որովհետեւ 1994ին կնքուեց Թուրքիա-Ադրբեջան Պայմանագիրը, որը նախատեսում է երկու պետութիւնների յարաբերութիւնների խորացում ռազմավարական համագործակցութեան մակարդակի [10] , եւ Թուրքիայի հարաւ-կովկասեան քաղաքականութիւնը հիմնուեց Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական դաշինքի վրայ:

1997ին ստեղծուեց Հայ-Թուրքական Գործարար Խորհուրդը: Որոշ շփումներ եղան, բայց 1998ից մինչեւ 2008 այդ յարաբերութիւնները ապրեցին փնտոտուքի շրջան: Ընդ որում, թուրքական քաղաքական միտքը միշտ մեղադրել է իր ղեկավարութեանը որ 1997ին չօգտագործեց այն պահը երբ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը պատրաստ էր գնալու որոշ զիջումների Լեռնային Ղարաբաղի կարգաւորման խնդրում: Թէ՝ այն ժամանակ չբացեցին սահմանը որը կ'ուժեղացնէր Տէր-Պետրոսեանի դիրքերը, եւ թոյլ չէր տայ որ իշխանութեանը գար

Ռոբերտ Քոչարեանը, որը աւելի յստակ եւ աւելի կարծր քաղաքականութիւն էր վարում Թուրքիայի նկատմամբ:

1998ից մինչեւ 2008 եղել են որոշ շփումներ. որոշ բանակցութիւններ են տեղի ունեցել, որոնք ապարդիւն են եղել, այն պատճառով որ Թուրքիան մշտապէս հանդէս է եկել նախապայմանների դիրքերից: Այս շրջանում յստակ ձեւակերպուեց նաեւ թուրքական մօտեցումը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդրին: Դա եղաւ 2005ին:

Ուշագրաւ է որ Արդարութիւն Եւ Զարգացում Կուսակցութեան իշխանութեան գալուց իվեր միակ դէպքը երբ ընդդիմութիւնը եւ իշխանութիւնը միակարծիք էին, այն պահն էր երբ խորհրդարանում ընդունուեց որոշում որով կոչ է արւում Հայաստանի Հանրապետութեան՝ ստեղծել պատմաբանների համատեղ յանձնաժողով, որը պէտք է քննարկէ Հայոց Ցեղասպանութեան հարցի՝ եղելութեան խնդիրը[11]:

Բնականաբար այդ դիրքորոշումը Հայաստանի Հանրապետութեան համար անընդունելի է:

Այդ մասին անմիջապէս Թուրքիայի վարչապետից նամակ ստանալուց յետոյ, նախագահ Քոչարեանը պատասխանել էր, բայց թուրքական լրատուամիջոցները մինչեւ այժմ փորձում են այնպէս ներկայացնել որ Հայաստանի Հանրապետութիւնից պատասխան չի ստացուել[12]:

Միւս գործընթացները որոնք տեղի են ունեցել այս շրջանում բանակցային առումով՝ Օսլոյում, Վիեննայում եւ այլ շրջաններում աւարտուել են ապարդիւն՝ հենց թուրքական պահանջքների պատճառով:

2008ին սկսւում է 'ֆութպոլային դիւանագիտութեան' ժամանակաշրջանը, երբ Հայաստանի Հանրապետութեան նախագահը հրաւիրեց իր գործընկեր Աբդուլլահ Գիւլին՝ Հայաստանի Հանրապետութիւն՝ միասին դիտել Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի ֆութպոլային ազգային թիմերի այդ խաղը: Դիտումից յետոյ տեղի ունեցան բանակցութիւններ՝ արտգործնախարարների միջեւ: Բանակցութիւնների այս գործընթացը աւարտուեց 2009 Հոկտեմբեր 10ին Ցիւրիխում, արձանագրութիւնների ստորագրմամբ:

Արձանագրութիւնների բանակցային գործընթացը յաջողութեամբ սարքուեց, որովհետեւ հիմքում դրուած էր առանց

նախապայմանի յարաբերութիւններ հաստատելու գաղափարը[13]: Ամբողջ բանակցային գործընթացը այդպէս է գնացել: Թուրքական կողմը համաձա՛յն էր այդ շրջանում: Այդ տրամաբանութեամբ շարժուելով, դրա համար, 2009 Ապրիլի 22ին յայտարարուեց այդ արձանագրութիւնների մասին, որից յետոյ դրանք դրուեցին ընդհանուր քննարկման[14]:

Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների համար նման քայլի գնալը բաւականին բարդ խնդիր էր: Նախագահ Սարգսեանը ուղեւորութիւն կատարեց սփիւռքահայ մի շարք համայնքներ, նաեւ՝ Լիբանան եկաւ, որտեղ ներկայացրեց այդ արձանագրութիւնները: Միանշանակ չէր վերաբերումը ո՛չ միայն Սփիւռքում՝ արձանագրութիւնների նկատմամբ, այլ նաեւ Հայաստանի Հանրապետութիւնում: Սակայն արձանագրութիւնները կարեւոր են այն բանով որ իր տրամաբանութեամբ այդտեղ նշւում է որ առանց նախապայմանի, հաստատւում են դիւանագիտական յարաբերութիւններ, բացւում է սահմանը եւ միջոցներ են ձեռնարկւում յարաբերութիւնների կարգաւորման համար:

Յետագայում, թուրքական իշխանութիւնները ետ կանգնեցին նախնական համաձայնութիւնից, առաջ քաշելով նոյն պահանջքները՝ Լեռնային Ղարաբաղի առնչութեամբ: Որպէս պատրուակ թուրքական իշխանութիւնը փորձեց օգտագործել Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական դատարանի որոշումը՝ արձանագրութիւնների մասին: Այնտեղ յստակ նշուած էր որ Հայաստանի Հանրապետութեան համար ընդհանրապէս Հայոց Ցեղասպանութեան խնդիրի քննարկումը անընդունելի է ի՛նչ ձեւով էլ դա լինի, որովհետեւ հայերիս համար դա անհերքելի փաստ է[15]:

Պէտք է ասել որ, Թուրքիայի համար դա միայն Հայոց Ցեղասպանութեան խնդիր չէր: Այնտեղ կային միքանի խնդիրներ: Այն ժամանակի թուրք ընդդիմադիր Հանրապետական Կուսակցութեան նախագահ՝ Դենիզ Բայկալը մեկնաբանելով արձանագրութիւնները, առարկեց որ արձանագրութիւնները պէտք են երեք տեսակէտից: Առաջինը՝ որ այնտեղ յստակ նշուի Կարսի Պայմանագրի մասին, թէ՝ Հայաստանը հաստատում է Կարսի Պայմանագիրը: Բայց նման կէտ չկայ այնտեղ[16]:

Ըստ Բայկալի, երկրորդ ամենակարեւոր կէտը Ցեղասպանութեան հարցն էր, դրա տեղափոխումը պատմաբանների քննարկման դաշտ: Բայց ոչ միայն դա չկայ, այլ սահմանադրական դատարանի որոշումից յետոյ հայերը յստակ հիմնուելով նրանց սահմանադրական դատարանի որոշման վրայ, այդ խնդիրը ընդհանրապէս ենթակայ չեն դարձնում քննարկումի: Իսկ երրորդը, որ՝ «Թուրքիան չի պահանջում վերջ տալ Ադրբեջանի տարածքների գրաւմանը»[17]: Այսինքն, այն՝ թէ այդ արձանագրութիւնները կարող էին դրական ազդեցութիւն ունենալ Թուրքիայի համար, այդ դրական ազդեցութիւնը Հայաստանի Հանրապետութիւնը չէզոքացրեց:

Թուրքական դիրքորոշումը, որը Հայաստանի Հանրապետութեան հետ յարաբերութիւնների կարգաւորումը փոխկապակցում է հայ-ադրբեջանական յարաբերութիւնների կարգաւորման հետ՝ արտայայտել էր դեռեւս Թուրքիայի նախագահ Սուլէյման Տեմիրիլը, որը երբ խօսում էր Հայաստանի Հանրապետութիւն-Թուրքիա յարաբերութիւնների մասին, մշտապէս նշում էր Ադրբեջանի գործօնը: Նա նոյնիսկ աւելի անկեղծ լինելով ասել էր որ Հայաստանի Հանրապետութեան հետ երկու գրոշանոց առեւտրի համար ինք չի փչացնի յարաբերութիւնները Ադրբեջանի հետ[18]:

Ադրբեջանական գործօնը, բնականաբար Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ շատ մեծ դեր է կատարում: Բացի նրանից որ Ադրբեջանը հանդիսանում է այն պետութիւնը որ մեծ ներդրումներ է կատարում Թուրքիայի տնտեսութեան մէջ, կան բազմաթիւ այլ գործօններ՝ կապուած ե՛ւ էթնիքական, ե՛ւ լեզուային, ե՛ւ այլ ընդհանուր կապերի խնդիրների հետ:

Հայ-թուրքական յարաբերութիւնների նորագոյն շրջանի զարգացումը՝ եթէ վերցնենք այդ արձանագրութիւններից յետոյ ծաւալուած ընթացքը, պէտք է առանձնացնել մի տարի անց՝ 2010ին, Հայաստանի Հանրապետութեան նախագահի յայտարարութիւնը՝ արձանագրութիւնների սառեցման մասին: Այդ յայտարարութիւնը հաշուի էր առնում թուրքական կողմի ապակառուցողական դիրքորոշումը: Պարզապէս Թուրքիան ապակառուցողական դիրքերից էր հանդէս գալիս[19]:

Ներկայումս հայ-թուրքական յարաբերութիւնների գծով դրանք աւելի վատ դրութեան մէջ են յայտնուել եւ աւելի վատ ելակէտում՝

քան եղել էին մինչեւ այդ արձանագրութիւնների բանակցութիւնների սկսելը:

Թուրքական կողմը բազմաթիւ անգամ յայտարարել է, որ գոյութիւն ունեն լուռ դիւանագիտութիւն, լռելեայն բանակցութիւններ Հայաստանի Հանրապետութեան հետ: Նման բան գոյութիւն չունի, քանի որ յստակ ասուել է եւ իմաստ էլ չունի բանակցութիւն վարել երբոր կան յստակ արձանագրութիւններ, որտեղ նշուած է բոլոր կէտերի յարաբերութիւնների կարգաւորման գործընթաց: Եւ բանակցութիւն վարել կամ լռելեայն դիւանագիտութիւն վարել ու բանակցել նո՛յն բանի համար՝ պարզապէս անիմաստ է:

Թուրքիայի քաղաքականութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ նոր, կարեւոր զարգացում է նկատւում, որ սկսել է 2011ից: Այն ժամանակուայ արտաքին գործոց նախարար Ահմէդ Դաւութօղլուն յայտարարեց որ Թուրքիան չի ժխտում որ 1915ին եղել են ինչ-որ դէպքեր, բայց որ՝ դա ցեղասպանութիւն չի[20]: Դաւութօղլուն առաջ քաշեց համատեղ ցաւի դրոյթը: Հետաքրքիր էր 2014ի Էրդողանի ուղերձը, որը մեկնաբանուեց թէ առաջին անգամ ցաւակցութիւն է յայտնուել հայ ժողովրդին եւ քայլ է առնւում Թուրքիայի կողմից[21]:

Սա Թուրքիայի կողմից շատ խելացի մարտավարական քայլ է, որը ես կ'անուանեմ 'խելացի ժխտողականութիւն': Համաշխարհային հանրութեան աչքի առաջ Թուրքիան փորձում է հանդէս գալ որ ինքը ոչ թէ ժխտողական պետութիւն է, այլ հակառակը՝ ինքը պետութիւն է որ պատրաստ է վերաքաղել իր սեփական պատմութիւնը եւ ձեռք է մեկնում Հայաստանին, սակայն Հայաստանի կողմից չի ընդունւում:

Վերջին զարգացումները՝ Տարտանէլի միջոցառումներով փորձել ստուերել Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի յիշատակմանը նուիրուած միջոցառումները, խեղաթիւրումը պատմական փաստերին, ամբողջովին ապացուցում են նաեւ թուրքական քաղաքականութեան գիծը:

Հաշուի առնելով այս բոլոր կէտերը, Հայաստանի Հանրապետութիւն-Թուրքիա յարաբերութիւնների մէջ կայ մի կարեւոր դրոյթ, որը մշտապէս վերջին տարիներին առաջ է քաշւում Թուրքիայի կողմից: Դա պատրաստակամութիւնն է քննարկելու յարաբերութիւնների կարգաւորումը: Բայց դա

պայմանաւորուած է Ղարաբաղի հարցում Թուրքիայի պահանջներով: Թուրքիան ոչ թէ ուզում է հանդիսանալ միջնորդ, այլ՝ որ տարածաշրջանում եղած խնդիրները համապարփակ լուծում ստանան:

Այս դրոյթը նոյնպէս քննարկման կամ քննադատման չի դիմանում, քանի որ տարածաշրջանում գոյութիւն ունեն ոչ միայն Լեռնային Ղարաբաղի խնդիրը, այլ նաեւ ուրիշ խնդիրներ Վրաստանում եւն., որտեղ Թուրքիան նման աշխուժ միջնորդութիւն չի ցուցաբերում: Այսինքն, հիմնական նպատակը գալիս է նոյն խնդրին՝ նախապայմանների լեզուով խօսել Հայաստանի Հանրապետութեան հետ, ինչը մեր կողմից անընդունելի է:

Հայ-թուրքական յարաբերութիւնների մասին, ընդհանուր գծերի մէջ ամփոփելով՝ ներկայումս առկայ յարաբերութիւններում.-

- Բանակցային գործընթացի մասին խօսք չի կարող լինել:
- Հայ-թուրքական յարաբերութիւններում կայ տնտեսական բաղադրիչը: Ներկայ դրութեամբ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի միջեւ գոյութիւն ունեն առեւտրական կապեր, որոնք միջնորդուած են Վրաստանի կամ Իրանի միջոցով, հիմնականում՝ Վրաստանի միջոցով: Ընդհանուր ապրանքակշիռը կազմում է մօտ 300 միլիոն տոլար: Իսկ թէ ինչպէ՛ս կ'ածի այդ ապրանքների վաճառումը սահմանների բացուելու դէպքում, նոյնիսկ թուրքական հետազօտողների տուեալներով, դա կարող է բարձրանալ մինչեւ մէկ միլիար տոլարի: Այս գումարը նոյնինքն թուրքական քաղաքական ուժերի կողմից չի նկատւում այն թիւը որի համար շահագրգռուած լինի Թուրքիան՝ Հայաստանի Հանրապետութեան հետ յարաբերութիւններ հաստատելու: Այսինքն, տնտեսական գործօնը որպէս հանրապետութիւնների միջեւ յարաբերութիւններ հաստատելու գործօն՝ բացակայում է:

Խօսելով ապագայի մասին, կարելի է ասել որ թուրքական հասարակութիւնում կան դրական տեղաշարժեր: Թուրքական հասարակութիւնը բարձրացնում է այն խնդիրը որ վերջիվերջոյ Թուրքիան առերեսուի իր պատմութեան հետ: Միւս կողմից Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ Թուրքիայի վարած տնտեսական շրջափակման քաղաքականութիւնը, ճնշման քաղաքականութիւնը այսքան տարիների ընթացքում ապացուցել է

իր անարդիւնաւէտութիւնը: Այսինքն, ո՛չ այդ տնտեսական շրջափակումը, ո՛չ այդ ճնշումները, ո՛չ միջազգային ասպարէզում ժխտողականութիւնը չեն բերել այն արդիւնքները ինչը Թուրքիան կ'ակնկալէր:

Թուրքական հասարակութիւնը տեսնում է որ Թուրքիան պէտք է փոխի իր քաղաքական գիծը:

Թէ ինչքանո՛վ կը ստացուի Թուրքիայի մօտ փոխե՛լ իր քաղաքական գիծը՝ դժուար է ասել: Յամենայնդէպս, Թուրքիայում ներկայ իրավիճակը մեզ թոյլ է տալիս գալ այն եզրակացութեան որ թուրքական քաղաքական գիծը չի փոխուելու Հայաստանի Հանրապետութեան հետ: Այսինքն, այն վիճակը որ ներկայումս գոյութիւն ունի, հաւանաբար կը շարունակուի մօտ ապագայում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Յօդուած 9. «Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնն իրականացւում է միջազգային իրաւունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան՝ բոլոր պետութիւնների հետ բարիդրացիական, փոխշահաւէտ յարաբերութիւններ հաստատելու նպատակով» (ՀՀ Սահմանադրութիւն, http://www.president.am/hy/chapter1/):

[2] http://www.mfa.am/hy/country-by-country/tr/ :

[3] Serzh Sargssian "Պատմութեան Մութ, Անաւարտ Էջը. Առաջին Համաշխարհային Պատերազմն Ու Հայոց Ցեղասպանութիւնը", *International New York Times*, 24 September 2014 (http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-International-New-Yourk-Times-article/):

[4] Արսէն Աւագեան, «Թուրքական Քաղաքական Մտածելակերպը Եւ Հայութիւնը», *Անդին*, N6, 2014, էջ 8-12:

[5] "Ermeni Halkı 'Diaspora'dan Daha Hazır" (http://www.trtturk.com/haber/ermeni-halki-diaspora-dan-daha-hazir-106805.html):

[6] "11 Cumhurbaşkanının 'Ermeni Soykırımı'yla Sınavı", 8 Agustos 2014 (http://www.agos.com.tr/tr/yazi/7746/11-cumhurbaskaninin-ermeni-soykirimi-yla-sinavi):

[7] Hayk Demoyan, "Turtsiya I Karabakhskii Konflikt V Kontse XX-Nachale XXI vv." (Թուրքիան եւ Ղարաբաղեան Հակամարտութիւնը 20րդ դարավերջ-21րդ դարասկզբին), *Istoriko-Sravnitelniy Analiz*, Երեւան, 2006, էջ 110-111:

[8] ՀՀ ԱԳՆ Սահմանակից Երկրների Վարչութեան Թուրքիայի Բաժնի Ընթացիկ Արխիւ: ՆԱՏՕի Պայմանագրի 5րդ յօդուածը նշում է, որ անդամներից մէկի դէմ յարձակումը նշանակում է յարձակում բոլոր անդամների նկատմամբ եւ պայմանագրող կողմերը համատեղ են հանդէս գալու ("What is Article 5?" http://www.nato.int/terrorism/five.htm):

[9] Bulent Ecevit, "Karabağ'ın Işgali Başlayınca, Nahcıvan'a Da Sıra Gelir Diye", *Cumhuriyet*, 25 Մայիս 1992:

[10] http://www.tbmm.gov.tr/tutanaklar/KANUNLAR_KARARLAR/kanuntbmmc079/kanuntbmmc079/kanuntbmmc07904151.pdf :

[11] Tbmm Başkani Arinç: "Geçmişimizde 'Soykirim' Diyebirhadiseyoktur", http://www.tbmm.gov.tr/develop/owa/web_basin_aciklamalari.aciklama?p1=22924 1

[12] Başbakan Erdoğan'dan Kisas'akisas: Soykirim Yapanlar İçin Bizde Parlement Omuzdan Karar Çikaracağiz" (http://medyaspot.com/haber/Basbakan-Erdogan-Dan-Kisas-A-Kisas-Soykirim-Yapanlar-Icin-Biz-De-Parlementomuzdan-Karar-Cikaracagiz/11329):

[13] "Turkey Has Gone Back on its Word, Op-ed by Edward Nalbandian, the Minister of Foreign Affairs of Armenia", *Wall Street Journal* (http://www.mfa.am/en/interviews/item/2010/10/12/turkey_back/):

[14] Նոյն:

[15] http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf :

[16] "Baykal: Ermenistan İşgali Bitirmeyecek" (http://www.haberler.com/baykal-ermenistan-isgali-bitirmeyecek-haberi/):

[17] Նոյն:

[18] "Üç Kuruşa Kapı Açılmaz", *Hurriyet*, 31 Ekim 1997 (http://hurarsiv.hurriyet.com.tr/goster/haber.aspx?id=-271362):

[19] «Առկախուեցին Հայ-Թուրքական Արձանագրութիւնները» (http://www.aravot.am/2010/04/23/347230/):

[20] Karşılarında 1915'te Hiç Bir şey Olmamış Diyen Bir Dışişleri Bakanı Yok" (http://www.timeturk.com/m/yazi.asp?id=38980):

[21] Başbakan Sayın Recep Tayyip Erdoğan'ın 1915 olaylarına ilişkin mesajı, 23 Nisan 2014 (http://www.mfa.gov.tr/basbakan-sayin-recep-tayyip-erdogan_in-1915-olaylarina-iliskin-mesaji_-23-nisan-2014.tr.mfa):

TURKISH-ARMENIAN STATE RELATIONS (1991-2014) (SUMMARY)

ARSEN AVAGYAN

Due to past history, the exclusion of the Armenians from their hometowns, the usurpation by Turkey of Armenian property and the transformation of the Western Armenians into a Diasporal nation, Turkish-Armenian state relations are more complicated and multifaceted in nature than those between any two neighboring states usually are.

The two sides have opposite approaches to the principles of normalization, procedure and political thinking.

Since 1991 Turkish-Armenian contacts have gone through several phases. None, however, has led to resolving the issues and the establishment of diplomatic relations.

In 1991-92 contacts started between the two sides for the establishment of diplomatic and consular relations. But in 1992, due to Turkish attitudes, these contacts went into the stage of blockading Armenia and pressuring it while attempts were made to intervene in the Karabagh conflict. This situation, with no essential changes, still prevails today.

Since 1995 initiatives to resolve the issues have been confronted with the fact that Turkey always comes up with preconditions, linking the resolution of Turkish-Armenian relations to the resolution of Azeri-Armenian relations.

The paper dwells on extensively on Turkish-Armenian state contacts and divides them into hypothetical stages.

Turkey views the international recognition of the Armenian Genocide and its implications as a menace to its national security and as an aspect of the Armenian Cause. This interpretation is closely linked to the "Sevres Complex" prevailing in the Turkish National mindset.

Currently Turkey runs a "wise denial" policy through hindering the international recognition of the Armenian Genocide. Besides, it views the acts of the Republic of Armenia and those of the Diaspora in this regard as a unified and coordinated effort and from this standpoint designs its policies against the Armenians as a fight against a general danger addressed to its national security.

ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՈՉ-ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ

ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ
tatarmen@yahoo.com

Հայ-թուրքական յարաբերութիւնները կամ շփումները պայմանականօրէն կարելի է տեղաւորել երեք հարթութիւնում.- ա) Հայաստանի Հանրապետութիւն (ՀՀ)-Թուրքիա, այսինքն՝ Երեւան-Անկարա պաշտօնական բանակցութիւններ, բ) Թուրքիա-Հայկական Սփիւռք շփումներ եւ գ) հայ-թուրքական հասարակական, ոչ-պաշտօնական յարաբերութիւններ:

1991ից իվեր, երբ ԽՍՀՄ փլուզման արդիւնքում ՀՀն անկախացաւ, տեղի են ունեցել հայ-թուրքական ոչ-պաշտօնական բազմաթիւ շփումներ: Երբեմն դժուար է այդ շփումները համարել լոկ հասարակական, քանի որ երկու կողմերում ընդգրկուած ներկայացուցիչները, չզբաղեցնելով պետական պաշտօններ, իշխանութիւնների հետ պահել են սերտ յարաբերութիւններ:

Հենց այդպիսին կարելի է որակել հայ-թուրքական ոչ-պաշտօնական առաջին նախաձեռնութիւնը, որին թուրքական կողմից մասնակցում էր արմատներով հրեայ թուրք խոշոր գործարար Իցհակ Ալաթոնը, իսկ հայկական կողմից՝ ամերիկահայ գործարար, Ամերիկայի Հայկական Համագումար (ԱՀՀ) կազմակերպութեան հիմնադիր եւ երկար տարիների նախագահ Հրայր Յովնանեանը: Նախաձեռնութիւնը համընկաւ ՀՀ անկախութեան հիմնադրման հետ: Յովնանեանի մասին ՀՀում գիտէին, իսկ Ալաթոնի անունը հայ հանրութեանը յայտնի դարձաւ 1991ի Նոյեմբերին: Ալաթոնը ներկայ էր ՀՀ նորընտիր նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի երդմնակալութեան արարողութեանը: Ալաթոնը ՀՀ այցի ընթացքում հանդիպեց վարչապետի պաշտօնատար Հրանտ Բագրատեանի հետ:

Ալաթոնը իր տեղակալի եւ երկու թուրք լրագրողների հետ Անկարայից մեկնել էր Տրապիզոն, ապա Իգդիր եւ թուրք-հայկական սահմանը Ալիջան-Մարգարա անցակէտում հատելով հասել Երեւան: Հայ-թուրքական այս ձեռնարկի նպատակն էր ՀՀն Թուրքիայի տարածքով՝ Տրապիզոնի նաւահանգստով, կապել արտաքին աշխարհի հետ: Այս նախագծի ֆինանսաւորումը եւ իրականացումը ստանձնելու էին Յովնանեանի "Հովսընգ Քամփընի" եւ Ալաթոնի "Ալարկօ Հոլդինգ" ընկերութիւնները:

Ալաթոնը եւ Յովնանեանը Մոսկուայում ստորագրեցին "Հովսըն-Ալարկօ" համատեղ ընկերութեան հիմնադրման համաձայնագիր 1991ի աշնանը:

Սկզբնական շրջանում ՀՀի եւ Թուրքիայի պաշտօնական շրջանակները շահագրգռութիւն էին ցուցաբերում ծրագրի հանդէպ: Թուրքիայի արտգործնախարար Սաֆա Գիրէյը ողջունեց նախաձեռնութիւնը:

Ծրագիրը, կեանքի չկոչուեց միքանի պատճառներով, որոնց թւում առաջնայինը Արցախեան Հակամարտութեան ուժգնացումն էր: Թուրքիան աջակցում էր Ադրբեջանին: Երբ հայկական ուժերը 1992ի Փետրուարին մտան Խոջալու, ապա Մայիսին ազատագրեցին Շուշին ու Լաչինով բացեցին մարդասիրական միջանցք, Ալաթոնը յայտնուեց թուրքական լրատուամիջոցների եւ քաղաքական ուժերի քննադատութիւնների տարափի տակ: Նա մեղադրւում էր ՀՀին օգնելու նպատակով ԱՄՆի հայկական լոբիի՝ Յովնանեանի եւ ԱՀՀի հետ գործակցելու մէջ: Հայկական, յատկապէս սփիւռքեան ազգայնական շրջանակների, կողմից քննադատութեան էր ենթարկւում նաեւ Յովնանեանը:

Հայ-թուրքական ոչ-պաշտօնական նոր նախաձեռնութիւնը սկսուեց 1997ի ամռանը. հիմնադրուեց Թուրք-Հայկական Բիզնէսի Զարգացման Խորհուրդը՝ համանախագահութեամբ թուրք եւ հայ գործարարներ Քաան Սոյաքի ու Արսէն Ղազարեանի: Օգոստոսի 4ին ՀՀի եւ Թուրքիայի գործարարները, հայկական կողմից՝ Ղազարեանը, թուրքական կողմից՝ Սոյաքը, Երեւանում ստորագրեցին արձանագրութիւն, որը սկիզբ էր դնելու երկու երկրների գործարարների առաւել արդիւնաւէտ եւ հեռանկարային գործակցութեան փուլին: Արձանագրութիւնների ստորագրմանը նախորդեցին եւ յաջորդեցին հայ-թուրքական գործարար եւ պաշտօնական շփումներ: 1997 Ապրիլի վերջերին հերթական այցով Թուրքիայում էր նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի եղբայրը: Թելման Տէր-Պետրոսեանը կարճ առանձնազրոյց ունեցաւ Թուրքիայի նախագահ Սուլէյման Դեմիրէլի, ապա հանդիպեց արտաքին տնտեսական կապերի գծով պետնախարար Աբդուլլահ Գիւլի (ով յետագայում դարձաւ Թուրքիայի նախագահ) եւ Ներքին Գործերի նախարարի հետ: Օգոստոսի 2-5ը ՀՀի Արդիւնաբերողների ու Գործարարների Միութեան (ՀԱԳՄ) հրաւէրով ՀՀ ժամանեց թուրք գործարարների

պատուիրակութիւնը: Նրանք այցելեցին Շիրակի եւ Արմաւիրի մարզեր: Թուրք գործարարներին ընդունեց ՀՀի փոխարտգործնախարար Վարդան Օսկանեանը: Կարեւորելով երկու պետութիւնների գործարարների միջեւ կապերի յետագայ զարգացումը՝ Օսկանեանն ընդգծեց որ դրանք կարող են խթանիչ դեր խաղալ թուրքական իշխանութիւնների կողմից ՀՀի հետ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման եւ թուրք-հայկական ցամաքային սահմանի բացման հարցում:

1997ի Նոյեմբերին ՀԱԳՄի պատուիրակութեանը ընդունեցին Թուրքիայի առեւտրի նախարար Եալըմ Էրէզը եւ պետնախարար Էյուբ Աշըքը: Դեկտեմբերի 2ին ՀԱԳՄի նախագահ Արամ Վարդանեանը նախագահ Տէր-Պետրոսեանին ներկայացրեց Թուրքիա կատարած այցի արդիւնքները:

2001ի Յուլիսին Մ. Նահանգների նախաձեռնութեամբ եւ դրամաշնորհով ստեղծուեց Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողովը (ԹՀՀՅ, TARC), որի գործունէութիւնը համակարգում էր ԱՄՆ պետքարտուղարութեան աւագ խորհրդատու եւ արտաքին գործերի փորձագէտ Դէյւիդ Ֆիլիփսը: Յանձնաժողովի 4 հայ անդամներն էին ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանը, մոսկուաբնակ քաղաքագէտ Անդրանիկ Միհրանեանը, նիւեորքաբնակ իրաւաբան, ԱՀՀի անդամ Վան Գրիգորեանը եւ Սիրիայում ՀՀ նախկին դեսպան Դաւիթ Յովհաննիսեանը: Յանձնաժողովի 6 թուրք անդամներն էին նախկին արտգործնախարար Իլթէր Թուրքմէնը, նախկին փոխարտգործնախարար Օզդէմ Սանբերքը, դեսպան Գիւնդուզ Աքթանը, Ստամբուլի Քաղաքական Հետազօտութիւնների Մասնաւոր Կենտրոնի ղեկավար Ուսթուն Էրդուգէրը, Թուրքիայի օդային ուժերի նախկին զօրավար Շադի Էրգուվենչը եւ Վըրջինիայի Համալսարանի Հոգեբուժութեան դասախօս Վամիկ Վոլքանը:

Թէեւ ԹՀՀՅի ստեղծման մասին ՀՀ բարձրագոյն ղեկավարութիւնը տեղեակ էր պահուել, ԹՀՀՅի գործունէութիւնը սկսելուն պէս Երեւանը պաշտօնապէս յայտարարեց, որ բացարձակապէս առնչութիւն չունի Յանձնաժողովի ստեղծման եւ գործունէութեան հետ: Գործունէութեան երեք տարիների ընթացքում ԹՀՀՅն անընդհատ քննադատութիւնների թիրախ էր: Ազգայնական շրջանակներից բացի, Յանձնաժողովին

քննադատում էին նաեւ նրանք, ովքեր հայ-թուրքական երկխօսութեան կողմնակիցներ էին: Պատճառն այն էր, որ Յանձնաժողովը թափանցիկ եւ հրապարակային չէր գործում:

ԹՀՀՅն իր գործունէութիւնը դադարեցրեց 2004 Ապրիլին՝ Թուրքիայի եւ ՀՀ իշխանութիւններին ներկայացնելով մի շարք խորհրդատուական յանձնարարականներ: ԹՀՀՅն 2001 Նոյեմբերին, իր ստեղծումից միքանի ամիս անց դիմել էր Նիւ Եորքի Անցումային Արդարադատութեան Միջազգային Կենտրոնին (ԱԱՄԿ), որպէսզի վերջինս անցկացնի անկախ ուսումնասիրութիւն եւ պարզի՝ ՄԱԿի 1948ի Ցեղասպանութեան Հոչակագիրը կիրառելի է՞ Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ: Սա նշանակում է, որ Յանձնաժողովի ներսում եղել են լուրջ վիճաբանութիւններ Հայոց Ցեղասպանութեան իրողութեան շուրջ, այն է՝ հայ անդամները դա համարել են պատմական փաստ, թուրքերը մերժել են: ԱԱՄԿն իր ուսումնասիրութեան մէջ եզրակացրեց, որ Օսմանեան Կայսրութիւնում հայերի զանգուածային ջարդն ու տեղահանումը համապատասխանում են Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին ՄԱԿի հոչակագրի սահմանած չորս հիմնական չափանիշներին: Միւս կողմից, Կենտրոնը եզրակացրեց, որ հոչակագիրը չունի յետադարձ կիրառութիւն, եւ հայերը չեն կարող «*որեւէ իրաւական, ֆինանսական կամ տարածքային պահանջ*» առաջ քաշել[1]: Ուշագրաւ է, որ ԹՀՀՅի ամէնախիստ քննադատներն անգամ այսօր մէջբերում են ԱԱՄԿի եզրակացութեան այն հատուածը, որը վերաբերում է Հայոց Ցեղասպանութեան եղելութեանը: Արզումանեանը ԹՀՀՅի գործունէութեան մէջ կարեւորում է յատկապէս երկու ձեռքբերում. Ա) ԱԱՄԿն կատարեց անաչառ իրաւական վերլուծութիւն, ինչը նախկինում չէր արուել, Բ) Հեղինակաւոր *Նիւ Եորք Թայմզ* օրաթերթը՝ տարիներով մերժելով 'ցեղասպանութիւն' բառի օգտագործումը, հիմնուելով ԱԱՄԿի վերլուծութեան վրայ, իր թղթակիցներին թոյլատրեց օգտագործել այդ եզրը:

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՈՉ-ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐ

1990ականների վերջերից սկսուեցին հայ-թուրքական ոչ-պաշտօնական շփումները հասարակական կազմակերպութիւնների, լրագրական կազմակերպութիւնների եւ

քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների միջեւ: Այդ շփումներում հայկական կողմից աշխուժ էին Երեւանի Մամուլի Ակումբը (նախագահ՝ Բորիս Նաւասարդեան), Եուրեժիա Համագործակցութեան Հիմնադրամը (տնօրէն՝ Գէորգ Տէր-Գաբրիէլեան), Կովկասի Ինստիտուտը (տնօրէն՝ Ալեքսանդր Իսկանդարեան), Գիւմրիի "Ասպարէզ" Լրագրողների Ակումբը (ղեկավար՝ Լեւոն Բարսեղեան), Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոնը (տնօրէն՝ Թեւան Պօղոսեան), Հայկական Միջազգային Քաղաքական Հետազօտութիւնների խումբը, Գլոբալիզացիայի եւ Տարածաշրջանային Համագործակցութեան Վերլուծական Կենտրոնը եւ բազմաթիւ այլ կազմակերպութիւններ:

2003ին Անկարան երկխօսութիւն նախաձեռնեց նաեւ ԱՄՆի հայկական կազմակերպութիւնների հետ: Այդ նպատակով ԱՄՆ գործուղուեց Արտգործնախարարութեան դիւանագէտներից Էջուէթ Թեզջանը, ով եղել է Բաքւում Թուրքիայի դեսպանը եւ այն թուրք գործիչներից է, ով հետեւողականօրէն մերժել է Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը: Ուաշինգտընի ՀՅԴ Հայ Դատի գրասենեակը մերժել եւ նախապէս ամերիկահայ միւս կազմակերպութիւններին յորդորել էր հրաժարուել Թեզջանի հետ հանդիպումից: Դաշնակցութեան պատասխանատուներից Քէն Խաչիկեանը մերժումն ու յորդորը բացատրել էր նրանով, որ Թուրքիան փորձում է պատրանք ստեղծել, թէ հայերն ու թուրքերը երկխօսութեան մէջ են, հետեւաբար՝ փորձում են ականահարել ԱՄՆ խորհրդարանական պալատներում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ նկատուող առաջընթացը:

Ամերիկահայ երկու կազմակերպութիւններ՝ ԱՀՀն ու Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ամերիկայի ու Կանադայի վարչութիւնը ընդունեցին թուրքերի հրաւէրը: Դեսպան Թեզջանի եւ ռամկավար գործիչներ Երուանդ Ազատեանի, Յակոբ Վարդիւառեանի ու Բաբկէն Մկրեանի հանդիպումը կայացաւ Յունիսի 11ին ՄԱԿի Թուրքիայի ներկայացուցչութիւնում: Նոյն օրը թուրք դիւանագէտը հանդիպեց նաեւ ԱՀՀի հետ:

Երբ 2010ին տեղի էր ունենալու Աղթամարի Սուրբ Խաչ Եկեղեցում առաջին պատարագը՝ Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրդողանի գրասենեակը հրաւէրներ ուղարկեց Սփիւռքի

բազմաթիւ լրատուամիջոցների՝ խոստանալով փակել բոլոր ծախսերը: Ոչ մի լրատուամիջոց չընդունեց հրաւէրը:

Մինչ այդ, 2010 Մարտին թուրքական կառավարութեան հրաւէրով ամերիկահայ երկու թերթերի՝ *The Armenian Reporter*ի եւ *The Armenian Weekly*ի խմբագիրներ Էմիլ Սանամեանը եւ Խաչիկ Մուրադեանը (այսօր Մուրադեանը ՀՅԴ Բիւրոյի անդամ է), այցելել էին Թուրքիա՝ Ստամբուլ, Անկարա, Կարս, Անի, հանդիպել թուրք նշանաւոր պետական-քաղաքական գործիչների հետ, այդ թւում՝ նաեւ այն ժամանակ նախագահ Գիւլի եւ արտգործնախարար Ահմէդ Դաւութօղլուի հետ: Մէկ ամիս անց, Ապրիլին, Մուրադեանը նոր այց տուեց Թուրքիա:

Յարաբերութիւններ հաստատելու փորձեր էին արուել համալսարանների միջեւ: Անկարայի Համալսարանի ռեկտոր Գիւնայ Աքբանի հրաւէրով Երեւանի Պետական Համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսեանը մեկնեց Անկարա: Նրանք միասին ծառ տնկեցին, համագործակցութեան արձանագրութիւն ստորագրեցին, սակայն դրանով շփումները աւարտուեցին: 2008ին համագործակցութեան մասին յուշագիր ստորագրեցին ՀՀ Առաջին՝ Հ1, եւ թուրքական պետական TRT հեռուստաընկերութիւնները: Անկարա եւ Ստամբուլ մեկնեց Հանրային Հեռուստառադիօընկերութեան Խորհրդի նախագահ Ալիկ Յարութիւնեանը:

Աշխուժ էին կանայք՝ ՀՀում իշխող Հանրապետական Կուսակցութեան խորհրդի անդամ, Ազգ փոխնախագահ Հերմինէ Նաղդալեանը, Թուրքիայի խորհրդարանի պատգամաւոր, Ձախ Դեմոկրատական Կուսակցութեան անդամ Գէօնուլ Սարայը:

Հանդիպումներ եւ քննարկումներ էին ունենում նաեւ ակադեմականները: Դրանցից ամէնաերկարատեւը արհեստավարժը Չիկագոյի Համալսարանում սկսուած, Միչիգանում շարունակուած, Սալցբուրգում կայացած հայ եւ թուրք գիտնականների նախաձեռնութիւնն էր՝ Ռոնըլդ Գրեգոր Սիւնիի, Ժիրայր Լիպարիտեանի եւ Միւգէ Գէօչէկի մասնակցութեամբ:

Հայ-թուրքական հասարակական շփումների ամէնաաշխուժ շրջանը սկսուեց 2008ին, երբ ՀՀի եւ Թուրքիայի նախագահները նախաձեռնեցին հայ-թուրքական 'ֆութպոլային դիւանագիտութիւն'ը: Չնայած 2010ից բարձր մակարդակով

պետական շփումները դադարեցին, իսկ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը մտաւ փակուղի, հասարակական կազմակերպութիւնների շփումները եւ երկխօսութիւնը շարունակուեց:

Այս ընթացքում յատկապէս աշխուժ էին Սիւիլիթաս Հիմնադրամը (տնօրէն՝ Սալբի Ղազարեան), Եուրեժիա Համագործակցութեան Հիմնադրամը, Տարածաշրջանային Հետազօտութիւնների Կենտրոնը (տնօրէն՝ Ռիչըրդ Կիրակոսեան), Մեդիա Նախաձեռնութիւնների Կենտրոնը (ղեկավար՝ Նունէ Սարգսեան), Երեւանի Մամուլի Ակումբը, «Հանրային Լրագրութեան Ակումբ» հասարակական կազմակերպութիւնը (նախագահ Սեդա Մուրադեան) եւ բազմաթիւ այլ նուազ յայտնի կազմակերպութիւններ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Պաշտօնական Երեւանի դիրքորոշումը հայ-թուրքական հասարակական շփումների հարցում, առնուազն հրապարակային յայտարարութիւնների մակարդակում, միշտ եղել է դրական եւ կառուցողական: Առաջին նախագահի օրօք նման շփումներ շատ չեն եղել: Բայց հաշուի առնելով այն իրականութիւնը, որ Տէր-Պետրոսեանը չափազանց կարեւորում էր Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորումը, հասարակական շփումների հարցում ՀՀՇական իշխանութիւնները դրական էին տրամադրուած:

Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի ղեկավարութեան հենց սկզբում Հայոց Ցեղասպանութեան հարցը բերուեց արտաքին քաղաքականութեան օրակարգ, ինչը աւելի բարդացրեց հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հեռանկարը, թէեւ պաշտօնական Երեւանը շեշտում էր, որ ցեղասպանութեան հարցը նախապայման չէ: Հենց Քոչարեանի նախագահութեան տարիներին համընկաւ հայ-թուրքական հասարակական շփումների աշխուժութիւնը: Եթէ անգամ Երեւանը որեւէ խոչընդոտ չէր ստեղծում այդ շփումների համար, ապա նաեւ չէր աջակցում: Պաշտօնական լրատուամիջոցները, որոնք միշտ էլ գտնուել են իշխանութիւնների վերահսկողութեան տակ, աւելի շատ քննադատում էին հայ-թուրքական հասարակական շփումները:

Սերժ Սարգսեանի նախագահութեան ընթացքում պաշտօնական Երեւանի դիրքորոշումը հայ-թուրքական հասարակական շփումների հարցում կարելի է բաժանել երկու մասի՝ 2008-2010 եւ 2010ից յետոյ: Եթէ առաջին շրջանում, որը համընկաւ ՀՀ-Թուրքիա 'ֆութպոլային դիւանագիտութեան' ընթացքի հետ Երեւանի իշխանութիւնները ողջունում էին կամ չէզոք էին հասարակական շփումների հարցում, ապա երկրորդ շրջանում առկայ է անձայն դիմադրութիւն: Սակայն ասել, որ հայ պաշտօնատարները խոչընդոտում են՝ ճիշտ չէ: Երեւանում կայ մտահոգութիւն, որ Անկարան հայ-թուրքական հասարակական շփումները մատնանշելով՝ փորձում է միջազգայնօրէն տպաւորութիւն ստեղծել, թե առկայ է երկխօսութիւն:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆԿԱՐԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հայ-թուրք ոչ-պաշտօնական շփումների նկատմամբ պաշտօնական Անկարայի դիրքորոշումը շատ աւելի դրական է, երբեմն՝ քաջալերական: Թուրքական պետութեան այս դիրքորոշման պատճառը ոչ թէ հասարակական շփումները կամ այսպէս կոչուած track two դիւանագիտութիւնը իշաի Անկարա-Երեւան յարաբերութիւնների բնականոնացմանը ծառայեցնելն է, այլ՝ այդ շփումները բարձրաձայնելով միջազգայնօրէն պատրանք ձեւաւորելու փորձերը, թէ՝ իբր հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորելու նպատակով տարւում են աշխատանքներ տարբեր մակարդակներում, հետեւաբար՝ աշխարհի տարբեր երկրների խորհրդարանները միայն կը վնասեն գործընթացին, եթէ օրակարգ բերուեն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւի քննարկումները:

Թուրքական կողմին պէտք են միայն քննարկումներ, անվերջ երկխօսութիւն, սակայն ոչ վերջնարդիւնք: Թուրքիան խոչընդոտներ է ստեղծում թուրք-հայկական հասարակական շփումների համար, երբ առաջընթացը դառնում է ակնյայտ: Այսինքն, Անկարան կողմ է բոլոր տեսակի քննարկումների եւ քայլերին, բայց հենց որ գործը հասնում է սահման բացելուն կամ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելուն՝ արդէն դէմ է լինում:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը **Միացեալ Նահանգների** համար կարեւոր է եղել միքանի հիմնական պատճառներով: Ամերիկացիների համար Կովկասում հաստատուելու միքանի խոչընդոտներ կան՝ ՀՀ-Ռուսաստան յարաբերութիւններ, ՀՀ-Թուրքիա փակ սահմաններ եւ Արցախեան չկարգաւորուած հակամարտութիւն: Ամերիկացիները հասկացել են, որ քանի դեռ չկան Թուրքիա-ՀՀ բնականոն յարաբերութիւններ, սահմանը փակ է, ուրեմն՝ նրանց առաջ փակ է նաեւ Կովկասում հաստատուելու ճանապարհը:

Այս սկզբունքներով դեռեւս երկար ժամանակ Թուրքիայում շատ դժուար կը լինի հասկանալ, թէ վերջապէս թուրքական ինքնութեան կրողն ո՞վ է: Այդ երկրում մատների վրայ կարելի է հաշուել մաքուր օղուզական ծագում ունեցող մարդկանց. իւրաքանչիւրի ծնողների, տատեր-պապերի մէջ անպայման յոյներ կան, հրեաներ, սերբեր, առնաուտներ, լազեր, «չերքէզներ» հաւաքական անուամբ յայտնի հիւսիս-կովկասեան ժողովուրդների ներկայացուցիչներ, թուրքմէն ալեւիներ, զազա ալեւիներ, քրդեր, ալեւի եւ սուննի մահմեդական արաբներ… Կարելի է վստահ լինել, որ այդպիսի մի կամ միքանի ներկայութիւն կայ նաեւ իր՝ Հալաչօղլուի ծագումնաբանութեան մէջ: Պատահական չէ, որ թուրքական ծագումը կարեւորող անձինք իրենց էթնիկական անցեալի մասին տեղեկութիւնները սահմանափակում են, լաւագոյն դէպքում՝ պապ-տատերի ժամանակով՝ «ես յստակ գիտեմ, որ պապս (տատս) թուրք է եղել»: Այդպէս է վարւում նաեւ Թուրքիայի ներկայիս նախագահ Ռեջէբ Թայիպ Էրդողանը: Թուրքիայի պետական համալսարաններից մէկի դասախօս մի պատմաբան այս տարի մասնաւոր զրոյցի ժամանակ պնդում էր իր թուրքական ծագումը, դա հիմնաւորելով նրանով, որ *«դեռեւս իր պապի ծնողներն են Ախալցխայից տեղափոխուել Տրապեզուն, իսկ այն ժամանակ Ախալցխայում նրանց թուրք էին համարում»*: Սա այն դէպքերից է, երբ կարելի է վստահ լինել մարդու ինքնութեան ինքնագիտակցութեան վերաբերեալ՝ երբ առնուազն չորս սերունդ միմեանց ժառանգել են նոյնական ինքնութեան իրենց գիտակցութիւնը:

Շուրջ մէկուկէս հարիւրամեակ երկիրը էթնիկապէս միատարր դարձնելու ահռելի ջանքեր գործադրող թուրքական իշխանութիւնները ցայսօր էթնիկական ինքնութեան չափման յստակ սկզբունքներ չունեն, բայց երկրի ներքին քաղաքական խնդիրների բացատրութիւններում հրատապ են դարձնում այս կամ այն անձի/խմբի էթնիկական ծագումը եւ քաղաքական օրակարգից կախուած՝ յայտարարութիւններ են արւում նրա/նրանց վարքի էթնիկական շարժառիթների եւ «աչքաչափով» երկրի ընդհանուր բնակչութեան մէջ նրանց քանակի, նոյնիսկ տարաբնակութեան մասին: Սրանք տարբեր նպատակներով եւ տարբեր սկզբունքներով արուող ամփոփումներ են, որոնք, սակայն, ներկայիս գործուն ԶԼՄերի պարագայում արագ տարածւում են եւ դառնում հասարակութեան միտքը սնուցող տեղեկութիւններ: Իրականում դժուար է պատկերացնել, թէ «աչքաչափից» զատ չափման ուրիշ ի՛նչ հնարաւորութիւն կայ: Թուրքիան մարդահամար չի անցկացնում եւ՝ հաշուի առնելով այդ երկրի բնակչութեան ինքնութիւնների փնտռտուքի եւ բարձրաձայնման ներկայիս աշխուժութիւնը, հաւանաբար երկար ժամանակ չի անցկացնի: Թուրքիայի համար ներկայիս խնդիրը նախ եւ առաջ քրդական ինքնութեան ծաւալի բացայայտման տագնապն է: Միւս կողմից, քանի դեռ Թուրքիայի բոլոր քաղաքացիները պաշտօնապէս «թուրք» են էթնիկական ինքնութեան հարցը մարդահամարում չի էլ դրուի:

Միշտ չէ, որ հասկանալի է, թէ իսլամաց(ու)ած հայերի տարբերակիչ միւս բաղադրիչը լեզուն կամ էթնիկութեան ցուցիչը ո՞րն է՝ քուրդ/քրդերէ՞ն, արաբ/արաբերէ՞ն, թէ՞ թուրք/թուրքերէն: Վերջ ի վերջոյ նոյնիսկ քրիստոնեայ մնացած եւ այդ պատճառով «հայ» համարուողների առօրեայ լեզուն ամէնից աւելի յաճախ քրդերէնն է, թուրքերէնը, երբեմն արաբերէնը: Իսլամաց(ու)ած բոլոր հայերի նկատմամբ, սակայն. ամէնից աւելի յաճախ օգտագործւում է «թրքացած» բառը, ինչի համար առարկայական հիմք կայ, քանի որ Թուրքիայում բոլոր մահմեդականները, յատկապէս բոլոր սուննի մահմեդականները պաշտօնապէս թուրք

են: Սոյն «առարկայական» հաւաքականութիւնից դուրս են մնում ալեւիանալու միջոցով իրենց կարծիքով մահմեդականացած հայերը, քանի որ առնուազն ալեւիների մի ողջ խումբ Թուրքիայում ալեւիզմը մահմեդականութիւն չի համարում, եւ չնայած բոլոր պաշտօնական «ներշնչանքներին», առնուազն Դերսիմի զազախօս ալեւիներն իրենց կրօնական, հետեւաբար նաեւ էթնիկական ինքնութիւնը շարունակում են հակադրել մահմեդականութեանն ու թրքութեանը:

Հազիւ թէ որեւէ մէկը կարողանայ գնահատել «քրդացած», «արաբացած» եւ/կամ «ալեւիացած» հայերի թուերը կամ, նոյնիսկ, ընդհանուր գնահատական տալ՝ քրդացածնե՞րն են աւելի, թէ՞ թրքացածները: Թերեւս նաեւ այս պատճառով «իսլամաց(ու)ած հայեր» բնութագիրն աւելի ընդունելի է, չնայած այս ընդհանրական բնութագիրը «թաքցնում է» մասնաւոր խմբերի մասնաւոր խնդիրները: Օրինակ, «քրդալեզու իսլամացած հայերը» մի կողմից ստորադասուած են քրդական միջավայրերում (նրանք շարունակում են «ֆըլա/ֆլա»[5] մնալ կամ, լաւագոյն դէպքում՝ «բաֆըլա» են (հայրը կամ պապը՝ հայ), իսլամացումը չի փոխել նրանց փաստական իրաւունքները եւ իսլամացած պապերի «բաֆըլա» ժառանգները նոյնքան իրաւազուրկ են, երբեմն էլ՝ աւելի իրաւազուրկ են, քանի որ կրօնափոխութիւնը թուրքական իրականութիւնում միշտ հեղինակազրկում է մարդուն եւ նուազեցնում նրա հնարաւոր ընկերային յաւակնութիւնները[6]: Միւս կողմից նրանք քրդեր են համարւում եւ ակամայ դառնում են քրդական բոլոր «մեղքերի» պատասխանատու: Եթէ ալեւիացած եւ սուննի-քրդացած հայերի մի մասը խօսում է իրենց խնդիրների մասին, ապա թրքացած/թրքալեզուածները իսպառ փակ են եւ դեռ նոյնիսկ յայտնի չէ, թէ ի՛նչ խմորումներ կան նրանց ներսում կամ՝ կա՞ն առհասարակ:

Յայտնի է, որ հայկական շրջանակներից առաջինը Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանն էր, ով 1980ին Երուսաղէմում բանախօսութեան ժամանակ խօսեց Թուրքիայի գաւառահայութեան մասին. «*Ձեզ կը ներկայացնեմ գաւառահայութեան չորս խաւերը, ինչպէս որ տեսել եմ նրանց.*

ա. Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզուել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ [մէկ] միլիոնի հասնում են իրենց թուով:

բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրիստոնեական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնուում [ուրիշներին]:

գ. Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատուելուն պէս դառնալու միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրութիւնը «Լուսինի»ով են փոխարինում:

դ. Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժուարութիւններին՝ հայ են մնացել, եւ այսօր Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում»[7].

Շնորհք Պատրիարքի սոյն դասակարգման եւ այլ տեղեկութիւնների հիմամբ պատմաբան Կարէն Խանպաբեանը Թուրքիայի ներկայիս հայութիւնը բաժանում է երեք հիմնական կրօնական խմբերի..

ա) Պաշտօնական հայութիւն (քրիստոնեաներ),

բ) Իսլամացած հայութիւն,

գ) Թաքուն հայութիւն (կեղծ իսլամացածներ)[8]

Հայութեան ներկայիս թուաքանակի վերաբերեալ **դատողութիւնների** աղբիւրները գլխաւորապէս այն **տեղեկութիւնների** փշրանքներն են, որոնք ամենատարբեր **առիթներով** յայտնուել են տպագիր մամուլում որպէս պատճառ Ցեղասպանութիւնից յետոյ Թուրքիայի Հանրապետութեան **զանազան** տարածքներում մնացած հայերի գոյատեւման անհնարին դիպուածային բնոյթ եւ յաճախ հակասում են միմեանց **Եւթեան.** Ցեղասպանութիւնից յետոյ Թուրքիայի Հանրապետութեան տարածքում մնացած հայերի թուաքանակի ենթադրելի շրջանակներում է որքան [illegible] Հայութեան մնացորդացի մասին [illegible] Հաղթելու թերթի աշխատակից [illegible] ը. «Մի բան ստոյգ է տեղահանութենից յետոյ հայ բնակչութեան մօտաւորապէս մի հազար է. Յայտնի չէ, թէ մահմեդականացած ընտանիքների որդեգրած հայ երեխաները, թէ ինչ է ըստ ազգի եղել շատ բարդ [illegible] թիւը

[illegible]

մեզ յանգեցնում է 330 հազար մօտաւոր թուին: Եթէ նկատի առնենք, որ նշուած աղբիւրներից գրեթէ բոլորն էլ մատնանշում են «իսլամացած»ների բարձր թուի առկայութիւնը եւ որ դա չեն արտացոլում իրենց ներկայացրած թուերում, կարելի է ամենայն չափաւորութեամբ եզրակացնել, որ մօտ 330.000 թիւը համարւում է Անատոլիայի վերապրած հայութեան կլոր թիւը (մեր տիպաբանութեան առումով է՛ւ «թաքուն», է՛ւ «պաշտօնական» հայութեան սկզբնական հանրագումարը)»[10]: Խանլարեանի օգտագործած աղբիւրները, սակայն, տեղեկութիւններ են հաղորդում գլխաւորապէս Կիլիկիայի տարածքում եւ երկրի Արեւմուտքում վերապրածների մասին՝ չափազանց քիչ անդրադարձներ ունենալով բուն արեւմտահայութեանը, յատկապէս՝ Վանին եւ Մուշ-Սասունին: Մինչդեռ այստեղ, ինչպէս ստորեւ կը տեսնենք, ուշագրաւ իրողութիւններ կային, որոնք, ցաւօք, հասու չեն եղել տեղեկագիրներին: Բոլոր դէպքերում, սոյն յօդուածում թուաքանակի խնդիրը սկզբունքային չդարձնելով, կարեւոր է ուշադրութիւն հրաւիրել այն հանգամանքին, որ եթէ Կիլիկիայում ու երկրի արեւմուտքում իսլամացած հայերը գլխաւորապէս թրքալեզուացուել-թրքացել են, ապա արեւելքում՝ Արեւմտեան Հայաստանի տարածքում հիմնականում քրդալեզուացուել/քրդացել, մասամբ՝ արաբալեզուացուել/արաբացել են: «Իսլամաց(ու)ած հայեր»ի շուրջ Թուրքիայում ընթացող քննարկում-բանավէճերը, պայմանաւորուած լինելով ընթացիկ քաղաքական օրակարգով, գլխաւորապէս հենց նրանց շուրջն են եւ, ցաւօք, մեծ հաշուով քննարկումներից դուրս է մնում թրքացած հայութիւնը: Արդիւնքում «իսլամաց(ու)ած հայեր»ի մասին հնչող թուերը վերաբերում են ողջ երկրի տարածքին, իսկ որակական հարցերը՝ գլխաւորապէս «թաքուն» կամ «քրդացած-ալեւիացած» հայերին, բայց վերագրւում բոլոր «իսլամաց(ու)ած հայեր»ին:

ԼՈԶԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐՈՇ ԴՐՈՅԹՆԵՐ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Լոզանի Խորհրդաժողովին եւ դրանից մինչեւ 1980 Շնորհք Արք. Գալուստեանի վերոյիշեալ յայտարարութիւնը «հայկական հարց»ում Թուրքիայում շատ բան էր «թուրքական կամքով» ձեւաւորուել: Լոզանի Խորհրդաժողովին ամէն ինչ արուել էր

թուրքահայ փախստականների վերադարձը հայրենիք անկարելի դարձնելու համար: Յայտնի է, որ 1923ին Անտանտի Երկրները քեմալական Թուրքիայի հետ Լոզանի Խորհրդաժողովում պիտի քննարկէին հայ փախստականութեանը իր հայրենիքում հաւաքուելու նպատակով «Հայկական Օջախ» ստեղծելու հարցը: Թուրքերն, անշուշտ, յամառօրէն դիմադրել են, եւ նրանց այս հարցում օգնել են այն ժամանակ իրենց դաշնակից բոլշեւիկները, ովքեր յամառօրէն պնդում էին այդ քննարկմանն իրենց մասնակցութեան անհրաժեշտութիւնը: Խորհրդային Ռուսաստանի Արտաքին Գործերի ժողկոմ Գէորգի Չիչերինը դժգոհում էր, որ «*Լոզանի Խորհրդաժողովին Ռուսաստանը, Ուկրայնան եւ Վրաստանը արտամղուած են հայկական հարցի քննարկումից, մինչդեռ միայն նրանց մասնակցութեամբ կարող է տեղի ունենալ այդ հարցի բարեյաջող լուծումը: Ես պատիւ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ Ռուսաստանն ու Ուկրայնան մտադիր են իրենց տարածքներում նկատելի քանակութեամբ հայ փախստականներ բնակեցնել...*»[11]: Այդ մասնակցութիւնը, սակայն, բացառապէս հայերի դէմ էր: Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերում հայ փախստականների՝ հայրենիք վերադառնալու հարցն առկախ թողնելուց յետոյ, նրանց յաջողւում է այն տապալել նաեւ Լոզանի Պայմանագրի ընդունելիք պարտաւորութիւններից:

Դեռ մինչեւ Լոզանի Խորհրդաժողովը, 1921ի Մարտի Մոսկուայի, եւ Հոկտեմբերի՝ Կարսի պայմանագրերով արդէն իսկ ամրագրուել էր, որ Թուրքիայում մնացած հայերը կարող են տեղափոխուել Կովկաս (այսինքն՝ շարունակել հեռանալ իրենց հայրենիքից), իսկ առնուազն Ռուսաստանի եւ Այսրկովկասի տարածքից նրանք չեն կարող վերադառնալ իրենց հայրենիք: Մասնաւորապէս Մոսկուայի Պայմանագրի 12րդ յօդուածով Թուրքիայի մասը հանդիսացող այն տարածքներից, որոնք մինչեւ 1918 հանդիսանում էին Ռուսաստանի տարածք, ցանկացած բնակիչ կարող էր ազատօրէն լքել Թուրքիան եւ տեղափոխել իր ունեցուածքը կամ դրա արժէքը (հասկանալի է, որ խօսքը քրիստոնեայ բնակչութեան, գլխաւորապէս՝ հայերի մնացորդների մասին էր): Թուրքիա տեղափոխուելու նոյն իրաւունքը տարածւում էր միայն Բաթումի բնակչութեան վրայ, որի նկատմամբ իրաւունքները Թուրքիան այդուհետեւ յանձնում էր

Վրաստանին[12]: Կարսի Պայմանագրի քննարկումներում 1915-18ի հայ փախստականների հարցն առհասարակ չի քննարկւում, իսկ «1918-1920ի պատերազմի փախստականների մասին» համաձայնագրի ստորագրումը Կարսի Պայմանագրի 14րդ յօդուածով ձեւակերպւում է անորոշ «վեց ամսուայ ընթացքում» արտայայտութեամբ[13]:

Չիչերինը 1923 Յունուարի 10ին Լոզանից իր տեղակալ Մաքսիմ Լիտուինովին նամակով տեղեկացնում է, որ թուրքերը շատ յաղթական են ընթանում, որ թուրքերի բոլոր յաջողութիւնները պայմանաւորուած են ռուս-թուրքական դաշինքով եւ թուրքերն ընդունում են այդ փաստը[14], եւ որ «*Դաշնակիցները դադարել են հայերի համար ազգային օջախ պահանջել: Դաշնակիցները համաձայնել են, որ որպէս ազգային փոքրամասնութիւններ ճանաչուեն միայն ոչ-մահմեդականները...* (այսինքն՝ հայերի հարցը մասնաւոր չդրուի եւ առհասարակ «հայ» բառը չյիշատակուի - Հ.Խ.): *Դաշնակիցները 'փոքրամասնութիւնների հարցում' Թուրքիայի համար հրաժարուել են Ազգերի Լիգայի յատուկ վերահսկողութիւնից*»[15]: Այնուամենայնիւ պայմանագրի 44րդ յօդուածով սահմանւում է, որ փոքրամասնութիւնների համար նախատեսուած իրաւունքները չեն կարող փոփոխուել առանց Ազգերի Լիգայի հետ համաձայնեցնելու: Չնայած հայ փախստականների վերադարձի իրաւունքի մասին Լոզանի Պայմանագիրը մասնաւոր կէտ չունի, սակայն Պայմանագրի 31րդ յօդուածով Թուրքիան լքած այլ քաղաքացիների նման պայմանագիրն ուժի մէջ մտնելուց անմիջապէս յետոյ նրանցից իւրաքանչիւրն իրաւունք էր ստանում իր թուրքական քաղաքացիութիւնը վերականգնելու[16] եւ, իհարկէ, իր սեփականութիւնը տնօրինելու: Այլ խնդիր է, որ սա մնում էր անհատական իրաւունք եւ կախուած էր մասնաւոր անձանց հնարաւորութիւններից: Յայտնի չէ, թէ որքա՛ն հայ է օգտագործել իր այս իրաւունքը կամ՝ օգտագործուե՞լ է այն առհասարակ:

Հպանցիկ անդրադառնանք «ազգային փոքրամասնութիւնների»ց զատ Լոզանի Պայմանագրի որոշ այլ յօդուածների, որոնք վերաբերում էին նաեւ հայերին, առանց «հայ» բառը մասնաւորեցնելու:

Լոզանի Պայմանագրի «Տնտեսական Դրոյթներ» վերնագրով 3րդ բաժնի 65րդ յօդուածով Թուրքիան ընդունել էր, որ 1915ի

տեղահանութիւնն ու սպանութիւնները բնորոշուէին որպէս «անօրինական կերպով ձեռնարկուած ռազմական միջոց», եւ պարտաւորուել էր այդ բռնագաղթի պատճառով մարդկանց կրած վնասները փոխհատուցել, իր կողմից բռնագրաւուած լքեալ գոյքը վերադարձնել տէրերին, եթէ նրանք ողջ են, կամ՝ նրանց ժառանգներին[17]: Սա, անշուշտ, վերաբերում էր գլխաւորապէս հայերին: Այդ յօդուածի համաձայն՝ ողջ մնացած իւրաքանչիւր հայ կամ սպանուած հայի ժառանգ տեղահանութեան հետեւանքով բռնազաւթուած իր գոյքը ետ ստանալու իրաւունք ունէր: Շատ կարեւոր է, որ այս խնդրում որեւէ ժամկէտային սահմանափակում չի դրուել[18]: Պայմանագրի 30րդ յօդուածով Օսմանեան Կայսրութեան քաղաքացիները (տուեալ դէպքում՝ նաեւ հայերը) օսմանեան տարածքների վրայ հիմնուած նոր պետութիւններից որեւէ մէկի (Սիրիա, Իրաք, Լիբանան...) քաղաքացին դառնալու ընտրութեան իրաւունք ունէին[19] եւ յօդուած 33ով իրաւունք ունէին իրենց նախկին քաղաքացիութեան երկրում (տուեալ դէպքում՝ Թուրքիայում) իրենց ուզած ձեւով տնօրինել իրենց սեփականութիւնը հանդիսացող անշարժ գոյքը, ինչպէս նաեւ տեղափոխել կամ վաճառել իրենց շարժական գոյքը առանց որեւէ հարկի կամ մաքսատուրքի[20]: Պայմանագրի 34րդ եւ 35րդ յօդուածները երկու տարուայ ընթացքում իրացնելու պայմանով այդ իրաւունքը տալիս էին նաեւ պայմանագրի շուրջ պայմանաւորուող բոլոր երկրներում յայտնուած Թուրքիայի նախկին քաղաքացիներին[21], այդ թւում, բնականաբար՝ նաեւ հայերին:

Լոզանի Պայմանագրի վերոյիշեալ դրոյթները կարծէք թէ ընդունուել էին՝ ճիշտ դրանց հակառակ գործելու նպատակով: 1923ի Սեպտեմբերին Թուրքիայում ընդունուած օրէնքով արգելւում է Կիլիկիայից եւ «Արեւելեան Նահանգներից» արտագաղթած բոլոր հայերի վերադարձը Թուրքիա: 1927 Մայիսի 23ին ընդունուած մի ուրիշ օրէնք սահմանում էր, որ բոլոր այն քաղաքացիները, ովքեր չէին մասնակցել «անկախութեան պատերազմին» եւ 1923 Յուլիսի 24ից մինչեւ օրէնքի ընդունման պահը ներառեալ Թուրքիա չէին վերադարձել, կորցնում էին իրենց քաղաքացիութիւնը: 1925 Դեկտեմբերի 26ին թերթերը հրապարակեցին կառավարութեան յայտարարութիւնը, թէ՝ փոխւում էր Թուրքիայում մնացած եւ զգալիօրէն թալանուած

հայկական ունեցուածքը տնօրինելու կարգը: Յայտարարուեց, որ «լքեալ գոյքի» չհամակարգուած վաճառքը վնաս է հասցնում երկրին, ուստի որոշուել է յատուկ մարմիններ ստեղծել, որոնք պէտք է գնահատեն հայերի թողած շարժական եւ անշարժ ողջ գոյքն ու այլ ունեցուածքը՝ յետագայում աճուրդի միջոցով դրանց վաճառքն իրականացնելու համար: Այս որոշումն իրականացում էր ոչ միայն սպանուած, աքսորուած, փախած հայերի «լքեալ» գոյքի նկատմամբ, այլ նաեւ՝ այս կամ այն կերպ երկրում մնացած մահմեդականացած հայերի[22]: Շուտով, սակայն, 1926 Օգոստոսին թուրքական կառավարութիւնը յայտարարեց, որ իրենք կը պահեն մինչեւ 1924 Օգոստոսի 6ը բռնագրաւուած ողջ ունեցուածքը: Բայց այս որոշումը վերաբերում էր միայն երիտթուրքերի տեղահանուած հայերից բռնագրաւուած ունեցուածքին, որն ըստ պաշտօնական յայտարարութիւնների, գրանցուել եւ պաշտպանուել էր պետութեան կողմից տեղահանուածների համար: Սրանք այն մարդիկ կամ նրանց ժառանգներն էին, ովքեր իրենց ունեցուածքը կարող էին Լոզանի Պայմանագրի 65րդ յօդուածով նախատեսուող իրաւունքով ետ ստանալ, մինչդեռ 1915ի տեղահանութիւնների ու սպանութիւնների հետեւանքով մինչեւ 1924 Օգոստոսի 6ի դրութեամբ իրենց գոյքի մօտ չգտնուած մարդկանց ունեցուածքը փաստօրէն շարունակուել է բռնագրաւուել: Սրանից զատ, իրականում այս կամ այն կերպ կենդանի մնացած եւ Թուրքիայի տարածքում թաքնուող այն հայերը, ովքեր փորձում էին իրենց նախկին բնակութեան վայրերը վերադառնալ, բախւում էին իրենց տներն ու հողերը փաստացի բնակեցրած եւ իւրացրած մահմեդականների սպառնալիքներին. *«Շատ դէպքերում մուսուլման ամբոխը վերադարձող հայերին կախում էր իրենց իսկ պտղատու ծառերից՝ տեղական իշխանութիւնների քաջալերմամբ»*[23]: Այդ մարդկանց ժառանգներն, իհարկէ, մինչեւ այսօր յիշում են իրենց ընտանիքների կամ համագիւղացիների հետ կատարուածները. *«Իմ պապերը բոլորը Բալուից են եղել, Էրզրումից: Պապերս տաս սերունդ, քսան սերունդ՝ բոլորը Բալուից են եղել... Մենք Բալուի ամենամեծ աշիրէթն ենք եղել: ...Ջարդի ժամանակ մեր աշիրէթից վաթսուն հոգի սպանեցին, ... մեծ հայրիկիս աքսորեցին Սուրիա: 1922-23ին [նա] վերադարձաւ: Երբ որ վերադարձաւ, այս անգամ իր գիւղը չգնաց, Քարաքոչան (Բալուից հիւսիս-արեւելք - Հ.Խ.) գիւղը գնաց:*

Քարաքոչանից միայն մէկ ընտանիք է վերադարձել, Թօփալեան ընտանիքը: Սիրիայից վերադարձան, բայց տեսան, որ պայմանները խաղաղ չեն, գնացին Սիրիա եւ այնտեղից՝ Երեւան: Իմ ծնած գիւղս Օխու է անունը, մեր գիւղում երկու ընտանիք կար: Երբ որ պապս Քարաքոչանի մէջ հաստատուեց, Օխու երկու ընտանիք կար: Նոյնիսկ Յեղասպանութեան ժամանակ այդ մարդիկ չլքեցին, չգնացին: Նրանք իրենց ընտանիքներն առան, կողքի գիւղերը գնացին, թաքնուեցին, որոշ ժամանակ տարբեր տեղեր մնացին, երեք-չորս կիլոմետր հեռաւորութեամբ, վերջը վերադարձան Քարաքոչան: Մէկը Ազնաւուր ընտանիքն էր, միւսը Թօփալեան ընտանիքը: Ետ են վերադարձել, իրենց գիւղին մօտ, շատ պզտիկ երկու երեք կիլոմետր հեռաւորութեան պզտիկ գիւղում տեղաւորուել են: Բայց այնտեղ մի աղա կար, պետութեան պաշտօնեայ էր, պետութեան համար էր աշխատում, ուզում է նրանց փողերը իւրացնել: Լուր է տալիս մահմեդական քրդերին, գալիս են կոտորում: Ազնաւուրեան ընտանիքից մէկը չմնաց: Այդ սպանող քրդերն էլ իրենց մօտ աշխատողներից էին: Յետոյ նրանց փոխարէն մահմեդական քրդեր բնակուեցին: Իսկ Թօփալեանների ազգն էլ, ինչպէս ասացի, ետ վերադարձաւ Սիրիա»[24]:

Մեծ մասամբ, սակայն, խնդիրը չէր հասնում դրան, քանի որ հայերին պարզապէս արգելել էին իրենց նախկին բնակութեան վայրերը վերադառնալ եւ նոյնիսկ շարունակուել են աքսորներն ու բռնագաղթեցումները. *«...ջարդերէն ետքը, փախած ըլլալով իրենց պապական գիւղերէն, շրջաններէն, մեր ծնողքը յայտնուած են Անատոլիայի*[25] *տարբեր վայրեր: Մայրս փոքրիկ աղջիկ է եղել, ինքը 34թ. ծնած է, բայց նոյնիսկ չգիտի, չի յիշում իր ծնունդին տեղը ուր էր: Երեսնականները հայերու համար դեռ շատ դժուար ժամանակներ էին, թաքնւում էին, կեղծում էին իրենց ինքնութիւնը, տեղից տեղ էին փոխւում: Տարբեր գիւղերում ապրեցան: Մայրս փոքր հասակում իր մայրը մեռաւ: Անոր մայրը մեռաւ մօրս ծնունդից քիչ ետքը: Ազգականներուն մեծ մասը գոհուած էր ջարդերուն: [19]40-45ի ընթացքին, ճիշտ ժամանակը չի յիշեր մայրս, բայց այդ միջակայքին իրենց Սասունի Բիմէր գիւղը բերեցին: Բաթմանի մէջ է ադ գիւղը, Բաթմանի գիւղերէն է: Ինչքան մայրս կրնայ յիշել՝ այդ գիւղն իրենք չընտրեցին: Այդ ժամանակ գիւղին մէջ միայն մէկ հայ ընտանիք կար: Մեծերը միշտ կ'ըսէին, որ կառավարութիւնն առհասարակ չէր ուզում, որ հայերը միասին*

ապրեն, եւ կենդանի մնացածներին ցրում էին տարբեր կողմեր: Մայրս նոյնիսկ չի յիշում, թէ ո՛ր գիւղից իրենց Բիմէր բերեցին... Մեր պապիկը, պապայիս պապան՝ Կիրակոսը մէկ եղբայր եւ մէկ քոյր ունէր: ... Իրենք ալ մամայիս նման նոյն պատմութիւնը ունեցեր են, տարբեր տեղեր ապրեր են, միշտ տեղափոխութիւններ եղած են: Յետոյ, երբ Աթաթուրքից յետոյ կենդանի մնացած հայերուն հողեր բաժանեցին[26]*, իրենց ալ բերին նոյն գիւղը: Բիմէր բերին. մայրիկիս ընտանիքի հետ պայմանները գրեթէ նոյնն են»*[27]: Ապրողներն էլ պարբերաբար պէտք է ներկայանային զինուորական մարմիններին՝ իրենց ներկայութիւնը հաստատելու. «*Իմ մեծ հայրիկս պարտաւորուած էր ամէն շաբաթ - կարակոն կ'ըսենք - զինուորականներուն տեղը կ'երթար ստորագրութիւն կու տար: Իմ մեծ հայրիկս քանի տարիներով գնաց:... Հաֆսասէ ըսած տեղ մը կար, ընտեղը զինուորներուն տեղ մը կար, պէտք էր ամէն շաբաթ էրթար, պատճառն ալ երեւի այն է - ասանկ կը խորհիմկոր - որ իր շրջանէն շատ չհեռանայ... Կը խորհիմ, որ քանի չձգեցին իրենց հին գիւղերուն էրթալ, ատով կը ստուգէին, որ չվերադառնա՛յ արդեօք...»*[28]: Այնտեղ, որտեղ հնարաւոր չէր կամ դժուար էր գիւղական բնակավայրերում վերահսկողութիւն սահմանել, հարկադրում էին ապրել քաղաքների որոշակի, յատկացուած թաղամասերում. «*...փրկուածներից նրանց, ովքեր սուննիների ընտանիքում չէին ապրում՝ գիւղերում չէին թողնում ապրել, ստիպում էին գնալ քաղաքներում յատկացուած որոշակի թաղամասերում ապրել, որպէսզի վերահսկողութեան տակ լինեն: Մեծ մայրիկս, օրինակ, Էլազիկում այդպիսի թաղամասում էր ապրել, նոյնիսկ գնացել էր ժանդարմերիայում ստորագրել էր, որ ինքն այդ թաղամասում է ապրելու, այլ վայր չի գնալու: Դա բաւական երկար տեւեց*»[29]: Պատմողը Խարբերդի Նահանգի քրդերից է: Էլազիկում ապրող նրա հայ տատիկի հայրական գոյքը եւ ունեցուածքը իւրացրել էր նրա քուրդ ամուսինը, որից յետոյ հայ կնոջը իր երեք երեխաների հետ միասին դուրս էր հանել տնից. «*Երբ իմ մեծ մայրը ծնուել է, բնականաբար նրա անունը մարդամատեանների մէջ գրանցուած է եղել, ով ինչ ընտանիքում է ծնուել, ինչ ունեցուածք է ունեցել: Յետոյ մեծ մայրիկիս ամուսինը այդ ունեցուածքը գրանցել է իր երկրորդ կնոջից ծնուած զաւակների եւ նրանց մօր՝ իր երկրորդ կնոջ անունով: Դա պետութեան կողմից խրախուսուող քաղաքականութիւն էր: Հայրն*

էլ իրենցով չի հետաքրքրուել: Երեխաները, բնականաբար, հարցրել են՝ ո՞վ է իմ հայրը: Մեծ մայրս բոլորը պատմել է: Երեխաներն ամէն բան գիտէին:... Իմ հաշուարկներով Խարբերդի շրջանում երեք հազարից աւելի հայ երեխաներ էին մնացել, խառն ամուսնութիւնները շատ էին: Ոմանց, իհարկէ, օգնել են սրտացաւ մարդիկ, իրենց ծանօթների երեխաներին պահել են: Բայց հիմնականը, իմ կարծիքով, դա պետական քաղաքականութիւն էր: Այդ երեխաներին պահում էին, որպէսզի կարողանային նրանց ծնողների ունեցուածքը իրաւաբանօրէն ձեւակերպեն, փոխանցեն: Այդ երեխաներին պահպանել են, որովհետեւ նրանք ժառանգորդներն էին իրենց ծնողների ունեցուածքի: Յետոյ այդ ունեցուածքը, այդ սեփականութեան թղթերը աստիճանաբար փոխանցուել են այլ ընտանիքների: Ինչպէս իմ մեծ մայրիկիս դէպքում էր»[30]:

1929ի ամռանը եւ դրան յաջորդող ամիսներին Դիարբեքիրի եւ Մարդինի նահանգներից մօտ 30.000 արտագաղթել են Հալէպ: Դա, հաւանաբար, բռնի գաղթեցում (deportation) էր, սակայն այն հայերի համար աւելի ցանկալի էր, քան իրենց հայրենիքում մնալու պայմանները: Բրիտանական հիւպատոս Ա. Մոնկ-Մէյսոնի 1929 Նոյեմբերի 14ի հաղորդագրութեան համաձայն վերջին վեց ամիսներին Խարբերդի, Դիարբեքիրի եւ Մարդինի նահանգներից անընդհատ վտարուած հայեր են գալիս Հալէպ. այնպիսի տպաւորութիւն է, որ թուրքերը որոշել են ամէն գնով ազատուել գաւառների ողջ քրիստոնեայ բնակչութիւնից: Հալէպ հասնողները խիստ հիւծուած, հիւանդ էին, եւ պատմում էին, որ երկրում մնացող հայերին հետապնդում են, բանտերն են նետում, աքսորուելը յաջողութիւն է համարում[31]: 2012 Դեկտեմբերին ԱՄՆի Ֆիլադելֆիա քաղաքում ապրող տիկին Նայիրա Բալանեանն ինձ պատմում էր իր պապի՝ Կորիւն Աղաջանեանի մասին: 1887ին Արաբկիր Քաղաքում ծնուած Աղաջանեանին 1922ին Գիւտ եպիսկոպոս Մխիթարեանը քահանայ է ձեռնադրել Խարբերդի Ս. Սարգիս եկեղեցում: Նա Խարբերդի հայկական եկեղեցում գործել է մինչեւ 1929, լինելով միաժամանակ առաջնորդի տեղապահ: Քահանան կարողացել է քրդերի եւ թուրքերի տներում թաքնուած որոշ հայ աղջիկների փախցնել Հալէպ կամ Ամերիկա, նրանց՝ ովքեր կարող էին փախչել եւ հասնել հայկական եկեղեցի եւ այլեւս կարող էին ապաւինել

քահանայի օգնութեանը: 1929ին Խարբերդի վերջին քահանան տեղափոխուել է Հալէպ: 1929ին, ըստ քահանայի գրաւոր զեկոյցի, Խարբերդում շատ քիչ հայեր էին մնացել, ովքեր այլեւս չէին կարող եկեղեցի գնալ: Քահանայի ինքնակենսագրութիւնում գրուած է, որ ինքը Խարբերդից բռնագաղթի է ենթարկուել:

Արդիւնքում այդ պետութիւնը մի կողմից օրէնքներ է հրապարակել եւ արգելել բռնագաղթած, փախած..., բայց կենդանի մնացած հայերի մուտքը երկիր, զրկել է նրանց քաղաքացիութիւնից, շարունակել տեղահանութիւնները, միւս կողմից՝ արգելել է պետութեան ներսում ապրող հայերի ազատ տեղաշարժը: Մի կողմ դնելով այն լուրջ հարցը, որ Թուրքիայի գաւառներում դեռեւս թաքնուող կամ բազմաթիւ ճնշումների ենթարկուող հայերը նոյնիսկ չգիտէին եւ չէին կարող իմանալ ո՛չ Լոզանի որոշումների, ո՛չ Թուրքիայում դրանց դէմ ընդունուող օրէնքների մասին, փաստ է, որ ամէն ինչ արուել է կենդանի մնացած հայերի կամ նրանց ժառանգների կողմից իրենց գոյքը/ունեցուածքը ետ պահանջելն արգելելու կամ անհնար դարձնելու համար:

«Ունեցուածքի հարկ»ի մասին թիւ 4305 օրէնքն ընդունուել է 1942 Նոյեմբերի 11ին եւ չեղեալ յայտարարուել 1944 Մարտին[32]: Զօրակոչով եւ ունեցուածքի հարկով թուրքական իշխանութիւնները ակնյայտօրէն ցուցադրում էին իրենց թշնամանքը Լոզանի Խորհրդաժողովով «պաշտպանուածների» նկատմամբ: Սոյն օրէնքով Թուրքիայի հարկատուները բաժանուում էին չորս խմբերի՝ մահմեդականներ, ոչ-մահմեդականներ, հաւատափոխներ (*դէօնմէ*), արտասահմանեան հպատակներ: Ունեցուածքի հարկի մասին օրէնքի համաձայն՝ յոյները պարտաւոր էին վճարել իրենց ունեցուածքի 150 տոկոսը, հրեաները՝ 178, իսկ հայերը՝ 232: Խնդիրն աւելի էր բարդանում նրանից, որ հարկային գործակալն ինքն էր որոշում ունեցուածքի արժէքը եւ նրա որոշումը բողոքարկման ենթակայ չէր: Իրենց ունեցուածքը խիստ գերազանցող հարկը մարդկանց մեծ մասը չէր կարողանում վճարել, եթէ նոյնիսկ վաճառում էին իրենց ունեցուածքը: Այսպիսի դէպքերում նրանց ողջ ունեցուածքը խիստ էժան վաճառում էր աճուրդով, որի գնորդն յաճախ թուրք գործարարները կամ դրամատներն էին, իսկ հարկատուն աքսորւում էր: Աքսորավայրերից առաւել յայտնին Էրզրումի մօտ

գտնուող լեռնային, ցուրտ Աշքալէն էր: Աքսորավայրերում նրանք պարտադրւում էին ծանր, հարկադիր աշխատանքի՝ իբրեւ թէ հարկի համար անհրաժեշտ գումարը վաստակելու: 1943 Յունուարի 7ի կառավարութեան նիստում ընդունուած թիւ 19288 որոշմամբ աշխատանքային ճամբարներում աքսորականներին վճարում էին օրը 250 դուրուշ, որից 60 դուրուշը պահւում էր աքսորականի սննդի եւ կեցութեան համար: Թիւ 19288 որոշման 15րդ յօդուածով աքսորականները պէտք է աշխատէին մինչեւ «ունեցուածքի հարկ»ի պարտքի մարումը: 400-500 հազար լիրա պարտք ունեցողները (պարտքի չափը յաճախ կամայականօրէն որոշում էր հարկային գործակալը եւ այն կարող էր տրամաբանական կապ չունենալ մարդու ունեցուածքի չափի հետ) աշխատավարձով այդ պարտքը մարելու համար պէտք է աշխատէին... 1600 տարի: Պաշտօնական տուեալներով միայն Աշքալէ աքսորուել էին 1400 ոչ-մահմեդական հարկատուներ, որից 1229ը՝ Ստամբուլից (Ստամբուլից աքսորուել է 1869 մարդ): Քանի որ ունեւորների զգալի մասն իրականում տարեց մարդիկ էին, աքսորականների մի մասը մահացաւ աքսորավայրերում:

Հասկանալի է, որ այս օրէնքն ուղղուած էր մի կողմից էթնիկ թուրքական դրամագլխի ամրապնդմանը, միւս կողմից՝ ոչ-թուրքական էթնիկ դրամագլխի թուլացմանը, եթէ ոչ՝ վերացմանը: Ընդամէնը մէկ տարի չորս ամիս գործած օրէնքը արագօրէն լուծեց իր առաքելութիւնը: Հայութեան համար այն հիմնականում ուղղուած էր պոլսահայութեան դէմ: Հայերը ոչ միայն վերջնականապէս սնանկացան, այլեւ Ստամբուլից շատերը արտագաղթեցին, որով զգալի հարուած հասցուեց նաեւ հայկական էթնօպահպան ազգային-հասարակական կառոյցների գործունէութեանը՝ եկեղեցիներին, դպրոցներին, գերեզմանատներին, մշակութային հաստատութիւններին, տպագրութեանը... քանի որ դրանք գոյատեւում էին բացառապէս ազգայինների նուիրատուութիւնների հաշուին: Միաժամանակ աշխուժացաւ հայ ինքնութիւնը պահողների իսլամացումների դանդաղած գործընթացը:

Իրականում Թուրքիան միանգամայն արհամարհանքով էր վերաբերում Լոզանի Պայմանագրով ստանձնած պարտաւորութիւններին, եւ որեւէ մարմին կամ երկիր չկար, որ վերահսկէր կամ որեւէ կերպ հետեւէր դրանց կատարմանը: Ճիշտ

է, պայմանագրի կողմ հանդիսացող մի շարք երկրներ՝ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան եւ Ճապոնիան պարտաւորուել էին հետեւել Թուրքիայում փոքրամասնութիւնների իրաւունքի կիրառման ընթացքին, եւ Թուրքիայի վրայ պարտաւորութիւն էր դրուել առանց Ազգերի Լիգայի հետ համաձայնեցնելու՝ որեւէ փոփոխութիւն չանել, բայց երկրներից իւրաքանչիւրը «մատների արանքով» էր նայում Թուրքիայի խախտումներին, հաւանաբար որովհետեւ իրենք էլ, մեղմ ասած «հաւատարիմ» չէին նոյն պայմանագրով ստանձնած պարտաւորութիւններին: Փաստացի երկրներից իւրաքանչիւրը Լոզանի Պայմանագիրը խախտում էր՝ ինչպէս եւ ինչքան կարող էր: Պայմանագրի 72րդ յօդուածով իրենք էլ ունէին մասնաւոր պարտաւորութիւններ եւ իրաւունքներ, այդ թւում Թուրքիայի՝ իրենց տարածքներում գտնուող սեփականութիւնների կամ թալանուած գոյքի նկատմամբ, եւ պէտք է վճարէին «Խաղաղութեան Պայմանագրով Ներգրաւուած Պետութիւններից Ձեւաւորուած Վերականգնման Յանձնաժողով»ին, իսկ սոյն յանձնաժողովը ի թիւս այլոց պէտք է հոգ տաներ նաեւ իրենց տարածքներում յայտնուած հայ փախստականներին: 2012ին հրատարակուած Թանէր Աքչամի եւ Ումիտ Քուրթի *Kanunların Ruhu. Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek* (Օրէնքների ոգին. հետեւել Ցեղասպանութեան հետքին՝ «լքեալ գոյքերի» վերաբերող օրէնքներում)[33] գրքում հեղինակները վերլուծում են Լոզանի Պայմանագրի որոշ պարտաւորութիւնների կատարման ընթացքը, եւ ցոյց տալիս, որ Լոզանի Պայմանագիրը ստորագրած երկրներից ոչ մէկը շահագրգռուած էր հետեւելու հայերի նկատմամբ Թուրքիայի պարտաւորութիւնների կատարմանը, քանի որ իրենք էլ իրենց հերթին շրջանցում էին իրենց պարտաւորութիւնները, ի թիւս այլոց նաեւ իրենց երկրներում հաստատուած հայ փախստականների նկատմամբ: Մասնաւորապէս բազմաթիւ խարդաւանքներ ու խորամանկութիւններ են արուել Ֆրանսիայի ու Թուրքիայի միջեւ՝ Թուրքիայում, Սիրիայում, Լիբանանում եւ Իրաքում բնակուող հայերի սեփական եւ նրանց սպանուած ազգականների ունեցուածքը չվերադարձնելու նպատակով, նոյնիսկ պայմանագրեր են ստորագրուել գոյքը միմեանց վերադարձնելու մասին:

Այնուհետեւ Լոզանի Պայմանագրով Թուրքիայի ստանձնած պարտաւորութիւնները շրջանցուել կամ կոպտօրէն խախտուել են անընդհատ:

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գուցէ փոքրամասնութիւնների հարցով «Ազգերի Լիգայի Յատուկ Վերահսկողութիւն»ից ազատ լինելն էր, որ քեմալական Թուրքիային հնարաւորութիւն տուեց Լոզանի Պայմանագրից անմիջապէս յետոյ իրականացնել ծրագրեր, որոնք կոպտօրէն խախտում էին փոքրամասնութիւնների իրաւունքները եւ նոյնիսկ լիովին հակասում էին պայմանագրով Թուրքիայի ստանձնած նուազագոյն պարտաւորութիւններին: Այդ գործողութիւններն, իհարկէ, միայն հայերի դէմ չէին[34], բայց սոյն յօդուածում քննարկւում է միայն «հայկական խորքը»:

Լոզանի Խորհրդաժողովից անմիջապէս յետոյ, 1925ին վարչապետ (յետագայում՝ նախագահ) Իսմէթ Ինէօնիւն յայտարարեց, որ թուրքական իշխանութիւններն ամէն գնով թրքացնելու են Թուրքիայի ողջ բնակչութիւնը. «*Մենք բացայայտ ազգայնամոլներ ենք: Մենք ցանկացած գնով պէտք է թուրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում*»[35]: Սա պարզ սպառնալիք չէր, սա ծրագրով իրականացուող քաղաքականութիւն էր: Քեմալիզմի հիմքը հանդիսացող այս ծրագիրը ներառում էր երկրի բազմազգ բնակչութեան ինքնութիւնների փոփոխութիւն, դրան դիմադրողների կամքի կոտրում, ոչ-թուրք էթնիկ միաւորների հոծ բնակութեան վայրերի նօսրացում, տեղահանութիւններ, անհրաժեշտութեան դէպքում՝ ոչնչացում, ոչ-մահմեդական բնակչութեան մնացորդների իսլամացում, հակառակ դէպքում՝ նրանց ընկերային եւ դրամական հնարաւորութիւնների արգելափակում, իսլամական բնակչութեան թրքացում: Դա մի ժամանակաշրջան էր, երբ դեռեւս աշխուժ էին այլազգիների ըմբոստացումները կենտրոնական իշխանութիւնների դէմ: Այդ ըմբոստացումներին յաճախ մասնակցում էին նաեւ դեռեւս զէնք կրելու ընդունակ որոշ թուով հայեր:

Հայերի մասնակցութեան իմաստով առաւել յայտնի է, թերեւս, 1926ի Սղերդի եւ Ռադուանի հայ-եզդիական խառը բնակչութեան ընդվզումը, որը վերաճեց զինուած ընդհարման[36]: Դրան նախորդել

էր 1925ի Շէյխ Սաիդի գլխաւորած ապստամբութիւնը, որին յաջորդել էին մեծ թուով ձերբակալութիւններ եւ հազարաւոր կախաղաններ: Այդ առիթով է բանտարկուել նաեւ Ցեղասպանութեանը իր ողջ գերդաստանը կորցրած, Ստամբուլում ապրող դերսիմցի ուսուցիչ Գէորգ Հալաջեանը, ով Սեբաստիայի բանտում է գտնուել 1925-28ին, օրագիր է գրել եւ յետագայում, 1932ին, Բոստոնում «Թափառական» անունով հրատարակել *Դէպի Կախաղան* վերնագրով գիրքը: Հալաջեանն այն քչերից էր, ով կարողացաւ ապացուցել այդ ապստամբութեանն իր մասնակցութեան անհնարինութիւնը: Իրականում լայնածաւալ պատիժների հիմնական նպատակը մարդկանց ահաբեկելն էր, հայերի առումով՝ եւս մէկ անգամ «կեղտոտ հայերի» թեմային հնչեղութիւն տալը:

1927-1928ի ընթացքում քրդական ջոկատները կենտրոնացել էին Արարատ Լեռան շրջանում: Ապստամբութիւնը ղեկավարում էր **«Հոյբուն»** (ինքնութիւն, անկախութիւն) ռազմա-քաղաքական կոմիտէն: 1929-1930ի սկզբին Արեւելեան Վիլայէթները գտնւում էին ապստամբների վերահսկողութեան տակ: Այդ նոր ապստամբութեան երեք գլխաւոր ղեկավարներն էին Իբրահիմ Հըսգէ Թելի փաշան, Իհսան Նուրի փաշան եւ հայազգի Զիլան բէյը (Խնուսի Հարամիկ գիւղից, դաշնակցական գործիչ Արտաշէս Մուրադեանը): Ցընթացս ասենք, որ ԽՍՀՄը այդ ժամանակ հայերին ճնշելու հարցում շարունակում էր օգնել Թուրքիայի կառավարութեանը: Մասնաւորապէս Թեհրանում սովետական լիազօր ներկայացուցիչ Եակով Դաւթեանը (Դաւիդով) թուրքական եւ իրանական կառավարութիւններին փաստաթղթեր էր յանձնել քուրդ ապստամբների զինմանը եւ վարժեցմանը դաշնակցականների մասնակցութեան մասին, ինչին, իհարկէ, հետեւել էին խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ[37]:

1927-30ի Արարատի քրդական ապստամբութիւնների ճնշումները եւ դրանց յաջորդած քրդերի ցրման գործողութիւնները Թուրքիայի արեւելքում յարմար առիթ էին Ցեղասպանութիւնից փրկուած հատուկենտ հայերի մասնակցութիւնն այդ ապստամբութիւններին հայերի «հերթական դաւաճանութեամբ» բացատրելու, այդ մասին բարձրաձայնելու, յայտարարելու, որ հայերի կողմից մահմեդականութիւն ընդունելը կեղծ է եղել, որ դա միայն միջոց էր Թուրքիայի եւ թուրքերի դէմ պայքարելու համար:

Հասկանալի պատճառներով հաւանական է նաեւ, որ թուրքերի աչքին ամէնուր հայ վրիժառուներ էին երեւում: Բայց հայերի փաստացի, հնարաւոր եւ մտացածին վրիժառութեան գաղափարը լայնօրէն օգտագործւում էր քաղաքական եւ ներքին ամրապնդման նպատակներով՝ «թշամին արթուն է, մենք պէտք է միասնական լինենք»: Սա շատ յարմար բանաձեւ էր նաեւ հայկական կոտորածներին աշխուժ մասնակցած եւ հայկական գոյք թալանած քրդերին ու թուրքերին միաւորելու «ընդհանուր թշնամու» դէմ: «*Տիգրանակերտի Թուրք Օճախը ընդունել է հետեւեալ որոշումները. 1. հայերու հետ առեւտուր չընել, 2. հայ գործաւորներ եւ հայ արհեստաւորներ բացարձակապէս չգործածել, 3. Հայ վաճառականներու պարտք ունեցողները պէտք չէ վճարեն իրենց պարտքերը...*»[38]: Միաժամանակ դա լաւ առիթ էր ողջ երկրի տարածքում թաքնուածներին փնտռելու, սպանելու, բանտարկելու եւ/կամ կրկին աքսորելու: Մինչեւ այսօր կենդանի մնացածներից շատերն են յիշում, որ իրենց երեց հարազատները սպանուել կամ անհետացել են այդ տարիներին: Անհետացել են նաեւ յիշեալ ապստամբութիւնների հետ որեւէ կապ չունեցող տարածքներից, որտեղ իշխանութիւններից թաքնուող մարդիկ նոյնիսկ տեղեակ չէին ապստամբութիւնների մասին:

Յայտնի է նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի տարածքում հայեզդիական դիմադրութիւնը ճնշելու առիթով 40 հազարանոց թուրքական բանակը 1934ին գրոհել է Սղերդ եւ ահաւոր խոշտանգումների ենթարկել տարածաշրջանի հայերին եւ եզդիներին[39]:

Տարօրինակ է, սակայն, որ հայերին բոլոր «քրդական մեղքերի» պատասխանատու դարձնող իշխանութիւններն ամէն ջանք գործադրում էին նրանց քրդերի վերահսկողութեան տակ պահելու. «*... առանձին հայերու գիւղ չիկար: Ջարդերէն մնացածներուն կա՛մ կը թոյլատրէին քուրդերու հետ միասին մի գիւղի մէջ կենալ, կա՛մ, եթէ արդէն մի գիւղում հայեր կային, հոն քուրդեր ալ կը բնակեցնէին: Ասոնք մեր մանկութեան շրջանին շատ չի խօսուեցան, բայց ասոնք բոլորը գիտեն*»[40]:

Հայերի՝ «քրդական մեղքերի մեղսակցութեան» եւ «դաւանափոխների անհաւատարմութեան» թեման երբեք չիջաւ քաղաքական օրակարգից եւ այսօր նոյնպէս շարունակւում է: 2012ին Թուրքիայում իշխող Արդարութիւն Եւ Զարգացում

Կուսակցութեան՝ Էրզրումի պատգամաւոր Մուհիեթթին Աքսաքը առաջարկում էր, որ բախումների ժամանակ սպանուած ՊԿԿի անդամների առնչութեամբ կիրառուի «սատկել» բառը. «*Դրանց համար պէտք է ասենք՝ «սատկեցին»: Դա չի վերաբերում մեր քուրդ եղբայրներին: Երբ հետեւում ենք դրանց՝ կա՛մ «ծախու հոգիներ» են դուրս գալիս, կա՛մ «դաւանափոխ հայերի» լակոտներ, կա՛մ էլ Միրիայից եւ Իրանից մեր երկիր թափանցած «ստոր արարածներ»: Միայն այդքանը*»[41]:

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻԿԱՑՈՒՄԸ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ԷԹՆԻԿԱՑՈՒՄԸ

Թուրքերի՝ Թուրքիա կոչուող երկրի «միակ տէր ու տիրակալը լինելու» երիտթուրքերի շրջանից սեւեռուն գաղափար դարձած քաղաքականութիւնը մղում էր այնպիսի բացայայտումների, ինչպիսին 1930ի Թուրքիայի Արդարադատութեան նախարար Մահմութ Էսսաթի յայտարարութիւնն էր. «*Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրաւունք*»[42]: Ընդ որում ոչ ոք, այդ թւում ինքը՝ Էսսաթը չէր կարող որեւէ կերպ բացատրել «ծագումով մաքուր թուրքեր»ի առանձնացման չափանիշը: Այն դեռեւս պէտք է կերտուէր: Դա հեշտ գործ չէր՝ ոչ միայն այլազգիների նկատմամբ: Աւելին, գուցէ դա պակաս դժուար գործ չէր հենց նրանց նկատմամբ, ում թուրք էին ասում: Եւ յայտնի էլ չէր, թէ ու՛մ էին «թուրք» ասում: Որովհետեւ «թուրքը» ոչ միայն դեռեւս էթնանուն չէր, այլ նախ եւ առաջ ածական էր՝ բարբարոս, անգէտ, տգէտ, գաւառացի եւ այլ, միշտ՝ բացասական բովանդակութեամբ:

Միջին Ասիայի թրքալեզու ժողովուրդների հետ էթնօմշակութային ազգակցութեան թեմաներով Ստամբուլի մտաւորականների հետ ԺԹ. դարի վերջին ունեցած զրոյցներից հունգար արեւելագէտ Վամբերին նկատել էր, որ ստամբուլցիները խորապէս վիրաւորւում էին «այդ քոչուորներին» իրենց հետ համեմատելուց եւ «թուրքերին համարում էին ստորակարգ գիտցիներ»[43]: Ոչ միայն Եւրոպայում, այլեւ «Օսմանեան Կայսրութիւնում էին «թուրք» եզրը օգտագործում վիրաւորական նշանակութեամբ: Այն օգտագործում էին որպէս անտաշ, անգրագէտ, բթամիտ մարդու բնութագիր: Յայտնի օսմանեան պատմագիր Նայմա Մուստաֆա էֆենդին, օրինակ, գրում էր

«յիմար թուրքեր» «թուրքի կեղտոտ մոութ» «թուրք խաբեբայ», «շան մոութ թուրք» եւն.[44]: Նրանց, ում «թուրք» էին ասում, քրդերը որակում էին Թուրքիայում ոչ-պակաս արհամարհական «հոոոմ» բառով: «Թուրք» բառն է, որ պէտք է փոխարինէր հպարտութեան աղբիւր հանդիսացող թէ՛ «օսմանցուն», թէ՛ «մահմեդականին»: Ընդ որում որոշ թուրք հետազօտողներ համարում են, որ թուրքի բացասական կերպարի ձեւաւորման ակունքներում ընկած էր հենց արաբա-մուսուլմանական վերաբերմունքը, այդ թւում՝ Ղուրանի մեկնաբանութիւնները, որոնցում թուրքերը յաճախ են համեմատւում/նոյնականացւում գազանների հետ, համարւում «գազաններ եւ մարդկութեան թշնամիներ», «*մարդկութեան համար աղէտ դարձած ցեղ*», իսկ աւանդաբար Մուհամմէդ մարգարէին վերագրուող որոշ բանաստեղծական տողերում ասւում է, որ «*մինչեւ մենք չպատերազմենք հարթ վահան յիշեցնող դէմքով նեղաչք, կարմրադէմ, հարթաքիթ թուրքերի դէմ, արդար դատաստանի օրը չի գայ*»[45]:

Յիրաւի, դժուար էր հպարտօրէն «մահեմադական եմ» (համատարած՝ հասարակ բնակչութիւնը) կամ «օսմանցի եմ» (մտաւորականութիւնը, բուրժուազիան, ծառայողները) ասողներին «թուրք եմ» դարձնել՝ մի կողմից, եւ ազնուացնել «թուրք» բառը՝ միւս կողմից: Դա նաեւ հակասական գործընթաց էր՝ ապահովամացնել պատմութիւնը, բեռնաթափել այն քրիստոնեայ եւ նախկին քրիստոնեայ ժողովուրդների պատմա-մշակութային ներդրումից, աշխարհիկացնել երկիրը եւ զուգահեռաբար իսլամացնել ջարդերից փրկուած քրիստոնեաներին, թրքացնել մահմեդական եւ ալեւի քրդերին, թուրքմէններին, արաբներին, լազերին, հրեաներին... Սարսափելի է պատկերացնել ինչ գնով, բայց այս խոշոր ծրագիրը մեծ չափով յաջողուեց:

Ինչ վերաբերում է հայերին, նրանք այնքան էին վարժուել «թուրք» բառի վիրաւորական տարողութեանը, որ յաճախ թւում էր «թուրք» ասելով՝ վիրաւորում են հպարտ մահմեդականներին: Դա պատճառներից մէկն էր, որ շատ երկար ժամանակ իսլամացած հայերն իրենք իրենց պարզապէս «իսլամ» էին անուանում, եւ յատկապէս գաւառներում շատ երկար ժամանակ պահանջուեց, մինչեւ նրանք հասկանային, որ իրենցից պահանջւում էր թրքանալ. «թուրք» եւ ո՛չ թէ պարզապէս «իսլամ» դառնալ:

Ջարդերի տարիներին իրենցից միայն «մահմեդական» դառնալ էր պահանջուել, իսկ աւելի ուշ՝ յատկապէս գաւառներում գտնուողների հիմնական խնդիրը իրենց ֆիզիկական գոյութիւնը պահպանելն էր եւ նրանք շատ հեռու էին երկրում կատարուող քաղաքական զարգացումներից, Լոզանի Պայմանագրից, առհասարակ երկրի ընկերա-մշակութային փոփոխութիւններից: Առաւել եւս, որ «հայկական միջավայր» չկար, գաղափարներ կամ նոյնիսկ պարզ լուրեր, տեղեկութիւններ փոխանցողներ չկային, այլեւս հայկական դպրոցներ ու եկեղեցիներ չկային, նրանք մինչեւ 1960ականները նոյնիսկ չգիտէին պոլսահայերի եւ հայոց պատրիարքարանի, Խորհրդային Հայաստանի գոյութեան մասին:

1950ականներին երիտասարդները զարմանում էին, որ իրենց պապերը գրագէտ են եղել, գիւղերում եւ վանքերում ամէնուր հայկական ծխական դպրոցներ են եղել, իսկ քաղաքներում նաեւ եւրոպական եւ/կամ՝ ամերիկեան դպրոցներ, որտեղ նոյնիսկ իրենց տատերը անգլերէն, ֆրանսերէն են սովորել: Հայ կնոջ եւ քուրդ տղամարդու դուստր էլազիկցի մի տատիկ 2011ին հիացմունքով պատմում էր, որ իր մայրը միքանի լեզուով կարդալ-գրել գիտէր, նաեւ՝ հայերէն, եւ այնպէս վարժ էր *Աստուածաշունչ* կարդում, որ շրջակայքի բոլոր մահմեդականները իրենց հիւանդ երեխաներին բերում էին՝ բուժելու նպատակով «*նրանց վրայ գիրք կարդալու... Բոլորն էլ բերում էին՝ հայ, թուրք, քուրդ: Մայրս կարդում էր ու լաւանում էին երեխէքը: Բայց ես չսովորեցի: Հայրս մեզ զրկեց սովորելու հնարաւորութիւնից: Մօրս ունեցուածքը վերցրեց, մեզ դուրս արեց առանց մի կոպէկի*»[46]: Այդ տատիկն ինքը անգրագէտ էր մեծացել, մայրը չէր համարձակուել իր իմացած լեզուներով գրել-կարդալ սովորեցնել, որովհետեւ դա ուշադրութիւն կը գրաւէր իր երեխայի վրայ՝ նրան հարուածի տակ կը դնէր: Այդ վախեցած մարդիկ նոյնիսկ պատկերացում չունէին հայկական ջարդերի ծաւալների մասին. գիտէին միայն, որ հայը Թուրքիայում վատ բան է, եւ ինչքան հնարաւոր է՝ փորձում էին իրենց գոյութիւնն աննկատ դարձնել: Իր մօր գրագիտութեամբ հիացած խարբերդցի տատիկը դառնութեամբ պատմում էր. «*Մայրիկս շատ է տանջուել: Էլազիկում իմ մայրիկի նման մէկը չկար: Պատկերացրէք այդ տարիներին միայնակ կին՝ փոքր երեխաներով, ինքն էլ՝ հայ: Ուրիշ միայնակ երիտասարդ հայ*

կանայք ամուսնացած էին մուսուլմանների հետ: Միայն տարեց կանայք էին միայնակ, բայց նրանց մօտ երեխաներ չկային»[47]:

Սակայն պետութիւնը իրականացնում էր «թրքացման» ծրագիրը: «Աննկատ ապրելը» «հայ ապրել» էր եւ պետական ծրագրի խանգարող հանգամանք, անհրաժեշտ էր, որ նրանց առաւելագոյն ցրէին: Դրան էր ծառայելու նաեւ 1934ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընդունած թիւ 2510 «Բնակեցութեան Օրէնք»ը, որով Ներքին Գործերի նախարարին իրաւունք էր տրւում երկրի՝ թուրքական մշակոյթին բաւականաչափ չյարմարուած տարբեր ժողովուրդների բնակութեան վայրերի տեղափոխութիւններ իրականացնել: Խօսքը գնում էր նախ եւ առաջ թուրքերէն լեզուի մասին (յօդուած 11): Առաւել յայտնի են Արեւելեան Նահանգներից արեւմուտք տեղափոխած հազարաւոր քրդերի դէպքերը: Սակայն տեղափոխութիւնների էին ենթարկւում նաեւ Թուրքիայի նոյնիսկ արեւմտեան նահանգներում ապաստանած փոքրաթիւ, ցաքուցրիւ ապրող հայերը: Մարդիկ, իհարկէ, չգիտէին (եւ չգիտեն) այդ օրէնքի մասին, բայց մինչեւ հիմա յիշում են տեղափոխութիւնների հարկադրանքը: Միաժամանակ սկսուեց անձնանունների եւ ազգանունների համատարած թրքացումը: «*Հիմա աստեղը 15 թուից յետոյ ազգանունները աս երկրի մէջ, որ հայերը կոտորեցին, արդէն ազգանուն չիկայ: Իմ հայրիկս մնացել ա եօթը տարեկան՝ Հայկ, չի գիտեր իրա ազգանունը ինչ էր, երեսունչորս թուին աս երկրի մէջ օրէնքը հանեցին, կը կանչէին առանց ազգանուն եղողները, կ'ըսէին ի՞նչ էր անունդ՝ Հայկ, քու ազգանուն թող Չալըշ ըլլայ... ես Հայկի տղան եմ, Հայկ Գէորգի տղան է, Գէորգ Բալոյի տղան է, Բալօ Խաչոյի տղան է, Խաչօ Զաքարի տղան է, աս գիտեմ, բայց ի՞նչու իմ ազգանունը Չալըշ է՝ ադ չի գիտեմ*»[48]: Անշուշտ միայն ազգանուն չունեցողներին կամ չյիշողներին չէ, որ նոր ազգանուններ էին տրւում: Հանրապետական Թուրքիան մարդկանց ինքնութեան վկայականներ էր տալիս՝ փոխուած անուն-ազգանուններով: Ազգանուններն ընտրում կամ յօրինում/ստեղծում էին պետական պաշտօնեաները, իրենց հայեցողութեամբ կամ ճաշակով. «*Կարող էր դէմքին նայել մարդը, ասել՝ լսիր, դու խոյի նման ես, արի քեզ «Քոչ» ազգանունը դնենք, կամ՝ երկաթի պէս ամուր ես «Բուլաթ» կը լինես*»: Որեւէ օրինաչափութիւն չկար, միակ սկզբունքը՝ թուրքական բառ պիտի

լինէր: Խարբերդում հայ տատ ունեցած քուրդ մի մտաւորական իր տատի մասին պատմում էր. «*մեծ մօրս ինքնութիւնը թուրքական էր՝ ոնց որ պետութիւնն է հարկադրել... Պետութեան հարկադրանքով անունը փոխուել է, Գիւլլու է դարձել, բայց իր հայրական անունը Եղսօ էր, եւ հայերի միջավայրում Եղսօ էին ասում: Ինքն իր ինքնութեան թուղթն ունեցել է, որտեղ ինքը Գիւլլու էր, իր մայրը՝ Նունիկ, հայրը՝ Երեմիա*»[49]: 1934ին ընդունուած «Ազգանունների Մասին Օրէնք»ը, որով արգելւում է օտար ազգանունների եւ անունների օգտագործումը, միչեւ այսօր գործում է եւ Թուրքիայի սահմանադրական դատարանը, ըստ Fırat գործակալութեան հաղորդագրութեան, 2011ին իրաւական է համարել այն կէտը, որով Թուրքիայի քաղաքացիներին արգելւում է կրել օտար ազգանուններ: Չնայած սահմանադրական դատարանի նախագահը եւ փոխնախագահը այն համարել են ցեղամոլական, օրէնքը ի զօրու մնալու օգտին քուէարկել են 9, դէմ՝ 8 անդամ[50]:

ՀԱՅ ԷՔ/ԵՆՔ, ՀԱՅ ՉԵՆ/ՉԵՆՔ

1919ի վերջին-1920ի սկզբին վերաբերող տուեալների համաձայն Խարբերդի Նահանգում կար 20.000 թրքացած հայ[51]: Ոչ ոք չի կարող ասել, թէ ի՛նչ էր նշանակում այդ նահանգում «թրքացած հայ»ը, քանի որ այնտեղ մարդիկ քրդախօս, ոչ թէ թրքախօս էին դառնում: Պէտք է ենթադրել, որ խօսքը սուննի մահմեդականութիւն ընդունած հայերի մասին էր: Արեւելեան Նահանգներում մնացած հայերը, իսլամացած կամ ոչ, աստիճանաբար քրդախօս, մասամբ՝ արաբախօս էին դառնում: Թրքախօս միջավայր չկար, դպրոցներ չկային, թուրքերէն սովորեցնող չկար: Ամէնամեծ ցանկութեան դէպքում անգամ այդ տարածքի զանազան մեկուսի անկիւններում, յատկապէս գիւղական բնակավայրերում թշուառ գոյութեան մատնուած հայերի բեկորները չէին կարող ո՛չ թրքախօս դառնալ, ո՛չ թուրքական ինքնութիւն ձեռք բերել: Իսկ գաւառների քաղաքներում, այնտեղ՝ որտեղ դպրոց կար, որտեղ կարող էին «թրքութեամբ» վարակել, դպրոց գնացող երեխաներին էլ ամէն կերպ դուրս էին մղում դպրոցից եւ «թրքութիւնից»: Էլազիկի աքսորուածերի թաղամասում ապրած քուրդ-զազա Ջաֆէր Սոլգունը 1940ականներին համընկնող իր մանկութեան

տարիների մասին գրում է. «*Թաղամասում, որտեղ մենք ապրում էինք Դերսիմի աքսորի ենթարկուած զազաների հետ մէկտեղ, ապրում էին նաեւ բալուցի զազաների եւ հայերի ընտանիքներ: Մեր պատկից հարեւաններն էին Վարթօ քոյրիկը, եղբայր Մարտիրոսը, հօրեղբայր Անտոնը, Մարսա քոյրիկը, Այդան եւ ուրիշներ... [Վարթոյի] Կարպիս անունով որդին ինձնից միքանի տարի փոքր էր: Սովորում էինք մի դպրոցում, որը մեր տանը շատ մօտ էր: Որոշ ուսուցիչներ ու աշակերտներ Կարպիսին լաւ չէին վերաբերւում՝ ասելով՝ հայ է, տեղի-անտեղի ծեծում էին: Կարպիսին պաշտպանելու համար շատերի հետ եմ կռուել, որոշ ուսուցիչներից էլ ծեծ եմ կերել: Սակայն ոչինչ դուրս չեկաւ, եւ ընտանիքը նրան որոշ ժամանակով դպրոցից հանեց: Յետագայ տարիներին, երբ ես շարունակում էի սովորել դպրոցում, Կարպիսը իր հօրեղբայր Անտոնի այգում օգնում էր... Շիկահեր, նիհար, կանաչաչեայ, լուռ երեխայ էր Կարպիսը ...Յետոյ Կարպիսի համար, ցաւօք, շատ տխուր եղաւ: Մինչեւ հիմա, երբ յիշում եմ, մարմինս փշաքաղւում է, աչքերս լցւում են... Երբ 1980ականներին, այսինքն՝ Սեպտեմբերի 12ին, Ստամբուլում բանտարկուած էի, Կարպիսը ենթարկւում է թաղամասի որոշ անխոհեմ ու մոլագար անձանց յարձակմանը: Սրա մասին խօսելիս, անգամ գրելիս՝ ամաչում եմ. բռնութիւն կիրառելով ու դանակահարելով սպանել են Կարպիսին...*»[52]: Իսկ Կարպիսի կրտսեր քոյրը յետոյ դեռ շատ պիտի հարցեր տար. «*Հօրեղբա՛յր Ջաֆէր, մենք ինչու՞ ենք հայ, ինչու՞ է Աստուած մեզ հայ ստեղծել, մենք ինչու՞ թուրք չենք: Ո՞րն է մեր մեղքը*»:

Յիրաւի, հայկական ծագումը հաւասար էր մեղքի: «*Քանի որ հայերի դէմ քարոզչութիւնը մեր երկրում շատ էր, հայ լինելը մեղադրանքի նման մի բան էր, ընտանիքներում առհասարակ աշխատում էին այդ բանը թաքցնել: ...Հայկական ծագումը դեռեւս շատերի համար է անարգանք: Մեր հայկական ինքնութիւնը, եթէ մեզ ներկայացուել է, միշտ որպէս վատ բան է ներկայացուել, միշտ այդ մասին թաքուն է խօսուել: Դա պետութեան քաղաքականութիւնն է եղել: Քրդական գործողութիւնները պետութեան կողմից միշտ որակուել են հայերի դրդում, միշտ մատնանշուել է դրանցում հայկական մասնակցութիւնը, եթէ մի վատ բան է եղել՝ հայկական հետք են փնտռել: Պետութեան այդ մօտեցումը կայուն հասարակական կարծիք է ձեւաւորել: Դա*

պատճառներից մէկն է, որ մարդիկ ջանացել են խոր թաղել իրենց հայկական արմատները, եւ այսօր իմ կարծիքով շատերը նոյնիսկ այդ մասին ուղղակի չգիտեն:... Քրդերն (նկատի ունի քրդացած կամ քուրդ ներկայացող հայերին եւ նրանց ժառագներին - Հ.Խ.) *աւելի շատ են պատմում, քան թուրքերը* (նկատի ունի թրքացած կամ թուրք ներկայացող հայերին եւ նրանց ժառագներին - Հ.Խ.): *Թուրքերն առհասարակ չեն սիրում խօսել իրենց հայկական ծագման մասին»*՝ պատմում էր հայ տատ ունեցած դպրոցի մի ուսուցիչ 2012ին[53]:

Առնուազն Արեւելեան Նահագներում՝ քրդերի եւ ալեւիների բնակութեան տարածքներում, թուրք համարուելու համար թուրքերէն պիտի խօսէին, պաշտօնեայ կամ զինուորական պիտի լինէին, հարուստ պիտի լինէին, ինչը քրդախօս-զազախօս այդ տարածքներում հնարաւոր էր Ցեղասպանութեան տարիներին հայկական գոյքը մեծ քանակութեամբ իւրացրած լինելու եւ իշխանութիւնների կամքով բռնութիւնները շարունակելու պայմաններում: Հայերն այստեղ նոյնիսկ շատ ցանկանալու դէպքում պարզապէս չէին կարող «թրքանալ»: Թուրքեր այստեղ պարզապէս համարեա չկային, եթէ չհաշուենք պաշտօնեաներին, զինուորականութեանն ու ոստիկանութեանը: Թերեւս նաեւ՝ Բալկաններից տեղափոխած եւ հայերից դատարկուած գիւղերում բնակեցրած թուրքերին: Վերջիններս, սակայն, դեռ չէին յարմարուել տեղանքին, աւելին՝ հենց նրանց դեռ պէտք էր «թրքացնել»: Քրդերի համար անգամ այստեղ «թրքանալ»ը դժուար էր. «*Իմ սովորած նախակրթարանում եւ միջնակարգ դպրոցում սպաների երեխաներ կային, սակայն նրանց հետ չկարողացանք ընդհանրապէս ընկերանալ, նրանք մեզ «վերեւից» էին նայում: Նրանք «ամէնախելացին» եւ «ամէնաշխատասէրն» էին, բացի դրանից՝ թուրք էին: Նրանց անունը Թիւրքայ, Օսման կամ էլ Ալփասլան էր: Իսկ մենք Ֆադիմէ, Ալի, Ջաֆէր, Հասան կամ էլ Հիւսէյին անուններով երեխաներ էինք, աղքատ եւ քուրդ էինք... Շատ չանցած հասկացայ, որ ինչ էլ որ անենք, հնարաւոր չէ, որ լինենք նրանց նման, ում անունը Ալփասլան է, իսկ լեզուն թուրքերէն է*»[54]: Բացարձակ հնազանդութիւնն այս մարդկանց վիճակը չէր թեթեւացնում, իսկ ով չէր կարողանում կամ չէր ուզում «թուրք» կամ «նրանց նման» դառնալ, համարւում էր յեղափոխական կամ ձախակողմեան: Ինքնութեան իրաւունքը

Թուրքիայում քաղաքական իրաւունք էր, եւ գիտակցէին մարդիկ այդ, թէ չգիտակցէին՝ ինքնութեամբ տարբերուելը կամ ինքնութեամբ հետաքրքրուելը քաղաքական անհնազանդութիւն էր: Մեծ հաշուով քաղաքական ա՛յդ անհնազանդութեան պատճառով պատժուեցին դերսիմցիները:

ԴԵՐՍԻՄ. 1937-38Ի ՋԱՐԴԵՐԸ

Հայերի Ցեղասպանութիւնից յետոյ Թուրքիայում մասնաւոր դաժանութեամբ աչքի ընկնող ջարդը Դերսիմում եղաւ՝ 1937-38ին: Քանի որ Դերսիմի ջարդերի մասին գրող հեղինակները սովորաբար այդ ջարդերի «հայկական բաղադրիչին» չեն անդրադառնում, հարկ կայ մի փոքր մանրամասնել այն: Դերսիմի բնակչութեան ջարդը հայկական եւ քրդա-ալեւիական ժողովրդական ընկալումներում երկու բացատրութիւն ունի՝ պատժել Ցեղասպանութեան շրջանում փախչող հայերին օգնած Դերսիմի ալեւիներին, եւ՝ վերջնականապէս ոչնչացնել Դերսիմում դեռեւս գոյատեւող հայերի մնացորդներին: Հասկանալի է, որ իշխանութիւնների գլխաւոր ծրագիրը ըմբոստ Դերսիմի կիսանկախ վիճակը վերացնելն էր: Ժողովրդական սոյն պատկերացումները սնւում են այն տեղեկութիւններից, որ դեռեւս 1936ին, իշխանութիւնների հետ համաձայնութիւն էր ձեռք բերուել, որ Դերսիմի ըմբոստ աշիրէթապետերը վերջնականապէս կ'ենթարկուեն կենտրոնական իշխանութիւններին, եթէ վերջիններս որոշ ներդրումներ անեն Դերսիմում՝ ճանապարհները սարքեն, դպրոցներ եւ հիւանդանոցներ բացեն եւն.: Սակայն ըստ լուրերի, իշխանութիւնները նախապէս տեղեկութիւններ էին հաւաքել Դերսիմում ապրող հայերի բնակավայրերի մասին, ցուցակներ կազմել... յետոյ էլ իսկապէս առաջին հերթին հայերին են վերացրել:

Դերսիմում 2011ի իմ դաշտային աշխատանքներին մեծապէս օգնած Մեթին Կահրամանը պատմում էր. «*Դեմանան աշիրէթը դեռ 1915ին դիմադրում էր հայերի կոտորածների դէմ: [19]15ին Դեմանան աշիրէթն այստեղից մինչեւ Կարս ճանապարհ՝ միջանցք էր բացել, [նրանք] այս կիրճի երկու կողմից զէնքով պաշտպանում էին, որ փրկուած հայերը կարողանան փախչել-գնալ, Կարս հասնել: Հազարաւոր մարդկանցից ընդամէնը հարիւր ընտանիք է մնացել, որոնք կարողացել են Կարս հասնել: [19]15ին հայերին*

օգնած լինելու պատճառով Դեմանաններին շատ են ճնշել, [հազար իննհարիւր] երեսնական թուականներին նրանց անընդհատ հետապնդել են, շատերին են սպանել զինուորականները: [19]15ին հայերին օգնողներն ամենաշատը այս տարածքի ալեւիներն են եղել: Բայց [19]37-38 թուին ինչ որ պատահեց մեզ հետ, մենք համարում ենք, որ մեզնից բացի նաեւ հայերի աւելի փոքր չափի ցեղասպանութիւն եղաւ, որովհետեւ բոլորիս էին հետապնդում, բայց հայերին կրկին յատուկ հետապնդում եւ սպանում էին»[55]: Առհասարակ, Դերսիմի ջարդերն սկսուել են դեռեւս կանգուն մնացած հայկական վանքի՝ Հալուորի Ս. Կարապետի, պայթեցումով. այն գտնւում էր Դեմանան աշիրէթի տարածքում: Դեմանանների մասին մինչեւ այսօր պատմում են, որ նրանց նախնիները վաղուց ալեւիացած հայեր են եղել:

Դերսիմում դեռեւս տասնեակ հայկական գիւղեր էին մնացել, որոնց բնակչութիւնը պահպանել էր քրիստոնէութիւնն ու հայկական ինքնութիւնը: Կային, անշուշտ, նաեւ բազմաթիւ ալեւիացածներ: Հայկական գիւղերի բնակիչները բնաջնջուել են առանձնակի դաժանութեամբ: Այս գործողութիւնները մարդկանց համոզել են, որ ներդրումների փոխարէն իշխանութիւնները գերադասել են պատժել եւ պարզապէս զօրք մտցնելով՝ դաժանօրէն կոտորել բնակչութեանը, կենդանի մնացածներից շատերին էլ՝ աքսորել: Յիրաւի, սեփական ինքնութիւնը պաշտպանելու Դերսիմի ալեւի բնակչութեան յամառ կամքը ընկերա-մշակութային միջոցներով կոտրելը չափազանց երկար կը տեւէր: Արդէն հարիւր տարի այդ մարդիկ զէնքով էին պաշտպանում ինքնութեան իրենց իրաւունքը: Դերսիմի Կըզըլքիլիսէ քաղաքում ապրող, ալեւի-հայ Ա.Թ.ն 2011ին պատմում էր. «*Իմ խոր համոզմունքով մենք բոլորս էլ այստեղ՝ Դերսիմում, եւ բոլոր ճնշուածները Թուրքիայում նոյնն ենք՝ «ճնշուածներ»: Ուրեմն ինչու՞ որպէս հայ ինձ ճնշուած զգամ, եթէ դրանով պիտի տարբերուեմ Դերսիմի ընդհանուր բնակչութիւնից եւ դրանով պիտի զատուեմ: Մենք այստեղ դերսիմցի ենք եւ սոցիալիստ: Սա է մեր ինքնութիւնը: Ինչ վերաբերում է Դերսիմի հայութեանը, այստեղ համարեա մարդ չէք գտնի, որ հայկական արիւն չունենայ: Մենք իրականում մի ընդհանրութիւն ենք, ծագումով՝ հայ-ալեւիական, պետութեան կողմից ճնշուած եւ դրա դէմ պայքարող: Ժամանակին իմ պապերը պայքարել են որպէս*

հայեր: Մեր տոհմը մինչեւ [19]38 հայութիւնը պահպանել էր, եւ [19]38ին հետապնդուել է հենց հայ լինելու համար: Մերոնք Կաղնուտ գիւղից էին: Կաղնուտում բոլորն էլ հայեր են եղել: Ամբողջ Դերսիմն այդ մասին գիտի: Նոյնիսկ Կաղնուտի ալեւիները աւելի վաղ ալեւիացած հայեր են եղել: Մերոնք կռուել են: Մեր գիւղը շատ յայտնի է իր դիմադրութեամբ: Մեր տոհմը [19]38ին լրիւ սպանուել է, 99 տոկոսով. միակ մարդը, ով մնացել է՝ հայրս է: Հայրս փոքր երեխայ է եղել, իրեն թաքցրել են: Հայրս տեսել է, թէ ոնց իր հօրեղբայրը, հայրն ու մայրը մի ամբողջ օր իրենց տունը կարողացել են պաշտպանել զինուորներից: Պաշտպանել են մինչեւ փամփուշտները լրիւ վերջացել են. եկել գրաւել են այդ տունը, բոլորին սպանել են: Վառել են: Այդ տունը լրիւ կրակի մէջ է եղել, լրիւ, լրիւ... Կաղնուտում մնացած հայերը ալեւիացել են [19]38ից յետոյ: Դրանից յետոյ հայրս մի կերպ մեծացել է: Ես մեր տոհմի ողջ պատմութիւնը, ապուպապերիցս սկսած, գրի եմ առել: Հայրս պատմել է, ես գրել եմ: Ուրիշներին էլ եմ հարցուփորձ արել»[56]:

Թունջելիում ապրող Ի.Օ.ն 2011ին պատմում էր. «*...մենք Վարդենիկ գիւղից ենք, այսինքն հայրս էր վարդենիկցի, բայց ես էլ եմ ծնուել Վարդենիկում: 1994ին Վարդենիկն աւերել են զինուորները*[57] *եւ այնուհետեւ արգելել են այնտեղ ապրել: Ես հիմա Թունջելիում եմ ապրում: Վարդենիկը մեծ գիւղ էր: Բոլորը հայեր էին, ալեւի հայեր: Մենք Հայդարաններից*[58] *ենք, բայց չգիտեմ երբ եւ ինչպէս ենք Հայդարան դարձել, որովհետեւ առաջ, երբ մեր ծնողները դեռ հայ էին, իրենք Միրաքեաններից*[59] *էին: ...Ես միայն գիտեմ, որ մեր պապերը Միրաքներից էին, յետոյ դարձել են Հայդարան: Գուցէ 1938ից յետոյ, գուցէ եւ 1915ից յետոյ ... Մեր գիւղ՝ Վարդենիկ, 1915ին չեն մտել: Մեր գիւղը շատ բարձր է, լեռներում, բացի դա էլ շատ յայտնի կռուողներ էին: Ընդհանրապէս Միրաքեանները շատ յայտնի կռուողներ էին: Չգիտեմ այդ պատճառով, թէ ուրիշ մի բանի պատճառով, բայց 1915ին մեր գիւղ չեն մտել: Մեր գիւղացիները երեւի նոյնիսկ չգիտէին, որ հայերին կոտորում են: Այստեղ, Դերսիմում, շատ հայի գիւղեր էին մնացել: ...[19]38ին, երբ որ դերսիմցիներին էին կոտորում, այն ժամանակ Դերսիմի հայերին յատուկ ջարդեցին: [19]38ին հօրս հայրն էլ, մայրն էլ սպանուել են: [19]38 թուին բոլոր վարդենիկցիներին քոջաքոչ են տանում, իբր թէ աքսորում են, բայց*

տանում են Քոջաքոչ, այնտեղ Զուր Դերէսի անունով մի տեղ կայ, այդտեղ բոլորին սպանում են: [19]38 թուին: Բոլորին սպանում են, նոյնիսկ երկու տարեկան երեխային են սպանում: Այդտեղ սպանուել են նաեւ պապս ու տատս: Վարդենիկը բոլորովին դատարկուել է, բոլորին ոչնչացրել են: Միքանի կին, իրենց երեխաների հետ հասցրել են գնալ քարայրները, թաքնուել: Միքանի տարի ապրել են քարանձաւներում: Յետոյ, 1945-47ին այդ փրկուածները, կամ իմ հօր նման միքանի երեխայ, մի քիչ մեծանալով՝ ետ են գալիս Վարդենիկ, երեւի 30 հոգի: Հայրս ութ տարեկան է եղել: Իրենց ընտանիքից միայն նա է փրկուել, լեռներում՝ մօրաքրոջ մօտ: Գալիս են, իրենց տները մի քիչ կարգի են բերում, սկսում են նորից Վարդենիկում ապրել: Նախկինում շատ մեծ գիւղ է եղել, բայց յետոյ շատ քիչ մարդ էր մնացել: Արդէն ով որ հայերից փրկուել էր [19]38ին, բոլորն էլ ալեւի դարձան: Հայրս Վարդենիկ վերադառնալուց յետոյ է ալեւի դարձել, դա արդէն [19]40ական թուականներից յետոյ էր: Եկան գիւղ, բայց [19]80ական թուականներին նորից պետութիւնը ստիպեց դատարկել գիւղը: Մեր գիւղացիներին, այսինքն Դերսիմի բոլոր լեռնային գիւղերի բնակիչներին կասկածում էին PKKի հետ կապեր ունենալու մէջ, եւ որոշել էին այդ բոլոր գիւղերը դատարկել, գիւղերն էլ վերացնել[60]: [19]90ականների սկզբներին դեռ միքանի ընտանիք կար, դուրս չէին գալիս: Գնալու տեղ չունէին, դուրս չէին գալիս: Ոչ մի կերպ չէին կարողանում ստիպել այդ մարդկանց դուրս գալ: [19]93ին այլեւս չեն նայել՝ կին է, երեխայ է, ինչ է, դրանց բոլորին ոչնչացրել են: Այնպէս են ոչնչացրել, որ դրանց դիակներն անգամ չէին կարողանում գտնել: Դրանից յետոյ մինչեւ այսօր Վարդենիկ գնալն արգելուած է: Մինչեւ [19]38ի ջարդերը հայեր շատ կային՝ Միրիք, Մազդրա, Հէդդորուք: Դրանից բացի այս Դեմանանների[61] կողմը՝ Բորն, Գինի, դրանք [19]38ին ամբողջութեամբ կոտորուեցին: Դրանից յետոյ կային Արեքի[ն], Փաքուրդիգէ[ն], Բառըխ[ը], Հալուորը... Հաքիսը... Հաքիսում եօթ եկեղեցի կար, հիմա ոչ մէկը չկայ: Փաթարը, վանքի կողմերը (նկատի ունի Հալուորի Ս. Կարապետ Վանքը - Հ.Խ.)՝ *Ենիս[ը], Իքսորը, Մարքասուրը (գիւղերի անունները թուարկելիս պատմողը մերթ հին, մերթ նոր անուններն է օգտագործում - Հ.Խ.)... Բոլորին էլ ասել են, թէ իբր աքսորում են, բայց բոլորին էլ ոչնչացրել են: Այստեղ շատ էին վանքերը, եկեղեցիները... բոլորը*

ոչնչացրել են... Միայն թէ 1938ը 1915ի նման չէր, 1938ից առաջ կառավարութեան լրտեսներ կային, դրանք հաշուետուութիւններ, կասկածելի մարդկանց ու գիւղերի ցուցակներ էին կազմում: Այդ ցուցակներով էլ յետոյ կոտորեցին: Բոլոր հայերը կասկածելիների մէջ էին: ... Հարուստ մարդիկ այդ լրտեսներին փող էին տալիս, եւ իրենց անունը ցուցակներում չէին գրում»[62]:

«Հարուստ մարդիկ», ում անունները սպանուողների ցուցակներում չի յայտնուել, աքսորուել են: *«[19]37 թուականին ստիպել են եւ ամէն մէկին տարբեր տեղեր են ուղարկել, օրինակ իմ մօր ընտանիքը՝ Քութահիա, հօրս ընտանիքը՝ Անթալիա: Մենք գնում էինք որպէս դերսիմցիներ, ո՛չ որպէս հայեր: [19]38ից յետոյ Դերսիմը փոխուեց, քրդացաւ: Հենց մեր ժամանակ քրդացաւ: Տաս տարի յետոյ վերադարձել են, եկել են նոյն տեղը: Մերոնք ետ են եկել, որպէսզի կարողանան մեր հոգեւոր կեանքը հոգան, որովհետեւ ճիշտ է, բոլոր եկեղեցիները ոչնչացուել էին, բայց այդ եկեղեցիների քարերը, տեղերը մնացել էին: Եթէ մնացել էին, ուրեմն ամէն մի տուն կարող էր դառնալ եկեղեցի, եթէ քարերի սիմուոլիկան կար: Ոչ բոլորը ետ վերադարձան. կարծեմ մեծ մասը ետ չեն եկել, բայց մեր ազգականները բոլորը եկել են, Ասոյեանները եկան: Բայց մնացածները ոնց որ (կարծես թէ - Հ. Խ.) մնացել են: Պապիս որդիները՝ Պօղոսն ու Սարգիսը եկան: Իմ պապի անունը Սարգիս էր: Պօղոսի եւ Սարգիսի զաւակներն այստեղ են, Դերսիմում: Իմ հօր գերեզմանը սարքելիս «Սարգիսի որդի Եուսուֆ» գրեցինք գերեզմանի վրայ: ...Մայրս Միրաքեաններից էր, հայրս՝ Ասոյեաններից»*[63]:

Դերսիմի 1937-38ի ջարդերն առիթ դարձան ողջ Թուրքիայի գաւառներում դեռեւս ապրելու տեղ փնտռող կամ արդէն քիչ թէ շատ հաստատուած հայերի մնացորդներին եւս մէկ անգամ «որսալու»՝ սպանելու կամ տեղահանելու: *«Մայրս բնիկ խարբերդցի էր, հայրս՝ Թունջելիից, դերսիմցի,*- պատմում է Էլազիկում ապրող Եուսուֆ Այազը,- *երկուսն էլ հայ էին, երկուսն էլ՝ որբացած: [19]15ից յետոյ [Խարբերդ] քաղաքում հայեր շատ քիչ էին մնացել: Իհարկէ իրենց հայ լինելու մասին լռում էին: Յետոյ էլ երեսնականներին կենդանի մնացած հայերի մեծ մասը գնացին: Թուրքական իշխանութիւնները գնացողներին հեշտ թոյլ էին տալիս գնալ, միայն թէ այնպիսի անձնագիր էին տալիս, որ այլեւս չկարողանան վերադառնալ: Հիմա մտածում եմ, որ հաւանաբար*

նրանց գնալը ձեռնտու էր, քանի որ հայերի թողած սեփականութիւնը ուզում էին փոխել: Շատերի սեփականութիւնը այդպէս վերցրին:... Մեր ընտանիքին - դերսիմցիների նման - [19]38ին այստեղից աքսորել են: Հօրեղբօրս էլ այստեղ գնդակահարել են: [19]38ին շատ հայերի են աքսորել եւ սպանել: [19]38ից յետոյ մենք տաս տարի աքսորավայրում ենք եղել: Ես չկարողացայ ուսում առնել, հայերէն էլ չսովորեցի: Յետոյ պետութիւնը որոշեց, որ կարող ենք աքսորից վերադառնալ: Վերադառնալուց յետոյ հաստատուեցինք Էլազիկում: Այն ժամանակ Խարբերդն արդէն աւերւում էր, իսկ Էլազիկը՝ ածում:... Մենք արդէն թուրք էինք կոչւում, անուններս թուրքական էին: Ենթադրում եմ, որ վարչական մարմինները գիտէին մեր հայ լինելը կամ, գոնէ, հայկական ծագումը, բայց մենք չէինք խօսում այդ մասին, իրենք էլ չէին յիշեցնում:... Ոմանց հայ լինելը յայտնի էր դառնում մահանալիս: Չգիտեմ ինչպէս էր ստացուել, բայց հայերն առանձին էին թաղւում: Չգիտեմ մոլլա՞ն չէր թողնում իսլամական գերեզմանոցում թաղել, թէ՞ հայերը չէին ուզում, բայց այնպէս էր, որ մահացող հայերին առանձին մի տեղ էին թաղում: Էստեղ մի հարուստ հայ կար: Իսլամացած էր, բայց գիտէին հայ լինելը: Իր հողերից մի փոքր կտոր յատկացրել էր գերեզմանների համար: Փող էլ չէր վերցնում: Մօտ երեսուն-քառասուն տարի թաղումներն այդտեղ էին անում, բայց յետոյ արգելեցին: Տարեցներից շատերը գնում էին մեծ քաղաքներում հաստատուած իրենց զաւակների մօտ, որպէսզի այնտեղ մահանան: Իմ ծնողներն էլ գնացին Ստամբուլում ապրող եղբօրս մօտ: Այնտեղ հայկական գերեզմանատուն կար: Եղբայրս Ստամբուլում որպէս հայ էր ապրում»[64]:

«1937-38 թիւերուն, երբ որ Դերսիմի քուրդերուն փրոպլէմը եղաւ, ջարդը եղաւ, ադ ջարդին ահագին հայ գոհեր ալ եղան: Ուրիշ տեղերը չէ գիտեմ, Սասունի շրջաններում այո: Աս [Սասունի] շրջաններէն ընտանիքներ զոռով տեղափոխուեցան Գոնիա, Դեսքիշէի (թերեւս՝ Էսքիշեհիր – Հ.Խ.), Իզմիր: Սասունէն գացին եւ տասը տարի հոն մնացին: Երբ որ Սասունէն գացին, բան մը թուրքերէն չէին գիտնար, երբ որ վերադարձան, 1945-47 թիւերուն թրքախօս էին: Պատերազմէն յետոյ անմիջապէս կանոն մը հանեցին, որ անոնք հոս կրնան մնալ, բայց եթէ ուզենան իրենց տեղերը [վերադառնալ], միայն այն պայմանով, որ իր հին գիտը

չերթան»,- պատմում են Բաթմանի Բիմէր գիւղում մինչեւ 1960ականները ապրած հայերը[65]:

1954ին Սասունում ծնուած մէկ այլ հայ, որ այժմ Ֆրանսիայում է ապրում, պատմում է. *«Մեր շրջանին գիւղերէն իմ ծնողների առաջին գիւղը եղաւ, այսինքն՝ իմ հայրիկիս, մայրիկիս առաջին գիւղը եղաւ Կորըխ գիւղ (պատմողը նկատի ունի, որ Ցեղասպանութիւնից յետոյ մինչեւ Կորըխ գիւղում հաստատուելը իր հայրն ու մայրը որեւէ հաստատուն բնակավայր չունէին եւ իրենց ծնողների հետ միշտ տեղից տեղ էին թափառում՝ խուսափելով իշխանութիւններից – Հ.Խ.): Խորխէ ալ կ'ըսեն: Քիչ մարդ կ'ապրէր գիւղին մէջ: 1948-49ին ատկէ տաս տարի առաջ աքսորուած հայերն այլեւս ազատ էին, ով ուզենար՝ կրնար վերադառնալ, միայն իր ծնած գիւղը չի կրնայ վերադառնալ: Ասիկա այն հայերն էին, որ Դերսիմի ալաւուներու ջարդերի շրջանին նոյնպէս աքսորուեցան յատկացուած տեղեր: Ասոնք կ'ընտրէին, ուր կ'ուզեն ապրել, միայն իրենց ծննդավայրը չըլլար: Եւ որոշներ մեր գիւղը՝ Կորըխ եկան... Անոնց չի ձգեցին իրենց հին գիւղերը էրթալ, [չնայած] գիւղերը բոլորը պարապ էին, ջարդուած, հայութենէն պարպուած, այրուած գիւղերը ահագին կային: [Բայց չձգեցին], ըսին որ աս շրջանը էրթան: Որոշ թիւով հայերու թոյլ տուեցին Խորխէ մնալու, բայց Աւսկիէ, օրինակ, թոյլ չի տուեցին: Աւսկիէ գիւղը, որ այսօրուան Բեշիրէ իստադիոնին (մարզադաշտ – Հ.Խ.) ճիշտ միացած գիւղն է, որ քաղաքի մաս մը դարձաւ այլեւս: Բայց հին Աւսկիէ բոլոր հայ գիւղ մըն էր եւ թուրք գիւնուորը այրեց գիւղը: Չի մնաց հայը: Ամէն բան այրեցին: Մեր գիւղին մէջ տուն մը կար, գիտեմ որ ան ատեն Աւսկիէէն այրած, մնացած գերանները բերին իրանց տունը շինեցին Խորխէ գիւղում: Ադ մարդոց եթէ թոյլ տային Աւսկիէ մնալու, հոնտեղ տուն շինելու՝ աւելի դիւրին պիտի ըլլար: Բայց ոչ, Խորխէ միայն թոյլատրեցին... Հիմա կը խորհիմ, որ եթէ կառավարութեանը դիմում ընէին, հաւանաբար ուրախութեամբ թոյլ պիտի տային, որ հայերը բոլորովին ձգէին երկիրը եւ էրթային: Աւսկիէ եւ Հայաստան տարբեր բաներ էին կառավարութեան համար: Հայաստանը տեղ մըն էր Թուրքիայէն դուրս, կառավարութեան մտահոգութիւնն ալ ան էր, որպէսզի հայերը Թուրքիոյ ներսում միասին չըլլային, հոծ չըլլային, եւ իրենց բնիկ տարածքներում չըլլային: Ատիկա հի՛մա ադպէս կը դատիմ: Իսկապէս էլ Սուրիա գնալը հեշտ էր, սահմանը հատելը*

դժուարութիւն չէր: Կը խորհիմ, որ աս ասպէս էր նաեւ, որպէսզի երկրէն հայերուն դուրս գալը դիւրացնեն: Բայց մեր մանկութեան ատենը աս միտքերը չիկային, գիտէինք միայն, որ նոյնիսկ շրջանէն դուրս էրթալու թոյլտուութիւն պիտի առնուէր»[66]:

«*Էլազիկում մայրիկիս ասում էին՝ այստեղ չի կարելի գնալ, այնտեղ չի կարելի գնալ: Տաս տարի ինքնութեան վկայական չեն տուել, որպէսզի յանկարծ որեւէ տեղ չգնայ, չտեղափոխուի այսինքն: Որովհետեւ այն տարիներին դեռ միմեանց փնտռում էին, երբեմն գտնում էին: Դա լաւ չէր համարւում, պետութիւնը վախ ունէր դրանից: Քալանիկ գիւղից մէկը, մի վարպետ [19]40ականներին գտել էր իր քրոջը... Այդ լուրերը տարածւում էին, թաքուն միմեանց պատմում էին....*»[67]:

Օրինակներ շատ կարելի է բերել, բայց հանգամանքը նոյնն է. գաւառներում իրենց գոյութիւնն աննկատ դարձնելու, իրենց հասանելի բոլոր միջոցներն օգտագործող հայերի մնացորդները վերահսկողութեան տակ էին եւ վարչական մարմինները բոլոր առիթներն օգտագործում էին նրանց վերացնելու, երկրից դուրս մղելու, առնուազն՝ ցրելու համար: Այդ մարդկանցից պահանջում էին թուրք դառնալ, բայց ամէն ինչ արւում էր նրանց հայութիւնը կամ հայկական ծագումը յիշեցնելու, մշտապէս թիրախաւորելու, թրքացումն անհնար դարձնելու համար: Մինչեւ այսօր եթէ ծագումով հայերը չեն շտապում որեւէ հանրային միջավայրում իրենց հայկականութեան մասին տեղեկացնել, արդէն կասկածի առիթ է՝ «*արդեօք ի՞նչու այս հայը թաքցրեց: Անպայման թաքցնելու առիթ կը փնտռուի: Մենք արդէն աստեղը բնաւ չենք թաքնուեր, եթէ թաքնուենք, ասի աւելի վատ է. օրինակի համար եթէ մէկ տեղ բազմութիւն ըլլայ, անպայման հայ ըլլալնիս կ'ըսենք: Հեմէ արդէն թուրքերուն մէջ ասանկ անեկդոտ մըն ալ կայ՝ «մէկուն հայ ըլլալուն եթէ հասկնաս, արդէն ինքը կ'ըսէ» կ'ըսեն: Անընդհատ դու կը յիշեսկոր, որ հայ ես: Չյիշած բաներն ալ կը յիշեցնեն քեզի*»[68]:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՈՂ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ. «*ՍԱ ՀԱՅԻ ԱՐՄԱՏ Է*»

Այսօր Թուրքիայում շատ է խօսւում վերականգնուող ինքնութեան մասին: Այս չափազանց տարողունակ թեման բազմաշերտ է: Ինքնութեամբ, մասնաւորապէս՝ սեփական ինքնութեան ակունքներով հետաքրքրուելը, Թուրքական

Հանրապետութիւնում համարուել եւ ըստ էութեան համարւում է «քաղաքական քայլ», «քաղաքականութիւն»: Անձնանուն փոխե՛լն անգամ համարւում է քաղաքական քայլ: 1980 Սեպտեմբերի 12ին տեղի ունեցած ռազմական յեղաշրջումից միքանի շաբաթ առաջ բարձրագոյն հրամանատարական կազմի համար կազմուած գաղտնի զեկոյցում թուրքական բանակի գլխաւոր շտաբի այն ժամանակուայ ղեկավար, յետագայում երկրի նախագահ զօրավար Քենան Էւրէնը գրում է. «*1967 թուականից իվեր Արեւելեան Անատոլիայում բնակուող հայերը սկսել են տեղափոխուել Ստամբուլ: Անապահով հայ ընտանիքների երեխաները սկսում են ուսումնառութիւնը Ստամբուլի հայկական երկու դպրոցներում՝ «Արամեան-Օյունջեան» եւ «Անաղարտ Յղութեան» վարժարաններում: Ստեղծուած իրավիճակում Պոլսի Հայոց Պատրիարքարանը օգտւում է իրաւդրութիւնից, մասնաւորաբար, համոզելով երեխաներին կրկին հայկական անուններն ընդունել*»[69]: Էւրէնը նոյն զեկուցագրում թուրք զինուորականներին շարունակում է համոզել, որ «*Օսմանեան Կայսրութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի սկզբում յայտնուեց բաւական ծանր կացութեան մէջ: Պատճառը հայերի դաւաճանութիւնն էր եւ նրանց կողմից վարուող շարունակական յանցաւոր գործունէութիւնը...*»: Հայերը, մասնաւորապէս Ստամբուլում ապրողերը տեղեակ էին Էւրէնի տրամադրութիւններին եւ, իհարկէ, կրկնակի վախեցած. «*1982ին հրաման ելաւ, որ քրիստոնեաները կալուածք չեն կրնար վաճառել... իմին խանութս այրեցաւ 1982ին: Մենք գացինք-եկանք, եւ մարդիկ ըսին, որ քիչ մը կեցէք, պիտի էլլայ (վերանայ – Հ.Խ.) աս օրէնքը, պիտի շտկուի...: Իրաւ վեց-եօթ ամսէն շտկուեցաւ, բայց շատ վախեցանք... Ամէն մարդ կը սպանէին, կ'ազատէին, կը հայհոյէին» (այսինքն՝ հայերի նկատմամբ անօրինութիւնները շատ էին - Հ.Խ.): «Էրմենի քէօփեկլար» (շանորդի հայեր - Հ.Խ.) կը գրէին թերթին վրայ. հիմա՝ կողքի դրացիին ո՞ր երեսով պիտի խօսիս, ամէնս միշտ թաքնուած կ'ապրէինք... դուրս կ'ելլէինք, բայց առանց խօսելու, բան մը չէինք խօսեր. շատ մասնաւոր տեսակ մը ունէինք ապրելու համար. չեմ կրնարկոր յստակ ըսել սահմանները, բայց կարգ մը դժուար ապրում ունէինք... հիմա արդէն վարժուած են անանկ բաներու. մենք՝ հայերը մի քիչ տարբեր ենք. ամէն տեսակ նեղութիւններ տեսած կանք, ամէն տեսակի կը համակերպուինք*»[70]: Թուրք

վերլուծաբանների կարծիքով՝ զօրավար Էւրէնի գլխաւորած կառավարութեան մեծագոյն հիմնահարցերից մէկը Հայկական Հարցն էր: *Թերջումանը* 1988 Յունիսի 28ի համարում «Մեծագոյն Հոգսը՝ Հայը» խորագրով յօդուածում հաստատելով Հայկական Հարցի առաջնային նշանակութիւնը, ակնարկում է այն կարեւոր իրողութիւնը, թէ՝ «*Նախագահ Էւրէնը ութ տարուց իվեր զբաղւում է այս հարցով*»[71]:

Այդ տարիներին է վերաբերում ձախ հայեացքների պատճառով բանտարկուածներից մէկի յիշողութիւնը. «*Ինձ հետ մի դէպք էլ բանտում տեղի ունեցաւ, որը ցոյց տուեց, թէ ի՛նչ ասել է հայ լինելու իրականութիւն: 1982 թուին իր կտտանքներով յայտնի զինուորական բանտերից Մետրիսի արտակարգ դրութեան բանտում էինք: ...Առաւօտեան եւ երեկոյեան մարդահամարի ժամանակ խցերը լցնելով՝ զինուորները մեզ սպանելու չափ ծեծում էին, մեզանից ոմանց ընտրելով՝ միջանցքում առանձնայատուկ կտտանքների էին ենթարկում: Կարծեմ ՀԱԳԲի[72] զինուորները թուրք դիւանագէտ էին սպանել: «Վրէժխնդրութիւնն» էլ բոլորիս «հայի ծնունդ» համարելով՝ մեր հանդէպ կատարածն էր լինելու...(գրողը նկատի ունի, որ բանտի վերակացուները իրենց կեղծ իսլամացած հայ կամ իսլամացած հայի զաւակ համարելով՝ կարող էին սովորականից աւելի դաժան վարուել - Հ.Խ): Այդ օրը մարդահամարի ժամանակ հերթապահ զինուորը դիտանցքը բացելով հարցրեց՝ այս խցում հայ կա՞յ: Չկար: Նոյն ձեւով հարցրեց նաեւ միւս խցերում: Այս ընթացքում նկատեցինք, որ մեր ընկերներից մէկը գունատուեց: Շատ էր վախեցել: Յուժ գաղտնի տեղեկութիւն յայտնելու նման շշուկով ասաց պատճառը՝ ես հայ եմ... Եթէ թլփատման ստուգում անցկացնէին, կը հասկանային: Ինչեւէ, նման նողկալի ստուգում չարեցին, եւ մարդահամարի ժամանակ «սովորական» ծեծ կերանք: Սակայն իմ այն ընկերոջ վիճակն ու այլայլուած դէմքը, աչքերի վախը մեխուել է գլխումս: Խնդիրն ամէնեւին էլ այդ կտտանքների ու ծեծի վախը չէր, այլ մի «վախ» էր, որը դժուար է բացատրել*»[73]: Հայ լինելու վախն էր, անշուշտ, որ շատ աւելի մեծ յանցանք էր, քան՝ ձախակողմեան լինելը: Յիրաւի, դժուար է հայ լինել մի երկրում, որտեղ բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը լիովին համոզուած է, որ, ինչպէս ցոյց են տալիս հասարակական հարցումները, երկրում առաւելապէս «ատելի ազգ» են համարում հայերը, իսկ

թուրք երեխաների 73 տոկոսը կարծում է, որ հայերը «վատ մարդիկ են»[74]:

Հայերի կողմից վերջին տաս տարիներին վերականգնուող ինքնութիւնների դէպքերը հանրային ուշադրութեան կենտրոնում են: Կազմակերպւում են գիտաժողովներ, փակ ու բաց քննարկումներ, հարցազրոյցներ, արւում են յայտարարութիւններ... Թերթերը շտապում են տեղեկացնել համարեա ամէն մի բարձրաձայնուող պարագայի մասին: Ինքնութիւնները վերականգնւում են գլխաւորապէս քրդական միջավայրերում իսլամացածների կողմից եւ գլխաւորապէս՝ Ստամբուլում: Գաւառներում այս երեւոյթը գործնականում չկայ: Իրականում այդ դէպքերը շատ աւելի քիչ են, քան դրանց շուրջ խօսակցութիւնները ու բարձրացուող աղմուկը: Անշուշտ վերաքրիստոնէացումը դժուար որոշում է: Այլեւայլ հանգամանքներից բացի կայ նաեւ «հայկական գործօնը»:

Ստամբուլում քրիստոնեայ հայերը շատ դժուարութեամբ են հաշտւում - երբեմն էլ չեն հաշտւում - վերաքրիստոնէացած հայերին իւրային համարելու գաղափարին եւ նրանք յայտնւում են թէ՛ մահմեդականների, թէ՛ հայերի համայնքների լուսանցքում: *Դէօնմէ*ներից նրանք վերարտադրւում են կրկնակի *դէօնմէի*. «*Հիմա սա էլ դէօնմէ է, դէօնմէի մի տեսակ է: Չէ՞ որ կրկին կրօնափոխուել է: Դէօնմէն միայն իսլամացած քրիստոնեան չէ: Իր հասարակական կեցութեամբ այդ մարդիկ, այսինքն՝ իսլամից քրիստոնեայ վերադարձածներն էլ դէօնմէ են: Ճիշտ է, նրանք այլեւս գաղտնի հայ չեն, բայց կրկին երկու համայնքներում էլ խորթ են: Եւ այդ տեսակ մարդիկ միայնակ են մնում: Ինչպէս իսլամացած դէօնմէները*»[75]: Անհամեմատ աւելի շատ եւ հեշտ են շարունակուող իսլամացումները, ինչի մասին առհասարակ համատարած լռութիւն է: «*Այնպէս չէ, որ դադարեց արդէն հայը մահմեդական դառնալ: Իմ մայրիկիս ընտանիքը, հայրը, մօրեղբայրս, զարմիկ-զարմուհիներս աւելի ուշ մահմեդացան: Երեսուն տարի առաջ մահմեդացան: Քիչ մը ազդեցութիւնէ, քիչ մը ճնշումներէ: Եւ նաեւ ներսի ճնշումներէ: Ուրիշ մահմեդացած հայեր կ'ըսէին, որ դուն ալ մահմեդական պէտք է ըլլաս: Անոնք ալ իրար կը քաշէն, ասանկ բան մը կ'ըլլակոր: Իմին մայրիկիս հայրիկին անունը Օհան էր, եւ երեսուն տարի առաջ դարձան [մահմեդական], մօտաւորապէս կ'ըսեմ, հայրս աւելի լաւ գիտէ,*

եղաւ Ռամազան անուն: Իր ինքնութեան թուղթը փոխեց, ընտանիք մը, մեծ ընտանիք մը մահմեդացաւ: Գիտեն անշուշտ որ հայ են, բայց ասիկա միայն ազգականներու հետ կը խօսին: Մեր մօտ «մենք հայ ենք» կ'ըսենկոր: Բայց դուրսը իրենց մէջը ի՞նչ կ'ըսենկոր... Մենք շատ կը խօսինքկոր մեր ազգականներուն հետ, կը վախնանկոր, բայց մենք կ'ըսենք որ, կը կարծէք որ ձեզի բնիկ մահմեդացած, ճերմակ թու՞րք կը նկատեն, ո՛չ... գիտենկոր, որ աս երկրի մէջ հայերը եւ թուրքերը ... դեռ թշնամի են, ասիկա ամէն ժողովուրդ, ամէն անհատ գիտէ այս երկրին մէջ: Հայ չըլլասնէ՝ մի փոքր աւելի պաշտպանուած կը զգաս»[76]:

1957ին Սասունի Նիճ գիւղում ծնուած, այժմ Ստամբուլում ապրող Եփրեմ Պաղը 2014ին ասում էր, որ Սասունի շատ հայեր վերջին տարիներին քրդացան[77]: Անձամբ մենք հանդիպել ենք դէպքերի, երբ շրջապատում մահմեդական համարուող եւ այդպիսին ներկայացող, բայց չթլփատուած տարեց կամ չափահաս տղամարդիկ գաղտնի, առանց մոլլայի իրենք իրենց թլփատել են, որպէսզի գաղտնիքը չբացայայտուի եւ ընտանիքի երիտասարդ անդամները չտուժեն: Իսկ որպէս քրիստոնեայ յայտնիներից շատերը գաւառներում շարունակում են իսլամանալ, եւ նրանք ոչ մի պայմանով չեն համաձայնւում խօսել այդ մասին: Չեն համաձայնւում այդ մասին խօսել նաեւ թրքացած հայերը: Որեւէ պայմանով նրանք չեն ուզում հայ բառի հետ կապուած իրենց անցեալի կամ ներկայի մասին խօսել: Իսկապէս, 2013ին Հոկտեմբերի 30-Նոյեմբերի 7 Ստամբուլում Բողազիջի Համալսարանում իսլամացած հայերի խնդիրներին նուիրուած գիտաժողովի ժամանակ կարդացուած ելոյթները նուիրուած էին գլխաւորապէս «իսլամացած տատի, պապի» դէպքերին, նրանց յետագայ *սոցիալականացման*, վերաքրիստոնէացման խնդիրներին, եւ ոչ մի ելոյթ՝ ընթացիկ իսլամացումների դէպքերի շուրջ: Ուշագրաւ է, որ համարեա ելոյթ չկար նաեւ իսլամացած-թրքացածների մասին. հիմնական խօսակցութիւնը իսլամացած-քրդացածների շուրջ էր: Վերաքրիստոնէացումների կամ ինքնութեան վերականգնումների մասին խօսակցութիւնը նոյնպէս այս միջավայրին է վերաբերում:

Ոչ ոք չի կարող ասել, թէ Թուրքիայում կամ արդէն Թուրքիայից հեռացած որքան մարդ կայ, որ բացարձակապէս չի կասկածում իր ծնողների «կենսաբանական» հայկական անցեալին: Թուրքիայում

ապրող շատերի մօտ է կարծրացել այն համոզմունքը որ հայերի նկատմամբ պետութեան թշնամանքը *«պատճառներից մէկն է, որ մարդիկ ջանացել են խոր թաղել իրենց հայկական արմատները, եւ այսօր իմ կարծիքով շատերը նոյնիսկ այդ մասին ոչինչ գիտեն: Որոշ մարդիկ էլ շատ ուշ, միայն վերջերս են յայտնաբերել իրենց անցեալի այդ դրուագները: Վերջերս, օրինակ, Անատոլիայի գիւղերից մէկից տղայոց եկած մի ուսանող նոր էր իմացել, որ իր պապը, հօր հայրը հայ է եղել՝ Յակոբ...»*[78]: Յայտնաբերելուց յետոյ էլ առաջինը հենց ծնողներն են դիմադրում այդ մասին մտածել, առաւել եւս՝ խօսել: Նրանց ընկերաբանական փորձը հաւատում է խիստ զգուշաւոր լինել, իշխանութիւններին եւ նոյնիսկ հասարակութեանը չվստահել: Այնքան բան է գոհարկուել մահմեդական համարուելու, առաւել եւս՝ հայկական ամբիոյր թաքցնելու, մոռացնելու համար, եւ այնքան հեշտ է ընկնել իշխանութեանը ատելի հայկական ցանկերի մէջ... Ստամբուլն այսպիսին է քրդական միջավայրում, որտեղ հիմա նոր նոր մարդիկ, եթէ մթնոլորտը վստահելի է, սկսում են այդ մասին խօսել: Սակայն նոյնիսկ այդ պայմաններում *«քրդերն ատելի շատ են խօսում* (նկատի ունի քրդացած կամ քուրդ ներկայացող հայերին եւ նրանց ժառանգներին - Հ.Խ.), *քան թուրքերը* (նկատի ունի թրքացած կամ թուրք ներկայացող հայերին եւ նրանց ժառանգներին - Հ.Խ.): *Թուրքերն առհասարակ չեն սիրում իրենց հայկական անցեալի մասին խօսել»*: Ստամբուլի Մասունք Արխունդ գիտից. այժմ Ստամբուլում ապրող եւ իսլամացածների հետ ջերմ բարեկամական յարաբերութիւններ ունեցող Աւետիք նկատում է, որ *«իսլամացածների մասին յայտնի են միայն քրդախօսները: Թրքացածների մասին չեն ասում: Եւ իրենք էլ իրենց յայտնի չեն անում: Շատ քիչերն են այդ մասին խօսում: Թրքախօս մուսուլման հայերը արդէն իրարու կը հանդիպին, մենք չենք գիտեր կա՛ն, թէ՛ ոչ: Ես որեւէ մէկը չեմ գիտեր [illegible] պետութիւնը գիտէ, որ սա հայի արմատ է»*

[illegible]

շատ է վախենում», կամ՝ *«ինձ զգուշացնում է, որ քաղաքական բաներ չանեմ»*:

Ստորեւ ներկայացուում է այդ զրոյցներից մէկից մի փոքրիկ քաղուածք: Զրուցակիցս Ստամբուլից է, որտեղ նրա ծնողները հաստատուել են 1960ականներին, իսկ ինքը մօտ 40 տարեկան է: Հայրը բժիշկ է, զրուցակիցս իրաւաբանի կրթութիւն ունի: Ընտանիքը քրդական միջավայրից է դուրս եկել եւ տղային զարմացրել է այն, որ իրենց ընտանիքում քրդերէն չեն խօսում, քրդերի հետ չեն շփուում եւ նոյնիսկ արգելում են քրդական խնդիրներով հետաքրքրուել: Յետոյ պարզել է, որ ծնողները հայկական ծագում ունեն: Սա շատ մեծ յայտնութիւն է եղել, քանի որ ընտանիքում երբեք հայ բառը չի հնչել, որեւէ հայ ծանօթ չեն ունեցել, հայերի մասին ոչինչ չեն իմացել...[81]

Մեր տանը միայն թուրքերէն էին խօսում: Ճիշտ է, այնտեղ շատ քրդեր էին գալիս, քրդերէն էին խօսում, բայց միշտ մի տեսակ դատապարտումով էին խօսում քրդերի, նրանց գործերի մասին: Նրանք բոլորը բիզնէսներ ունեն, օրինակ՝ շէնքեր են շինում, շրջապատ ունեն, գործ են անում եւ նոյնիսկ չեն ուզում շրջապատում հասկանան, որ իրենք քուրդ են: Ոչ թէ հայ, այլ քուրդ լինել էլ են վախենում: Նրանք քրդերէն իրար մէջ խօսում են, բայց դրսում այդպիսի բան չեն անում: Օրինակ՝ քրդերի դէմ են խօսում, ասում են ինչի էք քրդերէն շարժւում: Ես կարծում էի՝ մեր ընտանիքն էլ քուրդ է, բայց երբ ծնողներիս հարցեր էի տալիս, կա՛մ չէին խօսում, կա՛մ ասում էին՝ ի՞նչու ես հետաքրքրւում, քո ի՞նչին է պէտք: Մի անգամ միայն, տաս տարեկան էի, մայրիկս ասել է «մենք թուրք չենք», բայց չի ասել մենք ի՞նչ ենք: Մէկ՝ ալեւի էին ասում, մէկ՝ քուրդ: Իրենք ալեւի են ներկայանում, բայց չգիտեն ալեւին ինչ է, ալեւի լեզուն չգիտեն, գիտեն քրդերէն, բայց քրդական գործերին չեն ուզում խառնուել, մեզ միշտ ասում էին՝ գործ չունէք քրդական գործերի հետ: Դրանից շատ կասկածներ էին առաջանում: Մայրիկիս մի անգամ ասած «մենք թուրք չենք»ը ոնց որ գլխիս մէջ դրած ռումբ լինէր: Ո՞վ ենք, ի՞նչ ենք: Չէին ասում մեր պապի, կամ՝ պապի հօր անունն ի՞նչ է: Ասում էին՝ մենք որբ ենք մեծացել: Ի՞նչու են որբեր եղել՝ անորոշ պատասխաններ: Ի՞նչու ազգականներ չկան՝ անորոշ պատասխաններ: Ուշ իմացայ, որ պապերիս անունները Հասան եւ Հուսէյին են:

Սրանք ալեւի անուններ են: Չափահաս էի արդէն, երբ գնացի հայրիկիս ծնուած գիւղը՝ Սեբաստիայի Զմառա գիւղը, եւ այնտեղ իմացայ, որ այդ գիւղում նախկինում հայեր են ապրել: Յետոյ իմացայ, որ մայրիկիս Սասունի աշիրէթը Սասունում հայկական է համարուել: Սա մեծ եւ վախեցնող յայտնութիւն էր: Ինձ համար հետաքրքիր էր նաեւ, քանի որ մինչեւ այդ իմանալս ինքս իմ մէջ որոշել էի քրիստոնեայ դառնալ: Որոշումս հայերի հետ կապ չունէր: Մի ժամանակ Դոստոեւսկի շատ էի կարդում, եւ սա Դոստոեւսկու ազդեցութեան տակ էր: Ինձ շատ հոգեհարազատ ու հասկանալի էր թւում քրիստոնեան: Հայերի մասին ոչինչ չգիտէի եւ չէի էլ հետաքրքրւում: Չգիտէի անգամ, որ հայերը քրիստոնեայ են: Յետոյ, ծնողներիս հայ լինելն իմանալով՝ շատ էի զարմացել: Ծնողներիս նոր հարցեր էի տալիս, հայերի մասին: Հայրիկս նոյնիսկ վախեցաւ: Մայրիկս աւելի քաջ էր եւ ասաց, որ հայեր են եղել, բայց երկուսն էլ ասացին՝ մի՛ խառնուիր քաղաքականութեանը: Հայրս շատ էր վախենում քաղաքականութիւնից: Իմ հայրիկն առհասարակ քաղաքական գործերով չէր զբաղւում: Նա սոցիալիստական հայեացքներ ունէր, խօսում էր սոցիալիզմի մասին, գնում էր սոցիալիստների ժողովներին, բայց ինքնութիւններով չէր հետաքրքրւում:

Հիմա Թուրքիայում երիտասարդներն աւելի շատ ինքնութիւններով են հետաքրքրւում, քան սոցիալիզմով: Յամենայն դէպս Ստամբուլում այդպէս է: Դա հիմա աւելի շատ է քաղաքական խնդիր, քան սոցիալիզմը: Հայրիկս ընդհանրապէս վախկոտ մարդ էր: Բայց սոցիալիզմը կամ ազգային ինքնութիւնը՝ դրանք տարբեր վախեր են: Հայ լինելը աւելի վախենալու է, քան սոցիալիստ լինելը: Սոցիալիստների մէջ շատ ազգայնական թուրքեր կան»:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԷԹՆՕ-ԿՐՕՆԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

Այսօր աւելի քան երբեւէ, հասկանալի է թէ ի՛նչու Թուրքիայում ինքնութեամբ հետաքրքրուելը «քաղաքական այլախոհութիւն է»: 2011ի Փետրուարին Երախորհրդի՝ Ընդդէմ Ռասիզմի Եւ Անհանդուրժողականութեան Յանձնաժողովը

(ECRI) հրապարակել է Թուրքիայի վերաբերեալ իր չորրորդ զեկոյցը: Այս զեկոյցն առանձնանում է նրանով, որ, թէեւ վերապահութեամբ, սակայն առաջին անգամ փորձ է արուել տարբեր աղբիւրներից քաղուած տուեալների հիման վրայ թուերով ներկայացնել Թուրքիայի բնակչութեան ազգային եւ կրօնական դիմագիծը: ECRIն սովորաբար օգտագործում է թէ՛ պետական մարմինների, թէ՛ անկախ փորձագիտական տուեալներ: Բոլոր դէպքերում, տեղեկութիւններին պէտք է վերաբերուել մեծ վերապահութեամբ: Դրանց համաձայն, Թուրքիայում քրդերի թիւը տատանւում է 12-15 միլիոնի միջեւ, ալեւիներինը՝ 4ից մինչ 24 միլիոնի, գնչուները մօտ 2.7 միլիոն են, չերքէզները՝ 750.000-3 միլիոն, լազերը՝ 1.5 միլիոն: Հայերի թիւը ներկայացուած է՝ 50.000-93.000[82]: Ենթադրելի է, որ հայերի մէջ հաշուառուած են միայն քրիստոնեաները, իսկ համշէնցի հայերը ներառուած են թուրքական համարուող խմբի մէջ: Բնականաբար այստեղ ներառուած չեն սուննի արաբները. չենք անդրադառնում նաեւ փոքրաթիւ ասորիների, յոյների, հրեաների, վրացիների եւ այլ՝ թուերի իմաստով էական ազդեցութիւն չունեցող էթնիկ միաւորներին: Չենք անդրադառնում նաեւ լազերի՝ ակնյայտօրէն նուազեցրած թուին: Հաւանական է, որ ECRIի կողմից արձանագրուած թուերում նուազագոյնները պետական մարմինների առաջարկած թուերն են, առաւելագոյնները՝ փորձագէտների: Եթէ առաջնորդուենք այս թուերի առաւելագոյններով, ապա կը ստացուի, որ Թուրքիայում իրենց թուրք համարողները փոքրամասնութիւն են:

Ուշագրաւ են նաեւ Ստամբուլի Kadir Has Համալսարանի կողմից «Թուրքիայում Ընկերային-Քաղաքական Միտումները» ծրագրի շրջանակներում 2012ի Դեկտեմբերի 25-Յունուարի 6ի միջակայքում 26 մարզերում անցկացրած հարցախոյզի արդիւնքները, որոնց համաձայն բնակչութեան միայն 54.8 տոկոսն է իրեն թուրք համարել[83]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Թուրքական հասարակութեան ինքնութեան կառուցման՝ թրքական ինքնութեան համահարթեցման քեմալական ծրագիրը պետական ծանր վերահսկողութեամբ եւ ներքին

ինքնակարգաւորումներով հասել է մի տրամաբանական վիճակի, որի առաջադրած ծանրագոյն խնդիրներից մէկը - թերեւս ամէնակարեւորը - մնում է վերաձեւակերպուած ինքնութեան ճգնաժամը՝ թուրքերի՝ առնուազն ազգայնական շրջանակների էթնիկական ինքնութեան մահմեդականացումը, քրդերի մահմեդական ինքնութեան էթնիկացումը, ալեւիների հաւաքականութեան վերաձեւաւորումը, քաղաքական հակառակորդների՝ միմեանց անցեալի ծագումնաբանական թաքստոցների սպառնալիքային բացայայտումները, առարկայական պատմութեան նկատմամբ բնական հետաքրքրութիւնը եւ պաշտօնական պատմագրութեան վերանայման հասարակական պահանջը, հասարակութիւնը էթնօ-կրօնական համայնքներով աստիճանաւորելու սկզբունքը եւ դրա դէմ ըմբոստացումը, ազգայնականութիւնը սնուցող նոր մարտահրաւէրները, միով բանիւ՝ նոր ինքնութեան կամ, որ աւելի ճիշտ է՝ ինքնութեան նոր քաղաքականութեան անհրաժեշտութիւնը:

Մէկ նախադասութեամբ անդրադառնալով սոյն զեկոյցի եւ յօդուածի վերնագրին՝ «Հայերի Կարգավիճակը Ժամանակակից Թուրքիայում. Իսլամաց(ու)ած Հայերը» ամփոփենք, որ հայերի կարգավիճակը վախն է: Կամ՝ շարունակում է մնալ վախը:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Այս յօդուածը արդէն տպարան էր գնում, երբ յայտնի դարձաւ, որ ՆԱՏՕի անդամ Թուրքիան իր տարածքից Սիրիայի եւ Իրաքի «Իսլամական Խալիֆայութիւն» ահաբեկչական խմբի դէմ պայքարելու դիմաց փաստացի իրաւունք է նուաճել գնդակոծել քրդական ազատագրութեան համար պայքարող զինեալներին հերթական (մշտական) անգամ խաբելով քրդերի հետ բանակցութիւններով խնդիրը կարգաւորելու իր խոստումներր: Մինչ ԱՄՆը պիտի ոչնչացնի «Իսլամական Խալիֆայութեան» արմատականներին, Թուրքիան պիտի հասցնի ոչնչացնել «քուրդ անջատողականներին»: Շարունակեց Թուրքիային թրքացնել քրդական ինքնութիւնը եւ քսանմէկերորդ դարի «Եւրամիութենական» արդիականացումը Թուրքիայում 301րդ յօդուածով ձերբակալութիւններից զատ շարունակում է նաեւ Բինգէօլը եւ Դերսիմը գնդակոծելով. «միջազգային հանրութիւնր»

այս օրինականացուած պետական ահաբեկչութիւնը համաձայնուել է ընդունել իբրեւ «ահաբեկչութեան դէմ պայքար», ինչպէս համաձայնուել է «սիրալիր յորդորներից» զատ այլ կերպ չդապարատել թուրքական քրէական օրէնսգրքի «թուրքական ազգին» հասցուած վիրաւորանքը յանցագործութիւն համարող 301րդ յօդուածը: Դժուարութեամբ կայացող «թուրքական ազգ»ի ինքնութեան զգայուն հպարտութիւնը Թուրքիայում պաշտպանւում է քրէական օրէնսգրքով, իսկ այդ երկրում աջ ու ձախ այլոց ազգային ինքնութիւններ վիրաւորող պետական բարձրագոյն պաշտօնատարները, երկրի նախագահի գլխաւորութեամբ, շարունակում են այլազգիների նկատմամբ բացայայտ բռնութիւն կիրառել: Դատելով իրերի ընթացքից այս գործընթացը դեռ երկար է շարունակուելու, մինչեւ թուրքական ինքնութեան արժանապատուութիւնը քրէական օրէնսգրքով պաշտպանուելու կարիք չունենայ: Թուրքիայի ներսում սրա լուծումը բաւական փորձարկուած է՝ կոտորել թուրքական ինքնութեան եւ այն ներկայացող գլխաւոր եզրի՝ «թուրք» բառի առաքինութիւնների հանդէպ բոլոր թերահաւատ հպատակներին:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Article 40*: Turkish nationals belonging to non-Moslem minorities shall enjoy the same treatment and security in law and in fact as other Turkish nationals. In particular, they shall have an equal right to establish, manage and control at their own expense, any charitable, religious and social institutions, any schools and other establishments for instruction and education, with the right to use their own language and to exercise their own religion freely therein. (Treaty of Peace with Turkey Signed at Lausanne, July 24, 1923, http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne):

[2] U.S. Department of State, *Annual Report on International Religious Freedom for 1999: Turkey*, Washington, DC, September 9, 1999:

[3] Թուրքիայում դաշտային նիւթեր հաւաքելու շրջանում բազմիցս առիթներ եմ ունեցել հանդիպել մահմեդականների, ում շրջապատում «հայ» են համարել, բայց իրենք կտրականապէս մերժել են ընդունել «հայ» լինելը: Մերժման պատճառների մէջ յաճախ «դեր է ունեցել» տուեալ անձի կամ նրա ազգականի նկատմամբ հայկական ծագման հետ կապուած բռնութեան դէպքերը (օրինակ՝ պաշտօնական մարմինները բռնութիւնների միջոցով պահանջել են խոստովանել, որ կապ ունի քրդական ազգային շարժումների հետ, կամ՝ դատական որեւէ գործ քննելիս քննիչները տարբեր ձեւերով դատարանում հնչեցնում են «այս հայը», «այս *դէօնմէն*» եւն.): Այդ դէպքերն արագօրէն յայտնի են դառնում եւ վերածւում ընկերաբանական նոր փորձի՝ գումարուելով հայերի

նկատմամբ կիրառուած/կիրառուող փաստացի քաղաքականութեան լայնօրէն յայտնի ընդհանուր դրսեւորումների փորձին:

[4] Armen Melikian, "Armenian Watch Monitors Human Rights Violations Against Armenian Worldwide", http://www.armeniadiaspora.com/population/note turkey pop.html. նաեւ՝ http://www.jihadwatch.org/archives/2005/02/005091print.html . նաեւ՝ Կարէն Խանլարի, «Հայ Էթնօկրօնական Տարրը Անատոլիայում (1991-2005 թթ.)», 2010/05/13, (http://akunq.net/am/?p=2916). նաեւ՝ *Երկիր Շարաթաթերթ*, Երեւան, 22 Հոկտեմբեր 2004. նաեւ՝ http://www.aktifhaber.com ; http://www.sagduyu.de/blog/?p=251 . նաեւ՝ www.tekkisilikgazete.com/content/view/1399/5/ http://www.sagduyu.de/blog/?p=251 . նաեւ՝ http://www.bing.com/search?q=canadaturk.ca+13.12.2007&src=IE-SearchBox&FORM=IE8SRC եւն.:

[5] Ֆըլլա - արաբերէն «Fellaha» - «երկրագործ» բառից: Քրդերէնում «ֆրլլա» բառն ունի «անհաւատ» - «քրիստոնեայ» իմաստը եւ արհամարհական բնութագրով օգտագործւում է գլխաւորապէս որպէս «հայ» էթնանուան հոմանիշ:

[6] «*Մեր գիւղերը քուրդեր ապրում էին, քուրդերը «հայ» չէին օգտագործում, «ֆրլա» կ'ըսէին: Մենք մեզի «հայ» կ'ըսէինք, իրենք «գեաուր», «ֆրլա» կ'ըսէին, եւ մենք փոքրուց գիտէինք, որ ատիկա վիրաւորական է: Բայց իրաւունքը իրենց մօտ էր: ... Ուրիշ հայեր մուսուլմաններ դարձած էին եւ մեր մէջ ապրում էին... Կ'իմանայինք, որ ատիկա կամաւոր ընտրութիւն չէր, հարկադրուած իսլամ դարձան... [քրդերը] անոնց ուրիշ անունով կը կանչեն բաֆրլա, այսինքն բաֆըլլա բառերից է՝ հայրիկը քրիստոնեայ: Այսինքն հայից փոխուած է, ան քրիստոնեայից փոխուած է... Եւ անոնց կ'ըսէին բաֆրլա, եւ եթէ վիրաւորիչ ըլլալ կ'ուզէին՝ հարամ կ'ըսէին: Հարամ գիտէ՞ք ինչ ըսել է՝ հարամ ոսկոր: Հարամ ոսկոր մարդիկ էք: Իրենց մէջ քուրդը մուսուլմանացած հարուն հարամ ոսկոր կ'ըսէին... իրենք ալ շատ դժուար վիճակի մէջ էին: Կարելի է, որ կը զղջային, որ մուսուլման դարձած են, կարելի է, որ կ'ուզէին վերադառնալ, բայց գիտէին, որ չեն կրնայ վերադառնալ: Շատ անգամ մենք անոնց հետ աւելի փրոպլէմ կ'ունենայինք, քան թէ քուրդի մը հետ...*» (տե՛ս «Սասունցիները», *Հայկազեան Հայագիտական Հանդէս (ՀՀՀ), Հտր. Լ.Գ.*, Պէյրութ, 2013, էջ 468-469, 471). նաեւ «*Հիմա ալ ֆրլէ կ'ըսեն: Գապ չունի, որ իսլամ էին դարձել: Չէ՞ որ հայ էին*» («Ռէյս Տանոյի Թոռ Գէորգ. Արխունցիները», *ՀՀՀ, Հտր. Լ.Գ.*, էջ 412):

[7] *Ալիք*. Թեհրան. 1980. Դեկտեմբերի 18:

[8] Կարէն Խանլարի (Խանլարեան), «Պաշտօնական» Հայերը Թուրքիոյ Հանրապետութիւնում (1923-2005թթ.)», էջ 46 (http: www.noravank.am upload pdf 385 am.pdf):

[9] *Նոր Մարմարա*, 2003. Յունուարի 27:

[10] Խանլարի, «Պաշտօնական», էջ 51:

MIN SSSR. *Dokumenti Vneshney Politiki SSSR* (ԽՍՀՄ արտաքին քաղաքականութեան փաստաթղթեր), *Հտր. 6*. Մոսկուա, Գոսկոմիզդատ, 1962, էջ 165-167. նաեւ RGASPI (Rossiskiy Gosudarstvenniy Arkhiv Sotsialno-Politicheskov Istorii (Հասարակական-քաղաքական պատմութեան Ռուսաստանի պետական արխիւ), Ֆոնդ 5, Յուցակ 1, Գործ 1988, թուղթ 109 (ըստ Y. Barsegov, *Genotsid*

Armian, Otvetstvennost Turtsii I Obiazateltsva Mirovogo Soobshestva (Հայոց Ցեղասպանութիւնը. Թուրքիոյ պատասխանատուութիւնը համաշխարհային հասարակութեան դիմաց), Հտր. 2, մաս 1, էջ 610-612):

[12] Ուշագրաւ է, որ Թուրքիան երբեք չքննարկեց Հայաստանի տարածքում մնացող մահմեդական բնակչութեան տեղափոխման հարցը, չնայած շարունակ պնդում էր, որ հայերի ու մահմեդականների խաղաղ համակեցութեան հարցը հնարաւոր է բացառապէս միատարր տարածքներ ունենալու պարագայում: Թուրքիային, իհարկէ, խիստ հարկաւոր էր այդ տարածքներում մահմեդական բնակչութիւն պահել:

[13] MIN SSSR, *Dokumenti Vneshney Politiki SSSR, Հտր. 4*, Մոսկուա, Գոսկոմիզդատ, 1960, էջ 420-426 (Barsegov, էջ 556-557):

[14] RGASPI, Ֆոնդ 5, Ցուցակ 1, Գործ 1988, թուղթ 39-43 (Barsegov, էջ 609):

[15] RGASPI, Ֆոնդ 5, Ցուցակ 1, Գործ 1988, թուղթ 39-43 (Barsegov, էջ 609-610):

[16] *Article 31*: Persons over eighteen years of age, losing their Turkish nationality and obtaining *ipso facto* a new nationality under Article 30, shall be entitled within a period of two years from the coming into force of the present Treaty to opt for Turkish nationality.

[17] *Article 33*: Persons who have exercised the right to opt in accordance with the provisions of Articles 31 and 32 must, within the succeeding twelve months, transfer their place of residence to the State for which they have opted. They will be entitled to retain their immovable property in the territory of the other State where they had their place of residence before exercising their right to opt. They may carry with them their movable property of every description. No export or import duties may be imposed upon them in connection with the removal of such property.

[18] *Article 65*: All property, rights and interests situated in territory detached from the Ottoman Empire under the present Treaty, which, after having been subjected by the Ottoman Government to an exceptional war measure, are now in the hands of the Contracting Power exercising authority over the said territory, and which can be identified, shall be restored to their legitimate owners, in their existing state. The same provision shall apply to immovable property which may have been liquidated by the Contracting Power exercising authority over the said territory. All other claims between individuals shall be submitted to the competent local courts (http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne):

[19] *Article 30*: Turkish subjects habitually resident in territory which in accordance with the provisions of the present Treaty is detached from Turkey will become *ipso facto*, in the conditions laid down by the local law, nationals of the State to which such territory is transferred.

[20] *Article 33*: Persons who have exercised the right to opt in accordance with the provisions of Articles 31 and 32 must, within the succeeding twelve months, transfer their place of residence to the State for which they have opted. They will be entitled to retain their immovable property in the territory of the other State where they had their place of residence before exercising their right to opt. They may carry with them their movable property of every description. No export or import duties may be imposed upon them in connection with the removal of such property.

[21] *Article 34*: Subject to any agreements which it may be necessary to conclude between the Governments exercising authority in the countries detached from Turkey and the Governments of the countries where the persons concerned are resident, Turkish

nationals of over eighteen years of age who are natives of a territory detached from Turkey under the present Treaty, and who on its coming into force are habitually resident abroad, may opt for the nationality of the territory of which they are natives, if they belong by race to the majority of the population of that territory, and subject to the consent of the Government exercising authority therein. This right of option must be exercised within two years from the coming into force of the present Treaty. *Article 35*: The Contracting Powers undertake to put no hindrance in the way of the exercise of the right which the persons concerned have under the present Treaty, or under the Treaties of Peace concluded with Germany, Austria, Bulgaria or Hungary, or under any Treaty concluded by the said Powers, other than Turkey, or any of them, with Russia, or between themselves, to choose any other nationality which may be open to them:

[22] 1918ին իսլամացած եւ թուրք ինքնութիւն ընդունած Օսման Կայան Էրզրումի մօտ գտնուող իր 74 անուն ընտանեկան ժառանգութիւնը, որը իշխանութիւնները գրանցել էին որպէս «հայի ունեցուածք», չստացաւ, որովհետեւ նրան, այնուամենայնիւ, հայ էին համարում: Կայան դատ է սկսում եւ ողջ կեանքը ներդնում է դատական գործընթացին, որը տեւում է մինչեւ 1967: Դատը նա շահում է, բայց տաս ամիս անց մահանում է: Դատը վերսկսում է նրա ընտանիքի հետ (http://novostink.ru/mir/103102-armyanin-ne-primirivshiysya-s-islamizaciey-kommentariy-akos.html#ixzz3UI4ud0rq):

[23] Christopher Walker and David Marshall Lang, *The Armenians*, 2nd revised edition, London, January 1977, "Minority Rights Group Report No. 32", էջ 15:

[24] Արսէն Կարակոչի պատմածից, 2012ին Ստամբուլ, զրուցել եւ պատմութիւնը ձայնագրել է Հ. Խառատեանը («Իսրայէլցիների, Յոյների, Վրացիների Նկատմամբ Ատելութիւն Չկայ, Մեծ Ատելութիւնը Հայերի Նկատմամբ է», *ՀՀՀ Հտր. ԼԳ.*, Պէյրութ, 2014, էջ 526-527:

[25] Անատոլիա - Հայերը, յատկապէս Ցեղասպանութիւնը վերապրած սփիւռքահայերը «Անատոլիա» տեղանուան միայն նախացեղասպանական տարողութիւնը գիտեն՝ Թուրքիայի արեւմտեան հատուածը: Ներկայիս Թուրքիայի արեւելեան հատուածը նրանք շարունակում են անուանել Հայաստան, Արեւմտեան Հայաստան կամ Տաճկահայաստան, ինչպէս, ի դէպ, այդ տարածքը յաճախ «Էրմենիստան» Հայաստան են անուանում տարեց շատ թուրքեր եւ քրդեր: Վերջին քսան-երեսուն տարիներին ստամբուլահայերի խօսակցական լեզուում «Անատոլիա» տեղանունը սկսել է ձեռք բերել Թուրքիայի արեւելեան նահանգներ իմաստը, մասաւորապէս Սասունից, Մուշից, Բիթլիսից Ստամբուլ տեղափոխուած հայերին անուանում են «Անադոլուի հայեր»:

[26] Հայերին թոյլ էին տալիս հող մշակելով ապրելու կարիքները հոգալ, բայց հողը որպէս սեփականութիւն չէին յատկացնում: Մինչեւ այսօր էլ այդ հողերը մշակողները, եթէ նոյիսկ շարունակում են ապրել նոյն վայրերում սեփականութեան վկայականներ չունեն:

[27] «Սասունցիները», էջ 465-466;

[28] Նոյն, էջ 482-483

[29] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ Մահմեդական Լինել, Բայց Միաժամանակ Իրեն Միշտ Քրիստոնեայ է Զգացել», *ՀՀՀ Հտր. ԼԳ.*, էջ 442:

[30] Նոյն:

[31] Christophor Walker, *Armenia: The Survival of A Nation*, London, Croom Helm, 1980, էջ 348. նաեւ՝ Dr. Tessa Hofmann, *Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic* (second edition), Uppsala, 2003, էջ 15 (http://www.armenian.ch/gsa/Docs/faae02.pdf):

[32] Ռուբէն Մելքոնեան, «Ունեցուածքի Հարկը» (Varlık Vergisi) Կամ Տնտեսութեան «Թուրքացման» Քաղաքականութիւնը Հարապետական Թուրքիայում», ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտ *Օսմանագիտական Եւ Թիւրքագիտական Հետազօտութիւններ Մատենաշար, 5րդ Հատոր*, Երեւան, 2008 (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=487):

[33] Taner Akçam, Ümit Kurt, *Kanunlarin Ruhu. Emval-i Metruke Kanunlarinda Soykirimin İzini Sürmek* (Օրէնքների ոգին. լքեալ գոյքերում ցեղասպանութեան հետքերի հետապնդումով), İstanbul, 2012:

[34] Վահրամ Ղարախանեան, «Թուրքիայի Հանրապետութեան Իշխանութիւնների Դիրքորոշումը Թուրքահպատակ Հայերի, Յոյների Եւ Հրեաների Հանդէպ 1923-1926թթ.», *Հայոց Պատմութեան Հարցեր, Հտր. 10*, Երեւան, 2009, էջ 258-278:

[35] S. Avanesov, *Polojenie Natsionalnikh Menshinstv V Turtsii* (Թուրքիայում ազգային փոքրամասնութիւնների վիճակը), Երեւան, 1963, էջ 13:

[36] Ս. Պօղոսեան, *Քրդերը Եւ Հայկական Հարցը*, Երեւան, Հայաստան Հրատ., 1991, էջ 278:

[37] Գեղամ Վարդանեան, «Արարատեան Հանրապետութիւն Եւ Կարմիր Քրդստան» (http://www.diplomat.am/publ/public/araratyan_hanrapetowt_39_yown_ev_karmir_qrdstan_mas_errord/14-1-0-645): Ուշագրաւ է, որ նոյն տարիներին Խորհրդային Հայաստանում դաշնակցութեանը յարելու եւ *բանդիտիզմի* մեղադրանքով հետապնդուել, ձերբակալուել, գնդակահարուել եւ աքսորուել են բազմաթիւ նախկին ֆիդայիներ, ինչպէս՝ ֆիդայի Չոլօն (Յարութիւն Աբրահամի Կիրակոսեան), ֆիդայի Փեթարա Իսրօն (Մշոյ Փեթարա Գիւղում ծնուած եւ Ցեղասպանութիւնից յետոյ Թալինի Կաթնաղբիւր Գիւղում հաստատուած Իսրայէլ Իսրայէլեանը), Տէր Քաջի Աղամը, Անդրանիկ զօրավարի զօրքերի գլխաւոր ձիապանը՝ Մշոյ Առատ Գիւղում ծնուած Արխա Զօրիկը (Զօհրապ Գասպարի Մամիկոնեան) եւն.:

[38] «Գաղութահայ Կեանք. Թուրքիա», *Հայրենիք Ամսագիր*, 1931, Մայիս, էջ 170:

[39] Պօղոսեան, էջ 278: Թերեւս սրա զուգահեռն էր Խորհրդային Հայաստանում քաղաքական բռնաճնշումների շրջանակներում իրականացուած եզդի մտաւորականների ձերբակալութիւնները: 1937ին, օրինակ, ձերբակալուել են Հայաստանի Գրողների Միութեան անդամներ, եզդիներ Զարդրէ Գենջին (*Ռյա Թազա* քրդերէն թերթի խմբագիր, Ալագեզի քրդական թատրոնի տնօրէն), արձակագիր, գրականագէտ Հաջիէ Ջնդին: Նրանք մեղադրւում էին «քուրդ ապստամբական հակախորհրդային կազմակեպութեան» ղեկավարման մէջ, իբրեւ թէ «ազգայնամոլական գաղափարներ» են հետապնդել՝ կապի մէջ լինելով արտասահմանի «դաշնակցական-քրդական» «Հոյբուն» կոմիտէի ղեկավարներ Բադիրխանի եւ «անգլիական գործակալ Յակոբեանի» հետ (Ա. Մանուկեան, *Քաղաքական Բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ.*,

Երեւան, 1999, էջ 95): Զանգուածային ձերբակալութիւններ են եղել նաեւ եզդի գիւղացիութեան միջավայրում:

[40] «Սասունցիները», էջ 483:

[41] http://akunq.net/am/?p=24083 :

[42] Avanesov, էջ 14:

[43] Taner Akcham, "Turetskoe Natsionalnoe 'Ya' I Armianskii Vopros" (Թաներ Աքչամ, Թուրքական ազգային 'ես'ը եւ Հայկական Հարցը), http://armenianhouse.org/akcam/genocide/book1.html :

[44] Çetin Yetkin, *Türk Halk Hareketleri Ve Devrimleri Tarihi* (Թրքական ժողովրդական շարժումները եւ յղղափոխութիւններու պատմութիւնը), Istanbul, 1984, էջ 4, ըստ՝ Akcham, "Turetskoe Natsionalnoe":

[45] Ilhan Arsel, *Arap Milliyetçiliği ve Türkler* (Արաբ ազգայնականութիւնը եւ թուրքերը), Istanbul, 1987, էջ 37, ըստ՝ Akcham, "Turetskoe Natsionalnoe":

[46] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ», էջ 453:

[47] Անդ, էջ 452:

[48] «Ռէյս Տանոյի Թոռ Գէորգը. Արխունդցիները», էջ 423:

[49] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ», էջ 441-442:

[50] http://akunq.net/hy/?p=10894 . նաեւ՝ stargazete.com, 18.05.2010. նաեւ՝ Sabah.com.tr, 05.10.20101:

[51] J. Winter, *America and the Armenian Genocide of 1915*, New York: Cambridge University Press, 2003, էջ 267:

[52] Ջաֆէր Սոլգուն, «Ինչու՞ է Նրա Անունը Կարպիս, Ես Ինչու՞ Թուրք Չեմ» (http://www.stargazete.com/acikgorus/onun-adi-neden-garbis-ben-neden-turk-degilim-372783.htm): Հայերէն թարգմանութիւնը՝ http://akunq.net/am/?p=11527; *2011/08/11*):

[53] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ», էջ 448:

[54] Սոլգուն:

[55] Զրոյցը Հ. Խառատեանի կողմից ձայնագրուել է Դերսիմի Լաչ Դերէսի կիրճում, որտեղ տեղի է ունեցել ջարդերից փախչող Դերսիմի բնակչութեան սպանդը թուրքական զօրքերի կողմից 2011ին (*ՀՀՀ, Հտր. ԼԵ*, մամուլի տակ - Ծ.Խ.):

[56] Զրոյցը ձայնագրուել է Դերսիմում՝ Ջիւրէք գիւղում, 2011ին, Հ. Խառատեանի կողմից (*ՀՀՀ, Հտր. ԼԵ*, մամուլի տակ - Ծ.Խ.):

[57] 1984-87՝ Թուրքիայի արեւելեան նահանգներում, քուրդ զինեալների դէմ պայքարի պատրուակով, թուրքական բանակի միջոցով 2400 գիւղ եւ 1500 գիւղակ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն դատարկուել է կամ ոչնչացուել, եւ տեղահանուել է շուրջ 3 միլիոն բնակչութիւն ("Forced Evictions: Violations of Human Rights", Global Survey on Forced Evictions, No 7 COHRE, September 1998, www.cohre.org, էջ 65-69. նաեւ՝ http://www.jubileecampaign.co.uk/world/tur2.htm . նաեւ՝ http://www.dozame.org/villages/burnedvillages.htm . նաեւ՝ "The Wall Of Denial: Internal Displacement in Turkey," U.S. Committee for Refugee, November 1999, էջ 14-15. նաեւ՝ "Asylum Seekers From Turkey: The Dangers they Flee. A Report to Asylum Aid (Report of a Mission to Turkey)," 4-17 October 2000, էջ 59. նաեւ՝ *Turkey Human Rights Practices, 1993*, Author: U.S. Department Of State, January 31, 1994. նաեւ՝ R. Benninghaus, "Production, Usage and Diffusion of the Shal o Shapik Men's Costume in Turkish Kurdistan," 31 May 2001

(http://www.chaldeansonline.net/forums/ruediger-benninghaus.html): Սասունի Աջար Գիւղի հայ բնակչութիւնն ամբողջապէս իսլամացման է ենթարկուել 1983ին: Սղերդում, Դերսիմում, Սասունում գիւղական բնակչութեան տեղահանութիւնները եւ բնակիչների ետ վերադարձն անհնար դարձնելու նպատակով գիւղերն ամբողջովին աւերելը շարունակուել է նաեւ 1992-1995ին: Աջար գիւղը հրդեհել են 1995ին: 1993ին Մանազկերտի Գուլալի Գիւղը երեք անգամ հրդեհելուց յետոյ մուտքի մօտ փակցրել են «Սա հայկական գիւղ է, մուտքն արգելւում է» բովանդակութեամբ մի ցուցանակ: Տեղահանուել են նաեւ Մարդին Նահանգի Հասսենա, Հերբոլ եւ Բեսպին հայկական գիւղերը (Կարէն Խանլարեան, «Քրդական Շարժումներին Արեւմտահայութեան Մասնակցութեան Քաղաքական Դրդապատճառները» http://akunq.net/am/?p=9461): 2011ին Դերսիմի Ալանեազի Գիւղի մի բնակիչ, ալեւիացած հայ, պատմում էր, որ «*Կնոջս հենց այստեղ՝ մեր դռան առաջ սպանեցին: 2001ին սպանեցին պետութեան զինուորները*» («Էլ Վախենալու Բան Չի Մնացել, Ամէն Ինչ Էլ Արել Են Մեզ Հետ», *ՀՀՀ Հտր. ԼԴ.*, էջ 495):

[58] Հայդարան - Ալեւիական աշիրէթ Դերսիմում: Դերսիմի ամբողջ բակչութեան մէջ տարածուած է այն համոզմունքը, որ «հայդարան» եւ «դեմանան» աշիրէթները նախկինում հայերից ալեւիացածների աշիրէթներ են: «Նախկին» բառի իմաստը տուեալ դէպքում խիստ տարողունակ է, ինչպէս տեղացիներն են ասում՝ «վաղուց, հարիւր, գուցէ երկու հարիւր տարի առաջ, գուցէ նոյնիսկ աւելի վաղ»:

[59] Միրաք, Միրաքեան - Դերսիմում մեծ ճանաչում ունեցող հայկական տոհմ (Գէորգ Հալաջեան, *Դերսիմի Հայերի Ազգագրութիւնը*, հրատարակութեան պատրաստել եւ խմբագրել է Դ. Վարդումեանը, *Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւսութիւն, Հտր. 5*, 1975, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., էջ 252-254. նաեւ՝ Անդրանիկ՝ *Տէրսիմ, Ճանապարհորդութիւն Եւ Տեղագրութիւն*, 1900 (Թիֆլիս, Թիֆլիսի Հայոց Հրատ. Ընկ., N188, էջ 64-70, 76, 123, 143-44, 152, 176-77) բազմիցս են անդրադառնում Միրաք, Միրաքեան հայերին):

[60] Տե՛ս՝ ծանօթ 58:

[61] Դեմանաններ - ալեւիական աշիրէթ Դերսիմում (տե՛ս՝ ծնթ.59):

[62] Զրոյցը տեղի է ունեցել Դերսիմում՝ Թունջելի քաղաքում, 2011ին: Պատմութիւնը ձայնագրուել է Հ. Խառատեանի կողմից: Պատրաստւում է հրատարակութեան:

[63] «Թունջելիի Հայը», *ՀՀՀ Հտր. ԼԴ.*, էջ 505-506:

[64] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ», էջ 457-459:

[65] «Սասունցիները», էջ 474:

[66] Նոյն, 467, 483:

[67] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ», էջ 454:

[68] Ստամբուլում ապրող Սարգիսի պատմութիւնը ձայնագրել է Հ. Խառատեանը 2013ին (*ՀՀՀ Հտր. ԼԵ*, մամուլի տակ – Ծ.Խ.):

[69] Հրապարակել է Գէորգ Ստամբոլցեանը 18.07.2013 (http://www.azatutyun.am/content/article/25049219.html):

[70] Հրատարակութեան պատրաստուող Սարգիսի պատմութիւնից (*ՀՀՀ Հտր. ԼԵ*, մամուլի տակ – Հ.Խ.):

[71] «Մեծագոյն Հոգը՝ Հայը», *Դրօշակ*, Աթենք, ԺԹ. Տարի, 1988 թիւ 8, Օգոստոս 3, էջ 38:

[72] Հայաստանի Ազատագրութեան Գաղտնի Բանակ, ծանօթ նաեւ ԱՍԱԼԱ յապաւումով:

[73] http://akunq.net/am/?p=11527 :

[74] Dr. Tessa Hofmann, *Armenians in Turkey Today*, October 2002:

[75] «Ստամբուլում Հայերը Անատոլիայից Եկած Հայերի Հայութիւնը՝ Քիչ, Քրդութիւնը՝ Մեծ Են Ընդունում», *ՀՀՀ Հտր. ԼԴ.*, էջ 499:

[76] «Հայլար», *ՀՀՀ Հտր. ԼԳ.*, էջ 437:

[77] http://www.horizonweekly.ca/news/details/53399 :

[78] «Մայրիկս Փորձել է Իսկական Հաւատացեալ», էջ 447-448:

[79] Նոյն:

[80] «Ռէյս Տանոյի Թոռ Գէորգը. Արխունդցիները», էջ 422:

[81] Զրոյցը տեղի է ունեցել 2014ին Երեւանում, ուր զրուցակիցս եկել էր լսելու Դերսիմին նուիրուած մի գիտաժողովի զեկուցումները (*ՀՀՀ, Հտր. ԼԵ*, մամուլի տակ – Ծ.Խ.):

[82] ECRI Report on Turkey, էջ 30,- http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/country-by-country/turkey/TUR-CBC-IV-2011-005-ENG.pdf :

[83] http://www.armweeklynews.am/awn/m14/m_4031.htm :

THE STATUS OF THE ARMENIANS IN CONTEMPORARY TURKEY: THE CASE OF THE CONVERTED ARMENIANS (SUMMARY)

HRANUSH KHARATIAN

Armenians do not have a specific, distinct official status in Turkey. The Lausanne Treaty provisions regarding Turkey's "non-Muslim minorities" compel Turkey to allow these minorities to have their community schools, security around their religious institutions, cemeteries, etc. The word Armenian is not mentioned.

The status of the Armenians in Turkey has often changed since the Lausanne Conference, in accordance with both Turkish domestic policy and Turkish-Soviet relations. For instance, the massacres of Armenians and Alevis of Dersim in Turkey in 1937-38 coincided with the deportation of Western Armenians from the bordertowns of Soviet Armenia and Georgia. Obviously, Soviet policy towards the Armenians was influenced by Turkish-Soviet relations.

The March 1921 Moscow and October 1921 Kars Treaties provided for the transfer of Armenians in Turkey to the Caucasus and forbade their return to Turkey from Russia and Trans-Caucasia. Article 8 of the Moscow Treaty and Article 10 of the Kars Treaty note that both states will restrain from supporting or organizing groups which plan to fight against the neighboring state. These articles have enabled both states to oppress Armenians in Turkey and the USSR. It needs to be said that the League of Nations had no supervisory power over the implementation of minority rights in Turkey, which conducted a policy of homogenization.

The Armenian minority in Turkey faced a set of reprisals, including: a) forbidding freedom of movement and relocation of the Armenians of the hinterland, b) exile and deportation in the 1930s, c) "conscription" during the first year of WWII, d) taxes which were intended to ruin the Armenians financially, e) labeling the Armenians as traitors, inventing a negative image of the Armenians and popularizing it, f) the planned demolition of the Armenian cultural heritage, g) repossession of Armenian properties by non-Armenians, h) the 'disclosure' of the Armenian element in Turkey's ethnic conflicts, etc. these acts and their implications generated a mood of antagonism and animosity towards the Armenians. The latter had no choice but to disguise themselves. They were marginalized, isolated and lived with the perception that there were no Armenians in the world!

The acts of the Armenian Secret Army for the Liberation of Armenia and those of the Armenian Justice Commandos backfired on the Armenians of Turkey, who reacted with new waves of conversion to other ethnicities and islamization. In fact every new wave of anti-Armenian news dissemination in Turkey drew a new group of the diminishing Armenian remnants of the hinterland to conversion.

In the 1980s during the "identity liberation" era in Turkey, the converted Armenians did not react immediately by disclosing their real identity, b ut came closer to socialist ideology. They perceived identity issues meant political mingling, unlike holding socialist ideas.

The discourse on converted Armenians truly started in the early 21st century, particularly after the assassination of Hrant Dink. One part of the converted Armenians would like to maintain their Islamic and Armenian identity. The other part, however, puts the issue of religious and ethnic reconversion in Turkey in the limelight.

Աւետարան Ըստ Մատթէոսի 10.26-31

ՄԻ՛ ՎԱԽՆԱՔ

(Քարոզ՝ Գիտաժողովին Նուիրուած Եկեղեցական Պաշտամունքին)

Աւետարանի այսօրուան հատուածը կը պատկանի Տէր Յիսուսի այն խօսքերուն, որոնք կը զինեն իր աշակերտները կենարար յորդորներով:

Մատթէոս 10ի մէջ կը կարդանք, թէ մեր Տէրը կը հրաւիրէ 12 աշակերտներ եւ անոնց կու տայ առաքելութիւն՝ երթալու իրենց անմիջական աշխարհը եւ քարոզելու Աստուծոյ թագաւորութեան իրականութեան մասին, որ ունի շատ ծալքեր:

Աւետարանիչը, իր խօսքերուն ընդմէջէն միտք ունի այն հրեաները, որոնք արդէն Քրիստոսի հետեւորդները դարձած են, սակայն տակաւին Հին Կտակարանի օրէնքով կը շնչեն ու կ'ապրին: Ուստի ան Յիսուս Քրիստոսը անոնց կը ներկայացնէ որպէս նոր Մովսէս մը, նոր հոգիի ուսուցիչ մը, եւ նոր կերպար մը: Ան կը փոխանցէ Յիսուսի խօսքերը զինք շրջապատող հաւատացեալներուն, այնպիսի ժամանակի մը մէջ երբ ծանր հալածանքի կ'ենթարկուին քրիստոնեաները, եւ ուրեմն կան տեսակ տեսակ նեղութիւններ, անձնական ու ընկերային:

Հաւատացեալներէն ոմանք կը կորսնցնեն ամէն յոյս, ուրիշներ՝ որոնք Քրիստոսի հանգիստ հետեւորդներ են, կը կորսնցնեն ամէն կորով: Հարցը այն է թէ հաւատքի էութեան մասին կան սխալ ակնկալութիւններ: Կարծէք անոնք *ջուրի սահուն ճամփայ* կը փնտռեն, եւ կարող չեն տեսնել որ հաւատքը մեղմ ու հանդարտ ընթացք ըլլալէ աւելի մշտադալար ու փուշերով պատուած տոկուն բոյսի պէտք է նմանի:

Ընդհանրապէս եւ բնականաբար մարդիկ կը հիմնեն իրենց հաւատքը ապահովութեան ու անդորրութեան գրաւականին վրայ, եւ այդպէս՝ դիւրապէս կիրարկելի կրօնը կը դառնայ աւելի գրաւիչ քան սուղ գին պահանջող կենդանի հաւատքը: Այս իմաստով, Յիսուս Քրիստոսի քարոզած հոգեւոր ըմբռնումները ծանր կը կշռէին իր աշակերտներուն վրայ: Ան անձնապէս պատրաստ էր վճարելու կեանքի գինը, խաչի մահով, խոնարհութիւնով, պարզութիւնով ու նուիրումի ամէն միջոցով: Ուստի ան կ'ակնկալէր նաեւ իր աշակերտներուն ամբողջական նուիրումը:

Ան շնորհք ու սէր կը սփռէր ամէն կողմ, բայց նաեւ ցոյց կու տար որ կուտ հոգի կը պահանջուի ամէն հաւատացեալէ եւ ամէն հաւատարիմ աշակերտէ:

Հետեւաբար, Քրիստոսի փրկարար պատգամը չէր խոստանար աշխարհիկ ապահովագրութիւն, եւ՝ չարով լի աշխարհի մը մէջ դժուարութեանց անյապաղ կանխում: Ան կը խոստանար ներքին զօրութիւն, կամք, քաջութիւն, խոր տեսիլք, յարութեան յոյս, անվերջ ընթացք, սրտի գոհունակութիւն եւ այլ հոգեկան պտուղներ:

Բնական է ուրեմն, որ քրիստոնէական պատմութեան ընթացքին, բոլոր անոնք որոնք իրենց եկեղեցական պատկանելութիւնն ու կրօնական հաւատքը հիմնած են չքննուած մտքի, չտաշտուած հոգիի, չմաղուած գործի, չփորձուած կամքի, չհաղորդուած ձեռքի եւ չնորոգուած հոգիի վրայ, շուտով երբ հալածանքն ու տանջանքը յարձակին՝ յանձնուին յուսալքման եւ հոգեկան կորուստի: Պարզ է ակնկալել որ երբ մարդ ընկերային, ֆիզիքական կամ մտաւորական որեւէ բարդութիւն դիմագրաւէ եւ զինուած ըլլայ միայն երեւութական կրօնով, ան պիտի ընկղմի հաւատքի կամ ինքնութեան լքումի արահետին մէջ:

Այս բոլորը միտք բերելով Տէր Յիսուս Քրիստոս պէտք է զինէր իր օրերու աշակերտները, կարծէք թէ ըսելով՝ «ձեր ունեցած զօրութիւնը, ինքնութիւնը, եւ առաքելութիւնը պատանդը պէտք չէ ըլլան աշխարհի փոփոխական օրէնքներուն կամ համակարգերուն: Կայ հոգեւոր ու նուիրական խորք այս աշխարհին մէջ՝ որ կը կոչուի Աստուծոյ Թագաւորութիւն»:

Ուրեմն «մի՛ վախնաք».-

1- որ Ճշմարտութիւնը կորսուի: Ամէն ինչ պիտի յայտնուի (համար 26-27): Բայց դուք ճշմարտութեան խօսքը մի՛ թողուք միայն այլոց: Նախ դու՛ք խօսեցէք այդ ճշմարտութիւնը:

2- անոնցմէ որ մարմինը կը սպաննեն: Հոգին է կորիզը մարմնին, եւ ուրեմն մի՛ ցնծաք երբ միայն մարմինը ողջ կը մնայ, եւ միայն մարմինը փրկելու հետամուտ մի՛ ըլլաք: Եթէ ձեր մէջ տիրող աստուածատուր հոգին մեռած է, միայն մարմնին փրկութիւնը յաղթանակ մի՛ սեպէք:

3- վասն զի Աստուած կը գործէ հոն ուր չէք իսկ կրնար երեւակայել: Ան ճնճղուկները, ամենայն հասարակ թռչունները, փոքր ու պարզ, աղքատին կերակուրն ու միսը եղող արարածները

եթէ կը հոգայ, հապա որքան աւելի պիտի հոգայ արագիլը, ծիծեռնակը, եւ անկէ աւելի ալ յատկանշական արարածները:

Սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, մենք 2015ի այս տարուան ընթացքին, նաեւ այս երկու օրերուն գիտաժողովի ընթացքին, վերաքաղը կը կատարենք մեր հայ ժողովուրդի դատի ծրարին, անոր բարդութիւններուն եւ կարելիութիւններուն: Կ'անդրադառնանք անցեալի ցաւին ու ներկայի պայքարին:

Աւետարանի այսօրուան դասերուն մէջ կան գոնէ երեք պատգամներ, որոնք պէտք է մեզ 100 ամեակի հոգենորոգ աշխուժութեան մէջ դնեն.-

1- Ճշմարտութիւնը տարածել նորանոր կերպերով, եւ չբաւարարուիլ հակառակորդներու խաբէութեան կամ ուրացումներուն դիմադրելով:

Ճշմարտութիւնը թող ըլլայ նախ մեր ու մեր ցաւին ու փորձառութեան մասին: Ճշմարտութիւնը թող ըլլայ կեանքի ու մեր յարութեան եւ հաւատքին մասին: Ճշմարտութիւնը թող ըլլայ մեր հարցին ու աշխարհի եւ երկնքի արդարութեան մասին:

Մենք պատանդը չըլլանք ո՛չ մեր ցաւին, ո՛չ ալ հակառակորդին դաւին: Ծառայենք Ճշմարտութեան ու Ճշմարիտին:

2- Հոգին, հայուն մարմնին մէջ ապրող հոգին թող մնայ մաքուր, լուսաւորեալ, լուսաւորող, որպէսզի այս աշխարհի վիճակներէն ու մարմնաւոր հաշիւներէն վեր մնալով ստեղծէ աստուածային ոճ:

3- Եթէ գործնապէս ու խորապէս քրիստոնեայ ժողովուրդ ենք, ուրեմն շարունակաբար փնտռենք Աստուծոյ առաջնորդութիւնը, անոր ընկերակցութիւնը, եւ անոր ներշնչումը:

Տէր Աստուծոյ, Հօր, Որդիին, եւ Սուրբ Հոգիին, ամէն փառք ու պատիւ, այսօր եւ յաւիտեան: Ամէն:

كلمة سعادة النائب البرلمان اللبنان
الاستاذ غسان مخيبر[1]

يشرفني جداً ويسرني ان اكون معكم في هذا الحفل الذي يحتفل بانطلاقة كتاب الدكتورة نورا اريسيان: *مئة عام على الإبادة الأرمنية مئة شهادة عربية*. آمل ان تكون كلمتي هذه الليلة للشهادة مئة وواحد لهذا الكتاب وقد اتليت بها في مناسبات عديدة جداً. وآمل ربما من الذين لم يتمكنوا من الاستماع الى موقفي ان نسمعه الليلة.

ويشرفني ان اكون امامكم كممثل للامة اللبنانية جمعاء. هذه الامة اللبنانية التي تضم لبنانيين من اصل ارمني الذين لجأوا مع الالاف بل مع مئات الالاف الاخرين الى هذه الارض التي هي ارض ملجأ لجميعنا فنحن في هذه المنطقة جميعنا بل كثير منا لاجئون الى ارض لبنان التي فتحت اماكنها وقلوبها الى من طلب اللجوء اليها هرباً من اضطهاض ومن قتل ومن مجازر ومن ابادات.

لماذا انا متحمس لكل ما هو مرتبط بالقضية الارمنية. انا لست من اصل ارمني ولا ارتبط بالنسب الى اية جدة او احد من الاقارب الارمن. دعوني اقول لكم سببان اساسيان يجعلاني مهتم جداً لا بل ملتزم في كل ما يرتبط بالقضية الارمنية.

السبب الاول: ان ما حصل للشعب الارمني وشعوب مسيحية اخرى منذ ما يقارب المئة عام هذه السنة لا يعني الشعب الارمني وحده هي ابادة وبسبب وصفها القانوني - وانا رجل قانون - هي جرائم ضد الانسانية. جريمة الابادة جريمة ضد الانسانية يفترض ان يعتبر كل انسان في العالم معني بها لأنها جريمة تعذيب وبالتالي في هذه المناسبة وانا نائب للامة اللبنانية جمعاء امثل الانسانية جمعاء لأقول ان ما حصل منذ مئة عام يؤلمني بقدر ما يؤلم اي ارمني آخر. وفي مثل هذه المناسبات على الانسانية ان تعتبر نفسها كلها ارمن բոլորս հայ ենք.

والسبب الآخر الذي يأتي بي اهتمام بهذه القضية الكبيرة هي الحاضر. نعم نحن نؤرخ لماض بات عمره مئة سنة, انما هذا الماضي تكرر اليوم وأمام انظر الجميع على كل وسائل الاعلام لأن هناك شعوب أخرى تخضع لاضطهاضات ولمجازر لا بل اعمال الابادة في العراق وفي سوريا, في فلسطين في هذه المناطق التي تفرغ من مسيحييها ومن غير من الشعوب. هذا يجعلنا نقول بأن الكلام عن التاريخ ليس للتاريخ. نطلع بالتاريخ لكي لا يتكرر ولعله يتكرر اليوم امام اعيننا. وبالتالي ما العمل؟

---

[1] القيت هذه الكلمة في مناسبة نشر كتاب الدكتوره نورا اريسيان: *١٠٠ عام على الإبادة الأرمنية ١٠٠ شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)*، في جامعة هايكازيان في ١ شباط ٢٠١٥.

نعم اليوم الوقت هو للعمل وللفعل وليس فقط للذكرى. والذكرى اهم لان من لا يتذكر الماضي لا مستقبل له. الماضي يصنعنا انما نحن نصنع المستقبل فالتحدي هو لنا الليلة وفي كل ليلة هو سؤال "ما هو ذلك الفعل الذي اصنعه لكي اشارك في وضع هذا المستقبل, الذي ارفض ان يكون فيه ابادة مرة اخرى اضطهض مرة اخرى." العمل الاول, الفعل الاول والذي تقومونه به والتي قامت به الدكتوره نورا اريسيان هي كتابة الذاكرة واعتقد بأن العائلات اللبنانية من اصل ارمني التي لجأت الى هذا الارض تختزن الكثير. وكنت دعوت الى تجميع هذه الذاكرة في متحف لذاكرة اللبنانيين من اصل ارمني واعلن بأنه بدأت بالبناء في منطقة الجبيل وآمل ان يكون هذا المتحف ليس فقط للطائفة الارمنية بل للمجموعات الارمنية في متحف وطني لذاكرة جماعية تحفظ كل ما حصل لهذا الشعب الارمني ونستمر معكم في تذكارها.

هل لنا من افعال اخرى؟ نعم الافعال هي ضرورية في الحاضر لما يحصل على مستوى السياسي والامني والعسكري. لبنان عليه ان يقوم بتحرك على كل الاصعدة. وللكنيسة الارمنية الدور الكبير في قيادة هذا التحرك العام. والا يترك فقط للكنيسة الكاثوليكية والبابا في روما هذا الدور. وجب علينا مسؤوليات قيادة التحرك بذكاء لان الاعتداء على الاقليات ان كانت مسيحية او غير مسيحية نحن ضد نحن نعرف خطورته ونحن ادرى بقيادة تحرك جديد لكي نقول للمسيحيين ان يتجذروا في هذا المشرق بأن لا يخافوا هم قيادة الرجاء وعلى هذا الرجاء ان يترجموا.

هناك مستوى آخر من العمل السياسي. وهو مرتبط بالعدالة. الذاكرة وحدها لا تكفي والتحرك في العلاقات الاسلامية المسيحية تطويرها ايضا لا يكفي. انا اعتقد بأن الابادة الارمنية والابادات الاخرى تحتاج لعدالة والعدالة يمكن ان تقوم بالشهادة. الاول ان نشترك جميعنا في المطالبة الى السلطة التركية بالاعتراف بابادة الشعب الارمني على يد السلطنة العثمانية منذ ما يقارب المئة عام وهي جرائم لا تسقط بطول الزمن. هذه الجرائم يجب ان تعترف بها السلطات التركية الوريث للسلطنة العثمانية وأنا يشرفني ان اكون عضواً في البرلمان اللبناني الذي كان من اوائل البرلمانات العربية والعالمية التي اعلنت رسمياً بموقف لها بجريمة الابادة الارمنية. اما الموقف الآخر فأعتقد بأنه من جهة نظري ضروري وأكثر جرأة مطالبة فيها جمهورية ارمينيا كممثلا للشعب الارمني من دعاة اقامة دعوى من محكمة العدل الدولية جريمة الابادة ضد السلطات التركية كوريث للسلطنة العثمانية لان جريمة الابادة جريمة لا تزول بمرور الزمن لأن كل من تركيا وارمينيا صادقتا كدولتان على الاتفاقية الدولية لمناهضة جريمة الابادة ولان هذه الاتفاقية تجعل من محكمة العدل الدولية محكمة ذات صدقية ولان الكلام في كتابة التاريخ لا يكفي وحده بل يجب ان ينتقل الى صياغة قانونية باتت متوفرة وان بعد مئة عام اعتقد بان ذلك سوف

يتطلب جرأة كبيرة من دولة الى دولة وان يرفع الصوت على مستوى الكلام في العدالة لانه لا سلام ولا مستقبل دون حقيقة ولا حقيقة واستقرار دون عدالة ولا مصالحة دون عدالة. واذا كان المطلوب للمستقبل وبناء لسلام الحقيقة في هذه المنطقة فعلينا ان نتعلم من هذه التجربة التي لم تتوقف لانها مستمرة ان نكون في لبنان لبنانيين من اصل ارمني ومن اصول مختلفة رياديين في قيادة هذا التحرك بالحقيقة والعدالة لا بل لما لا للمصالحة في منطقة تتألم كثيراً ويموت فيها كثيرون دون سبب.

كامل شكري لكم هذه السنة سوف تكون حافلة بالمناسبات انما آمل ان ننتقل من الكتابة الى الكلام ومن الكلام الى الفعل.

واعتقد بان قبل كل ذلك نحتاج الى الكثير من الصلاة لان ربنا الذي هو للجميع مسلمين ومسيحيين اتراك وارمن ولبنانيين نحن ابناء انسانية واحدة وآله واحد نأمل في هذه المنوية ان تحصل عجيبة فقط ربنا بيقدر يعملها وبوجودنا كلنا ونحول الى افعال وتكون لنا وللشعب اللبناني وللشعوب الارمنية اية كان مكانها حقيقة وعدالة وآمل ان يتحقق ذلك بعد مئة عام ولو بعد بعيد.

شكراً لهذه الدعوة.

Գիտաժողովին Մասնակիցներու Կենսագրականներ

Պրոֆ. Մասուտ Տահէր աւարտած է Լիբանանեան Համալսարանի Մանկավարժութեան Բաժինը, իսկ Պատմութեան Բաժինէն ստացած է իր մագիստրական վկայականը եւ Սորպոնի Համալսարանի Հասարակագիտութեան Բաժնին մէջ պաշտպանած է դոկտորականը:

Պրոֆ. Տահէր 1973էն իվեր անդամ է Լիբանանեան Համալսարանի դասախօսական կազմին, իսկ 1996էն իվեր՝ Համալսարանի Արուեստից Եւ Մարդասիրական Գիտամարզերու գիտխորհուրդին: Գործակցած է ՄԱԿի Զարգացման Ծրագրի Գրասենեակին հետ եւ խորհրդատու նշանակուած Լիբանանի պատմութեան դասագիրքի յառաջացման:

1983ին արժանացած է Արաբ Երիտասարդ Հետազօտողներու ԱպտուլՀամիտ Շուման մրցանակին: 1992ին, 1994ին եւ 2000ին եղած է անդամ վերոյիշեալ մրցանակի դատակազմին: Ան անդամ ընտրուած է Սուլթան Պրն Աուիսի Մշակոյթի Մրցանակին (1999) եւ Շեյխ Զայէտի Գիրքի Մրցանակին (2011): 1993ին արժանացած է Արաբ Պատմաբանի, իսկ 1996ին Արաբ Պատմագրութեան մրցանակներուն: 2010ին Ճափոնի պետութիւնը զինք պատուած է Ծագող Արեւի Ոսկեայ Մետալով՝ արաբ երկիրներու մէջ Ճափոնի մշակոյթին տարածման իր նպաստին համար: 2011ին ան պատուակալ անդամ ընտրուած է EUROCLIOի:

Դոկտ. Տահէր հեղինակ է արաբերէն շարք մը գիրքերու, ինչպէս.-

تاريخ لبنان الاجتماعي ١٩١٤-١٩٢٦ ; لبنان، الاستقلال والميثاق والصيغة ; الجنور التاريخية للمسألة الطائفية اللبنانية ; الجنور التاريخية للمسألة الزراعية في لبنان ١٩٠٠ - ١٩٥٠ ; بيروت وجبل لبنان على مشارف القرن العشرين ; المشرق العربي المعاصر: من البداوة إلى الدولة الحديثة ; الهجرة اللبنانية إلى مصر، هجرة الشوام ; الانتفاضات اللبنانية ضد النظام المقاطعجي ; مجابهة الغزو الثقافي الإمبريالي الصهيوني للمشرق العربي، دراسة في الثقافة المقاومة ; الدولة والمجتمع في المشرق العربي ; مشكلات بناء الدولة الحديثة في الوطن العربي ; النهضة العربية والنهضة اليابانية: تشابه المقدمات واختلاف النتائج ; النهضة اليابانية المعاصرة: الدروس المستفادة عربيا ; اليابان بعيون عربية ١٩٠٤ - ٢٠٠٤ ; الإستمرارية والتغيير في تجربة التحديث العمانية ١٩٧٠-٢٠٠٥ ; المستعربون اليابانيون والقضايا العربية ; تاريخ اليابان الحديث ١٨٥٣-١٩٤٥: التحدي والاستجابة ; سلطنة عمان: اربعون عاما من التنمية المستدامة ١٩٧٠-٢٠١٠ ; اليابان والعالم العربي، العلاقات المتبادلة والآفاق المستقبلية.

Ան հեղինակն է նաեւ՝ *Socio-Economic Changes and Civil War in Lebanon, Modernization in Egypt and Japan in the 19th Century; Continuity and Change in Japanese Modernization, 1945-1998* գիրքերուն:

Դոկտ. Սուրէն Մանուկեան փոխտնօրէնն է ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին: 2012-2013ին իբրեւ Ֆուլպրայթ կրթաթոշակառու հետազօտութիւններ կատարած է Միացեալ Նահանգներու Ռաթկըրզ Համալսարանի Ցեղասպանագիտութեան Կեդրոնին մէջ:

Դոկտ. Մանուկեանի ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն Հայոց Ցեղասպանութեան ընկերային-հոգեբանական երեսակները, ինչպէս նաեւ համեմատական ցեղասպանագիտութիւնը:

Դոկտ. Վլադիմիր Վարդանեան ծնած է 1979ին, Երեւան: Աւարտած է ԵՊՀ Իրաւագիտութեան Բաժինը, իսկ 2002ին նոյն բաժինէն պաշտպանած է մագիստրական թեզը ներկայացնելով «Միջազգային Կազմակերպութիւններու Մէջ Պետութիւններու Ներկայացուցիչներու Իրաւական Կարգավիճակը» նիւթը: 2003ին պաշտօնակոչուած է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարան, իբրեւ աւագ խորհրդատու: 2005ին ԵՊՀի մէջ պաշտպանած է իր դոկտորականը Միջազգային Հանրային Օրէնքի բնագաւառին մէջ՝ «Ցեղասպանութեան Պետական Պատասխանատուութեան Հիմունքները» նիւթով, եւ դասաւանդել սկսած ԵՊՀ Եւրոպական Եւ Միջազգային Օրէնքի Բաժանմունքին մէջ: 2006 Ապրիլէն կը գլխաւորէ Սահմանադրական Դատարանի Միջազգային Դաշնագրերու Բաժանմունքը, իսկ 2013 Մայիսէն՝ Սահմանադրական Դատարանի Իրաւական Խորհրդատուական Բաժանմունքը: 2014 Հոկտեմբերէն իվեր ան վարիչն է Սլաւոնական Համալսարանի Միջազգային Եւ Եւրոպական Օրէնքի Բաժանմունքին:

Դոկտ. Վարդանեան համահիմնադիրն է Միջազգային Եւ Բաղդատական Իրաւագիտութեան Հայաստանի Կեդրոնին: Ան հեղինակ է աւելի քան քսան գիտական ուսումնասիրութիւններու: Անդամ է Ցեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութեան, ինչպէս նաեւ Ռազմական եւ Պատերազմական Օրէնքի Միջազգային Ընկերակցութեան: Ան անդամ է նաեւ *Pravovaya Initsiativa* գիտահանրամատչելի համառուսական պարբերաթերթի խմբագրակազմին:

Ակադեմիկոս, Դոկտ. Զաւէն Մսըրլեան ծնած է Պէյրութ, 1938ին: Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ հետեւած է պատմութեան եւ ստացած է պսակաւոր արուեստից, իսկ 1963ին՝ մագիստրական վկայականը: 2003ին ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիան իրեն շնորհած է Պատուոյ Դոկտորի կոչում, իսկ 2014ին՝ զինք ընտրած է Ակադեմիայի Արտասահմանեան Անդամ: Ան արժանացած է Երկարամեայ Ծառայութեան Ոսկեայ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի՝ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ, Լիբանանի Հանրապետութեան Նախագահի, Վարչապետի եւ Կրթական նախարարի Լիբանանի Կրթութեան, ՀՀ Նախագահի Մովսէս Խորենացի, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի՝ Մեսրոպ Մաշտոց շքանշաններուն:

Դոկտ. Մսըրլեան 1967էն իվեր տնօրէնն է Պէյրութի Հայ Աւետ. Գոլէճին: Եղած է խմբագրակազմի անդամ *Շիրակ Ամսագիր*ին եւ *Կամար* պարբերականին (2005էն իվեր): 2004էն իվեր ատենապետն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ռիչըրտ Եւ Թինա Քարոլան Հրատարակչական Հիմնադրամի Յանձնախումբին: 1973ին նաեւ իր ջանքերով ՄԱԿի Ցեղասպանութեան սկզբնական տեղեկագրին վրայ անցուած է Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող 30րդ պարբերութիւնը:

Ան հեղինակ է 100ի մօտ ուսումնասիրութիւններու եւ հետեւեալ գիրքերուն.- *Հայկական Հարցի Մասին* (1978, ԹՄՄ Հայկաշէն Ուզունեան Գրական Մրցանակ), *Երեք Դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի Եւ Կարսի 1920-21)* (1979), *Մկրտիչ Մսըրլեանի Ազգային Քաղաքական Գործունէութիւնը* (1981), *The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians* (2001, Գէորգ Մելիտինեցի Մրցանակ), *Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արտաքին Քաղաքականութիւնը Եւ Հայկական Հարցը 1900-2009* (2010), *Հայոց Ցեղասպանութենէն Առաջ Եւ Ետք* (2011, Գէորգ Մելիտինեցի Մրցանակ), *Հայկական Հարցի Հոլովոյթը 1939-2010* (2012), *Մամուլէն Փրցուած Էջեր* (2013) եւ *The Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009* (2014):

Դոկտ. Մսըրլեան 1978էն իվեր կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Դոկտ. Սալէն Զահրէտտին ծնած է Լեռնալիբանան: 1979ին աւարտած է Լիբանանեան Համալսարանի Պատմութեան Բաժինը: Իր ուսումը շարունակած է Փարիզ 7րդ Համալսարանին մէջ՝ ստանալով DEA եւ AESA վկայականները՝ պատմութեան եւ մշակոյթի մարզէն ներս: 1995ին պաշտպանած է դոկտորական թեզը ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտին մէջ: Ան անդամ է Լիբանանի Գրողներու Միութեան, Արաբ Բանասէրներու Համադաշնութեան, ինչպէս նաեւ՝ Թուրքիոյ ու արաբական երկիրներու փոխյարաբերութեանց շուրջ կատարուող գիտական ուսումնասիրութիւնները քննարկող ակադեմական մարմնին (Ապու Տապի):

Դոկտ. Զահրէտտին ռազմավարական ուսմունք կը դասաւանդէ Լիբանանեան Բանակի Ղեկավարման եւ Սպայից Վարժարանի Ֆուատ Շեհապ Հիմնարկին մէջ: Տնօրէնն է Լիբանանեան Համալսարանի Բաշայիայի Մասնաճիւղին Զբօսաշրջութեան Բաժնին:

Ան 2003ին պարգեւատրուած է Լիբանանի Հանրապետութեան Նախագահին կողմէ Արժանեաց Շքանշանով եւ Պատուոյ Դոկտորայի կոչումի արժանացած Լոնտոնի Իսլամ Քաղաքակրթութեան Բաց Համալսարանէն: Ան հեղինակ է արաբերէն տասնեակէ աւելի ուսումնասիրութիւններու, ինչպէս՝

الأرمن شعب وقضية; الكنيسة الأرمنية وموقعها في مجازر الإبادة عام ١٩١٥; الأرمن بين الكنيسة والسياسة والاقتصاد; موسوعة شخصيات أرمنية في القرن العشرين; تاريخ المسلمين الموحدين (الدروز); الأمير شكيب ارسلان وجهاده ضد الاستعمار والصهيونية; اليهود في تركيا; سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية وموقف القوى الدولية منها; مخاطر الدور التركي في المنطقة العربية; الاسلام والاستشراق; مشروع «إسرائيل الكبرى» بين الديموغرافيا والنفط والمياه; أصالة العرب والوفاء الأرمني.

եւ հանրագիտարանային գիրքերու շարքերու:

Դոկտ. Փրոֆ. Արսէն Աւագեան ծնած է Երեւան, 1972ին: Ուսանած է ԵՊՀ Պատմութեան Բաժանմունքը, ապա շարունակած է իր ուսումնառութիւնը ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտին մէջ: 1998ին աւարտած է Ռուսական Համադաշնութեան Արտաքին Գործոց Նախարարութեան Մոսկուայի Դիւանագիտական Ակադեմիան: 2002ին պաշտպանած է դոկտորականը Մոսկուայի Պետական Համալսարանի Ասիոյ եւ Ափրիկէի Երկիրներու Ինստիտուտին մէջ: 2013ին ԵՊՀի կողմէ անոր շնորհուած է փրոֆեսորական կոչում: Հետեւած է դիւանագիտական դասընթացքներու՝ Եգիպտոսի, Իրանի, Հարաւային Քորէայի, Գերմանիոյ, Հռոմի մէջ, մասնակցած է Ցեղասպանագիտութեան յատուկ դասընթացքներու՝ Զօրեան Հիմնարկի եւ Աուշուիցի մէջ:

Հեղինակ է հինգ գիրքերու, որոնք լոյս տեսած են Մոսկուայի, Իսթանպուլի, եւ Երեւանի մէջ, եւ հեղինակ է աւելի քան 43 գիտական ուսումնասիրութիւններու: Ան մասնագէտ է չերքէզներու՝ Օսմանեան Կայսրութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան մէջ ունեցած դերակատարութեան, ինչպէս նաեւ հայկական կուսակցութիւններու եւ երիտթուրքերու փոխյարաբերութեան:

Դոկտ. Աւագեան 1994էն իվեր մաս կը կազմէ ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան անձնակազմին: 2001-2005՝ ներկայացուցած է ՀՀն՝ Սեւ Ծովու Տնտեսական Համագործակցութեան Կազմակերպութեան: 2007-2009՝ պաշտօնավարած է Իրանի Հանրապետութեան ՀՀ դեսպանատունը: Ներկայիս ան կը գլխաւորէ Նախարարութեան ՀՀ Դրացի Երկիրներու Բաժինը:

Թաթուլ Յակոբեան հանրայայտ լրագրող է եւ փորձագէտ: Ան կը համակարգէ Երեւանի նորաստեղծ "Հայկական Ուսումնասիրութիւնների ԱՆԻ Հիմնադրամ" Կեդրոնը: 1990-1995՝ Յակոբեան ուսանած ԵՊՀ Ժուռնալիստիկայի Ֆակուլտէտը, իսկ 2002-2003՝ Թբիլիսիի Վրաստանի Հասարակական Գործերի Ինստիտուտի Լրագրութեան Բաժինը:

1990ականներու սկիզբէն աշխատակցած է *Անկախութիւն*, *Երկիր* եւ *Ազգ* օրաթերթերուն, Հայաստանի Հանրային Ռատիոյի "Ռատիօլուր" ծրագրին, *The Armenian Reporter* շաբաթաթերթին, ու աշխատած Սիւիլիթաս Հիմնադրամի եւ վերջինիս մաս կազմող Սիւիլնէթ առցանց հեռուստատեսութեան մէջ: 2005-2012՝ աշխատակցած է Սիտնիի SBS

ռատիոյի հայկական բաժնին: 2005էն իվեր Երեւանի թղթակիցն է Պէյրութի *Ազդակ* օրաթերթին:

2005ին արժանացած է Երեւանի Մամուլի Ակումբի՝ Տարածաշրջանային Թեմաներու Լրագրողի մրցանակին: 2009ին նոյն ակումբը իրեն յատուկ մրցանակ շնորհած է *Արցախեան Օրագիր. Կանայ Ու Մեւ* գիրքին համար, որ 2008էն ի վեր ունեցած է եօթ հրատարակութիւն (արեւմտահայերէն, ռուսերէն, անգլերէն, արաբերէն եւ թրքերէն): 2014ին անոր *Հայեացք Արարատից. Հայերը Եւ Թուրքերը* գիրքը արժանացաւ ԹՄՄ Հայկաշէն Ուզունեան Գրական Մրցանակին:

Ներկայիս Յակոբեան կ՛աշխատի իր երրորդ գիրքին վրայ՝ *Ժողովրդավարութեան Եւ Աւտորիտարիզմի Փակուղում. Հայաստանը 1985ից Մինչեւ Մեր Օրերը*:

Դոկտ. Պիւլենթ Պիլմէզ վարիչն է Իսթանպուլի Պիլկի Համալսարանի Պատմութեան Բաժնին եւ նախագահը՝ Թուրքիոյ Պատմութեան Հիմնարկին: 1998ին իր դոկտորականը պաշտպանած է Պերլինի Հումպոլտ Համալսարանի Ժամանակակից Մերձաւոր Արեւելքի Հիմնարկին մէջ: Դոկտորական թեզին մէկ վերամշակուած տարբերակը՝ *Chester Project (1908-1923): A Case Study for the Eurocentric Modern Standardization Process in Modern Turkey* հրատարակուեցաւ Թուրքիոյ մէջ 2000ին:

1995-98՝ դասաւանդած է Պերլինի Ազատ, 1998-2001՝ Ալպանիոյ Ալեքսանդր Ճուանի, եւ 2000-04՝ Պոլսոյ Ետիթեփէ համալսարաններուն մէջ: 2005էն իվեր կը դասաւանդէ Պիլկի Համալսարանին մէջ: Այցելու դասախօս եղած է Փրինսթինայի Ամառնային Համալսարանին (Քոսովօ), իսկ 2002-04՝ Հոլանտայի Ամառնային Համալսարանին մէջ, 2004-05՝ Պատուակալ Հետազօտող Լոնտոնի Համալսարանական Քոլէճի Սլաւոնական Եւ Արեւելաեւրոպական Բաժանմունքին, ինչպէս նաեւ՝ Սոֆիայի Խորացեալ Ուսումնասիրութիւններու Կեդրոնին ու Պուտափեշթի Քոլէճին:

Դոկտ. Պիլմէզի հետազօտութիւններու ծիրը կ՛ընդգրկէ Պալքաններու, մասնաւորաբար Ալպանիոյ ընկերա-տնտեսական, մտաւորական եւ քաղաքական արդիականացման գործընթացները՝ Օսմանեան Կայսրութեան վերջին հանգրուանին, Կայսրութեան իսլամ համայնքներուն մէջ հաւաքական իսլամի կերտումի պատմութիւնը, Թուրքիոյ Հանրապետութեան պատմութիւնը, փոքրամասնութիւնները, բանաւոր պատմութիւնը, հաւաքական յիշողութիւնը եւ անցեալի առերեսումը, (թեր)զարգացման, արդիականացման, կայսերապաշտութեան եւ համաշխարհայնացման տեսութիւնները:

Դոկտ. Հրանուշ Խառատեան ծնած է 1952ին: Ուսանած է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտին մէջ, ապա՝ ԽՍՀՄ Գիտութիւններու Ակադեմիայի Ազգագրութեան Ինստիտուտին (Լենինկրատ-Մոսկուա): Թեկնածուականը պաշտպանած է Լենինկրատի Ինստիտուտին մէջ՝ «Չերքէզահայեր. Պատմա-Ազգագրական Ուսումնասիրութիւն» նիւթով:

Գիտական իր հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ կովկասագիտութիւնը, Հայաստանի անցումային շրջանի ընկերա-մշակութային փոփոխութիւնները, յիշողութեան եւ մշակոյթի ժառանգորդման մեքանիզմները եւն.: Դոկտ. Խառատեան հետազօտութիւններ կատարած է Կովկասեան Աղուանքի ժողովուրդներէն ուտիներու, հայ ժողովրդական տօներու, Հայաստանէն կատարուող արտագաղթի, աղքատութեան մշակոյթի, Տերսիմի մշակոյթի մասին: Հեղինակ ու համահեղինակ է հատորներու եւ յօդուածներու: Ան կ'աշխատակցի նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին՝ իսլամաց(ու)ած հայերու նիւթերով:

Դոկտ. Նորա Արիսեան ծնած է Դամասկոս 1967ին: 1988ին աւարտած է Դամասկոսի Համալսարանի Բանասիրութեան Բաժինը, 2001ին՝ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտը՝ պատմութեան ոլորտին մէջ, տիրանալով պատմական գիտութիւններու թեկնածուի աստիճանին:

2007էն կը դասախօսէ Դամասկոսի Պետական Համալսարանը: 2014ին ստանձնած է նոյն համալսարանի Հայագիտական Բաժինի պատասխանատուութիւնը: Մասնակցած է շարք մը հայագիտական գիտաժողովներու: 2007էն անդամ է Արաբ Գրողներու Միութեան: Խմբագիրն է *Ազդակ* օրաթերթի արաբերէն կայքին: Ունի բազմաթիւ թարգմանութիւններ ու յօդուածներ եւ հեղինակ է 5 հատորներու.- *Տէր Զօր, Մարտիրոսաց Քաղաք* (2010),

اصداء الابادة الارمنية في الصحافة السورية ١٨٧٧-١٩٣٠, دار الذاكرة ٢٠٠٢; *النواب الارمن في المجالس النيابية السورية ١٩٢٨-٢٠١١*, دمشق ٢٠١١; *غوائل الارمن في الفكر السوري*, دار الفرات ٢٠١٠; *١٠٠ عام على الابادة الارمنية. ١٠٠ شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للابادة الارمنية)*, دار نشر جامعة هايكازيان ٢٠١٥.

Biographies of the Participants of the Conference

Prof. Massoud Daher graduated with a Higher Studies Diploma in history from the Lebanese University. He obtained a postgraduate degree and a Ph.D. in social history from the University of Sorbonne. Since 1973, he has taught at the Lebanese University. He was appointed a member of the Lebanese University's Consultative Scientific Council to represent the Arts and Humanities Faculty in 1996. In 2004 and 2008 he was delegated to work at the UNDP as a consultant for the UNDP's programme to promote good governance and to resolve the History textbook crisis.

Prof. Daher was granted the Abdel Hamid Shuman Award for young Arab scholars in Jordan in 1983. In 1992, 1994, and 2000, he was selected to be a member of the awarding committee. He was also chosen to be a member of the Sultan Bin Awis Cultural Award board in 1999 and a member of the Sheikh Zayed Book Award Board in 2011. He was chosen as Honorary Member of EUROCLIO in 2011. In 1993, he was awarded the Arab Historian Medal and in 1996 the Arab History Medal from the Arab Historian Association. In 2010 Dr. Daher won The Order of the Rising Sun, Gold Rays, from the Government of Japan for his contribution to Japanese Culture in the Arab countries.

Professor Daher has authored a number of books in Arabic and English including: *Socio-Economic Changes and Civil War in Lebanon; Modernization in Egypt and Japan in the 19th Century*, and *Continuity and Change in Japanese Modernization, 1945-1998*. His Arabic book called *The Arab and Japanese Renaissance: The Similarity of Preliminary Conditions and Dissimilarity of the Final Outcomes* won best book prize in humanities from Kuwait's Institute for Scientific Progress for the year 2000.

Dr. Suren Manukyan is the deputy-director of the Armenian Genocide Museum-Institute in the Republic of Armenia. In 2012-2013 as a Fulbright Recipient he conducted research at the Genocide Center, Rutgers University, USA.

Dr. Manukyan's academic interests include comparative genocide studies and the socio-psychological aspects of the impact of the Armenian Genocide.

Dr. Vladimir Vardanyan was born in 1979, in Yerevan. He graduated from the Department of Law of Yerevan State University (YSU) in 2000 with a BA degree in law and in 2002 with an MA degree, his thesis title being *Legal Status of Permanent Representations of States at International Organizations*. In 2003 he joined the Constitutional Court of the Republic of Armenia staff as a senior expert in Legal Advisory Service. In June 2005 he defended his Ph.D. in Public International Law, entitled *The Basis of State Responsibility for Genocide*, at the YSU and joined its Department of European and International Law. In 2006 Dr. Vardanyan was appointed Head of the International Treaties Department of the Constitutional Court and in 2013 Head of the Legal Advisory Service. As of October 2014 Dr. Vardanyan also holds the Chair of International and European Law of the Russian-Armenian (Slavonic) University.

Dr. Vardanyan is a co-founder of the International and Comparative Law Center of Armenia (ICLaw) and author of more than 20 scientific papers dedicated to diverse aspects of Public International Law. He is a member of the International Association of Genocide Scholars, as well as a member of the International Society for Military Law and the Law of War. He is a member of the Board of Editors of the pan-Russian Scientific-Practical Journal *Pravovaya Initsiativa*.

Academician, Dr. Zaven Messerlian was born in 1938 in Beirut. He received his BA in 1959 in European History and his MA in 1963 in Middle Eastern History, both from the American University of Beirut. The National Academy of Sciences of the Republic of Armenia granted him an honorary doctorate in Armenian studies in July 2003 and in 2014 elected him a foreign member of the Academy. In 2007 the Catholicos and Supreme Patriarch of All Armenians, Karekin II, bestowed upon him the medal of St. Sahag and St. Mesrob. In 2014 the Catholicos of the Great House of Cilicia bestowed upon him the medal of St. Mesrob Mashdots. In 2010 the President of the Republic of Lebanon granted him the medal of Education, as well as the Minister of Education of the Republic of Armenia with the medal of the Ministry. In 2014 the President of the Republic of Armenia awarded him the Movses Khorenatsi medal.

Dr. Messerlian has been the principal of the Armenian Evangelical College, Beirut, since 1967. He has been on the editorial boards of *Armenian Studies* (1973), *Shirag* (1965-1985 and 1997), and *Gamar* (since 2005). He has been the chairman of the Richard and Tina Carolan Publication Fund of the Catholicossate of Cilicia since 2004.

Dr. Messerlian has published some 100 research papers and a number of books in Armenian and English, including: *The Premiditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians* and *Armenian Participation in the Legislative Elections of Lebanon 1934-2009*. He contributed the biographies section of Christopher Walker's *Armenia, the Survival of A Nation* (London, 1980). Since 1971 Dr. Messerlian has contributed to the *Haigazian Armenological Review*.

Dr. Saleh Zahreddin was born in Mount Lebanon. After graduating from the History Department of the Lebanese University in 1979, he continued his postgraduate studies at the Paris 7ème Arondissement University and received his DEA and AESA in the fields of history and culture. In 1995 he defended his Ph.D. at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

He is a member of the Lebanese Writers' Society and the Arab Confederation of Scholars, as well as a member of the assessment committee on Turkish-Arab state relations studies at the UAE Center for Research and Strategic Studies.

He teaches strategy (war, strategy and security) at the Lebanese Army Fouad Chehab Institute of Military Leadership and is the head of the Department of Tourism at the Lebanese University Rashaya branch.

In 2003 he was awarded the Order of Merit by the Lebanese President and the Arab Researcher Gold Medal by the Arab League. He was awarded an Honorary Doctorate by the British Open University of Muslim Civilization.

Dr. Zahreddin has authored a number of Arabic books related to the Armenian Genocide, Arab nationalism and the Druzes, as well as a number of encyclopedia articles.

Dr.-Prof. Arsen G. Avagyan was born in Yerevan in 1972. He graduated from the Faculty of History at YSU and continued his higher studies at the Institute of History, National Academy of Sciences, Republic of Armenia. In 1998 he graduated from the Diplomacy Academy, Ministry of Foreign Affairs, Russian Federation (Moscow). In 2002 he received his Ph.D. from the Institute of Asian and African Countries, Moscow State University. In 2013 he was granted the title of Professor from YSU. Dr. Avagyan has attended diplomatic training courses in Egypt, Iran, South Korea, the Marshall Center (Garmisch-Partenkirchen, Germany), NATO Defense College (Rome), as well as Genocide studies in Toronto (Zoryan Institute) and Auschwitz (the Raphael Lemkin Seminar for Genocide Prevention, Poland).

Dr. Avagyan is the author of 5 books, published in Moscow, Istanbul and Yerevan, and more than 40 research papers. He has written extensively on the Circassian role in the Ottoman Empire and Turkey, as well as on the relations between the Armenian political parties and the Young Turks.

Since joining the staff of the Ministry of Foreign Affairs of Armenia in 1994, Dr. Avagyan has held various positions as the permanent representative of the Republic of Armenia at the Organization of Black Sea Economic Cooperation (resident in Istanbul, 2001-2005) and Advisor at the Embassy of the Republic of Armenia in the Islamic Republic of Iran (2007-2009). Currently he heads the Neighboring Countries Division at the Ministry of Foreign Affairs.

Tatul Hakobian is a renowned journalist and correspondent. He graduated from the YSU Faculty of Journalism in 2000. In 2002-2003 he continued his education in the Journalism Section of the Tbilisi-based Georgian Social Affairs Institute.

He is the coordinator of the Yerevan-based ANI Foundation for Armenian Studies (ANI Centre). Since the early 1990s he has contributed to several newspapers, including *Angakhutyun*, *Yergir*, *Azg*, and *The Armenian Reporter*, as well as Armenian State Radio's 'Radiolur' Program. He has been a member of the Civilitas Foundation and contributed to its CivilNet internet TV. From 2005 to 2012 he worked for the Sydney, Australia, SBS Radio Armenian Section and since 2005 has been the Yerevan correspondent of the Beirut-based *Aztag* daily.

In 2005 Hakobian won the Yerevan Press Club best correspondent on regional issues prize, and in 2009 the Club awarded him a prize for his book: *Karabakh Diary: Green and Black*. The book had seven editions and was translated into Western Armenian, Russian, English, Arabic and Turkish. In 2014 his book called *Armenians and Turks: from War to Cold War to Diplomacy* won

the Tekeyan Cultural Association Haygashen Oozunian Literary Prize and was translated into Western Armenian and English.

Currently he is working on his third book related to democracy and authoritarianism in Armenia after 1985.

Assoc. Prof. Dr. Bülent Bilmez is the head of the History Department of Istanbul Bilgi University and the head of the History Foundation in Turkey. He has a Ph.D. from the Institute of Modern Near Eastern Studies at Humboldt University, Berlin, Germany (1998). An amended Turkish version of his Ph.D. dissertation entitled *Chester Project (1908-1923): A Case Study for the Eurocentric Modern Standardization Process in Modern Turkey* was published in Turkey in 2000.

Before starting his career at Istanbul Bilgi University in 2005, he taught at the Free University in Berlin, in Germany (1995-98); Alexander Xhuvani University in Elbasan, Albania (1998-2001); and Yeditepe University in Istanbul, Turkey (2000-2004). Dr. Bilmez has been a visiting lecturer at Prishtina Summer University, as well as The Netherlands (Summer 2002, 2003 and 2004); an honorary research fellow at the School of Slavonic and East European Studies, University College London (Feb. 2004-Sept. 2005); and a research fellow at the Centre for Advanced Study, and Collegium Budapest (Oct. 2004-Nov. 2005).

Dr. Bilmez's research interests include the modern history of the Balkans, especially Albania; socio-economic, intellectual and political modernization processes in the late Ottoman Empire; the history of the construction of modern collectives among Muslim communities of the Ottoman Empire; the history of the Turkish Republic; minorities in Turkey; oral history, collective memory and confronting the past; and the theories of (under)development, modernization, imperialism and globalization.

Dr. Hranush Kharatian was born in 1952. After graduating from the History Department of the YSU, she continued her postgraduate studies at the Institute of Ethnography at the USSR Academy of Sciences in Leningrad and Moscow. Her postgraduate thesis was entitled "The Circassian Armenians: A Historical-Ethnographic Study".

Dr. Kharatian's academic interests include Caucasian studies, socio-cultural changes during the transition era of the Republic of Armenia, and mechanisms of inheriting memory and culture. Dr. Kharatian has conducted extensive research on the Oodi people of the Caucasus, Armenian popular feasts, migration from Armenia, the culture of poverty, and the culture of the Dersim region.

Dr. Kharatian is the author and co-author of more than ten books and more than 80 research papers. Lately she has written several articles on Islamized Armenians in the *Haigazian Armenological Review*.

Dr. Nora Arissian was born in Damascus in 1967. She graduated from the Philology Department of the State University of Damascus in 1988. In 2001 she defended her thesis at the Institute of Oriental Studies in the Armenian National Academy of Sciences and was awarded the degree of Candidate of Sciences in history.

She has been a lecturer at the Damascus State University since 2007, and as of 2014 she has been in charge of the Armenian Department of the same university. Dr. Arissian has participated in a number of conferences. She has been a member of the Union of Arab Writers since 2007, is the editor of the Arabic website supplement of the Beirut-based *Aztag* daily, and has a number of translations into Arabic.

Dr. Arissian has authored one book in Armenian and four in Arabic all related to the Armenian Genocide and the Armenians of Syria.

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ. ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԵՒ ՅԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՐԿՕՐԵԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Հովանաւորութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ Վեր. Մկրտիչ Գարակէօզեանի, եւ կազմակերպութեամբ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինին ու Հայկազեան Համալսարանին, Շաբաթ, 31 Յունուար եւ Կիրակի 1 Փետրուար 2015ին տեղի ունեցաւ «Հարիւրամեակ Հայոց Ցեղասպանութեան. Հետեւանքներ Եւ Յառաջադրանքներ» վերնագրեալ երկօրեայ գիտաժողովը, Հայկազեան Համալսարանին մէջ:

Գիտաժողովին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Շաբաթ օր, կէսօրէ ետք ժամը 4ին, Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիին ներքնայարկը:

Ներկայութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Աշոտ Քոչարեանի, Սուրիոյ եւ Լիբանանի Աւետարանական Համայնքներու Նախագահ Վեր. Սելիմ Սահիունիի, նախկին զօրավար Միշէլ Աունի ներկայացուցիչ Վեր. Էտկար Թրապուլսիի, Ուժանիւթի Նախարար Արթիւր Նազարեանի, Պետական Երեսփոխան Ժան Օղասապեանի, նախկին նախարարներու եւ երեսփոխաններու, Պուրճ Համուտի քաղաքապետին, լիբանահայ կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներու, կրթական եւ մշակութային անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ հայ եւ օտար մտաւորական խաւի մը ու հիւրերու, Հայկազեան Համալսարանի

Նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսթեան բարիգալուստ մաղթեց ներկաներուն:

Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինին անունով խօսք առաւ Շահան Գանտահարեան:

Դոկտ. Անդրանիկ Տագէսեան ներկայացուց օրուան հիւր բանախօսը՝ Լիբանանեան Համալսարանի երկարամեայ դասախօս, Ընկերային եւ Մարդասիրական Բաժանմունքի Դոկտորականի Բաժնի պատասխանատու Փրոֆ. Մասուուտ Տահէրը, որ դասախօսեց «Հայկական Հարցը Համաշխարհայնացումի Դարաշրջանին. Ներկան Եւ Հեռանկարները» նիւթին շուրջ:

Պաշտօնական բացումը իր աւարտին հասաւ Վեր. Գարակէօզեանի փակման խօսքով:

Կարճատեւ դադար մը ետք, սկիզբ առաւ գիտաժողովին առաջին նիստը, որ յատկացուած էր Ցեղասպանութեան հետեւանքներուն եւ անոնց վերացման միջազգային օրէնքի ուղիներուն:

Շուրջ հարիւր մասնակիցներու երկար քննարկումներէ, լուսաբանութիւններէ ու արձարձումներէ ետք փակուեցաւ առաջին նիստը եւ գիտաժողովին առաջին օրը, երեկոյեան ժամը 7.30ին:

Գիտաժողովին երկրորդ օրը սկսաւ Կիրակի առաւօտեան ժամը տասին, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ տեղի ունեցած պաշտամունքով, ուր պատգամեց՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան, նիւթ ունենալով Մատթէոսի Աւետարանէն բնաբան մը:

Ժամը 11.30ին սկսաւ գիտաժողովին Բ. նիստը՝ որ վերնագրուած էր «Միջազգային Ընտանիքին Հակազդը՝ Ցեղասպանութեան եւ Անոր Շահագործումը՝ Պետութիւններու Կողմէ»:

Ծաւալուն քննարկումներէ ետք, երկրորդ նիստը փակուեցաւ եւ ներկաները անցան ճաշի դադարի:

Գիտաժողովին երրորդ նիստը նուիրուած էր Հայ Թրքական Յարաբերութիւններուն:

Աշխուժ քննարկումէ, ապա եւ սուրճի դադարէն ետք գիտաժողովը անցաւ իր վերջին նիստին, որ վերնագրուած էր «Թուրքիոյ Հանրապետութիւնն Ու Թուրքը՝ Յաչս Երկրին Փոքրամասնութիւններուն»:

Այս նիստի ելոյթներուն համապարփակ քննարկումէն ետք, գիտաժողովը հասաւ իր աւարտին:

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի լիբանահայ ձեռնարկներուն գիտական այս առջինեկը նոր հարթակի վրայ դրաւ Լիբանանի մէջ Հայոց Ցեղասպանութեան նիւթի արծարծումը եւ իր ոճական, բովանդակային եւ կշռութային կնիքը պիտի դնէ գալիք ձեռնարկներուն: Արծարծուեցան նիւթեր, որոնք ցարդ հրապարակային նման քննարկումի չէին արժանացած, բացայայտուեցան մանրամասնութիւններ, եղան լուսաբանական բացատրութիւններ, մեկնաբանութիւններ, որոնք պիտի ծառայեն հանրութեան մէջ Հայոց Ցեղասպանութեան զանազան երեսակներու մասին կարծիքներու, տեսակէտերու վերամշակման, վերաթարմացման եւ պատշաճեցման՝ Հայոց Ցեղասպանութեան, հայ-թուրք յարաբերութեանց, Թուրքիոյ այլեւայլ փոքրամասնութիւններու մասին մեր ունեցած պատկերացումներուն, մտածումներուն եւ կեցուածքներուն առումով:

Գիտաժողովը յատկանշուեցաւ նաեւ միտքերու ազատ փոխանակումով, քննարկումներու խորութեամբ՝ փոխադարձ յարգանքի ենթահողին վրայ, ուր տինամիզմ մը շեշտուեցաւ Պոլիս-Երեւան-Պէյրութ կարծիքներու, մտածումներու եւ տեսակէտերու դրսեւորման առումով: Գիտաժողովը հազուադէպ իրողութիւն էր նաեւ Հայկական Հարցը Լիբանանի բեմէն լսելի դարձնելու՝ որոշ շերտաւորում ունեցող Իսթանպուլի ժողովրդավար, երեւանեան պետական եւ լիբանահայ

պահպանողական տեսակէտերու եւ մտածումներու համատեղման առումով:

Հայաստանի Հանրապետութենէն, Լիբանանէն եւ Թուրքիայէն գիտաժողովին հրաւիրուած իրաւագէտները, պատմաբանները, ազգագրագէտները, թրքագէտներն ու լրագրողները գիտական մակարդակի վրայ նախանշեցին Ցեղասպանութեան հետեւանքներու յաղթահարման համար ժամանակակից պայմաններու եւ միջազգային օրէնքներու նկատառումով յետագայ աշխատանքներուն ընդհանուր ուղղութիւնները:

Գիտաժողովը իր լրումին հասաւ արաբերէն զոյգ գիրքերու շնորհանդէսով՝ Կիրակի, 1 Փետրուար 2015ի երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան Համալսարանի Մուկար Արուեստից Սրահին մէջ:



Արդարեւ, Հայկազեան Համալսարանի Հրատարակչատունը արաբ հանրութեան սեղանին դրաւ Դոկտ. Նորա Արիսեանի Հարիւր Արաբ Վկայութիւն՝ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին Առթիւ գիրքը: Երկրորդ գիրքը Ղարաբաղի հակամարտութեան նուիրուած Թաթուլ Յակոբեանի *Արցախեան Օրագիր. Մեւ Եւ Կանաչն* էր, զոր թարգմանած էր Դոկտ. Նորա Արիսեան:

Շնորհանդէսին բացումը կատարեց Հայկազեան Համալսարանի Առեւտրական Վարչագիտութեան Բաժնի տեսուչ, Դոկտ. Ֆատի Ասրաուի, որ արաբերէնով ողջունեց ներկաները եւ անդրադարձաւ ձեռնարկի շարժառիթին ու նպատակին, համառօտակի ներկայացուց Դոկտ. Արիսեանը եւ լրագրող-փորձագէտ Թաթուլ Յակոբեանը: Ապա ան խօսքը փոխանցեց Դոկտ. Արիսեանին:

Դոկտ. Արիսեան արաբերէն, ապա հայերէն անդրադարձաւ Յակոբեանի *Արցախեան Օրագիր, Կանաչ Ու Մեւ, Ո՛չ Պատերազմ, Ո՛չ Խաղաղութիւն* գիրքին, յայտնելով, որ գիրքը կարդալով ինքնաբերաբար մղուած է զայն թարգմանելու: Եզրափակելով իր խօսքը, Դոկտ. Արիսեան

շեշտեց. «Ան որ կ'ուզէ գաղափար առնել արցախեան հերոսամարտին մասին, պէտք է կարդա՛յ Թաթուլ Յակոբեանի այս գիրքը»:

Շնորհանդէսի երկրորդ մասով Դոկտ. Ասրաուի կենսագրական հակիրճ տեղեկութիւններով ներկայացուց լիբանանեան խորհրդարանի անդամ երեսփոխան Ղասսան Մուխայպէրը:

Երեսփոխան Մուխայպէր արաբերէնով արտասանած իր խօսքին մէջ ի միջի այլոց գիրքը նկատեց ցեղասպանութեան արհաւիրքը ապրած ու անկէ ճողոպրած վկաներու յիշողութիւն: «Ծագումով հայ չեմ, սակայն երկու հանգամանքներ զիս կը մղեն զօրակցելու Հայ Դատին: Նախ եւ առաջ՝ հայ ժողովուրդին դէմ պատահածը միայն հայ ժողովուրդին դէմ չէր, այլեւ՝ համայն մարդկութեան դէմ կատարուած ոճիր էր: Երկրորդ՝ դէպքէն հարիւր տարիներ ետք, տակաւին ցեղասպանութիւնը կը շարունակուի նաեւ այլ ժողովուրդներու նկատմամբ՝ Իրաքի, Պաղեստինի մէջ եւ այլուր: Առ այդ, պէտք է գրի առնել դէպքերու ականատեսներուն յիշողութիւնն ու վկայութիւնները: Ան որ կը մոռնայ իր անցեալը, ապագայ չունի»: Ան եզրափակեց իր խօսքը պնդելով, որ «նման ոճիր ո՛չ միայն հայերուն, այլեւ համայն մարդկութեան դէմ է ու՝ բոլո՛րս հայ ենք»:

Աւարտին կատարուեցաւ զոյգ գիրքերու մակագրութիւն:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Հինգշաբթի, 29 Յունուարին, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան տան ընդունելութիւններու դահլիճին մէջ կայացած Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի 5րդ նիստը վարեց նախագահ Սերժ Սարգսեան: Նիստին մասնակցեցան Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Ներսէս Պետրոս ԺԹ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքը, Սփիւռքի հայկական կազմակերպութիւններու եւ տարածաշրջանային յանձնախումբերու ներկայացուցիչներ: Մասնակիցները միաձայնութեամբ որդեգրեցին Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի Համահայկական Հռչակագիրը: Նիստի աւարտին, մասնակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր տեղի ունեցաւ Հռչակագրի հրապարակման արարողութիւնը: Փաստաթուղթը ընթերցեց Նախագահ Սերժ Սարգսեան, որ Հռչակագրին մայր օրինակը յանձնեց Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին: Հռչակագրին մէկ օրինակը ուղարկուեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Գլխաւոր Քարտուղարին, իսկ մէկ օրինակը յանձնուեցաւ Հայաստանի Հանրապետութեան ազգային արխիւին:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Հայոց ցեղասպանութեան 100րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը՝ համախորհուրդ սփիւռքի մէջ գործող տարածաշրջանային յանձնախմբերի հետ՝

- արտայայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,
- յենուելով 1990 թուականի օգոստոսի 23ի՝ Հայաստանի Անկախութեան Մասին Հռչակագրի եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան վրայ,
- վկայակոչելով ՄԱԿի 1948 թուականի Դեկտեմբերի 10ի՝ Մարդու Իրաւունքների Համընդհանուր Հռչակագիրը, որի համաձայն 'մարդկութեան ընտանիքի բոլոր անդամներին յատուկ

արժանապատուութեան եւ հաւասար ու անօտարելի իրաւունքների ճանաչումն աշխարհի ազատութեան, արդարութեան եւ խաղաղութեան հիմքն է',

- ղեկավարուելով ՄԱԿի Գլխավոր Վեհաժողովի 1946 թուականի Դեկտեմբերի 11ի 96(1) բանաձեւի, 1948 թուականի Դեկտեմբերի 9ի 'Ցեղասպանութեան Յանցագործութիւնը Կանխարգելելու Եւ Պատժելու Մասին' ՄԱԿի կոնվենցիայի, 1968 թուականի Նոյեմբերի 26ի 'Պատերազմական Յանցագործութիւնների Եւ Մարդկութեան Դէմ Ուղղուած Յանցագործութիւնների Նկատմամբ Վաղեմութեան Ժամկէտ Չկիրառելու Մասին' ՄԱԿի կոնվենցիայի, ինչպէս նաեւ 1966 թուականի Դեկտեմբերի 16ի 'Քաղաքացիական Եւ Քաղաքական Իրաւունքների Մասին' միջազգային դաշնագրի եւ մարդու իրաւունքների վերաբերեալ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով եւ դրոյթներով,

- հաշուի առնելով, որ 'Ցեղասպանութեան Յանցագործութիւնը Կանխարգելելու Եւ Պատժելու Մասին' կոնվենցիան ընդունելիս ՄԱԿը յատուկ կարեւորել է այդ յանցատեսակի դէմ պայքարում միջազգային համագործակցութիւնը,

- շեշտելով ցեղասպանութեան յանցակազմում պարունակուող արարքների համար անպատիժ մնալու անթոյլատրելիութիւնն ու այդ յանցագործութեան վաղեմութեան ժամկէտ չունենալու հանգամանքը,

- դատապարտելով 1894-1923 թուականներին Օսմանեան Կայսրութեան եւ Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրուած ու հայ ժողովրդի դէմ շարունակաբար իրականացուած ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայութեան ոչնչացմանն ուղղուած զանգուածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգութեան ոչնչացումը, ինչպէս նաեւ ցեղասպանութեան ժխտումը, պատասխանատուութիւնից խուսափելու, կատարուած յանցագործութիւններն ու դրանց հետեւանքները լրութեան մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպէս յանցագործութեան շարունակութիւն եւ նոր ցեղասպանութիւններ իրականացնելու քաջալերանք,

- համարելով նաեւ 1919-1921 թուականներին Օսմանեան ռազմական արտակարգ ատեանների կողմից 'Իրաւական Եւ Մարդկային Օրէնքների Դէմ' այդ ծանր ոճրի ուղղութեամբ

կայացուած դատավճիռները եղելութեան իրաւական գնահատական,

- արժեւորելով 1915 թուականին միջազգային հանրութեան կողմից Անտանտի Պետութիւնների Մայիսի 24ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դէմ իրականացուած ծանրագոյն յանցագործութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ որպէս «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ իրականացուած յանցագործութիւն» որակումը եւ օսմանեան իշխանութիւններին պատասխանատուութեան կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպէս նաեւ 1920 թուականի Օգոստոսի 10ի Սեւրի Հաշտութեան Պայմանագրի եւ 1920 թուականի Նոյեմբերի 22ի՝ ԱՄՆի Նախագահ Ուդրօ Ուիլսընի Իրաւարար Վճռի դերը եւ նշանակութիւնը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում.

1. Ողջունում է Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն անմեղ զոհերի յիշատակը եւ երախտագիտութեամբ խոնարհւում կեանքի ու մարդկային արժանապատուութեան համար պայքար մղած նահատակ եւ վերապրած հերոսների առջեւ:

2. Վերահաստատում է Հայաստանի եւ հայ ժողովրդի յանձնառութիւնը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանութիւնների կանխարգելման, ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդների իրաւունքների վերականգնման եւ պատմական արդարութեան հաստատման համար:

3. Շնորհակալութիւն է յայտնում այն պետութիւններին, միջազգային, կրօնական եւ հասարակական կազմակերպութիւններին, որոնք քաղաքական խիզախութիւն ունեցան ճանաչելու եւ դատապարտելու Հայոց Ցեղասպանութիւնը՝ որպէս մարդկութեան դէմ ուղղուած սոսկալի ոճրագործութիւն, եւ այսօր էլ շարունակում են այդ ուղղութեամբ իրաւական քայլեր ձեռնարկել, նաեւ կանխել ժխտողականութեան վտանգաւոր դրսեւորումները:

4. Երախտագիտութիւն է յայտնում այն ազգերին, կառոյցներին եւ անհատներին, ովքեր յաճախ իրենց վտանգելով՝ մարդասիրական տարաբնոյթ օգնութիւն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջեւ կանգնած բազմաթիւ հայերի, ապահով եւ խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանութիւնից վերապրած հայութեան համար՝ մեծ թափ հաղորդելով

որբախնամ գործունէութեանը եւ միջազգային հայասիրական շարժմանը:

5. Դիմում է ՄԱԿի անդամ պետութիւններին, միջազգային կազմակերպութիւններին, բարի կամքի տէր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային եւ կրօնական պատկանելութիւնից, միաւորել իրենց ջանքերը պատմական արդարութիւնը վերականգնելու եւ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու համար:

6. Արտայայտում է Հայաստանի եւ հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց Ցեղասպանութեան փաստի համաշխարհային ճանաչման հասնելու եւ ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրաւական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքների եւ օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետութեան կողմից Հայաստանի Հանրապետութեան ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերուող հակահայկական կեցուածքը եւ միջպետական յարաբերութիւնների կարգաւորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպէս Հայոց Ցեղասպանութեան, Մեծ Եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետեւանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետութեանը՝ ճանաչել եւ դատապարտել Օսմանեան Կայսրութեան կողմից իրականացուած Հայոց Ցեղասպանութիւնը եւ մարդկութեան դէմ իրագործուած այդ սոսկալի ոճրի զոհերի յիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսուել սեփական պատմութեան ու յիշողության հետ՝ հրաժարուելով կեղծարարութեան, անհերքելի իրողութեան ժխտման եւ յարաբերականացման քաղաքականութիւնից:

Ջօրակցում է Թուրքիայի քաղաքացիական հասարակութեան այն հատուածին, որի ներկայացուցիչներն այսօր արդէն համարձակութիւն են դրսեւորում այդ հարցում՝ ի հակադրութիւն իշխանութիւնների պաշտօնական դիրքորոշման:

9. Յոյս է յայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը կարեւոր մեկնակէտ կը դառնան հայ եւ թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար:

10. Հպարտութեամբ է արձանագրում, որ ցեղասպանութիւնից վերապրած հայ ժողովուրդը վերջին հարիւրամեակի ընթացքում՝

- դրսեւորեց անկոտրում կամք ու ազգային ինքնագիտակցութիւն, վերականգնեց դարեր առաջ կորցրած ինքնիշխան պետականութիւնը,
- պահպանեց եւ զարգացրեց ազգային արժէքները, հասաւ ազգային մշակոյթի, գիտութեան եւ կրթութեան վերածննդի՝ ուրոյն ներդրում ունենալով համաշխարհային ժառանգութեան զարգացման գործում,
- ստեղծեց Հայկական Սփիւռքի հոգեւոր եւ աշխարհիկ կառոյցների հզօր եւ արդիւնաւէտ ցանց, ինչը նպաստեց աշխարհասփիւռ հայ համայնքներում հայապահպանութեան, հայի՝ յարգանք եւ համակրանք վայելող կերպարի կերտմանը, հայ ժողովրդի արդար իրաւունքների պաշտպանութեանը,
- համազգային գործակցութեան եւ հայրենադարձութեան ընդարձակ ծրագրով համախմբեց եւ վերստեղծեց ցեղասպանութեան հետեւանքով վերացման վտանգի առջեւ յայտնուած ազգային գենոֆոնդը,
- Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերում բերեց իր արժանի ներդրումը միջազգային անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատման գործում, փառաւոր յաղթանակներ տարաւ Սարդարապատի եւ Արցախեան հերոսամարտերում:

11. Դիտարկում է Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցը որպէս կարեւոր հանգրուան պատմական արդարութեան համար մղուող պայքարը «Յիշում եմ եւ պահանջում» կարգախօսով շարունակելու գործընթացում:

12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասէր, գիտակից եւ ուսեալ կեցուածքով պաշտպան կանգնել հայրենի սրբազան ժառանգութեանը, աննահանջ պայքարով ծառայել յանուն՝

- առաւել հզօր Հայրենիքի՝ ազատ եւ ժողովրդավար Հայաստանի Հանրապետութեան,
- անկախ Արցախի առաջընթացի ու զօրացման,
- աշխարհասփիւռ հայութեան գործուն համախմբման,
- համայն հայութեան դարաւոր նուիրական նպատակների իրականացման:

Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide[1]

Following the session of the State Commission on Coordination of the events for the commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide, President Serzh Sargsyan, in company with the commission members and the participants of the enlarged session, on January 29, 2015 visited the Tsitsernakaberd Memorial Complex, laid a wreath at the Memorial to the Victims of the Medz Yeghern and paid tribute to the memories of the innocent victims.
At the Tsitsernakaberd Memorial Complex there also took place the promulgation ceremony of the Pan-Armenian Declaration on the 100th Anniversary of the Armenian Genocide. The declaration was adopted unanimously at the session of the State Commission on Coordination of the events for the commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide. President Serzh Sargsyan read the document and deposited it with the Armenian Genocide Museum-Institute.
A copy of the Declaration was sent to the Secretary General of the United Nations and another copy was handed to the Armenian National Archive Institute.

Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide

The State Commission on the Coordination of Events Dedicated to the 100th Anniversary of the Armenian Genocide, in consultation with its regional committees in the Diaspora,
- expressing the united will of the Armenian people,
- based on the Declaration of Independence of Armenia of 23 August 1990 and the Constitution of the Republic of Armenia,
- recalling the United Nations Universal Declaration on Human Rights of 10 December 1948, whereby recognition of the inherent dignity and of the equal and inalienable rights of all members of the human family is the foundation of freedom, justice and peace in the world,
- guided by the respective principles and provisions of the United Nations General Assembly Resolution 96(1) of 11 December 1946, the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide of 9 December 1948, the United Nations

[1] Source: http://www.genocide-museum.am/eng/29.01.2015-hrchakagir.php#sthash.nSbTSHYp.dpuf

Convention on the Non-Applicability of Statutory Limitations to War Crimes and Crimes Against Humanity of 26 November 1968, the International Covenant on Civil and Political Rights of 16 December 1966 as well as all the other international documents on human rights,
- taking into consideration that while adopting the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, the United Nations specifically underlined the importance of international cooperation in the struggle against that criminal offence,
- emphasizing the inadmissibility of impunity of the constituent elements of the crime of genocide and the non-applicability of statutory limitation thereto,
- condemning the genocidal acts against the Armenian people, planned and continuously perpetrated by the Ottoman Empire and various regimes of Turkey in 1894-1923, dispossession of the homeland, the massacres and ethnic cleansing aimed at the extermination of the Armenian population, the destruction of the Armenian heritage, as well as the denial of the Genocide, all attempts to avoid responsibility, to consign to oblivion the committed crimes and their consequences or to justify them, as a continuation of this crime and encouragement to commit new genocides,
- also considering the 1919-1921 verdicts of the courts-martial of the Ottoman Empire on that grave crime perpetrated "against the law and humanity" as a legal assessment of the fact,
- appreciating the joint declaration of the Allied Powers on May 24, 1915, for the first time in history defining the most heinous crime perpetrated against the Armenian people as a "crime against humanity and civilization" and emphasizing the necessity of holding Ottoman authorities responsible, as well as the role and significance of the Sevres Peace Treaty of 10 August 1920 and US President Woodrow Wilson's Arbitral Award of 22 November 1920 in overcoming the consequences of the Armenian Genocide:
1. Commemorates one-and-a-half million innocent victims of the Armenian Genocide and bows in gratitude before those martyred and surviving heroes who struggled for their lives and human dignity.
2. Reiterates the commitment of Armenia and the Armenian people

to continue the international struggle for the prevention of genocides, the restoration of the rights of people subjected to genocide and the establishment of historical justice.

3. Expresses gratitude to those states and international, religious and non-governmental organizations that had political courage to recognize and condemn the Armenian Genocide as a heinous crime against humanity and even today continue to undertake legal measures to that end, also preventing the dangerous manifestations of denialism.

4. Expresses gratitude to those nations, institutions and individuals, who often endangering their lives, provided multifaceted humanitarian assistance and rescued many Armenians facing the threat of total annihilation, created safe and peaceful conditions for the survivors of the Armenian Genocide, thus promoting orphan care and the international Armenophile movement.

5. Appeals to UN member states, international organizations, all people of good will, regardless of their ethnic origin and religious affiliation, to unite their efforts aimed at restoring historical justice and paying tribute to the memory of the victims of the Armenian Genocide.

6. Expresses the united will of Armenia and the Armenian people to achieve worldwide recognition of the Armenian Genocide and the elimination of the consequences of the Genocide, preparing to this end a file of legal claims as a point of departure in the process of restoring individual, communal and pan-Armenian rights and legitimate interests.

7. Condemns the illegal blockade of the Republic of Armenia imposed by the Republic of Turkey, its anti-Armenian stance in international fora and the imposition of preconditions in the normalization of interstate relations, considering this a consequence of the continued impunity of the Armenian Genocide, *Medz Yeghern*.

8. Calls upon the Republic of Turkey to recognize and condemn the Armenian Genocide committed by the Ottoman Empire, and to face its own history and memory through commemorating the victims of that heinous crime against humanity and renouncing the policy of falsification, denialsm and banalizations of this indisputable fact.

Supports those segments of Turkish civil society whose representatives nowadays dare to speak out against the official position of the authorities.

9. Expresses the hope that recognition and condemnation of the Armenian Genocide by Turkey will serve as a starting point for the historical reconciliation of the Armenian and Turkish peoples.

10. Proudly notes that during the last century the Armenian people, having survived the Genocide,

- Demonstrated an unbending will and national self-consciousness and restored its sovereign statehood, lost centuries ago,
- Preserved and developed national values, achieved the renaissance of their national culture, science and education, bringing its unique contribution to the development of world heritage,
- Established a powerful and effective network of religious and secular institutions in the Armenian Diaspora, thus contributing to the preservation of their Armenian identity in Armenian communities worldwide, the shaping of a respected and esteemed image of the Armenian, and the protection of the legitimate rights of the Armenian people,
- United and restored the national gene pool that was facing extermination as a result of the Genocide, through a pan-Armenian cooperation and extensive repatriation program,
- Made its valuable contribution to international peace and security during the First and the Second World Wars and won glorious victories in the heroic battle of Sardarabad and the Artsakh war.

11. Considers the 100th anniversary of the Armenian Genocide an important milestone in the ongoing struggle for historical justice under the motto "I remember and demand".

12. Calls upon the coming generations of Armenians to protect their sacred native heritage with patriotism, consciousness and intellect and resolutely struggle and serve for:

- a stronger Homeland, free and democratic Republic of Armenia,
- the progress and strengthening of independent Artsakh,
- the efficient unity of Armenians worldwide,
- the realization of the centuries-old sacrosanct goals of all Armenians.

بيان عموم الأرمن في الذكرى المئوية للإبادة الأرمنية

في ٢٩ كانون الثاني ٢٠١٥ أصدرت الهيئة الحكومية لتنسيق فعاليات الذكرى المئوية للإبادة الأرمنية في أرمينيا بياناً سمي بـ"بيان عموم الأرمن في الذكرى المئوية للإبادة الأرمنية" تلاه رئيس جمهورية أرمينيا سيرج سركيسيان أمام النصب التذكاري لشهداء الإبادة الأرمنية في يريفان، وسلّم النسخة الأصلية من البيان إلى متحف الإبادة الأرمنية، كما أرسلت نسخة من البيان إلى السكرتير العام للأمم المتحدة، واحتفظت نسخة أخرى في مركز الأرشيف الوطني لجمهورية أرمينيا.

وهذا نص البيان:

إن الهيئة الحكومية لتنسيق فعاليات الذكرى المئوية للإبادة الأرمنية، بالتشاور مع اللجان الإقليمية في الشتات الأرمني،

- تجسيداً للإرادة الموحدة للشعب الأرمني،
- واستناداً إلى إعلان استقلال أرمينيا في ٢٣ آب ١٩٩٠، ودستور جمهورية أرمينيا،
- وبناء على الإعلان العالمي لحقوق الإنسان للأمم المتحدة في ١٠ كانون الأول ١٩٤٨، الذي "يعدّ كرامة كافة أفراد الأسرة البشرية والحقوق العادلة وغير القابلة للمصادرة أساساً لحرية وعدالة وسلام العالم"،
- وانطلاقاً من القرار ٩٦ (١) الذي اتخذ في الجمعية العامة للأمم المتحدة في ١١ كانون الأول ١٩٤٦، ومعاهدة الأمم المتحدة "منع جريمة الإبادة ومعاقبتها" في ٩ كانون الأول ١٩٤٨، ومعاهدة الأمم المتحدة "عدم تنفيذ التقادم بشأن جرائم الحرب والجرائم ضد الانسانية" في ٢٦ تشرين الثاني ١٩٦٨، وكذلك الاتفاقية الدولية حول "الحقوق المدنية والسياسية" في ١٦ كانون الأول ١٩٦٦، ومبادئ وأحكام كافة المواثيق الدولية الأخرى حول حقوق الانسان،
- وآخذين بعين الاعتبار أن الأمم المتحدة بقبولها معاهدة "منع جريمة الإبادة ومعاقبتها" تكون قد أولت أهمية كبيرة للتعاون الدولي لمكافحة تلك الأنواع من الجرائم،
- وتشديداً على عدم التسامح مع عدم معاقبة الأحداث التي تشمل جرائم الإبادة وحقيقة عدم تقادم تلك الجريمة،
- وإدانةً للخطوات التي قامت بها الإمبراطورية العثمانية بين الأعوام ١٨٩٤-١٩٢٣ والأنظمة المختلفة في تركيا لإبادة مخططة بحق الشعب الأرمني، والتي ما زالت تنفذها باستمرار، والمجازر الجماعية لإفناء الأرمن، والتصفية العرقية، وإفناء الإرث الثقافي

الأرمني، وكذلك إنكار الإبادة، والتهرب من المسؤولية، وكل المحاولات لإسكات أو تبرير الجرائم المرتكبة وعواقبها، هي استمرار للجريمة وتشجيع لارتكاب إبادات جديدة،

- واعتبار أن الأحكام الصادرة عن المحاكم الاستثنائية العسكرية العثمانية بين ١٩١٩-١٩٢١ حيال تلك الجريمة القاسية "ضد القوانين القانونية والإنسانية" هي تقييم قانوني لما حدث،
- ومثمنين الإعلان المشترك الذي أصدرته الدول الحليفة في ٢٤ أيار من جانب المجتمع الدولي عام ١٩١٥ وتقييم الجرائم القسوى ضد الشعب الأرمني للمرة الأولى في التاريخ على أنها "جريمة مرتكبة ضد الإنسانية والحضارة"، والتشديد على طلب مساءلة السلطات التركية المجرمة، وكذلك اتفاقية الصلح سيفر في ١٠ آب ١٩٢٠، والحكم القضائي لرئيس الولايات المتحدة الأمريكية وودرو ويلسون في ٢٢ تشرين الثاني ١٩٢٠، ودورها في حل قضية عواقب الإبادة الأرمنية.

١- تحيي ذكرى مليون ونصف المليون من الضحايا الأبرياء للإبادة الأرمنية، وتنحني أمام الأبطال الذين ضحوا بحياتهم والناجين منهم الذين ناضلوا من أجل الحياة والكرامة،

٢- تؤكد من جديد التزام أرمينيا والشعب الأرمني، في الاستمرار في النضال الدولي لمنع الإبادات، من أجل إعادة حقوق الشعوب التي تعرضت للإبادة، وتعزيز العدالة التاريخية،

٣- تعرب عن شكرها للدول والمنظمات الدولية والدينية والمدنية، التي تحلّت بالشجاعة السياسية واعترفت بالإبادة الأرمنية وأدانتها، كجريمة ضد الإنسانية، ومازالت اليوم تتخذ الخطوات القانونية في هذا الاتجاه، لمنع المظاهر الخطيرة للإنكار،

٤- تعرب عن امتنانها للشعوب والهيئات والأفراد الذين خاطروا بأنفسهم أحياناً وأعربوا عن دعمهم الإنساني المتنوع، وأنقذوا الأرمن الذين وقفوا أمام الإفناء الحتمي، وخلقوا ظروفاً آمنة للأرمن الناجين من الإبادة، ودعموا عملية إنقاذ الأيتام وحركة دعم الأرمن الدولية،

٥- تطلب من الدول الأعضاء في الأمم المتحدة، والمنظمات الدولية، وكل الأمم ذات الإرادة الحسنة بغض النظر عن الأصول القومية والدينية، توحيد الجهود من أجل استعادة العدالة التاريخية، واحترام ذكرى ضحايا الإبادة الأرمنية،

٦- تعرب عن الإرادة المشتركة لأرمينيا والشعب الأرمني للوصول إلى الاعتراف العالمي لحقيقة الإبادة الجماعية للأرمن والمجزرة الكبرى، وحرمان الشعب الأرمني من الوطن، وقضية إزالة عواقب الإبادة، وقد تم تشكيل ملف وافي لذلك، واعتباره إنطلاق لعملية إعادة المصالح المشروعة والحقوق الفردية والجماعية والقومية،

٧- تدين الحصار غير الشرعي الذي تفرضه جمهورية تركيا على جمهورية أرمينيا، والموقف المعادي للأرمن على المنابر الدولية، ووضع شروط مسبقة لتسوية العلاقات الحكومية المشتركة، وتقييمها كنتيجة لعدم معاقبتها على الإبادة الأرمنية حتى اليوم،

٨- تدعو الجمهورية التركية إلى الاعتراف بالإبادة الأرمنية التي نفذتها الإمبراطورية العثمانية وإدانتها، ومواجهة تاريخها وذاكرتها من خلال إحياء ذكرى ضحايا تلك الجريمة المروعة التي ارتكبت ضد الإنسانية، والتخلي عن سياسة التزييف والمقارنات وإنكار الحقيقة التي لا تدحض.

تساند شريحة المجتمع المدني في تركيا التي تبدي اليوم الجرأة وتواجه الموقف الرسمي للسلطات،

٩- تأمل أن يكون الاعتراف بالإبادة الأرمنية وإدانتها إنطلاقة هامة لعملية المصالحة التاريخية بين الشعبين الأرمني والتركي،

١٠- تسجل بكل فخر أن الأرمن الناجين من الإبادة خلال القرن الماضي،

- أظهروا إرادة صلبة ومعرفة بالذات القومية واستعادوا دولتهم المستقلة،
- حافظوا على القيم الوطنية وطوروها، ووصلوا إلى الازدهار الثقافي والعلمي، ليسهموا في عملية تطوير الإرث العالمي،
- خلقوا شبكة قوية ومثمرة من الهيئات الدينية والمدنية للشتات الأرمني، ما أسهم في الحفاظ على المجتمعات الأرمنية في أصقاع العالم، وصقل شخصية الأرمني الذي يتمتع بالاحترام، والدفاع عن الحقوق العادلة للشعب الأرمني،
- تجمعوا من خلال التعاون على مستوى الشعب بأكمله، وبرامج العودة إلى الوطن، وأعادوا خلق أساس أصول الشعب الذي تعرض لخطر الإفناء بسبب الإبادة،
- أسهموا بشكل فعال في تعزيز الأمن والسلام الدولي في الحربين العالميتين الأولى والثانية، وحققوا انتصارات رائعة في المعارك البطولية في ساردارباد، ومعارك أرتساخ.

١١- ترى أن الذكرى المئوية للإبادة الأرمنية هي مرحلة هامة في إطار الاستمرار بالنضال من أجل العدالة التاريخية تحت شعار "أتذكر وأطالب".

١٢- تدعو الأجيال القادمة من الأرمن للدفاع عن الإرث المقدس للوطن عبر حب الوطن والعلم والوعي، والخدمة عبر النضال الذي لا يقهر، وذلك من أجل،

- وطن أقوى، وجمهورية أرمينيا حرة ديموقراطية،
- أن تكون أرتساخ المستقلة متقدمة وقوية،
- حشد فعال للأرمن في الشتات العالمي،
- وتحقيق كل الأهداف التاريخية المقدسة لجميع الأرمن.

CONTENT OF THE BOOK

The book is the compilation of the proceedings of the conference entitled "Armenian Genocide Centennial: Addressing the Implications". The conference was organized by the Armenian Genocide Centennial Commemoration Committee, Lebanon and Haigazian University and was held at Haigazian University on January 31-February 1, 2015.

The book includes the program of the conference, the opening speeches, the sermon given on the Sunday in the First Armenian Evangelical Church, the papers presented, biographies of the contributors, photos, a press release and the Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide in English, Arabic and Armenian, as well as English summaries of the paper.

The nine papers presented during the conference were the following: "The Armenian Question in the Age of Globalization: The Current Situation and Its Prospects", "The Consequences of the Genocide and the Track of International Law in Addressing the Genocide", "The Demographic, Psychological, Cultural, Geographic, Economic, and Political Consequences of the Armenian Genocide", "Responsibility for the Armenian Genocide: International Legal Obligations of the Ottoman Empire Concerning its Armenian Population", "The Reaction of the International Community during and after the Genocide", "The Blackmailing of Turkey by the Great Powers, on the issue of the Genocide", "The Relations of Turkey and the Republic of Armenia 1991-2014", "The Relations of Turkish-Armenian Non-State Actors", "The Position of the Turkish State vis-à-vis its Minorities (1923-2014)", "The Status of the Armenians in Contemporary Turkey: The Case of the Converted Armenians".

محتويات الكتاب

يغطّي هذا الكتاب مؤتمر "منوية الابادة الارمنية: نتائج والتزامات" الذي نظمه جامعة هايكازيان واللجنة المركزية لذكرى منوية الابادة الارمنية والذي انعقد في جامعة هايكازيان بين ٣١ يناير و ١ شباط ٢٠١٥. وشارك في المؤتمر تسعة اختصاصيين واكاديميين حضروا من ارمينيا وتركيا وسوريا ولبنان. واختتم باطلاق حفل توقيع كتابين: *١٠٠ عام على الابادة الارمنية - ١٠٠ شهادة عربية بمناسبة الذكرى المئوية للابادة الارمنية* للدكتورة نورا اريسيان و*يوميات كاراباخ, اخضر واسود: لا حرب, لا سلم* للكاتب طاطول هاكوبيان.

ويحتوي الكتاب برنامج المؤتمر والمحاضرات التسعة الّتي أُلقيت والسّيرة الذّاتيّة للمحاضرين, وصوراً من المؤتمر والبيان الصّحافيّ, وبيان عموم الأرمن في الذكرى المئوية للإبادة الأرمنية باللغات الارمنية والعربية والانكليزية.

اما المحاضرات التي القيت خلال المؤتمر فهي تتطرّق الى المواضيع التالية: "*المسألة الأرمنية في عصر العولمة: الواقع والآفاق المستقبلية*", و "*النتائج الديموغرافية والثقافية والنفسية والجغرافية والاقتصادية والسياسية للابادة الارمنية*", و"*المسؤلية امام المجتمع العالمي في الابادة الارمنية التي تترتب على السلطنة العثمانية من منظار القانون الدولي*", و"*المجتمع العالمي ابان الابادة الارمنية وبعدها*", و"*ابتزاز بعض الدول الكبرى لتركيا في موضوع الإبادة الأرمنية (عيّنات ونماذج)*", و"*العلاقات بين جمهوريتي ارمينيا وتركيا (١٩٩١-٢٠١٤)*", و"*العلاقات الغير الدولية بين الاتراك والارمن (١٩٩١-٢٠١٤)*", *وموقف الدولة التركية من الاقليات في تركيا (١٩٢٣-٢٠١٤)*", و"*وضع الارمن في تركيا: الارمن المسلمون (١٩٢٣-٢٠١٤)*".

كما يضمّ الكتاب كلمة سعادة النائب في البرلمان اللبناني الاستاذ غسان مخيبر في حفل توقيع الكتابين.

LIST OF BOOKS PUBLISHED BY THE HU PRESS AND HAIGAZIAN UNIVERSITY

1) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present- Day Community*, Aida Boudjikanian (ed.), Beirut 2009, 35$.
2) Alfred de Zayas, J.D., Dr. Phil.*The Genocide Against the Armenians 1915-1923 And the Relevance of the 1948 Genocide Convention*, Beirut 2010, 10$.
3) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, Beirut 2011, 30$.
4) *هرانت دينك, امتان قريبتان... جاران بعيدان*
translated into Arabic by Dr. Alexan Keshishian, Beirut 2012, 10$.
5) *Համնոյ Հերոսամարտի 90ամեակի Գիտաժողովի Նիւթեր Եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ*, կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Անդրանիկ Տագէսեան, Պէյրութ 2013, 10$.
6) *Լիբանանահայ Գիրքը 1894-2012. Մատենագիտական Յանկ*, աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տագէսեան եւ Դոկտ. Արմէն Իւրնէշլեան, Պէյրութ 2013, 20$.
7) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԳ./Haigazian Armenological Review, Vol. 33*, 2013, 20$.
8) Dr. Zaven Messerlian, *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009*, Beirut 2014, 25$.
9) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԳ./Haigazian Armenological Review, Vol. 34*, 2014, 20$.
10) *Հայկազեան Համալսարան. Հայ Տպագրութեան 500-Ամեակի Ձեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ 2013*, Պէյրութ, 2014.
11) *Հայկական Անդրսահմանային Տարածականութիւնը Եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր, (15-17 Մայիս 2013)*, խմբ. Անդրանիկ Տագէսեան, Հրատ. Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկական Սփիւռք Ա., Պէյրութ 2014, 10$.
12) د. نورا أريسيان, *١٠٠ عام على الإبادة الأرمنية: ١٠٠ شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)*, Beirut 2015 ,10$:
13) Dr. Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939*, Beirut 2015, 40$ (paperback), 50$ (hardbound).

Մանրամասնութիւնները՝ www.haigazian.edu.lb
Ստանալու համար դիմել՝ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

Տպագրութեան յանձնուած՝ 19 Օգոստոս 2015:
Տպաքանակ՝ 300:
Տպագրութիւն՝ Գրիգոր Անտոնեան: